




860

III. 5







ՆՈՐ ՇՐՋԱՆ

IV ՏՍԲԻ

# ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ. Ի Ր

№ 7

Յ Ո Ւ Լ Ի Ս

1904



Թ. Բ Ն Ա. Ի Ս

Արագաստից Ա. Բուլթաթեյաձէի  
Նիկոլայեւի փող., № 21.

Скоропечатня Ар. Бутателадзе, Ник. ул., № 21.

1904

# ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 7

	Երե.
1. ԼՌՈՒԹԻՒՆԸ (վերջ), վէպ Ա. Ահարոնեանի . . . . .	5
2. Ա՛հ, եՍ ՀԻՒԱՆԴ ԵՄ, ոտան. Դ. Դեմիրչեանի. . . . .	27
3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԴԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, Ժերուկի . . . . .	28
4. ԵԳԻՊՏԱՀԱՅՔ, Ավօրի . . . . .	37
5. ՎՐԷԺ..., պատմուածք Կ. Հգօրեանի. . . . .	49
6. ԱԲԻՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, Գ. Արաքեանի . . . . .	64
7. ԺԱՄԱՆԱԿԱԿՅ ԻՏԱՒԱՅԻ ԳՐԱԿԱՆ ՈԳԻՆ, Անրիկօ Կորրադիինի, թարգմ. *** . . . . .	69
8. ՃԱՇՈՐԴՆԵՐ, Ա. Չեխովի, թարգմ. Ա. Աթայեանի . . . . .	81
9. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.—Չար. ձի- ճինածէի գրական գործունէութիւնը:—Նրա նոր գրքի- րը հայերի դէմ:—Կոյս Նունէի. ազգութեան հարցը:— Մի գիտնականի կարծիքը վրայ գրականութեան մա- սին:—Մի ձեռագիր երգարան, Տ. Փրորուսեանի . . . . .	87
10. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Իու- տու Մէդրէի՛ «Ամեղ զոն».—Կ. Հար.: 2) Իլզէ Յրապան՛ «Անիծուած վայրը».—Կ. Հար.: 3) Գ. Ա- նանեան՛ «Կորածներ».—Ա.բ. Ա.բա.: 4) Մ. Գօրկիյ՛ «Մակար Չուրա».—Ա.բ. Ա.բա.: 5) Իմ Պատաս- խանք պ. Լ.-ին.—Տ. Յովհ. . . . .	96
11. ՆՈՐ ՍՏՅՏՈՒԱԾ ԳՐՔԵՐ. . . . .	116
12. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ.—Բիօլոգիայի զարգացումը XIX դարում, Ս. Բալադեանի . . . . .	117
13. Ա. ՉԵԽՈՎ, Ե. Աղբալեանի. . . . .	127
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մեր կեանքը եւ գրականութիւնը:—Կեան- քի արտաքինը եւ ներքինը:—Աշխարհի գոնութիւնը:—Հասա- րակական խոշոր չարիք. խտրութ. դասախօսութիւններ:— Տրւգիկ հակասութիւնները կեանքի մէջ:—Ազգային բնագոր- ծեան մի գիծ. սնանկութիւնները:—Կովկասի թիւրք մամուլը —Շարքը Ռուս:— † Անտոն Չեխով, Ա. Ա. . . . .	
Ա. Փոփօսեանի գործը գիտութեան, դատարանում:— † Գանձակի փոխ-նահանգապետ Անդրէեւ:—Կազանի մայր եկեղեցու կողովուրդը:— † Սուրմալուի դաւաճապետ Բողոս- յաւակիյ:— † Ներքին գործերի մինիստր Պլեկէ: . . . . .	135

Նոր շրջան IV տարի

Հրատ. XVI տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԵՐԵՎՈՒԹՅԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 7

Յ Ո Ւ Լ Ի Ս

1904



Թ Ի Ճ Ի Ռ

Տպարան Ա. Լուսաթիթիսի, Նիկ. № 21.

Скоропечатня Ар. Кутателадзе, Ник. ул., № 21.

1904

Дозволено цензурою. Тифлисъ, 23 іюля 1904 года

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 7

	Նրէ.
1. ԼՈՒՌԻՔԻՆԸ (վերջ), վէպ Ա. Ահարոնեանի . . . . .	5
2. Ա՛՛՛, ԵՍ ՀԻՒԱՆԴ ԵՄ, ոտան. Դ. Դեմիրչեանի. . . . .	27
3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, Ժերուկի . . . . .	28
4. ԵԳԻՊՏԱՀԱՅՔ, Ավօրի . . . . .	37
5. ՎՐԷԺ..., պատմուածք Կ. Հգորեանի. . . . .	49
6. ԱՐԻՍԻՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, Գ. Արաքեանի . . . . .	64
7. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԻԱՅԻ ԳՐԱԿԱՆ ՈԳԻՆ, Անրիկօ Կորրադիկի, Թարգմ. *** . . . . .	69
8. ՃԱՇՈՐԴՆԵՐ, Ա. Չելսուվի, Թարգմ. Ա. Աթայեանի . . . . .	81
9. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.—Չար. Ճիսինաձէի գրական գործունէութիւնը:—Նրա նոր գրքերը հայերի դէմ:—Կոյս Նունէի ազգութեան հարցը:—Մի գիտնականի կարծիքը վրաց գրականութեան մասին:—Մի ձեռագիր երգարան, Տ. Փիրումեանի . . . . .	87
10. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Գուտու Մէլրիկի՝ «Ամեղ զոն».—Կ. Հար.: 2) Իլգէ Ֆրապանի՝ «Անիծուած վայրը».—Կ. Հար.: 3) Գ. Անանեանի՝ «Կորածներ».—Արց. Արա.: 4) Մ. Գորկիի՝ «Մակար Չուրա».—Արց. Արա.: 5) Իմ Պատասխանը պ. Լին.—Տ. Յովհ. . . . .	96
11. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ. . . . .	116
12. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ.—Բիւլղարիայի վարդապետ XIX դարում, Ս. Բալաղեանի . . . . .	117
13. Ա. ՉԵԽՈՎ, Կ. Աղբալեանի. . . . .	127
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մեր կեանքը եւ գրականութիւնը:—Կեանքի արտաքինը եւ ներքինը:—Աշխարհի գոհութիւնը:—Հասարակական խոշոր չարիք. խղերա. դասախօսութիւններ:—Տրագիկ հակասութիւնները կեանքի մէջ:—Ազգային բնակարանութեան մի գիծ. սնանկութիւնները:—Կովկասի թիւրք մամուլը —Շարքը Ռուս:—† Անտոն Չելսուվ, Ա. Ա. . . . .	
Ս. Փոռօեանի գործը զինուորակ. դատարանում:—† Գանձակի փոխ-նահանգապետ Սնորէեւ:—Կաղանի մայր եկեղեցու կողպատուելը:—† Սուրմալուի զաւառապետ Բողուլաւակիյ:—† Ներքին գործերիմինիստր Պլեվէ: . . . . .	135

15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ռուս-ճապոնական պատերազմը:—  
Անկո-գերմանական համաձայնութիւնը:—Խաղաղասիրական  
շարժումը Ֆրանսիայում:—Կրօնական միաբանութիւնները՝ դէմ  
հրատարակուած նոր օրէնքը:—Սրկամեսայ զինուորական ծառա-  
յութիւն:—Ֆրանսիա եւ Վատիկան:—Նախկոպոսների միջ-  
նադէսը:—Ֆրանսիական կառավարութեան վերջին որոշումը:  
—Քրիստոսական գործեր:—Նոր ջարդեր թիւրքահայկական նա-  
հանգներում եւ ընդհարումների խնդիրը:—Մ. Կեղեղոնիս:—† Պօլ'  
Կրիւզեր, Ա. Ա. . . . . 149
16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 168
17. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 175
18. I ՅԱԻԵԼՈՒԱԾ. Հէյմս Մորիէր՝ «ՀԱՁԻ ԲԱԲԱՅԻ ԱՐ-  
ԿԱԾՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ», վէպ պարսկ.  
կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեան. 145—160
19. II ՅԱԻԵԼՈՒԱԾ, իշխ. Ա. Սումբատովի՝ «ԴԱԻԱՃԱ-  
ՆՈՒԹԻՒՆ», դրամա 5 արար., թարգմ. ուսու-  
բէնից Ալ. Ծատուրեան. . . . . 39—54

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարզ,  
մանաւանդ թեւրը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի  
երեսի վրայ. տոսնձնապէս ուշ դարձնել կէտազրուիթեան վրայ: Թարգմանու-  
թեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը և՛ բնագիրը:
2. Զննդունուած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս,  
իսկ յետոյ ոչնչացւում են: Չեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղար-  
կել ճանապարհածախար: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադար-  
ձնւում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը:  
Խմբագրութեանն առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են  
անվճարելի:
4. Խմբագրութիւնն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փո-  
փոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշնի» համարը չտտացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը  
տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է  
պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ:
7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ.: Հասցէի փոփո-  
խումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսի 20-ից ոչ ուշ,  
որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

## Լ Ռ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը \*)

### XI

Գիշերը, գիշերը... ո՞վ կը տար ինձ անմիջապէս մի մութ ու անձայն գիշեր, որպէսզի ես վերստին կարողանայի զգալ նրան ինձ մօտ, փարեղ նրան նիրհոյ խաւարի մէջ, համր լռութեան գրկում: Իմ գերագոյն իզն էր շուտով լսել նրա շրթունքներից, թէ նա իմն է և աշխարհում ոչինչ չի կարող այլևս մեզ անջատել: Նրա մի հատիկ համբոյրի ջերմութիւնը կարող էր ցրել բոլոր իմ մութ կասկածները, որոնք սպառնալի ամպի պէս խտացած խեղդում էին ինձ: Եւ յետոյ պէտք էր խօսել, խօսել, նա անբան բան կարող էր ասել մեր խուսափող երջանկութիւնը բռնելու համար:

Գիշերը... բայց դեռ մի քանի ժամ կար մինչև նրա գալը, մի քանի՜ ժամ... մի յաւիտենականութիւն: Հոգիս այրում էր անհամբերութիւնից: Ինձ լուում էր, թէ մինչև կը հասնի նա՝ այդ փրկարար ու սփոփիչ խաւարը իր անվերջ յօրանջող ու երազող լռութիւնով, կը պատահի մի անդառնալի, մի վճռական բան, որ կը խորտակի իմ երջանկութիւնը: Իրօք ինչ պիտի պատահէր, ինչումն էր կայանում վտանգը՝ ես որոշակի ասել չէի կարող, բայց վախենում էի, հոգուս մէջ խախտուած էր հասաստուն յոյսը, երկիւղը չար օձի պէս ներս էր սողացել այնտեղ, և ես ինձ զգում էի պաշարուած ու հալածական: Գիշերը, միայն նա կը փրկէր ինձ:

Եւ սպասում էի խաւարին, բայց մի չարախնդաց

\*) Տես «Մուրճ», № 6.

զուգադիպութեամբ այդ մառախլապատ, ամպամած օրը վառ ու երկար վերջալոյս ունեցաւ: Արևմուտքում ամպերը շառափունեցին և երկար ժամանակ կախուած էին լեռների վրայ ինչպէս հսկայական լապտերներ, որոնք արևի ծածկուելուց յետոյ ասես աշխատում էին որքան կարելի է երկար ժամանակ լուսաւորել խառաքող բնութիւնը: Դա մի ցաւոտ վերջալոյս էր, որպէս հոգեվարքը մարտում ընկած երիտասարդ վիրաւորի, որ հեշտութեամբ չի ուզում բաժանուել կեանքից, աշխարհից, իր վարդերազներից:

Եւ խառարը չէր գայիս, երկինքը չէր մթնում, շառափունել էր ու մնացել. «մահկանացուի ցաւերը հեղնող անողորմ բնութիւն», մտածում էի ես՝ նայելով կարմրատակած ամպերին:

Ամբողջ օրը երկու քոյրերը փակուած մնացին իրանց սենեակում, և ես հսկաւակ իմ բոլոր ջանքերի անկարող եղայ տեսնել Մարգարիտին: Վար կ'իջնէր նա ընթրիքին, թէ ոչ, ես չգիտէի, բայց վազուց էի սեղանատանը և սպասում էի սրտատրոփ՝ քայլելով յետ ու առաջ:

Նա ներս եկաւ գունատ ու տանջուած, աչքերի մէջ անօրինակ վիշտ: Ես նրան յաճախ էի տեսել տխուր, բայց այսքան խորունկ ցաւ դեռ երբէք չէր մուայել նրա բաց, բարձր ճակատը: Նա քիչ կերաւ, շատ լուռ մնաց, տանտիկնոջ հարցերին պատասխանեց հատհատ բառերով: Երբեմն-երբեմն նայում էր ինձ մի հայեացքով, ուր ես կարգում էի արգահատանը դէպի ինձ: Ճանտիկինը շարունակ ներկայ էր, խօսել չէր լինում, նա հազիւ ժամանակ գտաւ ինձ ասելու, որ զիշերը պարտեզ իջնեմ: Երևի ասելիքը լուրջ էր ու երկար, այլապէս նա չէր իջնի պարտեզ գիշերով, երբ այնպէս խոնար էր ու ցուրտ:

Ժամանակից շատ առաջ ես արդէն այնտեղ էի, յիշողութիւններով հարուստ վայրում, ուր երկու խնձորենի գլուխ զլխի տուած զոյգ քոյրերի պէս՝ հովանի էին

անում մի նստարանի վրայ: Մուսյլ գիշեր էր, մթնոլորտը տամուկ, որ թափանցում էր իմ զգեստները և հասնում մարմնիս: Հով չկար, բայց և այնպէս մի-մի տերև պոկւում էր ծառից և փոփուարով ընկնում իմ գլխի վրայ կամ ոտներին առաջ: Աշնան խղճուկ ու թօշնած տերև, որ մեռնում էր սրպէս փշրուած յոյս՝ այլևս երբէք չվերածնուելու համար: Հեռուից լսում էր վարարած գետակի շառաչը, նա դարձեալ ծեծում էր իր ատերը, դարձեալ հեգնում ու սգում և լուռ խաւարը արձագանդ էր տալիս նրա ցաւոտ հեծեծանքներին ու խենթ քրքիջներին: Է՛հ այս կեանքը... Ինչ կատարւում է մեր աչքի առաջ, ինչ մենք տեսնում ենք, շօշափում և զգում, այն եղկելի է, լացի և հեգնութեան արժանի, իսկ այն՝ ինչ թագնուած է մեծ լուսթեան տակ, միշտ խուսափում է մեզանից: Ո՞ւր է խորհուրդը մեր ցաւոտ գոյութեան: Մտքերս սև էին:

Նուիրական լուսամուտը դարձեալ թարթում էր վերից, բայց ես սիրտ չունէի նրան նայելու. երկու ձեռքով ու ծնօտով յենուած ձեռնափայտիս, ես նայում էի դէպի հեռուն, և վշտացած ու հալածական գեւի պէս իմ հայեացքը կորչում էր թանձր խաւարում, որի անհուն ծոցում ես փնտրում էի լուծումը ինձ տանջող առեղծուածի: Կեանքի ցաւոտ գաղտնիքը ես փնտրում էի խաւարի մէջ, որի իւրաքանչիւր մութ ծալքը ինձ համար ցաւի մի ձև էր: Ամպերի տակից հատ-հատ աստղեր երևում էին ու ծածկւում, որպէս ծնունդ ու մեռնող յոյսեր մարդկային հոգիներում:

Յոյսեր...

Բայց միթէ նրանք բոլորը պէտք է մեռնեն իմ հոգում, միթէ այն հիւանդ աղջկայ դունստ ուրուականը, որ այնպէս ցաւագնօրէն և սպառնալի ցցում է մեր մէջ՝ պիտի կարողանայ իր սառն, գերեզմանային շնչով խամբել մեր սիրոյ այնքան փարթամ ծաղիկը. միթէ Մարգարիտը նրա երկիւղից պիտի խոյս տայ ինձանից և դժբախտացնի թէ ինձ, թէ իրան: Վերջա-

պէս ո՞վ է կապել մեր բախտերը նրա հետ. ինչո՞ւ նրա սև ճակատագիրը, որ արգիւնք է մարդկային պարտաւորութիւնների իր անհեթեթ հասկացողութան, պիտի ծանրանայ նաև մեզ վրայ: Աշխարհում իւրաքանչիւր արարած կեանքի և երջանկութեան իր անբըռնաբարելի իրաւունքներն ունի. զոհերը գեղեցիկ են ու նուիրական, երբ իմաստ ունին. ինչո՞ւ թաղել սեփական կեանքը մի ուրիշի սաների տակ, երբ դրանով ոչինչ չի կարելի ուղղել:

Փախչել, փախչել, մտմտում էի ես, եթէ Մարգարիտը իսկապէս սիրում է ինձ, ապա նա յանձն կ'առնի հեռանալ ինձ հետ. մի սէր պարակելու, ծածկելու համար աշխարհը չափազանց լայն է: Այսպէս էի մտածում ես, և իմ սեփական տրամաբանութիւնն այն աստիճան խելացի, հիմնաւոր թուաց ինձ, որ խռոված հոգիս մի փոքր հանդատացաւ: Հաւատացած էի, որ Մարգարիտը կը համոզուի, մենք կը յայտնենք մօրը և կը հեռանանք: Քրօջը խաբելը երբէք դժուար չէր լինի: Այս միտքն այնպէս դրաւեց ինձ, որ կ'ուզէի վայրկեան առաջ բաժանել Մարգարիտի հետ: Փախչել, շուտով փախչել. այս երկու բառերը կախուած էին իմ շրթունքից, և ես ակամայ անդադար կրկնում էի ինքս ինձ և նայում դէպի դուռը, որտեղից պիտի յայտնուէր ըսպասածս կինը:

Եւ նա եկաւ, ինչպէս միշտ՝ թեթեւաբայլ ու երկշոտ: Ես ոտքի թռայ, ձեռներս տարածեցի դէպի նա և աղերսագին կանչեցի:

—Փախչենք, փախչենք, Մարգարիտ, հաւատո՞ւ ինձ, դա լաւագոյն ելքն է:—Պատասխանի փոխարէն նա երկու ձեռքս բռնեց և նայում էր դէմքիս լուութեամբ, կարծես նոյնիսկ խաւարի միջից աշխատում էր հոգիս կարդալ: Ես մնացի կարկամած:

—Երեխո՞ս երեխո՞ս ասաց նա՝ գլուխն օրօրելով և անուշ յանդիմանութեամբ.—նւր փախչենք, մարդ ինքն իրանից ի նչպէս կաշող է փախչել. վտանդի առաջ եսասի-

լուծինն է խօսում քո մէջ, իմ ընկերք: Փախուստի ժամանակ ամեն տեսակ բեռ կարելի է ձգել ճանապարհին, բացի այն, որ մենք կրում ենք մեր հոգում: Նստիր, նստիր այստեղ ու լսիր ինձ:

—Օ՛, ոչ, ոչ, նստիս ասան, որ դու ինձ սարսափելի բան հազորդելու չես, ասան, որ դու դարձեալ իմն ես, որ ամեն ինչ կորած չէ, ասան, որ այսօրուայ տխուր միջնադէպը անդառնալի անջատման նախաբանը չէ:

—Նստիր, քեզ ասում եմ, այսքան լալկան փոքրոգուծիւնը անվայել է մի տղամարդի, ես քեզ անուանում եմ երեխայ, բայց էլի... սարսափելի բան չկայ, միայն խօսք տուր ինձ լսել հանդարտութեամբ, և հաւատացած եղիր, ինչ էլ ասելու լինիմ, դա մեր երջանկութեան համար է:

Մենք տեղ բռնեցինք նստարանի վրայ:

—Այնպէս չէ՞, սիրելիս, դու կը կատարես, ինչ որ պահանջեմ քեզանից, շարունակեց նա.— յիշ՞ում ես, դու ինձ խօսք ես տուել հէնց այս նստարանի վրայ, այս իսկ ծառերի տակ, որոնք մեր առաջին համբոյրի, մեր ուխտի վիճաներն են եղել: Այժմ հասել է ժամանակը, ասան, կամեն՞ում ես կատարել քո տուած խոստումը, թէ՞ ոչ:

—Բայց...

—Ոչ մի բայց, ինչքան և քեզ սիրելիս լինիմ, ինձ համար մահու չափ ծանր կը լինի, եթէ սիրածս տղամարդը խոստմնադանց լինի:

—Ի՞նչ ցանկութիւնն ինձ համար օրէնք է, միայն ազաչում եմ, ասան շուտով:

—Այդպէս, ես այդպէս էլ սպասում էի, այժմ լսիր առանց վրդովուելու և յուզուելու. դու պէտք է հեռանաս այստեղից վաղը և եթէ:

—Անողորմ... անողորմ...

—Դու լսց ես լինում... ան դու երեխան, կարծում ես, որ քո բացակայութիւնն ինձ համար աւելի քիչ արժէ, քան իմը քեզ համար: Կեանքն է այդպէս,

իմ ընկեր, իմ խեղճ փիլիսոփա, մեր վայելքի, երջանկութեան իւրաքանչիւր վայրկեանը մենք ստիպուած ենք ձեռք բերել զոհերով. այն էլ լաւ է, որ զոհի և արցունքի մէջ համաչափութիւն պահպանուի, յաճախ այդ էլ չի լինում: Եւ այսպէս դու պէտք է հեռանաս:

— Բայց ինչո՞ւ... ինչո՞ւ...

— Դու դարձեալ հեկեկում ես, մի՞թէ ես պէտք չունիմ քաջակերութեան, սփոփիչ խօսքերի, ո՞ր փնտրեմ մխիթարութիւն, երբ դու արտասուում ես: Գերագոյն անհրաժեշտութիւնն է մեր անմիջական անջատումը, հնազանդուենք, հողիս, որ բոլորը չկորցնենք: Դու գիտես, որ հիւանդ գլուխների մէջ որևէ գաղափար մեխի պէս ցցւում է անդառնալի կերպով: Խեղճ քոյրս հաւատացած է, որ դու նրան սիրում ես, ու անդադար կրկընում է, թէ ես նրա ճանապարհը վաղում եմ: Նրա ատելութիւնը դէպի ինձ զարհուրելի է. այսօր սենեակում նա քիչ մնաց բոլոր շորերս պատուռոտէր. ես վար իջայ յատկապէս նրա պահանջով, նկարը վերև տարայ, պատուաեցի, այլապէս ամբողջ սենեակը քարուքանդ էր անում: Դա մի խենթ կատարութիւն էր, որ պիսին ես դեռ երբեք չէի տեսել: Նա այսօր հին, կուտուած մազձն էր դուրս թափում, սարսափելի էր նրան տեսնել: Ես հաւատացած եմ, որ նա այդպէս էլ կը մնայ և՛ վաղը, և՛ միւս օրը, և՛ միշտ, քանի դու այստեղ ես. ահա թէ ինչո՞ւ պէտք է հեռանաս և անմիջապէս:

— Յետո՞յ...

— Յետոյ... ես այդ էլ եմ մտածել, ես գիտէի, որ դու այդ պիտի հարցնես, այսօր գրեցի, որ մայրս շուտով գայ, ես նրան կը պատմեմ բոլորը, ես կը յայտնեմ նրան նաև իմ անդառնալի վճիռը քեզ հետ ամուսնանալու, ապա մենք քաղաք կը գանք, ուր մեր տեսակցութիւնը յոյս ունիմ անկարելի չի լինի:

— Յետո՞յ...

— Մեր ապագան, մեր երջանկութիւնը ինձ հաւատա, սիրելիս, և վստահ եղիր: Թո՞ղ, որ այս փոթորիկն

անցնի, այս ծանր հանդամանքները մի փոքր պարզունեն նաև ինձ համար, մնացածը մենք կը տեսնենք: Բաւականացիք այս իմ հանգիստաւոր խոստումով — ես կամ քոնն եմ, կամ գերեզմանին: Մի լինիր այդքան պահանջող, չէ որ ես էլ եմ ընկճուած այս անակնկալ գիպուածի ծանրութեան տակ, դու այնպէս ես պահում քեզ, ասես հարուածը միայն դու ես ստացել: Իսկ ես... չէ ես էլ եմ կարօտ օգնութեան, քաջալերութեան, մխիթարութեան...

Նրա ձայնը խղուեց, և արցունքները թափուեցին աչքերից:

Ես կամացուկ զրկեցի գլուխը և համբուրում էի թաց աչքերը ու մեղմիւ մխիթարում:

— Քո սիրոյ համար, հոգիս, չկայ այնքան ծանր զոհաբերութիւն, որ ես յանձն առնել չկարողանամ, ես վաղը կը մեկնեմ անպատճառ:

Ուշ գիշեր էր, խաւար սենեակում անկողնիս վրայ նստած լուռ մտածում էի ծանր օրուայ ընթացքում անցած դարձածի մասին: Մի քանի րոպէ առաջ բաժանուեցի սիրածս կնոջից և արդէն ինձ թւում էր, թէ նա անդառնալի կերպով կորած է ինձ համար: Ելի մի քանի ժամ, լոյսը կը բացուէր, և ես պէտք է մեկնէի... Յետոյ... այդ սարսափելի «յետոյ»-ին նա էլ պատասխան չգտաւ. դա մութ անորոշութիւնն է, այն զարմանալի խաւար ոյժը, որ մղում է մեզ գէպի մեր մարդկային ճակատագիրը, մենք ստիպուած ենք հնազանդուել և քայլել, քայլել... Երկու ամիս առաջ եկայ այստեղ մայր բնութեան ծոցում հանդիստ և խաղաղութիւն գտնելու և այժմ մեկնում եմ այստեղից՝ տանելով իմ հոգում մի ծանր թախիժ: Զարհուրելի են բախտի խաղերը:

Խոստացայ մեկնել, երբ միասին էինք, այժմ մենակ մնալով՝ զգում էի այդ սարսափելի խոստումիս բոլոր ծանրութիւնը: Ո՞ւր մեկնեմ և ինչո՞ւ: Ի՞նչպէս կարելի է զատել իրարից մարմինն ու հոգին:

և յետոյ ստիպել նրանց, որ ապրեն առանձին-առանձին: Ի՞նչպէս կ'ուզէի վերատին տեսնել նրան, որ իմ վըշտի և երջանկութեան ազբիւրն էր, ծունկ չսոգել առաջը ազերսել, որ յետ տայ ինձ տուածս սարսափելի խոստումը, որ չստիպի ինձ մեկնել: Ես նրան կ'ասէի. «Ներքի՛ր ինձ, հոգիս, ես սյժ չունիմ, ես անկարող եմ առանց քեզ ապրել. համարիր ինձ երեխայ, փոքրոզի, ուրիշ էլ ինչ կ'ուզես, բայց չեմ կարող, ես կը մեռնեմ առանց քեզ»: Բայց նա չկար, մենակ էի սենեակուս, խաւարը թանձրանում էր ու ճնշում իմ կուրծքը ինչպէս մի մութ զանգուած: Ի՞նչ պէտք էր անել, վեր կացայ, մօտեցայ լուսամուտին և նայում էի զէպի դուրսը, ուր նոյնպէս խաւար էր, որպէս իմ սրտում: Նայում էի և մտածում, դուրս չգամ արդեօք և քայլեմ այդ խաւարի միջից հեռու, հեռու, զէպի լեռները և մթին ձորերը, զնամ՝ էլ երբէք յետ չգտնուիլու համար: Չէ՞ որ ես համարեա հալածական էի, մերժուած ու խեղճ... զնամ, յետոյ... սէ՛հ դարձեալ այս «յետո»-ն, ոչ նրանից ազատուելու սյժ և ոչ ընկճելու քաջութիւն էի զգում: Դուռս կամացուկ բսաց ճխանի վրայ, սիրտս թունդ և լաւ, ես թափով յետ դարձայ. նա՛ էր... քիչ մնաց բարձրաձայն ճչամ. «Չեմ զնայ, չեմ զնայ, Մարգարիտ, ազատիր ինձ իմ ծանր խոստումից»: Բայց նա իր ստիպութեան համեմատ երկու ձեռքով փակեց բերանս:

—Սնւս, սնւս, իմ ընկեր... այս վերջին խենթութիւնն է, որ ես կատարում եմ քեզ համար... յանցաւոր խենթութիւն, այնպէս չէ... բայց նա խորը քնած է օրուայ ցնցումներից յետոյ... համբերել չկարողացայ... եկայ վերջին անգամ իմ բուռն սիրոյ ապացոյցը տալու... անջատու՛մը հիմայ էլ այնպէս ծանր չի լինի քեզ համար, այնպէս չէ...

Մտաացայ բոլորն, ինչ ուղում էի նրան ասել, իմ աէրն ու հրամայոյն էր խօսում, և ես չէի կարող չհնազանդուել, միայն լուռ էի նրա հմայիչ ձայնը, գուր-գուրիչ փսփոտը խաւարի մէջ, լուռ էի և երջանիկ էի.

այդ երջանիկ վայրկեաններն փոխարէն նրա պահանջած զոհաբերութիւնը, այդ ժամանակաւոր անջատումը չափազանց չնչին էր: Ո՛չ, ես մերժուած, հալածական չէի, Մարգարիտի սիրոյ այս ուժգնութիւնը հեշտացնում էր իմ վիճակը, վերահաստատում այդպէս անսպասելի կերպով խախտուած հաւատս:

Մենք լուռ էինք, էլ խօսք չկար. հերթը զգացմունքին էր. Մարգարտը նստել էր իմ կողքին՝ դեղանի գլուխը ըստ իր սովորութեան յենած իմ ուսին, մեզմիւ հետեւ էր, ապա կամաց-կամաց խոր քուն մտաւ:

Այդ չարաբաստիկ օրուայ ընթացքում կրած հոգեկան բուռն յոյզերը երեւի խիստ յոգնեցրել էին նրան: Ես երջանիկ էի, որ նա այնպէս հանգստանում է իմ ուսին, այդ գիրքով նա սքանչելի էր: Չէի համարձակուում անգամ ամենաչնչին շարժում գործել, որ չխանդարեմ նրա հանգիստը: Լուսաբացը հետու էր, քայրը շուտով չէր զարթնի, այդ ես գիտէի, վճռեցի անշարժ մը նալ, հսկել և երբ արեւելքում հորիզոնը գունատուի, արթնացնել Մարգարիտին, որ իր սենեակին անցնի: Նա շարունակում էր իր խաղաղ և առողջ քունը: Ես հաճոյքով զգում էի նրա մեզմ շունչը իմ աջ այսի վրայ, լսում էի անուշ շնչառութեան ձայնը և մտածում էի այս տարօրինակ դիպուածի մասին, որ իմ բախտը դրբեց այս ընած գեղեցիկուհու ձեռքում, որ կապեց մեր կեանքերը անդառնալի կերպով: Այս իրականութիւնը՝ չնայելով իր պատճառած հոգեկան այնքան բուռն, յաճախ ցաւոտ յոյզերին, անուրջի պէս գեղեցիկ էր, երազների հմայքն ունէր: Այս առեղծուածական կինը մի փոթորիկ էր, որ ինձ տանում էր իր ոլորանների մէջ. ես և՛ տառապում էի, և՛ երջանիկ էի: Երեւի իւրաքանչիւր սէր մի փոթորիկ է, մտածում էի ես, որ մեզ տանում է բարձունքներից շժմեցնող արագութեամբ. ով ճաշակում է նրա վսեմ քաղցրութիւնը, նա անհրաժեշտապէս պէտք է տանի և դառնութիւնները: Եւ նա հանգչում էր... ինձ վիճակուած փոթորիկը, հանգչում էր հէնց

իմ ուսին ինչպէս իմ անբաժան բախտը, ես վախենում էի նրանից և դողում էի նրա համար:

Գետը շարունակում էր որոտալ հեռաւորութեան մէջ, և նրա ձայնը, որ քիչ առաջ խօսում էր ցաւից ու հեգեութիւնից, այժմ էլ այնպէս վհատեցուցիչ չէր. ես լսում էի նրա խուլ շառաչը առանց սև մտքերի, նրա որոտը նայնիսկ մի ինչ-որ նիրհեցնող, օրօրող բան ունէր իր մէջ. ակահնձ էի դնում, և կամաց-կամաց նա ամբողջապէս դրաւեց իմ ուշադրութիւնը: Ես վերստին յիշեցի փոքրիկ աղջկայ դժբախտութիւնը, յիշեցի նրա ահագին վիշաք իր այժի կորուստի համար, և սիրտս ճըմլուեց ցաւից: Փոքրիկ հով եկաւ և կամացուկ սլալացըրեց լուսամուտիս առաջին դանուող ծառի տերեւները. մի թռչուն նրա վրայ մեղմիւ ճթճթաց և կրկին քուն մըտաւ: Յետոյ ինձ թուաց, թէ փոքրիկ աղջիկը եկել է իմ լուսամուտի տակ կանգնել, լաց է լինում աղիողորմ ձայնով և իր այժը խնդրում ինձանից: Լսում էի նրա հեծկտանքը, վշտտ, յուսահատ, որ հոգուս խորքն էր թափանցում. աշխատում էի վեր կենալ, նայել լուսամուտից, կամ վար իջնել, մխիթարել նրան, բայց շարժուել չէի կարողանում... Եւ յանկարծ փոքրիկ աղջկայ լալկան մրմունջները, նրա մեղմ հառաչանքները, գետի որոտը, ծառերի սօսափիւնը դադարեցին, և նրանց փխարէն հէնց իմ ականջի տակ մէկը ճչաց ահագին ձայնով «գո՛ղ, գո՛ղ, էլի՛, ուճճ՛»... Զարհուրելի էր. այդ ձայնը կարծես կոկորդից չէր հնչում, այլ մի պատըռուած, աւերակ դարձած կրծքից, և իր հնչիւնների հետ միաժամանակ դուրս էր քաշում սրտի արիւնտտ կտորտանքը: Այդ վերջին «ուճճ»-ը... դա մի սոսկ ցաւի հառաչանք չէր, այլ միաժամանակ անհուն վշտի և դայրոյթի աղաղակ, որ որբան ագէլտարչ էր, նայնքան սոսկալի: Այդպէս է ճշում նա, ով յանկարծակի մի աներևոյթ ուժով տարւում է անդունդների վրայ, բաց աչքով տեսնում է մահը, զգում է նրա շունչը և մեռնել չի կարողանում: Այդ սպանիչ ճիչը որոտի պէս ճայթեց իմ գըլ-

խին, փշաքաղեց մարմինս, ես դողալով ու շճած ոտքի կանգնեցի և կիսախառար սենեակում տեսայ ինչպէս Մարգարիտը երկու ձեռքով բազուկս սղմած՝ դողում է իմ կողքին, և միևնոյն վայրկենին ինչպէս մի յանկարծական երևոյթ իմ աչքին ներկայացաւ մի այլ ահաւոր երևոյթ։ Ես տեսայ Կլարային կից դրան շէմքում կիսամերկ, բազուկներն ու կուրծքը հօլանի, հարուստ մազերը խառնիխուռն փռուած ուսերին, աչքերը չռած ու զայրացկոտ, դէմքը ծուռած, բերանը բաց կարծես մի անհնարին սարսափից, ձեռները բողբոջ ու սպառնալի ձևով, բաց կռները դէպի մեզ տարածած, նս էր ճշում այնպէս զարհուրելի կերպով։ Այս սպանիչ պատկերը ինչպէս մի շլացուցիչ փայլակ անցաւ իմ աչքով, յետոյ Կլարան կանգնած տեղը քրքջաց զիւ, երկար, և այդ քրքիջի հնչիւնները, նրա այլանդակ ելևէջերը դրնալով դնալով նուազեցին, ապա յանկարծ մարեցին ինչպէս կարուած լարի հեծեծանք, և նա ամբողջ հասաւորով փռուեց յատակին։ Միայն այդ ժամանակ Մարգարիտը թողեց իմ բազուկը, ճշալով դուրս վազեց և ընկաւ բրոջ վրայ։

Եւ այդ բոլորը—այն ճիչը, այն քրքիջը, Կլարայի ուշաթափութիւնը—կատարուեց այնպիսի արագութեամբ, որ ես կանգնած էի քարացած՝ առանց հասկանալու, թէ տեսածս ինչ է, երսօյ, թէ իրականութիւն... Ես ուշքի եկայ միայն այն ժամանակ, երբ լսեցի Մարգարիտի օգնութիւն կանչող աղաղակը։ Մօտեցայ, մենք երկսով զգուշութեամբ բարձրացրինք կիսամեռ Կլարային և տեղաւորեցինք անկողնի վրայ։ Նա չռած աչքերը յառել էր առաստաղին, նայում էր անթարթ ու յամառ հայեացքով՝ ասես այնտեղից սպասելով մէկին։ Մարգարիտը երկու ձեռքով ծածկեց իր գէմքը, ծունկ չողեց նրա կողքին և գլուխը կուացրած անկողնի վրայ՝ մեղմիւ հեկեկում էր։ Ես կանգնած մնացի հակառակ կողմում համր ու քարացած, չգիտէի ի՞նչ անել, ի՞նչ ասել։ Սակայն իրերն ինձ համար կամաց-կամաց պարզը-

ւում էին, կատարուել էր այն, ինչից այնքան դողում էր Մարգարիտը, մեր գլխին կուտակուած փոթորիկը պայթել էր յանկարծ, մեզնից անկախ, մեզնից դուրս, և մենք շանթահարուած էինք: Վերստին յիշեցի գիշերուայ անցքերը, յիշեցի դեռի դուռը, փոքրիկ աղջկայ հեծեծանքները իմ լուսամուտի տակ, որ անշուշտ մի երազ էր, ասել է, որ ես էլ քնով էի անցել, ինչպէս և Մարգարիտը, լուսաբացին մօտ վարթել էր Կլարան և բաց դռնից տեսել էր մեզ, մնացածը հասկանալի էր: Յանցագործ էինք առանց յանցապարտ լինելու, գժբախտ էինք ու խորտակուած վերջնականապէս, այժմ տարսափելի իրողութեան հանդէպ սիրտ չէինք անում իրար նայելու: Այդ ըստ ու գունատ ուրուականը, որ ձրգուած էր մեր առաջ անկողնի մէջ, իր քար լուծեան տակ ծածկում էր մի անողորմ դատաւիճիւն մեր գէմ՝ արձակուած ո՞վ գիտէ ո՞ւմ ձեռքով: Ո՞ւր է բանականութիւնը, հաշուի առնուած իրերի տրամաբանութիւնը, ո՞ւր է անհատականութիւնը իր անբռնաբարելի իրաւունքներով, ո՞ւր է գերագոյն ներդաշնակութիւնը յանցանքի և հատուցման մէջ, մեզ զեկալարող, մեր ողբալի գոյութիւնը պայմանաւորող իրերը միթէ մեզանից անկախ, մեզանից դուրս են միշտ: Ո՞վ է մեզ տանում, ո՞ւր և ինչո՞ւ: Ահա մեծ լուծեան մէջ մեզ անհասկանալի ու խաւար այժեր կամաց-կամաց, վայրկեան առ վայրկեան դարբնել էին մեր բախտը կաշկանդողչութաները և այժմ գարան մտած որսորդների պէս յանկարծակի կապտուում, պրկում էին մեզ՝ անկարող դարձնելով մի հատիկ քայլ անելու գէպի մեր երազած երջանկութիւնը կեանքի մեծ ճանապարհով: Խեղճ, ոգորմելի ու անղօր էինք այդ ոյժի առաջ, որին համարում ենք կոյր զիպուած, և որը երևի մեզ անհասանելի իր տրամաբանութիւնը, իր դարհուրելի բանականութիւնն ունի, քայլում է գէպի մութ նպատակներ՝ գատ-գատ բախտերն ու անհասները իր ձեռքին իբր արիւնտտ շաղախ գործածելով: Շաղախ են, շաղախ և՛ սէր ու բոյր, կեանք

ու արև, յոյզեր ու յոյսեր, ծիծաղ ու արցունք, երիտա-  
սարգութիւն ու վայելքներ, երազներ ու ցաւեր, ոյ՛ջ  
չազախ են լոկ մի յաւիտենական շէնքի, որի ինչ լինելը  
չդիտենք և սրը շինուում է շինուում, բայց վերջ, չունի:

Փշրուած էինք ու անյոյս. Մարգարիտը լալիս էր,  
իսկ իմ գլխում դառնում էին սև մաքերը ժխորով, և հո-  
դիս միտում էր: Մարտափի պէս մի բան էր թազաւորում  
սենեակում, մեր շուրջը, մեր գլխի վերև և մանաւանդ  
կարայի բաց մնացած, սլորած աչքերում: Ո՛հ այդ աչ-  
քերը, այդ քարացած բիւբերը... ես աշխատում էի չնայել  
նրանց, խոյս տալ այդ սպանիչ հայեացքից, որ մարդկա-  
յին չէր, կ'ուղէի դոնէ, որ նա թարթէր, մի շարժում  
գործէր, մի բան ասէր, թէկուզ անիծէր մեզ այնպէս,  
որ բառերը հալուած մետաղի պէս կաթ-կաթ ընկնէին  
մեր գլխին, այրէին, փսթոթէին: Բայց նա անշարժ էր  
ինչպէս մի մարմարէ մահարձան մի հին գերեզմանի  
փրայ. նրա դունատ, մահատեսիլ գէմքի և ոչ մի ջիւր  
չէր շարժում, շրթուները չէր գոլում, կոպերը չէին  
թարթում, ճակատը չէր կնճուում, նրա հոգում յան-  
կարծակի մեռան յոյզ ու իղձ, ցաւեր ու երազներ՝ տե-  
ղի տալով գերեզմանային ցրտութեան ու խստութեան:  
Եւ այդ արձանացած գիակը այնուամենայնիւ նայում  
էր այն յամառ ու անվերջ հայեացքով, որով մեռնողնե-  
րը կարծես պատպում են անհունը, ուր տիեզերքի  
աներևոյթ ոյժերը դարձնում են յաւիտենականի շէնքը  
միլլիոնների բախտերից ու երազներից: Նա նայում էր,  
և ինձ թւում էր, թէ նա տեսնում է և՛ իր, և՛ մեր, և՛  
ամենքի ճակատագիրը, խօսում է գերմարդկային լե-  
զուով մեր կեանքը զեկավարող մութ, անսանձ կարողու-  
թեան հետ, կեանքի առեղծուածի լուծումն է վնասում,  
այս գերադոյն ժամին վերջապէս ճգնում է իմանալ, թէ  
ո՞ւր է խորհուրդը մեր սև գոյութեան, ինչո՞ւ մինչև իսկ  
սէրը, որի վրայ իբր թէ հաստատուած է տիեզերքը,  
նոյնպէս ցաւոտ է, ինչո՞ւ համար ինքը աշխարհ եկաւ,

ապրեց ու տառապեց և անցնում է այժմ որպէս մի  
չնչին հիւլէ տիեզերական խօլ մրրկի մէջ:

Սարսափելի հայեացք, ընկճող, խեղդող հարցեր,  
որոնցից կ'ուզէի ազատուել. նրանք այրում էին իմ ու-  
ղեղը շիկացած երկաթի պէս, ես սասանուած էի...  
Կանգնած էի տեղումս՝ չիմանալով ինչո՞ւ և տառապում էի  
կարծես իրականութիւնից կտրուած մի երազական  
աշխարհում: Սա մի տանջանք էր, որի գիտակցութիւնն  
ունէի և որից խուսափելու հնարաւորութիւնից զրկուած  
էի:

Սենեակում դեռ իշխում էր վաղորդեան կիսախա-  
ւարը, մի պարզ, խորհրդաւոր ստուեր, որ պատել էր կահ-  
կարասիքը, պատերը՝ ինչպէս մի նուրբ քօղ, գիշերային  
մթութեան յետին մնացորդ, որ անկարող էր եղել ծած-  
կել մեզ պատահականութեան այս կոյր և ահագին հա-  
րուածից:

Իրսում գիւղը կամաց-կամաց շարժւում և գործի  
էր կենում. անասունները անհող բառաչով դիմում էին  
դաշտ. լուում էին ճանապարհով անցնող գիւղացիներ-  
րի հատ-հատ ձայներ, ամենօրեայ կեանքն էր վերըս-  
կուում միակերպ, անյոյզ և երջանիկ անգիտակցու-  
թեամբ, իսկ մենք մեր գիտակցական ու մեծ յոյզերի  
փոխարէն քարացել էինք մեր տեղում որպէս յանցաւոր-  
ներ, որոնք անկարող են խոյս տալ իրանց յանցադոր-  
ծութեան տեղից: Ո՞վ է Աստուածային գիտակցութեանը  
կցորդել ցաւերի այս ահագին բաժինը:

— Թո՛ղ ինձ մենակ:

Ես ակամայ չորս կողմս նայեցի՝ դարմացած, որ  
բար լուութեան մէջ խօսող կայ: Սակայն այդ նա էր,  
Մարգարիտը:

— Բայց այս ժամին... այս կացութեան... դնամ,  
տանտիկնո՞ղը կանչեմ:

— Թո՛ղ ինձ, ինդրում եմ, մենակ և ոչ որի մի կան-  
չիր,— կրկնեց նա առանց գլուխը բարձրացնելու:

Շեշտը վճռական էր, զգացի, որ աւելորդ կը լինէր

հակաճառել, և յետոյ ես միթէ կարող էի իմանալ, թէ ինչ է վնասը ու այս խեղճ ու տանջուած հոգին իր միայնութեան մէջ: Հոգիները ծովեր են, որոնց յատակը երբէք արևի շողը չի լուսաւորում: Գուրս եկայ զգուշութեամբ, բայց անկարող եղայ տնից հեռանալ, փակուեցի իմ սենեակում:

Արևը կամաց-կամաց բարձրացաւ հորիզոնի վրայ, որտեղից ամպերը իսպառ քաշուել էին. պայծառ երկընքի տակ բացուեց աշնանային մի սիրուն օր: Լուսամուտից թափանցած շողերը սլոզել էին սենեակս ոսկեդոյն ցոլքերով, որոնց մէջ լողում էին բոլոր առարկաները, բայց իմ հոգում դեռ իշխում էր մութ դիշերը: Մտքերի, սպաւորութիւնների բեռով ծանրացած զըլուխ երկու ձեռքով բռնած՝ ընկայ աթուռի վրայ. ինչ էր կատարում ինձ հետ, ուր էի ընթանում այսպէս, ասել չէի կարող. զգում էի միայն, որ կեանքիս յենակէտը կորցնում եմ ինչպէս նաւաբեկումից յետոյ ծովի ալիքների կատաղութեանը մատնուած մի դժբախտ արարած, որ ափ ու վրկուլթիւն գտնելու էլ յոյս չունի:

Խոհերս ընդհատեց մի կառքի ազմուկ, որ ըստ երևոյթին մեր դրանը կանգ առաւ: Անմիջապէս յետոյ ես լսեցի, թէ ինչպէս տանտիկինը շտապ-շտապ բարձրացաւ, բաց արեց հարևան սենեակի դուռը և բացագանչեց.

— Ձեր մայրը, տիկին:

Թեթև սարսուռ անցաւ մարմնովս: Այդ մայրը... նրա գալուստը խռովեց ինձ. ինչ կապ կար նրա և իմ մէջ. նա տակաւին ոչինչ չգիտէր, ոչինչ, եթէ դիտենար էլ, միթէ մեղաւոր էի նրա առաջ, միթէ յանցագործ էի. անշուշտ ոչ, բայց և այնպէս դողում էի, կարծես այդ կինը գալիս էր յատկապէս ինձանից հաշիւ պահանջելու իր զաւակի դժբախտութեան համար: Ընկերական, հասարակական յարաբերութիւնների, իրար բազխուող կրքերի, բախտերի բարդ ցանցի մէջ մայրերը միշտ իրանց առանձին և եղակի իրաւունքներն ունին,

որոնք չեն ենթարկում սովորական տրամաբանութեան, որովհետեւ նրանց հիմունքը տարբեր է: Անկախ բոլոր հանգամանքներից, անհատական իրաւունքներից, օրէնքներից, բարոյական հասկացողութիւնից՝ մայրը իր զաւակի երջանկութիւնն է վնասում աշխարհում, կատարեալ, գեղեցիկ երջանկութիւնը, որպիսին միայն նա գիտէ երազել: Ոչոք և ոչինչ չի կարող հերքել նրա այս գերազոյն իղձը, որովհետեւ նա մայր է, և նրա առաջ մեղաւոր են բոլոր նրանք, որոնք իր սիրելիների դժբախտութեան պատճառ են հանդիսանում թէկուզ ակամայ: Վշտացած մայրութիւնը մի ծանր վիրաւորանք է մայր բնութեանը: Եւ ես գողում էին երևի հէնց այդ մայրութեան առաջ, իմ գոյութիւնը հակառակ իմ ցանկութեան դարձել էր ցաւերի աղբիւր նրա զաւակների համար. բացատրութիւն չկար, նա մայր էր...

Մէկը դուռս ծեծեց և առանց սպասելու իմ ձայնին՝ թափով ներս ընկաւ. ասնախկինն էր, գունատ, վախեցած, խղճալի:

—Մ. խ, սրպիսի դժբախտութիւն, պարոն, դուք երևակայել չէք կարող. խեղճ օրիորդ, նա համարեա կիսամահ է... գիշերը կաթուածահար է եղել և անկողնում քարացել: Մայրն եկաւ... խեղճ Մարգարիտ, ինչպէս է պատահել, երևի դուք էլ լսել էք որևէ ձայն, այնպէս չէ, անհանգիստ էք եղել. խեղճ Մարգարիտն ի՞նչպէս է վախեցել, նա էլ կարծես ուշքը կորցրել է, չի իմանում ինչ է անում: Լաւ է, որ մայրն եկաւ, պատրաստում են մեկնելու անմիջապէս. խեղճեր... ի՞նչպէս են արտասուում, լսում էք...

Ի՞նչպէս չէ... բոլոր ժամանակ, ինչ խօսում էր պառաւը, իմ ուշքը դրաւել էին միւս սենեակից լսուող մեզմ հեծեծանքները. մայրն էր արդեօք, թէ՛ Մարգարիտը, ես չգիտէի, բայց դա այլևս հետաքրքիր էլ չէր. երկուսի արցունքն էլ հաւասարապէս ինձ էր վերաբերում, ես բաժին ունէի, ես լալիս էի նրանց հետ, ապրում էի նրանց ցաւը, հոգիս լուռ մխում էր:

—Ո՞վ կը սպասէր, շարունակեց տանտիկինը, երեկ նա լուռ էր, իսկ այսօր, սարսափելի է, միայն նայում է. այս յարկի տակ այսպիսի դժբախտութիւն դեռ երբէք պատահած չէր: Ձեզ համար էլ երեւի ծանր է, իմ սիրելի պարոն, հարեանութիւնն ուրախ չեղաւ, բայց ի՞նչ արած, ո՞վ կը սպասէր, Տէր Աստուած, սկզբում ամեն ինչ այնպէս լուռ էր ընթանում և յանկարծ այսպիսի վախճան:

Ախ, այս պառաւը, որ գիտէ միշտ անտանելի լինել, չգիտէի ինչպէս խօսակցութիւնն ընդհատել և ճանապարհ դնել:

—Ի՞նչ պայծառ է օրը, այնպէս չէ, տիկին:

—Այո՛, օրը պայծառ է, այսուհետև մենք շատ այսպիսի օրեր կ'ունենանք, սկսում է մեր լեռների փոքրիկ ամառը:

—Յետոյ այնուամենայնիւ ձմեռը կը դայ, դաժան, մահաշունչ:

—Հն՛, իհարկէ, աշխարհի բանն է. ամեն ինչ իր ձմեռն ու վերջն ունի. խեղճ կլարա, նրան շուտ վերայ հասաւ:

—Աշխարհի բաները...

Ես սկսեցի մեղմիւ սուլել չգիտեմ ինչ... տանտիկինն լուեց և զարմացած նայում էր, երեւի արածս նրան թւում էր տարօրինակ:

—Դուք գունատ էք, ինչո՞ւ էք գունատ:

—Մի՛ թէ:

—Այո՛, շատ գունատ. ի՞նչ է պատահել, երեւի գիշերը վնաս էք քնել. հասկանում եմ, բողբոջի մօտիկ այսպիսի դժբախտութիւն... իհարկէ՛՝ դժուար էր ընել:

—Աշխարհի բաներն են այդպէս, մէկը գունատ է, միւսը լալիս է, իսկ օրը պայծառ է:

—Խեղճերը, հա լալիս են... ես էլ խօսքով ընկայ, հազարումի բան պէտք է անել, մեկնում են ախր: Դուք ցած գնացէք նախաճաշելու, այսօր մենմենակ կը

լինիք, ուհ, պառաւները, մոռացայ, որ եկել էի ձեզ նախաճաշի կանչելու:

Վերջապէս թողեց ինձ. անբան բան ունէի մտածելու: Վայրկեանները խոհերով բեռնաւորուած՝ պաշարել էին գլուխս, չգիտէի ինչից սկսել, ուր յանգել, աւր բաժանութիւնը խոյս էր տուել, և ուղիղումս ստեղծուել էր մտքերի մի ժխոր: Մի բան միայն զիտէի խիստ որոշ, որ «նրանք մեկնում են այսօր»: Այդ ինձ ոչ զարմացնում էր, ոչ վշտացնում, նոյնիսկ ինձ թուում էր անհրաժեշտ, որ նրանք մեկնեն: Յետոյ դարձեալ սկսեցի սուլել ինքս ինձ և յանկարծ զարմանքով ու դժգոհութեամբ նկատեցի, որ այդ տարօրինակ, անպատեհ սուլոցի մէջ ես կամացուկ ասում եմ՝ «նրանք մեկնում են, նրանք մեկնում են, մեկնում են»...

Եւ նրանք մեկնեցին երեկոյեան դէմ, երբ հասաւ յատկապէս պատուիրուած փակ կառքը: Ես դուրս եկայ միայն այդ ժամանակ և մօտեցայ մօրը. խօսք չունէի ասելու, նայել էլ չէի կարողանում, նա երևի հասկացաւ յուզմունքս և ինքը առաջինը մեկնեց ձեռքը:

— Շնորհակալ եմ, պարոն, դուք անչափ բարի էք, դուք միշտ այնպէս բարի էք եղել, մենք ձեզ էլ երբէք չենք մոռանայ:

Մարդարիտը ձեռքս բռներով հազիւ կարողացաւ շքնջալ. «Սպասեցէք նամակիս»: Եւ կառքը շարժուեց դանդաղութեամբ, ես ու տանտիկինը կանգնած մի առժամանակ նայում էինք գնացողների յետևից, յետոյ կառքը պտոյտ դօրժեց, անցաւ փոքրիկ բլրի յետևը, և ամեն ինչ ծածկուեց:

Նոյն վայրկենին կարծես աշխարհն ամայացաւ ինձ համար, և ես մնացի մենմենակ, աննպատակ, անմիտ քաջ տալու եմ արտասուելի դոյութիւնը անծայր անապատների միջով: Իարձեալ նոյն չարագուշակ սուլոցը՝ «նրանք մեկնեցին, նրանք մեկնեցին, մեկնեցին»...

— Տէր Աստուած, Տէր Աստուած, մրմնջում էր պառաւը, որպիսի դժբախտութիւն... դարձեալ մնացինք

մենակ... շուտով երևի դուք էլ կը շուեք տարափոխիկ թուշունի պէս, և ես կրկին կը մնամ մենմենակ. անպէս տխուր է այստեղ ձմեռը. քամիներ են փչում, ձիւն է թափւում անընդհատ, դիշերը խաւար, երկար, ցերեկը անլոյս, վհատեցուցիչ և մարդ մենակ, մենակ...

Ես լուռ նայում էի այս խղճուկ պառաւին, որ այժմէն սգում էր իր միայնութիւնը և ամենեւին չէր կասկածում, որ աւելի մենակները, աւելի մոռացուածները կան աշխարհում, սարսափելի միայնութիւն բազմութեան մէջ, ամբօխի մէջ, մենակ, մենակ, մարդիկ բոլորը մենակ են, և հոգիների ձմեռն աւելի խեղդող է, քան բնութեանը:

## XII

Հի՛նգ օր էր... դժոխքի օրեր, և դեռ այն նամակը չկար: Շուրջս իշխող դատարկութիւնը ոչնչով չէր լցւում: Տանտիկինս՝ անձանօթ իմ հոգու սև փոթորկին, խօսում էր անընդհատ, միամիտ ու յիմար և առանց հասկանալու արածը՝ շօշափում էր իմ թարմ վէրքերը: Ես փախչում էի անից, նրանից, գնում, նստում էի գետափին և ամբողջ ժամերով գլուխս ձեռներին մէջ առած՝ լսում էի նրա շառաչը, միակերպ, ծանր: Եւ տուն էի վերադառնում երեկոյեան մուսյլ ու մոլար, հարևան սենեակում իշխող քար լուսթիւնը խեղդում էր ինձ, իսկ սպասուող նամակը դեռ չկար:

Համբերել չէի կարող, վեցերորդ օրը վճռեցի մեկնել բաղար նրանց յետևից. ի՞նչ պիտի անէի այնտեղ, այդ ինձ համար էլ պարզ չէր, միայն գիտէի մի բան, որ էլ մնալ չեմ կարող, աւելի համբերել իմ ուժից վեր էր:

— Տիկին, ես այսօր մեկնում եմ:

— Մեկնում էք, ես այդպէս էլ գիտէի. տարափոխիկ թուշուններ. բարի գնաք, բայց այնտեղ մի նամակ

ունիք, հէնց այս ընդհին բերին, աւելացրեց սանտիկինս անտարբերութեամբ:

Մնկներս դողացին, սիրտս թնդաց, խլեցի նամակը, շտապով սենեակս բարձրացայ և դողդոջուն մատներով բաց արի. նրանից էր...

«Քոյրս մեռաւ, իմ դժբախտ բարեկամ, մենք նրան թաղեցինք երեկ և նրա հետ իմ սիրտը, խոցոտուած, արիւնոտ սիրտը: Ամեն ինչ վերջացաւ... փոթորիկը պայթեց, անցաւ՝ թողնելով իր յետևից մահ ու գերեզման: Հոգուս տառապանքն անհուն է, արցունքները քարացել են այնտեղ, և նրանց վրայ թևատարած սաւառնում է ոչնչութիւնն ու խաւարը:

Այս գիշեր երկար ժամանակ թափառել եմ մեր պարտիզի ծառերի տակ. քո մասին էի մտածում, իմ խեղճ ընկեր, և ամեն անգամ, երբ քո պատկերը ներկայանում էր աչքիս, իսկոյն յայանում էր բրոջս ուրուականը, դունստ, աչքերը չուած, կեանքի երջանկութեան ծարաւը յաւիտեան քարացած դէմքին, դալիս կանգնում էր մեր երկուսի մէջ, մեռելատիպ ու զարհուրելի: Յետ փախայ պարտիզից, ուր ծառերը ողջ ուրուականներ էին, և ամեն տեղ նա էր, նա էր... Օ՛, այդ ուրուականը, ինչպէս ազատուեմ նրանից, ո՞ր փախչեմ...

«Ի՞նչ չգիտես, թէ սոսկումի ու ցաւի այս օրերում ի՞նչ ահագին չափերի է հասել իմ դժբախտ սէրը դէպի քեզ, և ես... ներիք ինձ, հոգիս, ես աշխատում եմ խեղդել այն. կ'ուզէի մաս-մաս ինչպէս իմ արիւնոտ սրտի կտորները դուրս բաշել իմ կրծքից այդ խղճուկ սէրը, որ հեծեծում է ու լալիս հիւանդ գիշեր ցերեկ՝ և չի ուզում բաժանուել ինձանից: Մեր ցաւոտ կեանքի ընթացքում բրոջս ուրուականը երկու ճանապարհների հանդոցում սպառնալի կերպով ցցուած մի արձան է, որ ցոյց է տալիս մեր ուղին դէպի հակառակ կողմեր: Քայլենք, քայլենք լռութեամբ:

«Եւ այսպէս մեր ճանապարհներն այսուհետև տարբեր են, իմ ընկեր, ոչինչ չի կարող նրանց միացնել,

որովհետև ոչինչ չի կարող հեռացնել իմ աչքից քրոջս ուրուականը, որ քայլառքայլ ընթանում է ինձ հետ ամեն տեղ: Գիշերներ ունեցայ, սոսկումի, զարհուրանքի գիշերներ, երբ իմ երևակայութիւնը փորձում էր խազալ անցեալ պատկերների հետ, և միշտ քո փոխարէն նա՝ այն ուրուականը ցցուեց աչքիս առաջ խաւարի մէջ, միշտ քարացած հայեացքը դէպի անհունը, միշտ իր մահատեսիլ գունատութիւնը, իր տանջանքը սպառնալի կերպով ի ցոյց դրած երկնքին, աշխարհին, ինձ: Ահ, ես մի կենդանի ողջակէզ եմ այն աստժուն, որի անունն է կոյր պատահականութիւն և որ այնքան հզօր է մարդկային բախտերը տնօրինելիս: Ի՞նչ յանցանք եմ քաւում այս զարհուրելի զոհով, ես չգիտեմ, բայց զգում եմ, որ անկարող եմ ուրիշ կերպ վարուել:

Ոչինչ ազատ, ոչինչ ինքնուրոյն, ինքնագլուխ այս մեր ողբալի աշխարհում: Մեռելներ ու կենդանիներ, ծանօթներ ու անծանօթներ, թշնամիներ և բարեկամներ ողջ միացած են իրար հետ աներևոյթ կապերով, քաշքշում, տրորում, մաշում, կրծոտում են իրար և կեանքը դարձնում ցաւերի, դժբախտութիւնների մի անհատնում շարք: Եւ այդ բոլորի վրայ իշխում է միշտ մեծ լուութիւնը, համր հսկայական վհուկը, միակ ինքընակալը, միակ տէրը, միակ անհասանելին, որի թևերի տակ անհատներ և հասարակութիւններ սողում են երջանկութեան երազների յետևից՝ երբէք չհասնելու համար:

«Ես երկար մտածել եմ քո «Լուութեան» մասին, իրաւունք ունիս, իմ դժբախտ բարեկամ, նրա տակ է թագնուած իսկական կեանքը, նա է, որ իր առանձին օրէնքներն ու տրամաբանութիւնն ունի, որ փշրում է և անցնում դէպի մի գերադոյն նպատակ, և մենք այն չենք տեսնում, չենք հասկանում, խաբում ենք մեզ: Օ՛, կեանքի մեծ ճշմարտութեան մասին մենք ամենքս չենք խօսում երբէք, լուութիւնը նրա հսկայական գերեզմանն է: Այդպէս են և՛ մեր հոգիները...

«Իւրաքանչիւր ոք, որ անցնում է իմ առաջից, եւ սկիւմայ նայում եմ դէմքին, և ինձ թւում է, թէ նա էլ ինձ պէս իր հոգում կրում է դամբարանների մի ամբողջ շարք ծնուած ու մեռած յոյսերի, երազների, իզձերի, հուր տենչերի դամբարաններ, որ նա լուսթեամբ տանում է թաղելու մեծ լուսթեան ծոցում:

«Մէրը դարձաւ մեր հոգու գերեզմանափորը, նա ե՛ր փորում է, և՛ լալիս: Նս էլ եմ լուռ այժմ. կրճքիս տակ ամեն ինչ քար կարեց, և յոյզերս նրանց վրայ թառել են, որպէս սևաւոր թռչուններ, անչարժ ու համբ: Մօրս էլ սչինչ չստացի, ինչ օգուտ իմ խօսելուց, աւելի լաւ է մենակ ման ածեմ հոգուս գերեզմանները, ոչոք, ոչոք չի տեսնի նրանց քեզանից բացի, մեր հոգիները քոյրեր են: Լճու, լուռ և՛ դու, իմ դժբախտ բարեկամ, խօսքն ու ճիշը չեն օգնի. թող ապրեն մեր խոհերը մեր տանջուող հոգիներում, որպէս թօշնած, գունատ ծաղիկներ, որոնք մի օր փարթամ էին ու բուրբալից և որոնք էլ երբէք չեն փթթի: Գու տեսնէլ ես այն հին գրքերը, որոնց մէջ հին օրերից չորացած ծաղկի թերթիկներ կան. ահա մեր կեանքը:

«Մի փորձիր ինձ գտնել, այդ անօգուտ կը լինի. երբ ստանաս իմ այս նամակը, ես ու մայրս արդէն հեռու կը լինինք այստեղից. զնում ենք դէպի անձանօթ երկրներ: Ինձ հետ իմ հոգու մէջ տանում եմ քո պատկերը, քո բոց հայեացքը, քո դիւթիչ յափշտակութիւնը, քո խենթ և ազնիւ սէրը, ինչպէս և՛ քո ցաւը, որը ես ապրում եմ, որը պաշտում եմ և տառապում: Փախչում եմ դէպի օտար, հեռու հորիզոններ, և նա էլ ինձ հետ է, այն գունատ, յամառ ուրուականը, որ կարծես իր բաժին երջանկութիւնն է փնտրում:

«Ներքիւր, ներքիւր ինձ, բայց մեր անձատոււր յաւիտեան է: Գո Մ.»

Նամակը ճիւղած՝ վայր թողեցի ձեռքիցս և հեկեկալով ընկայ անկողնի վրայ. . . . .

—Կառքի շուղարկեմ... լալի՛ս է...

Տանտիկինն էր. ես գլուխս բարձրացրի, նա կան-  
գընած էր շեմքում անշարժ, մատը շրթունքներին դրած,  
մտածկոտ և նայում էր յատակին ընկած նամակին:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Վ Ե Ր Ձ

\*  
\* \*

Ա՛խ, ես հիւանդ եմ,  
Հիւանդ՝ ձանձրութեամբ...

Եւ որպէս անձև, անձիր մի սև ամպ,  
Որ անհուն օդում չունի տեղ, գաղար,—  
Ես էլ նրա պէս անձև տենչերով  
Չգիտեմ երբէք, թէ ո՛ւր եմ գնում,  
Ես էլ չըջում եմ ծանրը՝ իմ միտով՝  
Հազար սրտերի ծածուկ անհունում.  
«Դէպի ծո՛վ, դէպի ծո՛վ», յոգնած, ծարաւի  
Ասում եմ յանկարծ՝ մի տենչով մղումս...  
«Դէպի ծո՞վն անբաւ, որ հազար գաղտնիք,  
Հազար միտք, երանգ իր մէջը ունի...  
Դէպի լեռները վեհութիւն խորհող,  
Դէպ անտառները գաղնապահ, վայրի,  
Դէպ ջրվեժները, որ լոյս-ամպի պէս  
Գահավիժում են խորքերն անդունդի...»

Բայց ես հիւանդ եմ,—

Ինքն իրան լափող մի ծարաւ խարոյկ,  
Որ գալարուելով իր ցաւիցն անձուկ՝  
Ուզում է հասնի,

Բայց որ այրելու

Դեռ մի սիրտ անյազ ու շատ բան ունի:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՉԵԱՆ

# ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ\*)

## XIII

### Վ ա ն Բ ա դ ա Բ ր

Վարչական կազմը.—Նահանգապետը. Վանի նահանգապետները (1877—այժմ).  
Նահանգական-վարչական ժողովը. դատաստանական կազմը. քաղաքային վարչու-  
թիւնը. ոստիկանութիւնը և ոստիկանական շրջանակները: Ձինուորական  
կազմը, զօրքերն ու զօրանոցները: Օտար հիւպատոսութիւնները:

Ինչպէս ընդհանուր Վան նահանգի, նոյնպէս և նահանգի  
կենտրոն համարուող Վան քաղաքի կառավարիչն է համարուում  
կուսակալը կամ վալին, որ նստում է քաղաքում: Այն օրից  
սկսած, երբ Վանը կարինի կուսակալութիւնից բաժանուելով  
առանձին նահանգ է ճանաչուել, այսինքն 1877 թուից սկսած  
մինչև այժմ Վանը յաջորդաբար ունեցել է եօթն կուսակալ,  
անա այդ կուսակալներն ու իրանց պաշտօնավարութեան տա-  
րիները:

1. Շքոտրալի Հասան փաշա, 1877 յունվ.—1884 մայիս.
2. Համտի փաշա (միակ կուսակալ, որ Վանում մեռած է) 1884  
1886 ապրիլ.
3. Խալիլ փաշա . . . . . 1886—1892 փետր.
4. Ֆէրիկ Բահրի փաշա . . . . . 1892—1895 օգոստ.
5. Նազրվ փաշա . . . . . 1895—1897
6. Շէմսէէդդին փաշա. . . . . 1897—1898
7. Թահիր փաշա, որ 1898 թուից մինչև այժմ խիստ հմուտ  
վարչականութեամբ և խաղաղասէր և ուղղամիտ ոգով շա-  
րունակում է իր փափուկ և ծանր պաշտօնը:

Կուսակալներն ընտրուում են ներքին գործոց նախարա-  
րարութեան—տախիլիէ նէզարէթի—կողմից:

Սրանց պաշտօնավարութեան շրջանն անորոշ է: Նախա-

\*(\* Տես «Մուրճ», № 6.

բարութիւնը կարող է պաշտօնով փոխադրուել ուրիշ տեղ, իսկ եթէ ժողովուրդը դժգոհ լինի իր կուսակալի պաշտօնավարութիւնից, կարող է բողոքել նրա դէմ և անմիջապէս պաշտօնանկութիւն խնդրել:

Տարէցտարի աւելի որոշ կանոններ են գծուում կուսակալների իրաւասութեան մասին: Առաջին տարիներում կուսակալները բացարձակ իշխանութիւն ունէին իրանց պաշտօնի նըկատմամբ, իսկ ներկայումս փաշայական կամայականութիւնները բաւական սահմանափակուած են: Նահանգի ընդհանուր գործերի վարչութիւնը գտնուում է նահանգական-վարչական խորհրդի ձեռքում, որ պետական լեզուով կոչուում է իգարէ մէջլիսի:

Սորհրդի նախագահն է նահանգապետը, փոխնախագահը՝ — կուսակալի օգնական—մուաւին (հայ). անդամներն են հայոց առաջնորդը, մէքթուբչին—կուսակալի դիւանապետը գէֆթէբգարը—եղևտից նախարարութեան Վանի ներկայաքուցիչը, կատին—շէրիի դատարանի, ինչպէս նաև Վանի վերաքննիչատեանի նախագահ, միւֆթին—Վանի սուսուլմանների տեղական կրօնական ներկայացուցիչ և երկ-երկու էլ հայ և թիւրք անդամներ:

Բացի երկու թիւրք և երկու հայ անդամներից մնացածները ի պաշտօնէ են: Իսկ այս չորս անդամները երկու տարին անգամ փոխուում են, բայց չորսն էլ միևնոյն ժամանակում չեն թողնում իրանց պաշտօնը, այլ ամեն տարի երկու անգամ (մէկ թիւրք և մէկ հայ): Սրանք կարող են վերընտրուել, բայց յաջորդ տարիներում:

Վարչական ժողովի չորս անդամների ընտրութեան մասնակցում են միայն Վան քաղաքի բէլէտիէն—քաղաքային վարչութիւնը (городская управа), իբրև քաղաքի ներկայացուցիչ մարմին և Հէքեարի գաւառի գաւառական վարչական խորհուրդըն. այս երկու մարմինները կուսակալի և ի պաշտօնէ եղող միւս անդամների կողմից պատրաստած եռապատիկ ցանկի անուններից մէկին պիտի տան իրանց քուէն: Ձայների առաւելութիւնը նախագահի—կուսակալի կողմն է:

Նահանգական վարչական խորհուրդի անդամները ոտճիկ չունին, ի պաշտօնէ եղողները ստանում են ոտճիկ համաձայն իրանց պաշտօնին, այսպէս.

Սորհրդի նախագահն իբրև կուսակալ ստանում է ներկայումս ամսական 180 օսմ. լիրա (լիրան 8½ բուբլի հաշուեցէք):

Մուաւին . — 50 » » . իբրև կուսակալի օգնական.

- Մէքթուրչին — 50 օսմ. լիրա ընդհանուր գիւանապետ.  
 Դէֆթէրգար — 60 » » . ելևմտից նախարարութեան  
 գործակալ.  
 Կադին . — 30 » » . վերաքննիչ ատեանի նախա-  
 գահ և շէրիի գործադրող.  
 Միւֆթին — 10 » » . իբրև տեղական թիւրք տար-  
 րի կրօնական ներկայացուցիչ:

Էրմէնի մուրախխասի (Աստուած գիտէ, թէ որքան ոռճիկ է ստանում) իբրև թեմակալ առաջնորդ Վանոյ:

1896—97 թուերին, երբ Վանում կաթողիկոսութիւնն այնքան մեծ ծաւալ ստացաւ, որ կաթողիկ համայնքի համար առանձին առաջնորդական փոխանորդութիւն կազմուեցաւ, կաթողիկները առաջնորդական փոխանորդն էլ իբրև իր հօտի ներկայացուցիչ անդամ եղաւ նահ. վարչ. խորհրդին, բայց դա այնքան կարճ տևեց, որքան կաթողիկոսութեան շրջանը.

Դատարանական կազմակերպութիւնն էլ նոր է մուտ գործել Վանում. մինչև 80-ական թուերը ամեն ճիւղի դատերը քննուում էին փաշաների կողմից, այժմ դատական բաժինը հետևեալ կազմակերպութիւնն ունի Վանում.

Դատարանական կազմն—էդլիէն—բաժանուում է երկու ճիւղի. նախադատ—բիդաէթ և վերաքննիչ—խսթինաֆ, սրանցից իւրաքանչիւրն էլ բաղկանում է երկու մասից, այսպէս.

1. Նախադատ քաղաքական դատարան—բիդաէթ հուզուզ մէհքէմէսի և 2. նախադատ պատժական դատարան—բիդաէթ ջէգա մէհքէմէսի. ինչպէս նաև՝

1. Վերաքննիչ քաղաքական դատարան—խսթինաֆ հուզուզ մէհքէմէսի և 2. վերաքննիչ պատժական դատարան—խսթինաֆ ջէգա մէհքէմէսի:

Նախադատ երկու դատարանի իւրաքանչիւր ճիւղն ունի մէկ նախագահ—բէիս և երկու անդամ—ազա:

Վերաքննիչ դատարանի իւրաքանչիւր ճիւղն ունի մէկ նախագահ և չորս անդամ:

Թէ նախադատ և թէ վերաքննիչ դատարանների կէս մասը թիւրք անդամներից է կազմուում, կէսը հայ անդամներից, իսկ նախագահները թիւրք են և Պօլսից են ընտրուում և ուղարկուում այստեղ: Անդամների ընտրութիւնը այս ձևով է կատարուում.

Կազմուում է գործադիր մարմին—էնջիւմէ—որի անդամներն են կուսակալն, իր օգնականը, ելևմտից հաշուակալը, դիւանապետը, կադին և ընդհանուր դատախազը. այս մարմինը կազմում է եռապատիկ ցանկ անդամների: Նախադատ դատա-

րանի անդամների ցանկը ուղարկուում է Վանի քաղաքային վարչութեան և նահանգի միայն այն գաւառակներին (քաղա), որոնք անկախ Հէքեարի գաւառից ենթարկուում են կուսակալութեան անմիջական իրաւասութեան:

Իսկ վերաքննիչ դատարանների անդամների ընտրութեան համար նոյն գործադիր մարմինը եռապատիկ ցուցակը ուղարկուում է նոյնպէս քաղաքային վարչութեան և Հէքեարի գաւառի գաւառապետին, կամ նոյն է ասել գաւառական վարչական խորհրդին: Ընտրողները եռապատիկ ցուցակի  $\frac{2}{3}$  մասը ձգուում են դուրս և իրանց ձայնը  $\frac{1}{3}$  մասին աւելով ներկայացնում են գործադիր մարմին: Թէև ընտրութիւնը կատարուում է ձայների առաւելութեամբ, բայց կուսակալն իբրև նահանգի բարձր կառավարիչ ունի գերակշռող ձայն:

Ինչպէս վարչական խորհուրդի նոյնպէս և իւրաքանչիւր դատարանի անդամներն ընտրուում են երկու տարի ժամանակով, անդամների կէս մասը (մէկ թիւրք և մէկ հայ) ամեն տարի փոխուում է:

Բացի նախագահներից, որոնք Պօլսից են ուղարկուում, դատարանների բոլոր անդամներն էլ տեղացի են, և որովհետև Վանը դեռ չունի իրաւաբանական դպրոցի դիպլոմաւորներ, այդ պատճառով անդամներն այնպիսի անձնաւորութիւններ են լինում, որոնք անձնական փորձառութեամբ ջանացել են շատ թէ քիչ ուսումնասիրել դատական օրէնքները: Հայերից միայն մէկ հոգի կայ իրաւաբան-դպրոցական, իսկ թիւրքերի մէջ ոչ ոք չկայ: Ընտրութիւնները կատարուում են ընդհանրապէս միջնորդութիւններով: Անդամները պիտաւորաբար իրենց անկարողութեան պատճառով գրեթէ միշտ ենթարկուում են նախագահների վճռին և միշտ համակերպող են ներկայանում:

Դատարանական նախագահների և անդամների ռոճիկները բաւական գոհացուցիչ լինելու պատճառով շատերը թէ թիւրքերից և թէ հայերից տարիներով ջանք են թափում, այս ու այն միջոցին են դիմում պաշտօն ձեռք բերելու համար:

Քաղաքային վարչութեան անունը մի քանի անգամ յիշելու առիթ ենք ունեցել, այժմ երկու խօսքով էլ ընթերցողին ծանօթացնենք այդ մարմնի հետ:

Այս խորհուրդը—որ պաշտօնական լեզուով բէլէտիէ կոչուում, ընդհանուր կերպով նոյն իրաւասութիւնն ունի ինչ որ կովկասցիների городская управа-ները, թէև տարբերութիւններ շատ կան այս ու այն երկրորդական կամ նոյնիսկ գլխաւոր կէտերում, բայց թուել մի առ մի դրանք շատ հեռու կը տանէ մեզ:

Քաղաքային վարչութիւնը բաղկանում է մէկ նախագահից և չորս թիւրք և չորս հայ, այսինքն ութ անդամներից: Սրա կազմութեան համար էլ նախապէս զործագիր մարմին է կազմուում (որի անդամները նոյնն են՝ բացառութեամբ ընդհ. դատախազի), բայց անդամների ցուցակ չի կազմուում, ինչպէս միւս դէպքերում լինում էր, այլ այստեղ գործագիր մարմնի պաշտօնն է հսկել որ ընտրութիւնը կանոնաւոր կերպով կատարուի:

Թեկնածուների ընտրութիւնը թողնուում է բոլորովին ընտրողների ազատ կամքին: Իսկ ընտրող կամ ձայնաւոր կարող են համարուել Վան քաղաքի արական սեռին պատկանող այն անհատները, որոնք տարեկան 50 զուտուշից (4 բուբլուց) ոչ պակաս կալուածական տուրք են վճարում կառավարութեան: Ընտրութեան ժամանակ բուռն պրոպագանդաներ են լինում, հայ և թիւրք մտերմանում են, քարոզում են միմիանց և համոզում են, վերջապէս դիմում են ամեն տեսակ կարելի և անկարելի միջոցների իրանց նպատակին հասնելու համար, մանաւանդ նախագահի—քաղաքագլխի ընտրութեան շուրջը շատ խնդիրներ են դառնում: Քուէների հաւաքումից յետոյ կատարուում է ընտրութիւն: Բաղմաթիւ թեկնածուների միջից ընտրուում են 4 թիւրք և 4 հայ, ամենաշատ քուէ ստացողներն իբրև անդամ, իսկ ամենաբարձր քուէ ստացողն իբրև քաղաքագլուխ (гоп. голова): Այս ընտրութեան գործումն էլ նահանգապետը գերակշռող ձայն ունի:

Քաղաքային վարչութիւնն ընտրուում է 4 տարի ժամանակով. գաղաքագլխի ոտճիկն է ամսական 500 զուտուշ, իսկ անդամները ոտճիկ չունեն:

Հանրային կեանքի մէջ կանոնաւոր անդորրութիւն պահպանելու բաժինն ընկնում է ոստիկանութեան վրայ: Վանն ունի իր ոստիկանական շրջանակն: Այս շրջանակը 5 գլխաւոր դայիւրէնների—մասերի է բաժանուում: Կետրոնական շրջանակը քաղաքամիջի սահմանում է գտնուում, իսկ միւս 4 մասնաճիւղերը Այգեստան, Արարք, Նորաշէն, Քէնտըրչի և Ուաչ-փողոց կոչուած թաղերի կենտրոններում: Վանի փողիւսների (քաղաքապահ) թիւը ներկայումս հասնում է 40-ի, որի  $\frac{1}{3}$  մասը հայերից է կազմուած: Ոստիկանական իւրաքանչիւր շրջանակը—փոլի դայիւրէսիները անհրաժեշտաբար ունեն մէկ թիւրք և մէկ հայ քոմիդիրներ և 1—2 և աւելի հասարակ փողիւսներ:

Ոստիկանական շրջանակների պաշտօնն է իրանց իրաւասութեան ենթարկուող թաղերում հսկել որ անկարգութիւններ չպատահեն: Իւրաքանչիւր շրջանակն ունի իր տրամադրութեան

տակ մի քանի հրացանակիր ծառայողներ: Ոստիկանական շքը-  
ջանակները պարտաւոր են ամեն գիշեր ոստիկաններ շրջեցնել  
քաղաքի փողոցներում: Այս պարագայում ոստիկանների տրա-  
մադրութեան տակ զբուսում են մի քանի զինուոր:

Մի քանի խօսք էլ զինուորական կազմի մասին: Վանը  
զինուորական կազմակերպութեան տեսակէտից պատկանում է  
IV զօրաբանակին: Ինչպէս յայտնի է ամբողջ Թիւրքիան բաժան-  
ւում է 7 գլխաւոր զինուորական շրջանակների, կամ ուրիշ  
խօսքով՝ ունի 7 զօրաբանակներ. I Կ. Պօլիս. II. Էդիրնէ, III.  
Մանաստըր, IV. Երզնկա, V. Շամ, VI. Բաղդատ, VII. Եէմէն:  
Ուրեմն Վանը պատկանում է Երզնկայի զօրաբանակին—դէօր-  
զիւնջի (չորրորդ) շօրգիւին: IV զօրաբանակի Ը. զօրագունդն է.  
աստատուած Վանում: Այս զօրագունդի (բէտլիւ) ներկայ-  
ընդհանուր հրամանատարն է վսեմ. Հիւսնի Ֆէրեկ փաշան:

Վանում սրանից 15—20 տարի առաջ հազիւ թէ 300-ի  
չափ զօրք լինէր, իսկ այժմ այդ թիւը 10 անդամ մեծացել է:  
Քաղաքում ներկայումս մնում են մշտապէս 3000 զօրք. բացի  
սրանցից նահանգի բոլոր գաւառակներում, ինչպէս նաև գաւա-  
ռում կան փոքր շրկատներ. Թիւրք-պարսկական և ռուս-  
թիւրքական սահմանագծերի մի քանի կէտերում վերջերումս  
հաստատուած են սահմանապահ զօրքերի պահականոցներ, ուր  
մշտապէս մնում են զօրքեր սահմանները պահպանելու համար:

Մինչև 90-ական թուականները մէկ հատ զօրանոց կար  
Վանում—Քաղաքամիջի արևմտեան-հարաւային անկիւնում,  
բայց յիշեալ թուականներին հետզհետէ զօրքերի թիւը շատնա-  
լով, Այգեստանի այս ու այն հայաբնակ թաղերում վարձուե-  
ցան բազմաթիւ փոքր պահակներ, ուր հաստատուեցան 50-նոց,  
100-նոց շրկատներ: Այս զրութիւնը տեւեց, մինչև որ կառավա-  
րութիւնը քաղաքի արևելեան կողմում շինեց 4 հատ հսկայ և  
հոյակապ զինուորական պահականոցներ. սրանցից առաջինը  
գտնւում է Զըմ-զըմ Մաղարա լեռան ամենաբարձր կատարի  
վրայ, երկրորդը գտնւում է Յանկոյսներ թաղի կենտրոնում  
Խրիմեանների դրան դիմացը, որը յիշել ենք արդէն մի անգամ  
նախորդ էջերից մէկում, երրորդը գտնւում է Յանկոյսների  
եկիզեցուց զէպ արևելք, ընդամէնը կէս վերստաչափ հեռու.  
այս երեք զօրանոցները գտնւում են Յանկոյսների շրջա-  
նում և միմիանցից հազիւ 5 ըրպէաչափ հեռու լինին,  
իսկ չորրորդ պահականոցը գտնւում է Արարուց թաղի շրջա-  
նակում, Կլոր Դար կոչուած հայաբնակ թաղի սահմանում: Նա-  
խորդ 3 զօրանոցներում մնում են հետևակ զօրքեր, իսկ այս  
վերջինում հեծելազօրքը: Ուրեմն ներկայումս բացի բերդի զի-

նուորական պահականոցից կայ 5 հատ զօրանոց, որոնցից մէկը—հնագոյնը գտնուում է քաղաքամիջոււմ, իսկ միւսները Այգեստանում:

Փակագծի մէջ երկու խօսք էլ ասենք օտար կառավարութիւնների Վանում ունեցած հիւպատոսական գործակալութիւնների մասին:

Վանում ընդամենը չորս հատ հիւպատոսարաններ կան, որոնց հաստատութիւնը, բացառութեամբ պարսկականին, 1877—78-ի արեւելեան պատերազմից յետոյ է սկսում, որոնք են պարսկական ընդհանուր հիւպատոսութիւն—général-consulat, անգլիական փոխ-հիւպատոսութիւն—vice-consulat, ռուսական փոխ-հիւպատոսութիւն—впоще-консульство. և ֆրանսական հիւպատոսութիւն—consulat:

Սրանցից վերջինը հաստատուեց ներկայ հոկտեմբեր ամսում, թէև 1896 թուից սկսած մինչև այժմ դոմինիկեան կըրօնաւորներից մէկը Պէռզը Ֆրանս հիւպատոսական գործակալի պաշտօն էր վարում, բայց պաշտօնապէս հիւպատոսութիւն ներկայումս հաստատուեց:

Ռուսական փոխ-հիւպատոսի պաշտօնը վստում է գնդապետ Ալեքսանդր Տումանսկիյ, որ ներկայ հոկտեմբերին արձակուրդով Թիֆլիս գնաց. նրա պաշտօնակատարն է ներկայումս իր թարգման Մարտիրոս Գաբրիէլեանը: Հայազգի համակրելի երիտասարդ պ. Գաբրիէլեանը անցեալ օգոստոսին հաստատուեց հիւպատոսարանի թարգմանութեան պաշտօնի մէջ պ. Տումանսկին անձնապէս և խիտ մօտից ծանօթանալով նրա ուղամտութեան և պարտաճանաչութեան՝ Վարազայ վանքի որբանոցի տեսչութեան պաշտօնից հրաւիրեց թարգմանի պաշտօնին:

#### XIV

Հարկային սխտեմ. էմլք, թանգիմաթ թէմթիւ, կմէլիէ, նոր տուրքեր, անհատական տուրք. կենդանիների տուրք. բէգէլիէթ ասքէրի. նոր կարգադրութիւն իբրև հնարար միջոց տուրքեր զանձելու համար:

Հարկային դրութիւնն ընդհանուր է ամբողջ Թիւրքիայի համար, Վանի համար առանձին որևէ օրէնք գոյութիւն չունի, ուրեմն երկու խօսքով անցնենք այս խնդրի վրայից:

Հարկային դրութեան մասին օսմանեան պետութեան մէջ տարէցտարի նորանոր ծրագիրներ, կանոնադրութիւններ են մշակուում, տարէցտարի հարցերը շատանում են:

Ամենագլխաւորներն են.

Կալուածական տուրք—էմլաք.

Տասանորդի տուրք—թանգիմաթ.

Վաստակի տուրք—թէմէթթիւ.

Սարակի տուրք—էմէլիէ.

Կալուածական տուրք վճարողները մինչև 20,000 ղուռուշ արժէք ունեցող կալուածի համար վճարում են 1000-ին 5. իսկ 20,000-ից աւելի արժէք ունեցող կալուածներին համար վճարում է՝

Տան համար՝ 1000-ին 5. ( $1/2\%$ ).

Հասոյթաբեր կալուածներին համար 1000-ին 10 ( $1\%$ ).

Արտերի համար 1000-ին 4 ( $2/5\%$ ).

Տասանորդական տուրք վճարողները գիւղատնտեսական բերքերի, այսինքն կենդանիների և բուսեղէնների համար վճարում են  $8\frac{1}{2}\%$ : Վաստակի տուրք վճարում են արական սեռին պատկանող բոլոր աշխատելու ընդունակութիւն ունեցողները իրանց կարողութեան չափով:

Սարակի տուրք վճարողները այնպէս աշխատելու ընդունակութիւն ունեցողներն են, որոնք պարտաւոր են հասարակական հաստատութիւնների համար ամեն տարի տալ կառավարութեան կամ 3 օրուայ բանուոր, կամ նրա արժէքը փոխարինող գումար  $13\frac{1}{2}$  ղուռուշ (1 բուբլիից աւելի):

Ներկայ 1903 տարում գրեթէ միաժամանակ երկու նոր տուրքեր էլ սահմանուեցին, որոնցից մէկը կոչւում է անհատական տուրք—վէրդի շախսիէ: Այս տուրքը վճարել պարտաւոր են արական սեռին պատկանող 15-ից վեր և 70-ից ցած տարիք ունեցողները. տուրքի սահմանն է տարեկան 5—1000 ղուռուշ:

Միւս տուրքն էլ անասունների համար է. այսուհետև եզ, կով, ձի և ուրիշ սրանց նման կենդանիներ պահողները պարտաւոր են վճարել ամեն մէկ կենդանու համար տարեկան 10 ղուռուշ (մօտ 1 բուբլի): Վերջին երկու տուրքերի հաստատութիւնն ու կանոնադրութիւնը նախօրօք պաշտօնապէս հրատարակեց, իսկ գործադրութիւն սկսուեց թիւրքական ելեմտեան 1319 թուի սկզբից, այսինքն 1904 թ. մարտի 1-ից:

Այս տուրքերը վճարում են բոլոր տաճկահպատակները առանց ազգի և կրօնի խտրութեան, սակայն բացի սրանցից կայ և մի ուրիշ տուրք, որ վճարում են ոչ-խալամ հասարակութիւնները. այս տուրքը կոչւում է զինուորական տուրք—բէտէլիթ էսքէրի:

Ինչպէս յայտնի է՝ օսմանեան պետութեան մէջ միայն իսլամներից է զինուոր առնւում, իսկ մնացած ազգերը պարտա-

ւոր են զինուորի փոխարէն վճարել զինուորական տուրք: Կանոնադրութեան համաձայն հայերն իբրև ոչ-խալամ հասարակութեան պատկանող մի ազգ վճարում են զինուորական տուրք. 15-ից վեր և 75-ից պակաս տարիք ունեցող, արական սեռին պատկանող և աշխատելու ընդունակութիւն ունեցողները պարտաւոր են զինուորական տուրք վճարել տարեկան 37 զուտուշ  $\frac{1}{2}$  փարա, որի վրայ տարէց տարի նոր-նոր թուեր են աւելանում:

Որքան որ այս գումարը փոքր է երևում, սակայն և այնպէս վանեցի հայերը միշտ էլ դժուարացել են տարէցտարի լրիւ վճարել իրենց տուրքը. զինուորական տուրքի ապառիկները Վանում միլիոններով են հաշւում:

Կառավարութիւնն ապառիկի դրութեան վերջ տալու նըպատակով անցեալ ելեմտական 1318 թուից զինուորական տուրքի հաւաքման գործի մէջ գործադրութեան մտցրեց մի ուրիշ ձև: Այս կարգադրութեան համաձայն՝ էլ այսուհետև տուրքերի բաշխումը հաւասարապէս չի լինիլ. այսինքն ամեն մէկ անհատ 37,04 զրուշ չպիտի վճարի, այլ տուրք վճարողները պիտի վճարեն իրանց նիւթական վիճակի համեմատ. այս կերպով անկարողի բեռը դրւում է կարողի վրայ: Առաջին հայեացքից այնպէս է երևում, որ իբր թէ հասարակութեան մեծ մաս, այսինքն աղքատ և հասարակ դասակարգերն այս նոր կարգադրութեան համաձայն շահաւոր են մնում, որովհետև իրենց բեռը աւելի ունեւորների վրայ է դրւում. սակայն իրականութեան մէջ այդպէս չէ: Այս դրութիւնը օգտաւէտ է միայն ելեմտքի սնդուկի համար, որովհետև այս ձևով ելեմտից նախարարութիւնը հնարաւորութիւն է ունենում առանց տարիներով ապառիկներ ունենալու գանձել տուրքերը: Մինչև այժմ հասարակ կամ անկարող դասակարգն առարկում էր, թէ իր ոյժից վեր է իր քաղաքի ամենահարուստ մարդու չափ տուրք վճարել. այժմ առարկութիւնը վերցւում է մէջտեղից, այժմ նա վճարում է իր կարողութեան չափով: Այս կարգադրութիւնից առաջ ըստ օրինի զուտուշ չճարողը՝ պատահում էր որ տարին անցնում էր՝ 5 զրուշ չէր վճարում, իսկ այս 37 զրուշի փոխարէն նշանակւում է 20 զրուշ և առնւում, պակասորդ 17 զրուշը դրւում է նրանից աւելի կարող համարուածի վրայ, որ նոյնպէս գանձւում է: Մէկ խօսքով իրականութիւնը սա է, որ ներկայ կարգադրութիւնը միակ հնարաւոր միջոցն է զինուորական տուրքերը տարէցտարի կանոնաւոր կերպով գանձելու համար: Այս դրութեամբ թէ հասարակ և թէ հարուստ դասակարգերը պարտաւորւում են նշանակած տուրքը ամբողջապէս վճարել:

Տուրքերի բաշխումը կատարելում է տարին մի անգամ յատուկ յանձնաժողովով:

ԾԵՐՈՒԿ

(Գը շարունակուի)

## Ե Գ Ի Պ Տ Ա Հ Ա Յ Ք \*

Կրօնական եւ եկեղեցական վիճակ.— Հայկական Աւանդական սովորութեան համեմատ՝ հայը ուր որ կը գնայ իր առաջին գործը կը լինի նախ եկեղեցի մը կանգնել իր հոգևոր պէտքերը կատարելու համար, անոր մօտ գերեզմանատուն մը պարսպել իբր ապագայ հանգստեան վայր, և ապա եկեղեցոյն քովի կը վարժարան մը բարձրացնել իր զաւակներու մտաւորականին համար: Եգիպտահայերը, որպէս նոյն օրէնքներուն հաւատարիմ աւանդապահները, այդ երեք հաստատութիւններն ալ ունին իհարկէ: Նախանձախնդիր են կրօնական կարգերու և եկեղեցոյ պայծառութեան համար, քանի որ ունեցել են, բայց որչափ տխուր պիտի լինէր իհարկէ մեր հոգևոր վիճակը, եթէ ինչպէս մասնամիշ ըրինք, չլինէին Պօղոս բէյի և Վանլը Գալուստի նման գաղթականութեանս հիմնական պէտքերը կանխատեսող և ապահովող անձնաւորութիւններ:

Եգիպտահայերը ունին երեք եկեղեցիներ, մէկը Աղեքսանդրիոյ մէջ ս. Պօղոս-Պետրոս անունով, ուր կը քահանայագործեն երկու մնայուն քահանաներ, երկու անպաշտօն գաղթական քահանաներ և երկու գաղթական վարդապետներ: Գահիրէի մէջ կան երկու եկեղեցիներ ս. Աստուածածին, երեք մնայուն քահանաներով և մէկ գաղթական քահանայով. ու դարձեալ մէկ մատուռ, որ կը գտնուի հայոց գերեզմանատան մէջ Մար-Մինա (ս. Մինաս) անունով, որը գործածութեան մէջ չէ և չունի մնայուն քահանայ և ուր տարին մէկ անգամ միայն կը պատարագեն հարուստ փաշայի մը կնոջ հոգւոյն համար:

Գահիրէի, Աղեքսանդրիոյ և շրջականերու համար ունինք ընդհանուր մէկ առաջնորդ (այժմ Յովսէփ եպիսկոպոս Այվազեան): Եգիպտոսի երկու հայաշատ քաղաքներու եկեղե-

\*) Տէս «Մուրճ», № 6.

ցիներուն տարեկան ընդհանուր ծախսը կը հաշուելի մօտ 3500 անգղ. ոսկիի: Պատկառելի գումար մը, սակայն... Եգիպտոսի հայ հոգևորականութեան վիճակը արգահատելի է. չունինք բառին իսկական ոյժովը հոգևոր պաշտօնեաներ, մտքով աղքատ, քծնող, շողոքորթ...

Ընտանեկան վիճակ.—Գուցէ այնչափ ալ մեծ բան չէր հին եգիպտահայերու աչքին ապրիլ հայ բարքով, հայ ընտանեկան նիստ ու կացով, հայ օջախի շէնութեամբ. մեր պապերու նահապետական ու աւանդական սովորութիւնները հայրենիքէն անջատ ապրող հայութեան համար պէտք էր նկատուէին իբր առաջնակարգ զոգրակները ցեղային պահպանութեան գործին. իւրաքանչիւր գաղթական ազգ, որ օտար հողի վրայ կը ձգէ արմատներ, պէտք է այդ արմատներըը մնուցանէ իր սեփական ոյժերով, իր հարազատ սնունդով, իր լեզուի պահպանմամբ, իր եկեղեցու գրկին մէջ ամփոփուելով և իր արինակիցներու ինսամակցութեամբ: Երևի թէ ամենահին եգիպտահայերը խոտորուեր են այդ բնական ճամբայէն և հիմնովին բնաջնջուեր են՝ լուծուելով օտար տարրերու մէջ. իսկ աւելի վերջին ժամանակներու գաղթականները, (հայկական ընդհանուր շարգերէն առաջ եկողներուն կ'ակնարկուի) համարեա թէ բոններ են նոյն կորստաբեր ճանապարհը: Անոնք իրենց ընտանեկան շրջանին մէջ իսկ մշտապէս խօսեր են և կը խօսին տեղային արաբերէն բարբառը. ամուսնացեր են խպտիներու, արաբներու և սիւրիացիներու հետ. ահա թէ ինչու այսօրուան բուն եգիպտահայ կոչուած մէկ որոշ տարր, թէև հայ, բայց ընդհանուր սովորութիւններով կը նմանի Եգիպտոսի բնիկ տեղացիներուն: Արդէն նկատուած է թէ Եգիպտոսի կլիման իր որոշ կնիքը կը զետեղէ ամեն անոնց դիմազծերուն վրայ, որոնք երկար ժամանակ կը բնակին Նեղոսի հովիտը. հին եգիպտահայերու դիմազծին վրայ մենք այդ որոշ կնիքը շեշտուող գծերը արդէն կը նկատենք:

Գաղթական ցեղի մը պահպանութեան ամենէն առաջին պայմանն է ընտանիքը. առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու մենք մատնանիշ կ'ընենք պատմական եղելութիւններ, որոնք կարող են իբր գօրաւոր փաստ ծառայել մեր ըսածին: Մենք գիտենք արդէն թէ ամենահին ժամանակներ Չինաստանէն Հայաստան փախչելով Մամիկոնեաններու մեր նախահայր Մամգունը բնակուելիւն է հաստատեր մեր երկրի մէջ. անոր որդիները հետզհետէ ամուսնանալով հայ ազգիկներու վրայ՝ հետ-

բազմաթիվ խմորուներ են հայ ընտանեկան սովորութիւններու մէջ, ձուլուներ և վերջնապէս հայացներ են սերունդով. այս պարզ, բայց փաստալից օրինակէն կարելի է հետեցնել թէ ընտանիքը, և առհասարակ ձուլող կին տարրը, սրչափ մեծ կարևորութիւն ունի ազգի մը գոյութեան պահպանութեան համար \*). Եթէ մեր պատմութեան մէջ յիշատակուած մեր մի շարք նախարարութիւններու կեանքը խուզարկենք, գրեթէ պիտի տեսնենք յաճախակի նոյն երևոյթին կրկնութիւնները. մինչդեռ ատոր բոլորովին հակառակը կ'ապացուցանեն մեր օրինակի համար զանազան հին գաղթականներու կեանքին օտարահայեցութիւնները. մէկը անոնցմէ ամենէն աւելի փաստալից է. մի ժամանակ Ամսթերդամի և Լիվորնօի մէջ ունեցեր ենք մի գաղթականութիւն, ինչպէս այդ մեզ կ'աւանդէ «Շահան Զըրպետի Նոթերը». այնտեղ ունեցեր ենք հայ եկեղեցի, վարժարան և նոյնիսկ տպարան, բայց չենք ունեցեր հայութիւնը պահպանող տարրը՝ հայ աղջիկներ, հայ կիներ. մենք այդ «Նոթերու» մէջ կը տեսնենք հայ նշանաւոր դէմքեր, որոնք ամուսնացեր են տեղացի աղջիկներու վրայ. և ի՞նչ է պատահեր. մեր այդ գաղթականութիւնը վերջացեր է օտար ընտանիքներու մէջ ձուլուելով: Այս օրինակներէն պարզ կը հետևի թէ՛ սազգութեան պահպանման առաջին պայմանը ընտանիքն է: Հին եգիպտահայը նոյն զօրաւոր պայմանին չէ հպատակուեր և եղեր է բնաջինջ:

Իսկ նոր գաղթականութեան մասին շատ քիչ բան պէտք է ըսել: Ամուսնութիւնները շատ չնչին սոկոսով են համեմատած հազարաւոր գաղթականներու թուին: Իրաւի թէ և սակաւաթիւ են օտար աղջիկներու հետ կնքուած ամուսնութիւններ, բայց «ամուսնութիւնը» և խառնակեաց ու պայմանական կիներու հետ ապրող երիտասարդութիւնը նոյնչափ վտանգաբեր մի գծի վրայ է բնաջնջութեան տեսակէտով, քան ինչ որ հին եգիպտահայերու գատապարտութեան արժանի եղող օտար ամուսնութիւնները:

Առեւտրական վիճակ.—Եգիպտահայ ամենահին գաղթականներու զբաղումը որոշապէս յայտնի չէ. բացի պետական ծառայողներէն ունեցեր ենք առևտրականներ, նոյնիսկ գերեզմանառութեան թուականներուն զտնուեր են հայեր, ու

\*) Այդ մարդու ցեղը առառաւելն մէկ կամ երկու սերունդ վերջը կը հպատակի. կին սեռի ցեղն է վերջին տիրապետող տարրը:

ըոնք այդ շահաբեր մարդավաճառութեան արշաւանքներուն մասնակցեր և քանիցս հասեր են մինչև Սուղան, մինչև Հարէ-շիստան և գերիներու ահագին խմբերով դարձեր, են Եգիպտոս անոնց մորթին վրայ շինելով իրենց փառաւոր բախտը, գերե-վաճառութիւնը դեռ սակէ 50—60 տարի առաջ այնչափ շա-հեկան մի արհեստ է նկատուեր և՛ հայերու մօտ, որոնք այդ արշաւանքները կատարեր են վաճառականական այն սովորա-կան պողարիւնութեամբ, ինչպէս այսօր մարդիկ կը կատարեն կովու և արջառներու կաշիին համար: Ինչպէս կը պատմեն, իւրաքանչիւր գերի հազիւ քանի մը սև փողի արժէք կ'ունենայ եղեր. հարիւրաւոր սևամորթ կիներ, այրեր և անչափահասներ կը վաճառուին եղեր եգիպտական հրապարակներու վրայ, ինչ-պէս այսօր կը վաճառուին ոչխարներ, արջառներ և զանազան կենդանիներ. այդ գերիներէն շատերը դեռ այսօր իսկ կը տես-նենք զանազան հին եգիպտահայերու տուններու մէջ, որոնք ի-րենց ազատագրութենէն չօգտուելով և համակերպուելով մը-նացեր են այստեղ. անոնցմէ ոմանք նոյնիսկ ընդուներ են քրիստոնէութիւնը, և նոյնիսկ ամուսնացեր են. իսկ ոմանք արդէն այնչափ յառաջ գնացեր են քաղաքակրթութեան մէջ որ հայերէն լեզուն իսկ սովորեր են և ընդուներ հայութիւնը և դարձեր հայի տան մէկ անդամը:

Քանի մը տասնեակ տարիներ առաջ Եգիպտոս գաղթող հայեր, որոնք մեծաւ մասամբ վանեցիկներ են, պալատական և պաշտօնական տուններու մէջ ծառայեր են որպէս սյվաղ, տըն-տես, խոհարար, սեղանայարդար, մատակարար կայլն, որոնք իրենց հաւատարմութեամբ սիրելի լինելով երկար ժամանակ տեղ են զբաւեր բարձր տուններու մէջ. անոցմէ շատերը երբ ծերացեր են, իրենց յաջորդ կարգելով երկրէն կանչուած իրենց զաւակներէն՝ իրենք հեռացեր են բաւական դրամի տէր եղած: Ապա աչքաբաց և ճարպիկ արապկերցիներ, ակնցիներ, կեսա-րացիներ եկեր են բռներ եգիպտական առևտրական հրապա-րակները. ասոնք յայտնի են իբրև սեղանաւոր, իբրև հաշիշա-վաճառ և իբրև ընթացիկ գործերու մարդիկ, որոնք, մանաւանդ քանի մը տասնեակ տարի առաջ գալով, երբ Եգիպտոսի մէջ փող շահելու համար մի այնչափ ալ մեծ խելք ունենալ պէտք չկար, շիներ են իրենց գեղեցիկ բախտը, այնպիսի թուական-ներու մէջ, երբ հասարակ մարդիկ կարող էին յաջողել շատ քիչ խելքով, շատ մեծ կարիք ալ չկայ եղեր ուսման կամ դար-գացման. մի օրինակ բաւական է համոզելու համար թէ ինչ դպրագոյն անհրաժեշտ է եղեր որ մի հայ մարդ դառնայ կամ փաշա կամ բէյ: Կը պատմեն թէ մեծահարուստ հայազգի թագ-

ւոր փաշան եզեր է բոլորովին մի անգրագէտ մարդ, որը իր ստորագրութիւնը դնել սովորել է քօփի ընկելով (ընդօրինակելով): Բաւական էր որ մարդ մի քիչ հաշիւ գիտնար տաճկական թուանշաններով և ահա նա կը գառնար կամ կառավարական սարբաֆ (սեղանաւոր), կամ պետական մի մարդ, նոյնիսկ խըղիւներու անձնական քիւէրճի, բաշին (մատակարարապետը), այդպիսի մարդկանց մնացորդ դեռ այսօր ալ մենք կը տեսնենք կենդանի, որոնք իրենց հայրերու դիզած հարիւր հազարներն ու միլիոնները կը վայելեն ու կը վասնեն:

Կը կարծուի թէ Զմիւռնիայէն եկած ըլլան այն հայերը, որոնք իրենց դարգացումով գրաւեր են լաւագոյն գիրքեր, ինչպէս փաշաներէն և բէյերէն ոմանք և դարձեալ կառավարական պաշտօնատանց մէջ դեռ մինչև հիմայ պաշտօնավարողներէն շատերը:

Ապա ծովային հաղորդակցութեան զիւրութիւնները հետըզհետէ Փոքր Ասիոյ զանազան քաղաքներէն Եգիպտոս բերին և այնպիսի բախտ փնտրող մարդիկ, որոնք առետրական զանազան ասպարէզներու հետեւելով գրաւեցին իրենց այսօրուան հաստատուն գիրքերը:

Եգիպտոսի վաճառականական հրապարակին վրայ ամենէն աչքի ընկնող հայերու ասպարէզն է ծխավաճառութեան գործը. ոչ մէկ ազգ կարող է մրցել հայ ծխավաճառներու հետ, կարելի է ըսել՝ Եգիպտոսի ծխավաճառութեան կայսրութիւնը ներկայացընող հայերն են բացառաբար. դեռ երկու տասնեակ տարիներ հազիւ բոլորած են, և ահա անոնցմէ ոմանք, որոնց երբեմն հասարակ դուքաննի, կամ մէկու մը մօտ ծառայող ըլլալը շատերուն յայտնի է, դարձեր է այսօր մի միլիոնատէր բանքիէն՝ գրաւելով անսահման վարկ. այսպէս մենք ունինք որպէս առաջնակարգ ծխավաճառներ Մաթոսեան եղբարց տունը, Մելքոնեաններ, Փէնփէճեաններ, Սարգսեաններ, Կամսարականներ և այլ երկրորդ կարգի վաճառականներ, որոնց հազիւ կարող են մրցակից դառնալ նոյն գործի օտար ներկայացուցիչները. Մաթոսեան տունը առանձնապէս օրական միջին թուով սպասում ունի 1200 օխա ծխախոտ (մօտ 4000 ֆունտ), որուն հազիւ կը հաւասարի նոյն գործի օտար ներկայացուցիչներու ըսպառումին համագումարը: Ծխախոտի և սիգառէթի գործով զբաղուող բազմաթիւ գործարաններ ունին հայերը ուր կ'աշխատին հարիւրաւոր բանուորներ: Ասոնք գլխաւոր ձիւղեր ունին Եգիպտոսի բոլոր շրջակայքը:

Փիթոլի գործին գլխաւոր ներկայացուցիչներէն մէկն ալ

հանրածանօթ պ. Մանթաշեանի տունն է՝ ունենալով մասնաճիւղեր շրջականերու մէջ:

Վաճառականական այլևայլ պարապուններու մէջ գլխաւոր տեղ զբաւած են դարձեալ Թոփալեան, Իփլիքճեան, Յակոբեան, Փոխի եղբայրք, Գահրամանեան, Նշասթաճեան, Սէլվաճեան և այլ բազմաթիւ հայ տուներ:

Եգիպտոսի հայ գաղթականութիւնը աւելի աչքի զարկաւ արհեստական և առևտրական տեսակէտներով այն օրէն սկսեալ, երբ Տաճկահայաստանի ընդհանուր ջարդերուն պատճառով Փոքր Ասիոյ ամեն քաղաքներէ Եգիպտոս խուժեցին հազարաւոր գաղթականներ՝ բերելով իրենց հետ արհեստներու բազմազանութիւն և արգիւնարերական զանազան պարապուններ: Համարեա թէ մի տասնեակ տարի առաջ դժուար կարելի էր տեսնել Եգիպտոսի մի անկեան վրայ երեցող հայ արհեստաւորի կամ վաճառականի անունով մակազրուած խանութներ, իսկ այժմ ոչ միայն այդ սովորական մի երեոյթ է, այլ և ունինք ամբողջ շուկաներ որոնք զուտ հայութեամբ են գրաւուած. այսպէս Գահիրէի մէջ Պանը-Պալիլ կոչուած ամենարանուկ հըրապարակը և Աղեքսանդրիոյ Սարրաֆիէ կոչուած փայլուն շուկան խիտառխիտ բռնուած են հայ ոսկերիչներով, ակնաւաճառներով, որոնց արևելական արուեստի նրբութիւնը չունի իրեն մրցակից:

Ընթացիկ արհեստներու մէջ ալ հայեր որոշ չափով զբաւած են իրենց տեղերը. ունինք բաւական ստուար թուով կօշկակարներ, դերձակներ, ատաղձագործներ, սրճաքանապետներ, ճաշարաններ, պանդոկապետներ և այլևայլ խանութպաններ, այնպէս որ իւրաքանչիւր ասպարէզի մարդը կարելի է մասնանիշ ընել:

Բարձրագոյն արուեստներու մէջ ունինք հեղինակաւոր բժիշկներ՝ Գահիրէի մէջ աւելի քան մէկ հրկվեցեակ, իսկ Աղեքսանդրիոյ մէջ համեմատաբար աւելի նուազ, բաւական թուով հայ փաստաբաններ և նկարիչներ կայն:

Երթալիան վիճակ. — Եգիպտահայոց կրթական վիճակը աննախանձելի դրութեան մէջ է. տասնեակ տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող մեր ակադեմիական վարժարաններէն կարելի չէ ցոյց տալ մէկը որոնցմէ շրջանաւարտ մը եղած լինի: Թէ Գահիրէի և թէ Աղեքսանդրիոյ մէջ երկար ժամանակէ ի վեր ունեցեր ենք նիւթականով բոլորովին ապահովուած, կըրտակներով զօրացած վարժարաններ, ու մենք այստեղ չունինք:

ոչ միայն իր կարգին մի միջնակարգ վարժարան տեղային պէտքերուն համապատասխանող, այլև մի նախակրթարան իսկ իր կարգին կարելի չէ կղած պահել աղայական զանազան կուսակցութիւններու անվերջանալի կռիւներուն և ինտրիգներուն պատճառաւ:

Գահիրէի և Աղեքսանդրիոյ ազգային վարժարաններուն համար միջին թուով տարեկան կը ծախսուի 2,000 անգղ. ոսկի (աւելի քան 20,000 ռուբլի)՝ ապահոված Պօղոս բէյ Իւսուֆեանի և Վանլը Գալուստ աղայի կտակներով. երկու քաղաքներու մէջ ևս մեր ազգ. երկսեռ դպրոցները կը կառավարուին կըրթական գործէն բացարձակապէս անտեղեակ հոգաբարձուներով, որոնց ձեռքին մէջ թուլամտրթ ուսուցիչներ գործիք եղած՝ բուժ դանակներով կը խողխուղեն ազգին մատաղ սերունդը պատրաստելով զանոնք հաշմանդամ ու խեղամիտ ապագայ հայութեան անգամներ: Փառասիրական ձգտումներէ մղուած, ակթոններ գրաւելու փափագէն բռնուած աղայականութեան ձեռք երկար ժամանակէ ի վեր մեր ուսումնարանները կը մնան անդոյն, անհողի յարկեր. ու այդ պատճառ կը գառնայ որ բազմաթիւ հայ ծնողներ իրենց զաւակները առաջնորդեն տեղային օտար դըպրոցներ, ուր մեծամասնութիւն մը մեր երկու սեւերու ալ մատաղ անգամներուն կը սնանին բոլորովին օտար ու անհարկաւ կը թուլանան սաինքներէն: Իզուր կը լինի երկար ժամանակներէ ի վեր եգիպտոսայ երիտասարդութեան մղած կըրթիւնները. կըրթական հարցի այս անորմալ դրութիւնը վերջ չի գտներ, մինչև որ կըրթական գործին ղեկը անպայման իրենց ձեռքը չառնեն մեր մտաւոր երիտասարդութեան ներկայացուցիչները:

Եգիպտոսի մէջ ունինք հինգ ուսումնարաններ. 1) Գահիրէ՝ Գալստեան երկսեռ վարժարան, մօտ 200 ուսանող, 9 ուսուցիչ և 4 ուսուցչուհի: 2) Հայ-աւետարանականներու (բողոքականներ) դպրոց, մօտ 40 երկսեռ ուսանող և 2 ուսուցիչ. 3) Աղեքսանդրիոյ՝ Պօղոս բէյիան Ազգ. երկսեռ վարժարան, մօտ 200 երկսեռ ուսանող, 10 ուսուցիչ, 5 ուսուցչուհի.— 4) Ասիութի վարժարան, 16 երկսեռ ուսանող և մէկ ուսուցիչ.— 5) Իպրահիմիէ վարժարան 12 երկսեռ ուսանող և մէկ ուսուցչուհի: Վերջին երկու քաղաքներու ուսումնարանները մասնաւոր կամ անային են և որոնք համեմատաբար շատ աւելի գեղեցիկ արդիւնաւորութիւն ունին, քան նախորդները: Ասոնց մասնաւոր ծախսերը կը հողացուին ուսանողներու հարուստ ծնողներէն: Օտար վարժարաններ կը յաճախեն գրեթէ 100-է աւելի երկսեռ ուսանողներ:

Լրագրութիւնն եւ մամուլ.—Գրեթէ տարի չանցնիր, որ սունկի նման անկիւն մը սմբած մէկ հիւանդ ուղեղէ լոյս աշխարհ չընկնի լրագիր մը կամ հանդէս մը, առանց իրարմէ ունէ զանազանութեան մեր բոլոր եգիպտահայ մամուլի «ասպետներուն» հաւատարիմ դաւանանքի «հաւատամբը» դարձած է «թերթ հանել» և «ազգին ծառայել»: Առանց լուրջ մտաւոր պաշարի կ'ելլեն, խմբագրութեան աթոռը կը գրաւեն, ուստի և եգիպտահայ լրագրութիւնը հասեր է բացարձակապէս անբովանդակ խայտառակութեան և թուղթ մրտաելու անկումին:

Եգիպտոսի մէջ լոյս տեսած են և կը տեսնեն՝ 1.—Արմաւենի (դադարած) 2.—Նեղոս (դադարած) 3.—Փարոս (դադարած) 4.—Արշալոյս 5.—Փիւնիկ (դադարած). 6.—Նոր-Օր (դադարած). 7.—Արտէմիս. 8—Ազատ բեմ. 9.—Փեթակ (դադարած). 10.—Ազատ խօսք (դադարած). 11.—Ժողովուրդ. 12.—Պարտէզ. 13.—Լրաբեր (օրաթերթ, որ ձեռագիր է և կարող է ծառայել իբր անտիքիտէ. 14.—Գրասէր (ձեռագիր) նորելուկներու փորձարան մը: Ասոնք՝ բացի Արտէմիսէն՝ կը ճամբորդեն միայն Եգիպտոսի ծակն ու ծուկը, առանց սակայն Եգիպտոսէն դուրս մէկ բաժանորդ ունենալու. մեր մատնանիշ ըրած լրագիրներէն ամենէն շատը 200—300 ընթերցողներ ունի:

Լրագիրներով հարուստ այսպիսի միջավայր մը իհարկէ հարուստ լինելու էր և տպարաններով ու մամուլով. երկու բաղադրներու մէջ ունինք հինգ տպարաններ, որոնք տպարան ըլլալէ աւելի գրաշարանոցներ են:

Ահա մեր մամուլի վիճակը, որուն վրայ օր աւուր դեռ նորեր հրատարակուելու սպառնալիքները կը լինին ամեն մի վայրկեան: Եգիպտահայոց մամուլի պատմութիւնը մենք կը թողունք իբր առանձին գործ ապագայ մամուլի պատմագրութեան: Առանձին հրատարակութիւններ, գրքեր, բրոշիւրներ այնչափ աննշան են, որոնց մասին խօսել չարժէ արդէն:

Ընթերցարան, թատրոն, ընկերութիւններ.—Ինչպէս բոլոր հայ գաղթավայրերի մէջ նոյնպէս Եգիպտոսի հայերը լաւ ըմբռնած են թէ ինչ մեծ ծառայութիւն կարող է ընել ընթերցարանը ժողովրդական ամեն մի խաւի համար: Անուրանալի է թէ ընթերցարանն հասակաւորներու վարժարանն է. ընթերցարանի օգուտները բազմակողմանի են, մանաւանդ

այնպիսի միջավայրերու համար, ուր հայութիւնը կ'ապրի ան-  
 ջատական կեանքով, ուր համախմբումներ տեղի չեն կարող ու-  
 նենալ, եթէ այդ գաղթավայրերու մէջ գոյութիւն ունեցող մը-  
 տաւոր ոյժերը յաճախակի առիթը չընծայեն հասարակական  
 խնդիրներ յուզելու կենտրոնական հաւաքավայրի մը մէջ: Ե-  
 դիպտահայութիւնը այդ պէտքը վաղուց զգացած է արդէն: 1890  
 թուականներէն սկսեալ գոյութիւն ունին արդէն  
 ընթերցարաններ, որոնք յաճախ բաժանորդներու սակաւութեան  
 պատճառով փակուեր և վերաբացուեր են: Այսպէս կարելի է  
 յիշատակել Գահիրէի հայկական քլիւպը, որը իր ժամանակին  
 առաջնակարգ մի հաստատութիւն էր՝ մրցելով եւրոպական նը-  
 մանօրինակ հաստատութիւններու հետ: Քլիւպի հիմնադիրներն  
 էին այն ժամանակի երիտասարդ մտաւոր ոյժերը, որոնք նոյն  
 հաստատութիւնը արդէն հասցուցին իր որոշ բարձրութեան.  
 հազիւ թէ մեր ազայական դասակարգը հոն իր ոտքը դրաւ, և  
 ահա սկսաւ անոր քայքայումը. դասակարգային խտրութիւն-  
 ներ երևան եկան և քայքայեցին անոր հիմքերը. ընթերցասէր  
 երիտասարդութիւնը հետզհետէ քաշուեցաւ, իսկ ղուժարի,  
 թղթախաղի նուիրուած մակարոյծներ կանաչ սեղաննե-  
 րու շուրջը սկսան բոլորել իրենց սարդոստայնը, որմէ պըժ-  
 գաց լուրջ ընթերցանութեան նուիրուած երիտասարդու-  
 թիւնը. բաժանորդները հետզհետէ քաշուեցան, և ընթեր-  
 ցարանի կիսապահով վիճակը խախտուելով՝ խանգարու-  
 եցաւ տարեկան պիւտճէն և հազիւ երեք տարիներու գոյ-  
 ութիւնէ մը յետոյ 1897 թ. փակուեցան հայկական քլիւպի  
 մեծաբաց և մեծածախս դռները, ուր ամփոփուած էին հազա-  
 րաւոր հատորներ և ազգային ու օտար լրագրութիւն: Այսօր  
 այդ բաղմամբիւ հատորները Գահիրէի առաջնորդարանի խուլ  
 պատերուն հետը բանտարկուած են փոշիի, ցեցի և մկներու  
 իբր ճարակ, և իզուր եղած են այն բաղմամբիւ բողոքները,  
 որոնք Գահիրէի երիտասարդութիւնը արտայայտած է դէպի տե-  
 ղական ազգային ժողովները: Վերջին երեք տարիներու մէջ մի  
 քանի երիտասարդներու միացեալ ոյժերով դարձեալ բացուած  
 է մի ընթերցասրահ, որը թէև ազքատիկ, բայց ապագայ կը  
 խոստանայ շնորհիւ մի քանի յամառ և աշխատասէր երիտա-  
 սարդներու կամքին և տրամադրութիւններուն:

Նոյն երևոյթը կը նկատուի Ադրբայձանի ոյ մէջ. գրեթէ  
 տասնեակ տարիներէ ի վեր ծնունդ առած և փակուած ու վե-  
 րաբացուած են ընթերցասրահներ, կուսակցական նեղ հայեացք-  
 ների, դաւանանքի և տարբեր ուղղութեան մարդիկ երկար ժա-  
 մանակ Ադրբայձանի ընթերցարանական գործը ջլատիչ հան-

գամանքներով տկարացուցած և քայքայման մէջ դրած են մինչև 1902 թ., Աղեքսանդրիան երկու տարիներ զուրկ ֆնացած է ընթերցասրահէ, այս տարի միայն կարող եղաւ բանալ «Տիգրան Երկաթ» միութիւնն անունով ժողովրդական գրադարան-ընթերցարանը. երիտասարդութիւնը վերջապէս կարողացաւ ըմբռնել իր խոշոր սխալը, և կուսակցական նեղ հաշիւները մեղմացան ու տեղի տուին գոնէ ընթերցարանական գործին բաւական աչքի ընկնող մեծ գարկ: «Տիգրան Երկաթ» միութեան սրահները այսօր ոչ միայն կը ծառայեն ընթերցարանական գործին, այլև կը ծառայեն Աղեքսանդրիոյ հայութեան բարոյականին, մտաւորականին և ազգայնականին: Այնտեղ կը սարքուին միթինկներ, դասախօսութիւններ, հաւաքումներ, ուր տեղի կ'ունենան ընդհանրական վիճաբանութիւններ մեր առօրեայ կենսական հարցերուն շուրջը: «Տիգրան Երկաթ» միութեան գրադարան-ընթերցարանը արժէ որ մեր բոլոր արտասահմանեան ցեղակիցներու ուշադրութեան արժանայ և քաջալիրուի հեղինակներէ, լրագրապետներէ և նուիրատուներէ:

Եգիպտահայոց թատերական գործը երբեմն ստացած է փայլուն վիճակ. թրքահայ բեմերու ամենահին վարպետներ այնտեղ երևցած են ոչ միայն ազգայնական բեմերու վրայ, այլև կառավարութեան ուշադրութեան արժանացած են: Խնդիվ Մուհամմէդ Ալին Պոլսէն հրաւիրած է հայ դերասաններ և գերասանուհիներ և վարձատրած է լիարուսն: Այդ բեմերուն վրայ երևցած են Մնակեաններ, Ֆասուլեաններ, Պէնլևաններ, Թրեանցներ, Հրաչեաններ ևայլն: Ապա երկար տարիներ հայ բեմը մնացած է անշուք և գրեթէ մեռած. վերջերս միայն կենդանութեան նշաններ սկսած են երևնալ, և հաւանականութիւն կայ թէ եգիպտահայոց բեմական գործը պիտի կարող լինի հասնիլ իր հին բարձրութեան:

Գրեթէ չկայ հայ գաղթականութիւն մը, որ սուելի հարուստ եղած լինի ընկերութիւններով, քան եգիպտահայը. ամեն օր կը հիմնուին ընկերութիւններ, բայց կարելի է ըսել՝ ամեն օր ալ կը կազմալուծուին ընկերութիւններ. ամենկէն լաւագոյն ձեռնարկներու համար եգիպտահայը պատրաստակամութիւն ցոյց կու տայ մի ընկերութիւն կազմելու. բայց այդ ետանդը չի բաւեր, շարունակելու և իր կազմակերպած ընկերութիւնը իր նպատակին ծառայեցնելու համար. եգիպտահայը գեռ ցարդ ցոյց տալ կարող եղած չէ իր կամքի տէր լինելը. կրթական, բարոյական, շահասիրական, բարեգործական տասնեակնեանով ընկերութիւններ կարելի է մատնանիշ ընել, բայց ամենքը մեռած ու անհոգի: Եգիպտահայ գաղթականութիւնը

կազմուած լինելով զանազան միջավայրերէ այնտեղ խոնուած խառնուրդէ մը, բնական էր որ իր բոլոր գործերը պիտի առնէին բարեւոնական լեզուի խառնակութեան ձևը, բայց յուսալի է որ երիտասարդ ու լուրջ տրամադրութիւններ այդ խառնուրդէն օր մը պիտի կարող լինին ձուլել և կազմել մաքուր տարր:

Հոովմէադատան հայեր.— Տասնութերորդ դարու սկզբներէն իվեր Եգիպտոսին մէջ գոյութիւն ունին հոովմէադատան հայեր: Գահիրէի մէջ քրիստոնէական խառնակութենէ մը վերջ ասոնցմէ շատերը եկած հաստատուած են Աղեքսանդրիա: Ասոնք մինչև 1890 թ. չունենալով իրենց համար մասնաւոր ազօթատեղի՝ լատինաց կեղեցիին կ'ազօթէին. այդ թուականին Բառնարաս կ'պիտի. Ազշէհերջիանի ջանքերով ս. Ատուածածնայ Անարատ Յղութեան նուիրուած մատուռ մ'ունեցան, որուն մօտ շինեցին և առաջնորդարան. բայց սա փոքր էր և 1894 թ. փլցուելով՝ աւելի փառաւոր կերպով կառուցուեցաւ այժմեան հոովմէադատան հայոց կեղեցիին, որուն համար նոյն դաւանանքին պատկանող մեծահարուստ Սալիլ փաշա Սալիաթ ծախսեց 35,000 ֆրանկ: Որոշ չափով յայտնի չէ թէ՛ որչափ բազմութիւն մը կը ներկայացնէին Գահիրէի և Աղեքսանդրիոյ հոովմէադատան հայերը: Աչքի վարնող առանձին հանդամանքէ զուրկ են. չունին ուսումնարան: Ունին բաւական թուով զարգացած և շնորհունակ կրօնաւորներ: Գահիրէի մէջ նմանապէս ունին եկեղեցի և կղերներու համար բնակավայր, ուր կը նստի հոովմէադատան հայոց առաջնորդ գերապատիւ հայր Սաբաղեանը:

Բողոքական հայեր.— Բողոքական հայերը աչքի ընկնող համեմատութիւններ չեն կարող ունենալ. շատ սակաւաթիւ են արդէն և աննշան մասնաւոր ժողովարան չունին. իրենց շարաթական հաւաքումները կը կատարեն ընդհանուր բողոքականներու ժողովարանին մէջ, ուր կը քարոզէ իրենց պատուելին. ասոնք մի քանի տարիներէ իվեր ունեցած են հայ աւետարանականներու մի գալրոց:

Շարաթապալաններ.— Ասոնք հայ աղանդաւորներ են, որ հազիւ իրենց երկու տասնեակ թուով Գահիրէի և Աղեքսանդրիոյ մէջ ճիգեր կ'ընեն բազմանալու: Եւրոպայէն նոր հասած այս աղանդը կը զարմանանք թէ ինչպէս ունեցաւ իր հայ ներկայացուցչութիւնը: Մենք գաւանանքներու մասին չունինք ոչինչ ըսելիք. ամեն մարդ իր պաշտածունքին մէջ կարող է ազատ լինել. բայց մեր երկուք ու կէս հայ շարաթապալանները:

արդեօք ի՞նչ հիմնական պատճառ ունեցած կը լինին բաժնուհուրու իրենց հայրերու երկար դարերէ ի վեր պաշտած եկեղեցիէն. միթէ միս չուտելը և շաբաթ օրը պահելը խրթին դաւանանք մը կը կազմէ. մենք կը ցաւինք որ ազոնց մէջ կան այնպիսիներ, որ ընդունակ կարող էին լինել առանց միս ուտելու և շաբաթը պահելով ալ մնալ իրենց հին կրօնքին մէջ: Մենք այնպէս կը ցաւինք ըսելու որ ասոնցմէ ոմանց դաւանափոխութեան հիմքը կը կազմէ ոչ այնչափ գիտակցութիւնը, որչափ նիւթականի փորացաւը...

Եգիպտահայ գաղթականութեան ասպագան.—Առանց մարգարէ լինելու դժուար չէ գուշակել գաղթականութեանս ասպադան. չկայ միսթարական կրօնթ, անբովանդակ է եգիպտահայուն ներկայ կեանքը, մտաւոր ու բարոյական առաջնորդող ոյժեր կը պակսին, կը ջլատուին սակաւաթիւ մտաւորական ներկայացուցիչ ոյժերու կորովը ազայական բիրտ ոյժին առջև. լրագրութիւններ խեղկատակութեան հասած է. ուսումնարանները՝ խաղալիք այս կամ այն փաշային ու բէյին քմահաճոյքներուն. հասարակական կեանք չկայ, ընտանեկան և ազգայնական կեանքը խաթարուած է, եկեղեցական գործերը վաճառականական մենաշնորհներու վերածուած: Իսկ ասոնց դէմ կռուելու կուրծք պարզող երիտասարդութիւնը, որ հազիւ Տաճկահայաստանի 1895—6-ի ջարդերէն ու սարսափներէն հալածական նետուած է Եգիպտոս, դեռ չէ կարողացած գտնել իր կեանքն ասպանովող վիճակ, թէև իր հետ բերած է հին եգիպտահայց կեանքը բարեշրջող շարժուն և աննկուն կեանքի առողջ սերմեր: Եգիպտահայ գաղթականութեան ասպգան վտանգսերու և փորձութիւններու ենթակայ խոր վիճ մ'ունի իր առջև: Ներկայ երիտասարդութեան կը մնայ այն վճին վրայէն կամ առնարար ցատկիլ, կամ անոր մէջ վատարար ընկղմիլ:

Ա.Վ.Օ

Աղեքսանդրիա.

## Վ Ր Է Ժ . . .

(Պատմութիւն)

Ապրիլեան Հմայեակը նոր էր վերադարձել ուսումնարանից, երբ ճաշեց ու սուսնանացաւ իր սենեակը: Գարնանային արեգակի ճառագայթները ներս էին թափանցել պատուհանից ու կարմիր յատակի վրայ դեղին գոյներով խաղում էին՝ տարածելով սառն օդի մէջ մի դուրեկան ջերմութիւն: Ապրիլեանը մօտեցաւ պատուհանին և բանալով փեղքերից մէկը՝ նստեց առաջին, որտեղից փչող գարնանային գոլ և մարուր օդը թաւշի պէս սկսեց շոյել նրա ճակատն ու այտերը: Դէմուդէմ, բակում բարձրանում էին երկու մեծ ակացիաներ, որոնց կողմնատած ճիւղերի վրայ անհանդիստ ցատկատումներով ծլււում էին ճնճղուկները: Եւ յիշեց նա հայրենի գիւղն, իր գրաւիչ բնութեամբ, իր չքնաղ բուսականութեամբ: Նա վաղուց հետէ այնտեղ չի եղել զարնանը, վերջին գարունը, որ տեսաւ իր հայրենիքում, դեռևս մանուկ էր: Մակայն նա շատ լաւ է յիշում այն օրերը, երբ հալուող ձիւնից առաջացած առուակները քչքչալով քերում էին փողոցների ու դաշտերի քնաթաթախ սև հսկը և նեղ ակօսներ փորելով՝ հիւսւում ու ձգւում մէջը, որպէս կուսական գեղանի ծածկեր, երբ այգիների ու պարտեզների ծառերը զուգուած հարսի պէս սպիտակ ծաղիկների տակ ժպտում էին իրանց կանաչ թագնուած տերևներով, երբ մարդիկ թեթև հագուստներով դէպ դաշտային աշխատանքներն էին շտապում: Արթնանում, կենդանանում էր բնութիւնը և մարդու սիրտը լցնում անսահման բերկրանքով ու թարմ զգացմունքներով:

Այդ ժամանակներից անցել էին մի քանի անհրապոյր գարուններ, որոնց դիմաւորել էր նա աշակերտական տաղտուկ սեղանների վրայ: Մօտենում էր և այս գարունն, ու Ապրիլեանը բնութեան կերպարանափոխութեան հետ զգում էր մի փոփոխութիւն և իր մէջ—նրան տիրապետել էին միևնույն այժմ

անծանօթ ղգացմունքներ: Այս ընտանիքը, ուր նա տեղափոխուել էր վերջին ամիսները որպէս գիշերօթիկ, կարծես թէ նրա կեանքի մէջ պիտի մտցնէր մի նոր շրջան:

Եւ իրաւ, Ապրիլեան Հմայեակի հոգեկան աշխարհում կատարուել էր մի ակնեռև փոփոխութիւն: Այդ նկատել էին նրա գասընկերներն ու նոյնիսկ ուսուցիչներէց մի քանիսը: Դասամիջոցին երբեմն «գերի» խաղալիս նա նոյն նախանձախընդըրութեամբ չէր վերաբերուում իր կողմնակիցների շահերին. նա անուշազիր էր գտուել գէպի ուսումնարանական կանոնները և մի տեսակ գոռոզ ու մեծամիտ գէպ ընկերները: Դասին ուսուցիչների ներկայութեամբ նա իրան չար ու յանդուգն էր պահում և յաճախ դաս հարցնող ուսուցչին այնպիսի պատասխաններ տալիս, որոնք միանգամայն անպատշաճ էին դասարանական կարգերին: Այսպէս՝ մի անգամ երբ ընդհանուր պատմութեան ուսուցիչը, դաս հարցրեց, Ապրիլեանը պատասխանեց.

— Գիտեմ, բայց չեմ կարող պատասխանել:

— Բայց ձեզ կարող եմ անբաւարար թուանշան դնել, յանդիմանեց ուսուցիչը:

— Կարող էք, անտարբերութեամբ ասաց Ապրիլեանը և նստեց:

Ուսուցիչը թէև դժգոհ մնաց այդ պատասխանից, բայց անբաւարար թուանշան նշանակել չկարողացաւ:

Ընկերների զարմանքը շատ աւելի մեծ կուլաւ:

— Տօ, դասդ իմանաս և հրաժարուես պատասխանելուց, զարմացած փսփսում էին դասարանի յայտնի ծոյրերը:

Այդ փոփոխութիւնը ամենից շատ զգում էր ինքը Ապրիլեանը: Մերթ լայնարձակ ընութիւնը իր ամբողջութեամբ նրան թուում էր չքնաղ, հմայիչ, մարդիկ բարի ու սիրելի, և իր գոյութիւնը շաղկապուած այդ ամենի հետ մի սքանչելի ներդաշնակութեամբ: Եւ նրա սիրտը լցում էր անուշ բերկըրանքով գէպ ամեն ինչ և ամենքը: Բայց երբեմն աշխարհը կորցնում էր նրա աչքում իր ամբողջ փայլն ու իմաստը և նմանուում գուր տեղը ապրող, ատամները թափած մի չարանենգ, պառու կնոջ, մարդիկ դառնում էին նեղսիրտ ու գաճաճ, որոնք թունալի օձերի պէս վխտում են երկրի վրայ միմիայն իրանց անպէտք գոյութիւնը քաշ տալու և ուրիշներին վնասելու համար. կեանքը դառնում էր դառն, գծուճ և անխորհուրդ, իսկ իր գոյութիւնը այդ բոլորի մէջ որպէս մի անախորժ աններդաշնակութիւն:

Հաղիւ թէ առաջները այդպիսի խոհեր ու զգացմունքներ

անցնէին Ապրիլեանի գլխով: Պատուհանի առաջ նա երկար ժամանակ հրճուում էր ճնճողւկներէ անհող ծլւլոցներով: Իրիկ-նապահի թեթև ուզով դեփիւռը պտոյտներ գործելով օդի մէջ մերթ ընդգրկում էր ակացիաների փափուկ ճիւղերը, մերթ փարում Ապրիլեանի տաք ճակատին և մերթ դիմացի տան աղիւսէ պատերին և կամ աննկատելի թոփչքներով բարձրանում վերև և սլանում հեռով, շատ հեռով, գուցէ այն ճանապարհով, որտեղից անցնում են Ապրիլեանի մտքի թոփչքները, և հանգստանում գուցէ այնտեղ, ուր ծնւում են նրա յիշողութիւնները...

Այդ ժամանակ էր, երբ նրա լսողութիւնը սկսեցին փազաբշել երաժշտութեան ներդաշնակ հնչիւններ: Առաջին բնագամ ընդհանուր ինքնամոռացութեան մէջ նա նոյնիսկ այդ չնկատեց, միայն զգաց, որ աւելի է յուզւում, աւելի է վերանում ու անդգայանում: Սակայն երաժշտութիւնը շարունակում էր: Չայնը կողքի սենեակիցն էր գալիս, ուր դաշնամուրի կլաւիշների վրայ թեթև ու վարժ ձեռքեր նուագում էին Ապրիլեանին լաւ յայտնի «Dors, mon enfant» բոմանսը: Եւ դա այնքան հմուտ էր ներդաշնակուած, ու այնքան հիանալի էր նուագում, որ երաժշտութեան հետ միաժամանակ պատկերանում էր և՛ մայրը, և՛ երեխան, և՛ օրօրոցը: Դորովապուծ զգացմունքներով լի մայրը օրօրում է երեխային և վերջապէս դադարում՝ կարծելով, թէ նա քնած է. բայց յանկարծ արթնանում է չարածճի մանկիկը և սկսում ամբողջ ուժով բղաւել, լալ. մայրը իսկոյն շարժում է օրօրոցը և երեխայի լացին արձագանգ տալիս իր քնքոյշ երգով. երեխան կամաց-կամաց հանգստանում է, որի հետ զուգընթացաբար նուագում է և՛ մօր ձայնը. լսում է միայն օրօրոցի դանդաղ օրօրը. վերջապէս մայրը թողնում է օրօրոցը, որը մի անգամ ևս ճօճուելով՝ կանգ է առնում...

Տան մէջ տիրեց խորին լուռութիւն:

Ապրիլեանը սթափուեց և ոտքի կանգնեց:

— Այն, «նա» է, և իմ սիրած բոմանսը, ասաց նա և սկզբեց անհանգիստ կերպով անցուդարձ անել իր կարճ սենեակում: Նա մերթընդմերթ կանգնում էր և լարում լսողութիւնը՝ անկասկած մի բան լսելու:

Բայց դաշնամուրն այլևս չհնչեց:

Ապրիլեանը նստեց սեղանի առաջ դասերը պատրաստելու. նա վաղուայ համար դասեր շատ ունէր: Ձեռքը մեկնեց, վերցրեց առաջին պատահած գիրքը և թերթելով բաց արեց առաջին երեսը: Դա տարրական երկրաչափութեան դասագիրքն էր, որը վաղուց էր անցել և յիշում էր, քննութեան նոյն-

իսկ լաւ թուանշան ստացաւ: Եւ չիմանալով՝ թէ ինչի համար, կարգաց առաջին ախիոմը և ապուշ ապուշ նայեյ պատուհանին՝ զարմանալով, թէ ինչպէս է լաւ թուանշան ստացել, երբ այժմ բաւական չէ, որ ոչինչ չի յիշում, այլև կարգացածն անգամ չի հասկանում:

— Ինչպէ՞ս թէ «Երկու կէտերի ամենակարճ ճանապարհը ուղիղ գիծն է», կրկնեց նա բարձր ձայնով.— չէ՞մ հասկանում:

Եւ նա ամբողջ մտաւոր ուժերը լարելով՝ առաջին պատրաստականի աշակերտի պէս սկսեց վանկ-վանկ, բարձր ձայնով կարգալ:

— Եր-կու կէ-տե-րի... կէտ... ա-մե-նա-կարճ... կէտ... ճա-նա... էհ, թքած վրան, ասաց նա բարկացած ու գիրքը մի կողմ ձգեց...

Այնուհետև վերցրեց այդ օրը դրաւարանից բերած ընթերցանութեան գիրքը և սկսեց կարդալ: Առաջին նախադասութիւնը կարծես թէ հասկացաւ: Նա շարունակեց և շուտով հասաւ վերջին տողերին, թերթեց, մի վայրկեան մտածեց և տեսաւ, որ գլուխը ոչինչ չի մտել, այլ միայն աչքերն են տառերի վրայով սահել: Այդ գիրքն էլ նա մի կողմ ձգեց և կրկին ոտքի կանգնեց: Սենեակում մի քանի անգամ անցուղարձ անելուց յետոյ՝ նա անցաւ կողքի սենեակը՝ դահլիճը, ուր հընչ-ուով էր դաշնամուրը, բայց ոչոքի չպատահեց: Այդտեղից անցաւ սեղանատունը և տեսաւ միայն ծառային, որ լուացած ամանեղէնն էր դարսում պահարանի մէջ:

— Այս ի՞նչ է, Բարսեղ, տանը մարդ չլւմ, հարցրեց Ապրիլեանը իբր թէ ակամայ:

— Ո՛չ, աղջիկ-պարոնը գնաց բազար:

— Իսկ... Սիրանոյշը, անվստահութեամբ աւելացրեց Ապրիլեանը:

— Նա էլ գնաց ընկերուհու մօտ, կարուկ վերջացրեց ծառան և հեռացաւ դէպ խոհանոցը:

Ապրիլեանը կանգնեց շուարած մի քանի բոպէ, ինքն էլ չիմանալով թէ ինչ անի: Իստարկ բնակարանը, մանաւանդ «նրա» դատարկ սենեակը, կարծես թէ նրան ուզում էին կլանել իրանց բաց խոռոչների մէջ: Նա շտապ գնաց իր սենեակը, գլխարկը դրեց, վերարկուն առաւ ուսերին և համարեա վազելով՝ դուրս եկաւ փողոցը— կարծես մէկը հալածում էր նրան:

Փողոցի դուռը անագին շրմփոցով փակուեց նրա յետևից:

## II

Միրանոյշ Չիլինկարեանը ծնողների միակ աղջիկն էր: Գիմնազիօնի վերջին դասարանի աշակերտունի էր նա, մի կայտառ, սրախօս ու գրաւիչ աղջիկ: Երբ Ապրիլեանը տեղափոխուեց նրանց մօտ ու ծանօթացաւ Միրանոյշի հետ, զգաց իր մէջ մի դատարկութիւն ու մենակութիւն և ասես համոզուեց, որ այդ բոլորին վերջ կտրուի, եթէ սիրի Միրանուշին և սիրուի նրանից: Եւ այնուհետև նա անտարբեր չէր դէպ այդ աղջիկը: Նրա պաշտօնական, սառն յարաբերութիւնները դարձան աւելի բարեկամական ու մտերմական: Ահա այդ ժամանակներից ծնունդ առան նրա հոգին աղմկող զգացմունքները: Որ նա սիրում էր Միրանուշին՝ այդ լոյսի պէս պարզ էր նրա համար—պատանեկական անդրանիկ ցնորալի ու խանդավառ սէր... բայց պարզ չէին Միրանուշի ունեցած զգացմունքները դէպի իրան և յաճախ կրկնուող հակասական հանգամանքները նրան կասկածների առիթ էին առլիս: Այսպէս, մի անգամ դաշնամուրի վրայ նա նուազեց «Dors, mon enfant»-ը, որ և Ապրիլեանի գուրըն եկաւ: Նա յայտնեց իր հիացմունքը այդ բոժանսի ներդաշնակութեան ու նուազման առիթով: Միրանոյշը լսեց զբլուխը քաշ, և այնուհետև երբ Ապրիլեանը տանն էր լինում, Միրանոյշը նուազում էր այդ և յաճախ չարածճի կերպով նրա ամենալուրջ զբաղմունքները խանգարում: Ինչո՞վ բացատրէր այդ և նման դէպքերը, եթէ ոչ այն հետաքրքրութեամբ, որ տածում էր Միրանոյշը դէպի ինքը: Ծնատ բարի: Հապա ինչո՞վ բացատրէր և այն, երբ մի անգամ հիւրեր էին եկել Չիլինկարեանների մօտ, ի միջի այլոց և մի լաւ հագնուած ուսանող, Միրանոյշը սկսեց այնքան գրաւուել վերջինով, որ բաւական չէր որ Ապրիլեանի վրայ ուշադրութիւն չէր դարձնում, այլև այդ և հետևեալ օրերը նրան մի տեսակ սառնութեամբ ու արհամարհանքով էր վերաբերում: Նման օրինակներ շատ: Եւ այդպիսի դէպքերում զուգընթացաբար փոփոխուում էր Ապրիլեանի հոգեկան աշխարհը: Այս բոլորը նա տանում էր լուռ, ոչինչ արտայայտել չէր ուզում, կամ աւելի ճիշտ՝ չէր համարձակուում:

Այսպէս անցան մի քանի շաբաթներ: Գարնանային արեգակի ճառագայթներն էլ առաջուայ պէս գոլ ու հեղահամբոյր չէին, այժմ նրանք այրող ու կիզիչ էին դառել—եղանակները տաքացել էին:

Ապրիլեանի քննութիւններն սկսուել էին, որոնցից մի քանիսը արդէն յաջողութեամբ բռնել էր: Այդ օրը նա կրկին քննութիւն ունէր, որ և յաջող վերջացնելով՝ շտապեց տուն: Տանը ոչոք չկար: Նա ուրախ տրամադրութեան տակ ճաշեց շատ անհանգիստ, և ճաշի վերջին ծառան նրա հարցին անուշադրութեամբ պատասխանեց.

—Տանը չէ, գնացել է ընկերուհու մօտ:

Այդ պատասխանից յետոյ Ապրիլեանը առանձնացաւ իր սենեակը և վրդովուած՝ սկսեց անցուդարձ անել մի անկիւնից միւսը: Երբեմն կանգ առնելով՝ նա լարում էր ուշադրութիւնը լսելու արդեօք զանգակի ձայն չի գալիս, կամ չի՞ լրսւում Սիրանուշի հնչիւն խօսակցութիւնը:

Նա անհամբեր սպասում էր Սիրանոյշի վերադարձին: Այդ օրը պիտի յանձնէր նրան իր խնդրած նկարը, որի վրայ Ապրիլեանը վերջին երկու օրն այնքան ջանք էր թափել: Այդ մի շնորհ էր Ապրիլեանի համար, մի երջանիկ աշխատանք, որին արժանացրել էր նրան Սիրանոյշը:

Եւ այդ պատահեց այսպէս.

Երկու օր առաջ, երեկոյեան, երկարատև մտաւոր աշխատանքից յետոյ Ապրիլեանը թմրած պառկել էր մահճակալի վրայ, երբ մէկը թրիկացրեց իր դուռը: Նա վեր թռաւ տեղից, բացեց դուռը և տեսաւ Սիրանոյշին: Նրա ամբողջ մարմնով մի հաճելի դող անցաւ, որ բոպէսպէս վանեց նրա թմրութիւնը, իսկ քիմքի երակը սկսեց ուժգնութեամբ զարկել:

—Այս ի՞նչ է, Հմայեանկ, ամբողջ օրը պարապում էք, ասաց Սիրանոյշը ժպիտն երեսին:

—Չէի պարապում, պատասխանեց Ապրիլեանը:

—Հապա:

—Հէնց այնպէս, հանգստանում էի:

—Գիտէք, Հմայեանկ, մի խնդիր ունեմ ձեզնից:

—Ի՞նչ:

—Վերջին փոստով ստացած շաբաթաթերթի մէջ մի գեղեցիկ նկար կայ... սյ, կուզէք, գնանք դահլիճը, ցոյց տամ...

Նրանք անցան դահլիճը:

—Դուք հիանալի նկարում էք, շարունակեց Սիրանոյշը. ես ուզում եմ խնդրել, իհարկէ՞ եթէ ժամանակ ունէք, որ... մեծադիր արտանկարէք ինձ համար:

—Ձեզ համար, շփոթուած հարցրեց Հմայեանկը:

—Այո, ինձ համար, շուագունած վրայ բերեց Սիրանոյշը և շաբաթաթերթը բանալով դրեց Ապրիլեանի առաջ:

Դա մի կին էր, պարզ, անտիկ հագուստով, ազատ բնու-

թեան մէջ մի ժայռի վրայ կանգնած: Մի ձեռքին նա ունէր մերկացրած սուր, իսկ միւսը ամբողջ ոյժով սեղմած՝ մի սպառնացող բռունցք էր ներկայացնում: Նկարի տակ գրուած էր «Վրէժ»:

—Գեղեցիկ նկար է, չէ՞, հարցրեց Սիրանոյշը:

—Սքանչելի է, պատասխանեց Ապրիլեանը՝ աչքերը նկարից չհեռացնելով:

—Սիրանոյշ, աղջի՛ր, լսուեց սեղանատնից մօր ձայնը.—մի շուտ այստեղ եկ:

—Ուրեմն կը կատարէ՞ք խնդիրս, հարցրեց Սիրանոյշը՝ պատրաստուելով դահլիճից հեռանալ:

—Անպատճառ, պատասխանեց Ապրիլեանը զգացուած և աչքերով ճանապարհ գրեց հեռացող Սիրանոյշին:

Մի քանի վայրկեան նա հայեացքը չհեռացրեց այն դռնից, ուր անհետացաւ Սիրանոյշը, ապա կրկին մի երկար նայեց նկարին: Նա ապշել էր: Բազմաթիւ նոր խոհեր եկան կուտակուեցին նրա գլխում. նա դժուարացաւ մի վերջնական եզրակացութեան գալ, միայն կարողացաւ ցածր և խորհրդաւոր ձայնով կարդալ նկարի անունը:

—Վրէժ...

Այժմ նկարը պատրաստ էր և Ապրիլեանն սպասում էր այն յանձնելու Սիրանոյշին: Սիրանոյշը չկար ու չկար:

Երկար սպասելուց ու քայլելուց ձանձրացած՝ Ապրիլեանը պառկել էր մահճակալի վրայ և խորասուզուել մտածմունքների մէջ: Յանկարծ ինչ-որ մի բան մտաբերելով՝ վեր թռաւ տեղից և նստելով գրասեղանի մօտ՝ առաջին գրեց նկարը:

«Չէ, անպատճառ հարկաւոր է մի բան գրել», մտածեց նա, գրչակոթը վերցրեց և պատրաստուեց գրել:

«Բայց ի՞նչ գրել», կրկին խօսեց ինքն իրան Ապրիլեանը.—Արդեօք գրե՞մ «Նուէր» կամ «յիշատակ Ս. Չիլինկարեանին Չ. Ապրիլեանից»: Բայց, ո՛չ, սա շատ չոր ու ցամաք է, աւելի զգացմունքներով լիքը խօսքեր են հարկաւոր: Այդ տեսակէտով աւելի յարմար է սա: «Մեր անկեղծ բարեկամական յարաբերութիւնների մի պերճախօս առհաւատչեայ թող լինի այս նկարը»:

«Այո, արդէն պատշաճ է», ասաց նա և վերցնելով մի թղթի կտոր գրեց վրան փորձելու համար: Գրեց, բայց էլի կանգ առաւ ու երկար մտածեց:

«Ո՛չ, ո՛չ, յիմարութիւն է, երեխայութիւն է», մտածեց նա. «ի՞նչ կարիք կայ, կամ ի՞նչ իրաւունք ունեմ ես: Ամենից յարմարագոյնը սա է», և վերցնելով նկարը, նրա յեակում, վե-

րևի աջ անկիւնում գրչի վճռական շարժումով գրեց մի քանի տառեր միայն՝ «Հ. Ա.-ից», և ուրիշ ոչինչ:

— «Ա՛յ, այսպէս, այժմ հրաշալի է», ասաց նա՝ ուրախացած իր գիւտի վրայ և յենուեց աթոռի մէջքին: Ապա շուտուեց նկարը և մի խորը քննական հայեացքով նայեց նրան: Ներքևում այս անգամ սևանում էին զրչագիր տառեր, որոնք արտայայտում էին նոյն կարճ խօսքը. — «Վրէժ»:

Բայց որքան արտայայտիչ է պատկերը...

Մարդկանցից հեռու, բնութեան գրկում, մի ձեռքում սուր, միւսը այնքան ջղաձգօրէն սղմած: Որպիսի՞ ցնորուած դէմք ունի, աչքերը ինչպէ՞ս են փայլում. կարծես մինչև անգամ կոպերը արցունքով թրջած լինին: Ի՞նչ խորհրդաւորութիւն կայ նրա մտատանջ ճակատին, և որպիսի՞ խորութիւն այնտեղի թոյլ և գրաւիչ կնճիոնների մէջ... Եւ դա մի կի՞ն է, մի թոյլ ու քնքոյշ արարած... Եւ ո՞վ գիտէ, թէ՛ ինչ անարդարութիւն կամ բռնութիւն է այդ աղջկան արիւնալի ասպարէզը ձգել. արդեօք անողոր ճակատագրի՞րը, իր կուսական սրբապղծութեան գիտակցութիւնը, հայրենիքի թշուառ վիճակը, թէ՞ առհասարակ ազատութեան ու ճշմարտութեան համար հալածական մարդկանց սևամաղձ ուրուականները... Այդ յայտնի չէ, պարզն այն է, որ մինչև անգամ ամենաթոյլ և ամենաքնքոյշ արարածների մէջ էլ զարթնում է այն առիւծը, որ ճնշուած մարդկութեան դեռևս չսեռած արժանաւորութիւնների արդանդն է ծընում...

Եւ որքան խորն էր թափանցում Ապրիլեանը պատկերի արժանաւորութիւնների մէջ, այնքան նրա աչքում բարձրանում ու դժուարամատչելի էր դառնում Սիրանոյշը: Եւ յանկարծ այդ աղջիկը կամենում է յիշատակ վերցնել մի այսպիսի խորհրդաւոր նկար, որի մէջ մի ամբողջ գրամա կայ թագնուած: Անկասկած ընտրութիւնը կամայական չէ... Օ՛հ, լաւ յիշատակ չի վերցնում նա Հմայեակից...

Այդ բոպէին լսուեց էլեկտրական զանգի ձայնը, որից մի փոքր յետոյ Սիրանոյշի հնչուն խօսակցութիւնը:

Ապրիլեանը ոտքի կանգնեց:

Ոտը մտքերը նրա ուղեղում դեռևս թողել էին իրանց ճնշող ազդեցութիւնը: Նա ինստինկտաբար անցաւ սեղանատունը, որտեղ և հանդիպեց Սիրանոյշին:

— Այսօր ինչպէ՞ս անցաւ ձեր քննութիւնը, եղաւ Սիրանոյշի առաջին հարցը:

— Շատ յաջող, պատասխանեց Ապրիլեանը:

Դրանով ընդհատուեց նրանց ամբողջ խօսակցութիւնը: Պատկերի մասին ոչ մի խօսք չեղաւ:

Տանը կրկին ոչոք չկար: Շուտով ծառան բերեց հեշտահուը, դրեց սեղանի վրայ ու գնաց խոհանոց:

Արեգակը վաղուց ծածկուել էր տների յետևում, և մութն իջել: Սեղանատան առարկաների ստուերները կորցնում էին իրանց սահմանագծերը և հաւաքուելով աթոռների, սեղանի, պատկերների տակ ու սենեակի անկիւններում՝ թանձրանում էին:

Ամբողջ բնակարանում տիրել էր մի խորին լուսթիւն: Միայն հեշտահուի եռացած ջուրն էր անուշ խլխլթում ու իր տաք գոլորշիներն ամպի քուլաներով կափարիչի ծակերից և արանքներից դէպ առաստաղն ուղարկում: Սենեակի մէջ տարածւում էր ղզալի խոնաւութիւն, որին և միանում էր թէյամանի մէջ եփուող թէյի դիւրեկան անուշահոտութիւնը:

Սիրանոյշը նստած էր սեղանի մօտ, և լուռ, աչքերը յառած՝ նայում էր հեշտահուի ծորակից երբեմն օփսէն ընկնող կաթիլներին, իսկ Ապրիլեանը կանգնած ապակեպատ դրան առաջին՝ դէպ գուրս էր նայում: Նրա շնչառութիւնից ապակին ծածկուել էր գոլորշիով: Նա բարձրացրեց ձեռքը, ուղեց սրբել, բայց մատի մի քանի շարժումներից յետոյ գոլորշու մէջ բացուեցին երկու տառի ուրուագծեր: Երկու տառեր, որոնք իրար կողքի կազմում են մի գեղեցիկ ներդաշնակութիւն — այդ տառերը «Հ. Ս.» էին: Ապրիլեանը մի առանձին հրճուանքով նայեց դրանց և ապա սկսեց քննել նրանց առանձնայատկութիւնները: Հ. — դա մի հանդիսաւոր գծագրութիւն է, որը հզօրութիւն, վստահութիւն և ոյժ է ներշնչում, և սրպիսի եռանդ կայ այդ տառի մէջ, իսկ իրակ տղամարդու անուան սկզբնատառ: Իսկ միւսը որքան յարմար կնոջ անուան՝ մեղմ, զսպուած, անձաչկոտ: Եւ այդ երկուսը ի՞նչ գեղեցիկ ներդաշնակութիւն են կազմում... Բայց բոպէական հրճուանքի մէջ ցուրտ նոտաներ հնչուեցին... Ս... ճիշտ է, կանացի յատկութիւն ունի, բայց կարծես մեռած, անհողի լինի, եռանդ չկայ, սառնութիւն է փչում...

Որպէսզի շատ չենթարկուել վերջին խոհերին՝ Ապրիլեանը ձեռքի մի շարժումով սրբեց տառերը և մի պտոյտ գործելով՝ շուռ եկաւ դէպի Սիրանոյշը:

Սենեակի մէջ մութն աւելի էր թանձրացել, ուր հազիւ կարելի էր նշմարել կանացի գեղեցիկ դէմքի սպիտակ պրոֆիլը:

Նա կրկին լուռ էր և ո՛վ գիտէ՝ ինչե՞ր էր մտածում...

— Սենեակը որքան մութ է, յանկարծ աւելի բարձր, քան հարկաւոր էր, գոչեց Հմայեակը:

Սիրանոյշը կարծես ասեղի ծակոցից վեր թռաւ և նայելով շուրջն ասաց.

— Իսկապէս այս ի՞նչ մութ է, հարկաւոր է լուցկի:

Մի քանի ըոպէից յետոյ սենեակը լոյս էր, և երկուսն էլ նստած թէյ էին խմում:

Ապրիլեանը կրկին լուռ էր, լուռ էր և՛ Սիրանոյշը:

«Օ՛հ, ես գիտեմ, թէ՛ նա ինչո՞ւ է լուռ, մտածում էր Ապրիլեանը. այո՛, այդ լուռութիւնը աւելի բան է ասում, քան եթէ՛ նա խօսէր: Որքան նա զրաւիչ է այսպէս, որքան խորհրդաւոր. անխ, եթէ՛ հնար լինէր... բայց...»

Նա բարկացաւ, որ իր մտածմունքների մէջ կրկին տեղ բռնեց այդ չարագուշակ «բայց»-ը, և որպէսզի վերջինս մեծ գրաւումներ չանի՝ խօսեց:

— Այսօր տեսնում էք ի՞նչ լաւ եղանակ է, այնքան էլ շոգ չէր:

— Իսկ դուք նկարը վերջացրե՞ք, վրայ բերեց Սիրանոյշը՝ կարծես չլսելով նրա ասածը:

— Այո՛, վերջացրի:

— Ապա ինչո՞ւ չէք տալիս:

— Որովհետև... որովհետև չուզեցիք:

— Հը, հը, թեթեւ քմծիծաղ տուեց Սիրանոյշը. զարմանալի է, կարծես տասն անգամ պիտի խնդրենք. շատ չէ՞ք նազ անում...

Բայց Հմայեակը Սիրանոյշի վերջին խօսքերը չլսեց, նա արդէն գնացել էր նկարի յետևից, որը և իսկոյն բերեց:

— Ի՞նչ գեղեցիկ է, գոչեց Սիրանոյշը. սա չինական թանաքով էք արտանկարել. հիանալի է... սա ձեզանից յիշատակ կը վերցնեմ. սպասեցէք... հն, շատ նման է, կեցցէք, իսկական տաղանդ էք:

Նա շուռ տուեց պատկերը, նկատեց անկիւնում սևացող տառերը և կարծես մտքումն էլ արտասանեց — «Հ. Ա.-ից» և ապա շրջելով սկսեց երկամբ, շատ երկամբ նայել և այլևս ոչինչ չխօսեց, կարծես փոշմանեց, որ սկզբի խօսքերն էլ արտասանեց:

Ապրիլեանը կանգնած Սիրանոյշի մօտ՝ կրկին աչքերը չէր հեռացնում պատկերից: Եւ այդ՝ միջոցին նա կարծես զգում էր, թէ՛ ինչու համար այդքան երկար Սիրանոյշը նայում էր պատկերին և ինչեր է մտածում...

— Ո՛չ, նա սիրում է ինձ, մտածում էր Ապրիլեանը. ես

զիտեմ, տես, ինչպէս է նայում և այն է մտածում, ինչ որ ես...»

Եւ յանկարծ որտեղից որտեղ Ապրիլեանի մտքովն անցաւ մի համեմատութիւն, թէ ի՞նչպէս կը վարուէր Սիրանոյշը, եթէ նա դրժէր իր սիրոյ խոստումը: Արդեօք այս աղջկայ պէ՞ս: Օ՛հ, սարսափելի է, ոչ աւելի լաւ է չմտածել: Եւ ինչո՞ւ մտածել, քանի որ այդ երբէք տեղի ունենալ չի կարող, քանի որ նա սիրում է Սիրանոյշին, իսկ Սիրանոյշն իրան:

Եւ Ապրիլեանն այնքան էր համոզուած իր մտածմունքների մէջ, որ մինչև անգամ երեւեակցում էր Սիրանոյշին. արցունքները աչքերին. կանգնած իր դիմաց՝ ասելիս.

— «Հմայեակ, ես քեզ սիրում եմ, մի՞թէ դու ինձ կը դաւաճանես... չէ, դու այդ չես անիլ, չէ՞, որ ես քեզ սիրում եմ»...

Այդ իլլիւզիան ցնդուեց, երբ Սիրանոյշը ցածր և անվերդով ձայնով կարգաց նկարի անունը.

— Վրէժ:

— Վրէժ... հոգոց հանելով արձագանգ տուեց Ապրիլեանը Սիրանոյշին, շեշտելով բառը:

### III

Կարճատև ընթրիքից յետոյ Չիլինկարեանները հիւրերը հաւաքուեցին դահլիճը: Մի գոյգ յոգնած թաթիկներ կրկին սահեցին դաշնամուրի կլաւիշները վրայ, և դահլիճն ու կողքի սենեակներն արձագանգ տուին ծոյլ վալ'սին: Կրկին սկսուեց իրարանցում, կրկին լսուեցին կանացի զիլ ծիծաղներ, տղամարդկանց մոմոտոցներ, ոտները շրխկոցներ և դերիժեօրի բարձրբազոչ կարգադրութիւնները: Բայց դա երկար չտևեց, շուտով լռեց դաշնամուրը, և տիրեց մի խուլ աղմուկ: Բայց ահա սենեակի հեռուոր անկիւնում փորձ են անում, պարելով՝ ինչպէս երևում է՝ այդ շրջանները նոր մտած հայկական եալլին: Հնչում է մէկի ուժեղ ձայնը, որին միանում են ուրիշ մի քանի անվստահ ձայներ, որոնք կամաց-կամաց ընտելանում ու արձագանգ են տալիս աւելի ուժգին ու վստահ, մանաւանդ երբ գալիս են կրկնութիւնները.

... «Կանաչ սարերով եկար, կարմիր սողերով եկար»...

Ձայները նորից պակասում են, և երգը նուազում ու անկանոն է դառնում—ինչպէս երևում է՝ դրանից էլ ձանձրացան: Յանկարծ դաշնամուրը հնչեց եւրոպական աշխոյժ «մազուրկան» և դահլիճի մէջ եռաց նոյն չափածոյ խառնաշփոթութիւնը:

Այս բոլորն Ապրիլեանի սենեակում լսում էր ամենայն մանրամասնութեամբ, կարծես միջի բարակ պատը խակի բաժանելիս չլինէր այդ երկու սենեակները:

Բայց Ապրիլեանը ոչինչ չէր լսում և գլուխը սեղանին յենած, կռանը կռթնած, լացելու չափ տրտում էր: Նրա հոգեկան աշխարհում կատարում էր մի փոթորիկ, որի նմանը Ապրիլեանն իր կեանքում չէր տեսել:

Այն, գուցէ նա այժմ էլ հիւրերի հետ կը զբաղուէր, կ'ուրախանար, ինչպէս ընթրիքից առաջ. բայց նա չէր կարող: Նա մինչև անգամ չընթրեց, չնայած որ մի քանի անգամ հրաւրեցին: Ընթրիքից յետոյ էլ նորից եկան, խնդրեցին, որ գոնէ գայ դահլիճը, բայց Հմայեակը բոլորին յամառութեամբ մերժեց: Խնդրողները վարմացան նրա յանկարծակի փոխուելու վրայ, բայց ոչինչ հասկանալ չկարողացան, ուստի ձեռներն ու ուսները շարժելով՝ թողեցին ու հեռացան:

Եւ նա ինչպէս կարող էր գնալ:

Դեռևս երեկոյեան, երբ Չիլինկարեանները հիւրերի համար տեղաշին պատրաստութիւնների մէջ էին, Ապրիլեանը սեղանատանը մի քանի անգամ առիթ ունեցաւ Սիրանոյշի քնքոյշ հայեացքները որսալ, հայեացքներ, որոնք տեղի էին տուել նախկին սրախօսութիւններին ու հանաքներին:

Հազիւ էր մթնել, երբ մէկը միւսի յետևից ներս թափուեցին Սիրանոյշի ընկերուհիները, ծանօթներն ու ազգականները, ըստ մեծի մասին երիտասարդներ: Դահլիճը թնդաց անընդհատ գաշնահարութեամբ: Բոլորն էլ ուրախ էին: Ուրախ էր և Ապրիլեանը: Նա ուրուականի պէս ողջ օրը հետևում էր Սիրանոյշին: Եւ ինչո՞ւ չանէր: Այժմ նրա Սիրանոյշի հետ ունեցած յարաբերութիւնները մտել էին միտոր շրջանի մէջ. նրա ուղեղում այժմ ծագել էր մի լուսատու աստղ, ցրուել էին նախկին այնքան յաճախ կուտակուող կասկածանքի մտայլ ամպերը: Սիրանոյշը յիշատակ էր վերցրել նրանից, հանաք բան չէ, և այն էլ որպիսի՜ իմաստալի և խորհրդաւոր յիշատակ... Այդ օրը նա դէպի բոլորն էլ լաւ էր տրամադրուած: Բոլոր մարդկանց դէմքերն այժմ նրա համար դառել էին բարի, սիրելի...

Ընթրիքից մի կէս ժամ առաջ, երբ ըոպէսպէս լուել էր գաշնամուրն ու դադարել պարը, Ապրիլեանը նկատեց, որ այն լաւ հագնուած ուսանողը մի զինուորականի հետ մտաւ Սիրանոյշի սենեակը:

Մի քանի ըոպէից յետոյ լսուեց նրանց բարձր ծիծաղը, որից յետոյ զինուորականը ժպտերես գլուխը հանեց զոնից և կանչեց Սիրանոյշին:

Միրանոյշը գնաց և շուտով վերադառնալով՝ դրան մօտ կանգնեց և կիսասպառնական ձայնով ասաց.

—Տեսէք, չանէք, թէ չէ կը նեղանամ:

Ապա եկաւ, նստեց իր երկու ընկերուհիների մօտ և ըսկսեց պատմել մի ինչ-որ արկած ուսումնարանական կեանքից: Շատ չանցաւ, և Միրանոյշի սենեակից զսպուած ծիծաղով դուրս եկան ուսանողն ու զինուորականը: Ուսանողը մեծամիտ շարժումներով, յետևին մի ինչ-որ բան բռնած մօտեցաւ Միրանոյշին. նրան հետևում էր ինքնավստահ զինուորականը:

Եւ Ապրիլեանը տեսաւ ուսանողի ձեռքին իր նկարած «Վրէժը», որ նա զգուշութեամբ բռնեց Միրանոյշի ղէմուղէմ:

Միրանոյշը մի կողմնակի հայեացք ձգեց, արագութեամբ խլեց նկարը և անփոյթ եղանակով գոչեց.

—Պարոն Մարիկեան, չէ՞ք ամաչում, այս ի՞նչ էք արել, — և յետոյ մէկ նայելով նկարին, մէկ խօսակցուհուն՝ շարունակեց կիսատ թողած պատմութիւնը, կարծես ոչինչ պատահած չըլինէր:

Ուսանողի ու զինուորականի հռնուցներին վերջ չկար, իսկ Միրանոյշն աշխատում էր չլսել նրանց:

Կողքի նստածներից մի քանիսը հետաքրքրուեցին այդ տեսարանով և Միրանոյշի ձեռքից առնելով նկարը՝ մէկը միւսին յանձնեցին, ծիծաղեցին ու զուարճախօսութիւններ արին:

Շուտով հնչեց դաշնամուրը, և ուսանողը մոռանալով նըկարի պատճառած բողբոջական բաւականութիւնը, սկսեց պարել... Միրանոյշն էլ իր հերթին սահում էր թիթիկ թռիչքներով փայլուն յատակի վրայ... նոյն ուսանողի հետ: Նա ծիծաղում էր, սրախօսութիւններ էր անում, բոլորը ծիծաղում էին, բոլորն էլ պարում էին...

Իսկ Ապրիլեանը փայտ կտրած՝ կանգնել էր դրան մօտ և երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ:

Այն նկարը, որի վրայ այնքան աշխատանք ու խնամք էր թափել, այժմ ընկած էր ճմրթած ու տրորած սենեակի մի մութ անկիւնում: Ազլկայ ձեռքի թուրը հովանոցի էին կամեցել նմանեցնել, իսկ միւս սեղմած բռունցքից կանացի «բեղըկիւլ» էին կախել: Նրա ճմուռած կնճռոտած ղէմքը պառաւ, այլակերպ կնոջ արտայայտութիւն էր ստացել:

Եւ այդ բոլորը կատարուեց Հմայեակի աչքի առաջ:

Նա չէր կարող երկար մնալ դահլիճում, ուստի թողեց ու առանձնացաւ իր սենեակը և հրաժարուեց ընթրելուց:

Այժմ հիւրերը կամաց-կամաց ցրում էին, այն ինչ Հըմայեակը գեռ ևս չէր պառկել քնելու... Երանի թէ նա տեղա-

փոխուած չլինէր այդ տունը, երանի թէ նա ծանօթացած չլինէր Սիրանոյշի հետ և չնուիրէր այն պատկերը: Բայց այդ բոլորն էլ եղել է և անպուժ կերպով ծաղրուել... զոնէ մի փոքրը յարգանք դէպ գեղարուեստը, չէ՞ որ նկարը գեղեցիկ էր և գեղեցիկ էլ արտանկարած էր: Եթէ այդպէս էր վարուելու, ինչո՞ւ խնդրեց, ինչո՞ւ միշտ կրկնում էր, թէ սիրում եմ գեղարուեստը. մօղայական, կապիկային սէր... Իսկ Ապրիլեանը այնպիսի եռանդով արտանկարեց և «նուիրեց», «յիշատակ» տուեց նրան...

—Վրէժ... դառնութեամբ լիքը արտասանեց նա:

Բայց ի՞նչպէս, ի՞նչ իրաւունքով, ո՞վ է ինքը...

Եւ այդ բոպէին ասես նրա կոկորդը խեղդում, հուպ տալիս լինէին. նա դժուարութեամբ էր թուրը կուլ տալիս: Մի ինչ-որ բան քլքլում էր նրա կոկորդում: Մի՞թէ արցունքներ էին:

Յանկարծ նրա աչքովն ընկաւ այն շարաթաթերթը, որից արտանկարել էր պատկերը: Այդ վերադարձրեց նրա ուղեղում իր նկարը, յիշեցրեց նորից, աւելի շօշափելի կերպով այդ օրուայ կատարուածը: Մի յուսահատ վիշտ կրկին տիրապետեց նրան: Եւ յանկարծ, ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս վերցրեց շարաթաթերթը, միջից երկու կէս արեց ու դէն շարտեց: Այն ժամանակ միայն գիտակցեց իր արածը, երբ թերթի կտորները աղմուկով յատակին ընկան: Նա փոշմանեց իր արածի վրայ, մինչև անգամ վախեցաւ և կարծեց, թէ ահա տանեցիք կ'իմանան, կը գան: Բայց ոչոք չէր լսել:

Հլուրերն արդէն ցրուել էին, և տան մէջ տիրել էր մի յոգնած լուռութիւն: Մի այնպիսի լուռութիւն տիրել էր և Ապրիլեանի սենեակում: Լաւում էին միայն նրա՝ սեղանին դրած ժամացոյցի միակերպ չխկչխկոցները, որոնք զարկուելով սենեակի տխուր պատերին՝ անդրադառնում ու խորը խշշոցով արձագանգ էին տալիս Ապրիլեանի ականջների խորշերում: Փոքրիկ, լուսամփոփով ճրագը լուսաւորում էր սենեակի մթին առարկաները:

—Վրէժ... կրկնեց նա նոյն դառնութեամբ ու մի տեսակ սարսուռ զգաց իր անարձագանգ ձայնից: Նա նայեց շուրջը, և նրան թուաց, թէ սենեակի բոլոր առարկաներն անկարեկից արհամարհանքով իրան են նայում ու քմծիծաղ տալիս: Ահա սեղանին դրած ձուածի հայելին վիզը հաստ մարդու պէս գլուխը դէպի յետ է տարել ու ահագին բերանը բացած՝ անկըշտում ծիծաղում է. ինչի՞ համար, ի՞նչն է առիթ տուողը, մի՞թէ նա էլ Ապրիլեանի յուսահատ վշտի ու անարգուած զգացմունքների վրայ է ծիծաղում... Իսկ այն նողկալի բաժակը, որ

պատուհանին դրած ջրի շշի յետևումն է ծածկուել ու իր ուղորմելի մարմնի հրեացող մասով արհամարհական հայացքներ է նետում, տես, տես, մինչև անգամ շարժում է, Ապրիլեանին բարկացնում, ասելով թէ՛ կարո՞ղ ես ինձ փնասել, ես քեզ ծաղրում եմ...

—Օ՛հ, զգուելի, գոչեց Ապրիլեանն ու մօտեցաւ պատուհանին:

...Լսուեց մի ահագին զրնգոց, և ապակու սուր փշրանքներն այս ու այն կողմ ցատկոտեցին: Օդի մէջ մի քանի գրքեր էլ թռան, որոնք ահագին շրմփոցներով յատակին էին ընկնում...

Կողքի սենեակում լսուեցին բարձր խօսակցութիւններ, շտապ քայլերի ձայներ. ձայները մօտեցան, և մի առժամանակ խլացան Ապրիլեանի դրան յետևում: Վերջապէս բացուեց դուռը, և շեմքում հրեացին մի քանի զարմացած դէմքեր:

—Այս ի՞նչ էր, սա դ՞ու ես արել, Հմայեանկ, — լսուեցին մի քանի ձայներ:

Բայց Հմայեակը նրանց չէր նկատում. նա պռոկել էր մահճակալի վրայ ու գլուխը թաղել բարձի մէջ: Վերջապէս ներս մտաւ տանտիկինը, նստեց նրա կողքին և քնքշութեամբ շոյելով նրա զլուխը՝ մեղմ, մայրական գորովով լիքը ձայնով խօսեց.

—Հմայեանկ, այս ինչո՞ւ ես այսպէս արել, հօ՛ր, խօ քննութիւնդ վատ չե՞ս բռնել, թէ՞ դատարանումդ ես մնացել. դէհ, հիմի ի՞նչ անենք, կը պատահի, մարդ դրա համար դարդ կ'անի՞. անպատճառ ուսուցիչները թշնամութիւն արած կը լինին, ես գիտեմ, դու աշխատասէր տղայ ես...

Հմայեակը անշարժ ու լուռ՝ դեռևս ընկած էր մահճակալի վրայ, իսկ մնացածները կանգնած դրան շեմքին՝ իրար ահանջի փափում էին:

Յանկարծ լսուեց Հմայեակի դառն, մղկտալի լացի ձայնը որ խեղդուում էր բարձի փափկութեան մէջ...

Տանտիկինը լռեց, լռեցին և՛ շեմքին կանգնածները, և խուլ, շատ խուլ կերպով սենեակն արձագանգ էր տալիս Ապրիլեանի նոյնպէս խուլ մղկտոցներին...

Կ. ՀՁՕՐԵԱՆ

## ԱՐԻՍԻՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Արիսինիան ներկայ նեկուս Մենելիկի օրով դուրս գալով մոռացման շրջանից՝ աշխատում է քաղաքակրթութեան ճանապարհով առաջ գնալ: Մի ժամանակ վայրենիների և գերեվաճառութեան հայրենիք հռչակուած այդ երկիրը բոլորովին կերպարանափոխուած է ներկայանումս. քրիստոնեայ մի բուն ժողովուրդ շրջապատուած ամեն կողմից մահմէդական ցեղերից՝ իր ինքնուրոյնութիւնը պահպանելու համար երկար տարիներ ստիպուած է եղել արիւնահեղ պատերազմ մղել նըրանց դէմ, տանելով վերջապէս վերջնական յաղթանակ իր այսօրուայ թագաւորի օրով. իսկ իտալացիների դէմ տարած յաղթութիւնը ցոյց տուեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհին Արիսինիայի կենսունակութիւնը իր գոյութիւնը ինքնիշխան կերպով պահպանելու հարցում: Այնուհետև այդ երկիրը խաղաղ զարգացման շաւղի մէջ մտնելով և լայն բաց արած իր դռները ամենքի առաջ՝ բնական ճանապարհով առաջ է ընթանում: Լինելով միապետական ինքնիշխանութեամբ կառավարուող մի երկիր՝ նրա բախտը կապուած է եղել իշխողի անձնաւորութեան հետ, և հէնց այդ է պատճառը, որ Արիսինիայի ներկայ վիճակը ստեղծողը եղած է իր այսօրուայ իշխողը: Շատերը նեկուս Մենելիկին համեմատում են իր երկրի վերաբերմամբ նրանց, ինչ եղած են Շարլմանը Ֆրանսիայի և Մեծն Պետրոսը Ռուսաստանի վերաբերմամբ. և իրաւունք էլ ունին: Այս թագաւորը զարմանալի լուսաւոր հայեացքներով և տոկունութեամբ օժտուած, մի կողմից ընդարձակելով իր երկրի սահմանները լայն չափերով, միւս կողմից ամենաազալուրջ հսկողութեամբ պահպանում է այդ երկրի անդորրութիւնը, որով ներկայանում է միաժամանակ թէ՛ նուաճող և թէ՛ հմուտ կառավարիչ: Ազատութիւն, լուսաւորութիւն, կեանքի և ստացուածքի ապահովութիւն. ահա թէ ինչ կարելի է գտնել արդէի Արիսինիայում. իսկ այսպիսի պայմանների տակ ապրելով, սրբան էլ որ մարդ շրջապատուած լինի իրանից ստոր գարգա-

ցում ունեցող ժողովուրդներով, կեանքը չէ կորցնում իր հըմայքը:

Նախ մի քանի խօսք, թէ ինչպէս հայերը կարողացել են ծանօթանալ այդ երկրի հետ, որը այնքան հեռու է ընկած իրանց հայրենիքից: Այս հեռաւորութիւնը ոչ մի արգելք չէ ներկայացնում. հայերը սովորած լինելով աւելի հեռու երկրներ գաղթելու, Արիստինայի վերաբերմամբ այդ արգելքն էլ չքանում է, եթէ դա իսկապէս արգելք ներկայանար: Արիստինան և Հայաստանը առանձնապէս վերցրած, իսկապէս բաւական մեծ տարածութեամբ միմիանցից հեռու են ընկած, սակայն կայ մի ուրիշ կէտ, որ այդ երկու երկրների մէջտեղը գտնուելով՝ այդ հեռաւորութիւնը կիսով պակասեցնում է. դա Եգիպտոսն է: Արիստինա գաղթող հայերը բոլորն էլ նախ իրանց կայան ունեցած են Եգիպտոսը. իսկ այդ վերջինը համարեա դրացի երկիր լինելով Արիստինային, աւելի դիւրին է դառնում հաղորդակցութիւնը: Այգպտիս պայմաններում այլևս շատ բան հարկաւոր չէ հայերի համար Արիստինա ընկնելու:

Արիստինա գաղթած հայերը բոլորն էլ տաճկաստանցիներ են, որոնք, բացի երկու ընտանիքից, գաղթած են արիւնոտ թուսկաններից յետոյ, ինչպէս ասացինք, ոտ դնելով նախ Եգիպտոսի հողի վրայ և յետոյ այս կողմերը, թողնելով մի այնպիսի երկիր, ուր հարստահարուած, իրաւագուրկ, արհեստական աղքատութեան հասած վիճակ են ունեցած եղել, բռնադատուած են եղել ապրելու միշտ ասիական խաւարում և ընկնելով մի այսպիսի տեղ, որը իրանց տալիս է անսահման ազատութիւն, կեանքի, ստացուածքի ապահովութիւն բառի ամենալայն իմաստով, անհատական իրաւունքների հաւասար յարգանք, լայն ասպարէզ գործածելու համար իրանց ձիրքերը և կարողութիւնները, կարելի է կարծել, որ հայերը դրանցից աւելին չէին մտածում գտնել իրանց դիմած երկրում. այդքանն էլ բաւական էր, որ մի անգամ այստեղ ոտ դնելով՝ կամենային և՛ հաստատուել: Բայց դեռ այդ չէ բոլորը. Արիստինան իբր նոր բացուած երկիր, որ ուզում է զարգանալ ևրոպական քաղաքակրթութեան ճանապարհով ընթանալով, միևնոյն ժամանակ ներկայանում է մի անմշակ երկիր, կարօտ աշխատող ձեռների իր բնական հարստութիւնները շահագործելու համար: Ահա ուրեմն և նիւթականապէս օգտուելու ասպարէզը, որը թէ երկրի և թէ այնտեղ դիմողի բարգաւաճումն է ապահովացնում: Եթէ կայ մի հանգամանք, որը կարող է մի քիչ անհաճոյ թուալ, դա այն է, որ Արիստինայում բնակութիւն հաստատող կուլտուրական ժողովրդի համար, ինչպիսին են հայերը, վիճակուած է ապրել աւելի ստոր

զարգացում ունեցող տարրերի հետ և ենթարկուել վարչական այնպիսի պայմանների, որոնք թէև բնիկների համար նպատակայարմար և ոչ մի տարօրինակութիւն չեն ներկայացնում, սակայն որոշ քաղաքակրթութիւն ունեցողների վերաբերմամբ բաւարար չեն:

Հայերը իրանց հայրենիքում կրողական քաղաքակրթութիւնը ասիական խաւարում տարածողների հոչակն են վայելում, այդ ուղղութեամբ ի՞նչ են ներկայացնում նրանք Աբիսինիայում: Ահա մի հարց էլ, որի պատասխանը հաստատական է: Հայերը գաղթելով օտար հող՝ պահպանում են իրանց կոչումը, իհարկէ եթէ հիւրընկալող երկիրը իրանց ձիրքերի պէտք ունենայ: Չմեղադրուելու համար, թէ այսպիսի մի վճիռ ազգային շովինիզմի արդիւնքից է առաջանում այստեղ, առաջ եմ բերում մի օտարի կարծիքը մեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ: Սրանից երեք ամիս առաջ Ատիս-Աբաբայի ոուս դեսպանութեան անդամներից մինը, արհեստով բժշկի, Ջիբուտի էր եկած դեսպանութեան համար մի որոշ պաշտօն կատարելու: Խօսակցութիւն ունենալով յիշեալ բժշկի հետ Ատիս-Աբաբայում գտնուող հայերի վերաբերմամբ, ահա թէ ինչ եզրակացութիւն արեց նա. — «Անուրանալի է, որ հայերը Աբիսինիայում որոշ կուլտուրական դեր են կատարում. ես չեմ կարող ասել թէ նըրանք իրանց ամեն մի ձեռնարկութիւններում միմիայն այդպիսի ներշնչումով են զբոլում, սակայն միւս կրողացի, հնդիկ կամ արաբ գաղթականների նման էլ միմիայն շահադիտական ձգտումներով չեն առաջնորդուած: Իրանց ամենահամեստ դիրքում անգամ խրատական օրինակ են ներկայանում բնիկների վերաբերմամբ: Երբ մի նոր գաղթական հայ է գալիս, նրա առաջին գործը լինում է ստեղծել իր համար ապրուստի յարմարութիւններ. վերցնում է մի կտոր ամայի գետին, որի վրայ նախ մի համեստ, բայց մաքուր բնակարան է կանգնեցնում, յետոյ սկսում է շուրջը ցանկապատելով պտղատու ծառեր տնկել կամ բանջարանոց մշակել, այնպէս որ մի քանի ժամանակից յետոյ կը տեսնէք յանկարծ, որ այդ ամայի հողի կտորը դառել է մի գեղեցիկ տեսարան ներկայացնող բնակատեղի: Սրանք անշուշտ մեծ բաներ չեն ուրիշ երկրների համար, սակայն Աբիսինիայի վերաբերմամբ դա ուրիշ բան է: Այս փոքր բաները ընդօրինակելով է որ բնիկները պիտի ուս դնեն կուլտուրական կեանքում: Արդէն խոշոր և կրողական մտքով առած բարեփոխումների համար դեռ վաղ է. երկիրը իր այժմեան տնտեսական պայմաններում չէ կարող բաւականութիւն տալ այդպիսի բարեփոխումների պահանջներին: Արհեստների մէջ աւելի նը-

կատելի է հայերի մատուցած ծառայութիւնները. նրանք են եղած Մենելիկ թագաւորի մօտ առաջին անգամ կատարելագործուած արհեստների մասին գաղափար տուողները և շատ անգամ նիւթական վնաս կրողներ են եղել միմիայն նրա համար, որ ցոյց տան իրանց ունեցած ընդունակութիւնները»:

Ռուս բժշկի ասածների մէջ չափազանցութիւն չեմ գըտնում: Հայերը իրանց հայրենիքում լինելով մեծ մասամբ երկըրագործ և արհեստաւոր ժողովուրդ, բնական է, որ այդպիսի զբաղմունքների մէջ իրանց ունեցած երկարամեայ փորձառութիւններից բաժանուելը օտար հողում իսկ իրանց դժուար պիտի գար, բացի այն, որ նոյնիսկ եթէ կամենային էլ փոխել իրանց տիրապետած գործը մի նոր և անծանօթ զբաղմունքի, նրանց անկարելի պիտի լինէր յաջողութեամբ գործածել այդ վերջինը: Հէնց դրա համար էլ է, որ արհեստաւորներից շատերը չկարողանալով միմիայն իրանց արհեստով բաւականութիւն գտնել՝ միացրել են այդ գործին նաև վաճառականութիւնը: Միևնոյն կերպով է բացատրուում և՛ այն, որ Աբխազիայում նոյնիսկ միմիայն վաճառականութեամբ զբաղուող հայերը չեն կարողացել առաջնակարգ դիրք գրաւել՝ չունենալով այդ ճիւղում պահանջուած փորձառութիւնը, որով և անկարող են լինում մրցել հնդիկ կամ արաբ վաճառականների հետ, որոնք մինչև իրանց ոսկորները առևտրականներ են և իւրացրած են տեղական պահանջներին բաւականութիւն տալու գաղտնիքը: Զգտումը սակայն առաջադիմելու և յաղթելու խոչընդոտներին գոյութիւն ունի նրանց մէջ, իսկ ինչ որ ամենակարևորն է և գովելին, դա այն է, որ նրանք իրանց ստանձնած գործերում աշխատում են որքան կարելի է պատուաւոր կերպով վարուել և վստահութիւն գրաւել այն շրջաններում, ուր յարաբերութեան մէջ են գտնուում: Այս բոլորի հանդէպ հարց է ծագում, թէ ի՞նչ է լինում նրանց վարձատրութիւնը, առանց որի իհարկէ չէր կարող յարատև լինել հայերի մատուցած ծառայութիւնները այդ երկրին:

Ոչ միայն հայերը, այլ և ուրիշ ազգութիւնների պատկանող անհասներ, որոնք որևէ առիթ են ունեցած աշխատելու Ատիս-Աբաբայում կամ Հարարում կառավարութեան գործերում, որը անմիջական կախում ունի երկրի վեհապետից, այն գաղափարն են կազմած, թէ թագաւորը արժանապէս չէ վարձատրում, և իրանց կատարածի հանդէպ շատ քիչ դրամ են ստանում: Այս բանում ես ճիշտ եմ գտնում միայն վերջին ասացուածքը, թէ հնչիւն դրամով քիչ են վարձատրում կառավարութեան գործերի մէջ աշխատողները: Բայց դրա փոխարէն աշխատա-

ւորները վարձատրուում են ուրիշ եղանակով, և եթէ նրանք կամենային օգտուել այդ վերջին տեսակի վարձատրութիւնից, կրկնապատիկ աւելի պիտի կարողանային շահել, քան թէ իրանց սպասած դրամական վճարից: Մենելիկը վարձատրում է նրանով, ինչով որ նա աւելի հարուստ է. հնչիւն դրամը նրա համար դեռ թանգ արժէ, այդ պատճառով էլ դրանում ժլատ է, սակայն նա հարուստ է հողով, երկրի բերքով և ընտանի կենդանիներով, և նա միշտ պատրաստ է վարձատրել այդ վերջիններով, եթէ իր մօտ համակրութիւն կամ վստահութիւն գտնողները ուզէին ընդունել: Եւ ս'ի գիտէ, գուցէ այդ վերջինի մէջ նա ուզում է իրագործել մի խելացի նպատակ՝ իր երկրի օգտի տեսակէտից՝ անուղղակի կերպով ստիպելով քաղաքակրթուած տարրերին երևան հանել երկրի հարստութիւնը: Եթէ թագաւորի այդպիսի տրամադրութիւնից չեն ուզում օգտուել նրանք, որոնք նրա գործերում են գտնուում, մեղաւորը իրանք են, իրանց սեփական կամեցողութեամբ է, որ զրկւում են արժանաւոր վարձատրութիւնից:

Գ. ԱՐԱՒԵԱՆ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԻԱՅԻ ԳՐԱԿԱՆ ՈՐԳԻՆ

Նորերս Ֆլորենցիայում լոյս տեսաւ դ'Անունցիօի մի փոքրիկ պօէման՝ «Եղջերուի մահը»: Այս երկի նիւթը կենտաւրոսի և եղջերուի կռիւն է, որին ականատես է լինում մարդը մի անկիւնում թագնուած: Այս քերթուածի տպաւորութիւնը ցնցող է. նա կարծես կերտուած է բրոնզից: Նրա գեղեցկութիւնը կատարեալ է, յանգբըր դիւցազնեղբական, լայն ու վեհ. նրա մէջ մարդ զգում է նախնական կեանքը, բիրտ ու յախուռն: Մի քանի շաբաթ յետոյ լոյս տեսաւ Զիովաննի Պասկուլիի մի փոքրիկ պօէման «Պաուլօ Ուչելլօ» վերնագրի տակ: Հեղինակը պատմում է, թէ ինչպէս XV դարում Ֆլորենտինեան մի կուսակրթոն նկարչի պարզ հոգում ծագում է որևէ սեփականութիւն ունենալու աշխարհիկ տենչը. նա ուզում է ձեռք բերել մի ամենափոքր բան՝ իր ամենամեծ աղքատութեան մէջ՝ մի փոքրիկ թռչուն, կենդանի, իսկական: Սակայն յայտնուում է սուրբը, մեղմիւ յանդիմանում է արուեստագէտին, և վերջինս կրկին ձեռք բերելով իր հոգու մանկական խաղաղութիւնը՝ քնում է իր փոքրիկ խցում, Ֆլորենտինեան գաշտերի և ծաղկապատ լեռնալանջերի հանգէպ, լուսնի շողերի տակ:

Այս երկու պօէմաների մէջ արտայայտուում է կեանքի այն երկու հակադիր ըմբռնումը, որ ժամանակակից Իտալիայի բանաստեղծութեան աղբիւրն է. կարծես երկու վերջին կրկերով բանաստեղծները ցանկացել են արտայայտել իրանց եսի հակադիր էութիւնը իւրաքանչիւրը մի-մի կարճ ձևի մէջ:

Իտալական գրականութիւնը ներկայացնում է այդ երկու տիպիկ ձևերը: Եւ այս երկու փոքրիկ պօէմաները ունին իրանց համապատասխան երկու խոշորները—դ'Անունցիօի «Կեանքի ներբողը» (Laus Vitae) և Պասկուլիի Canti di Castelvecchio:

«Կեանքի ներբողը» պօէման բանաստեղծական նկարագիր է մի ճամբորդութեան՝ մտածումներով, խոհերով հարուստ, Յուլիս, 1904.

մի ճամբորդութիւն, որ հեղինակը կատարում է ազատելու համար իր և իր ընկերակիցների ոգին զանազան արգելքներից, սխալներից, չնչին ցանկութիւններից և կեանքի ցաւից: Մի խօսքով նա ուզում է թօթափել իրանից այն «հիւանդ գազանը», որ քնած է մարդկային «տխուր ցեխի» մէջ:

Իտալական գրականութիւնն սկսում է Դանտէի ճանապարհորդութեամբ դէպի հանդերձեալ աշխարհը: Դանտէն էլ աշխատում է ազատել իր եսը, ինչպէս և իր տիեզերական հոգում ապրող մարդկութեան եսը: Եւ նա համուժ է Աստուծո՛ւ լոյսի, ուրախութեան բացարձակ ու յաւիտենական ազատութեան ծայրագոյն կէտին: Դ'Անունցիօի պօէման հանդիսանում է մի տեսակ պրոֆան շարունակութիւն դասական սրբազան պօէմայի: Ո՞րն է նոր աստուածը, որ փնտրում է բանաստեղծը: Կեանքի անկեղծութիւնը, ամենաեռանդուն, ամենամեծ կեանքի՝ բացարձակ ազատութեան մէջ:

Ինչպէս որ «Աստուածային կատակերգութեան» ճամբորդութիւնը կատարւում է հանդերձեալ կեանքի երեք թագաւորութեան մէջ, այդպէս էլ «Կեանքի ներբողը» ճամբորդութիւնը կատարւում է դասական և ժամանակակից բանաստեղծութեան շրջանների միջով: Ժայռոտ Իթակայից նա գնում է ամայի Դելուս և այնտեղից դէպի հոռմէական ճանապարհը, որով անցել են արիւնոուշտ մարդիկ: Յետոյ նա գալիս է Սիքստինեան մատուռը (Հոռմ), «այս ապաստարանը, որ աւելի մենաւոր է, քան բարձրագոյն լեոնակատարները, բնութեան և յաւիտենական ցաւի այն վայրերը, ուր արծիւներն են շնչում»: Եւ բոլոր տեսած ու երևակայած պատկերների միջով նա անցնում է՝ զարթեցնելով արուեստի՝ և բնութեան վերյուշել, սրբութիւնը գիցարանութիւնների, անարդարութիւնը մարդկանց, նրանց կոյուղիները և յաղթական կամարները, նրանց դժբախտ կեանքը, իղձերը և նրանց զարհուրելի գործերը: Նա անցնում է տօթակէզ քաղաքների միջով և քամիների լիզած անապատներով, մենաւոր վայրերով և հոռմ ամբոխների միջով. նա տեսնում է և՛ բոլոր ցաւերը, և՛ բոլոր ուրախութիւնները, բոլոր շարիքն ու բարիքը և ի վերջոյ վերստին գտնում է իր սեփական եսի օրէնքները: Հին ասացուածքը՝ «ձանաչիր քեզ» վերածւում է նոր ձևի, որ աւելի ակտիւ է, այսինքն՝ «դու եղիր ինքզ»:

Այն նաւը, որ տանում է բանաստեղծին և իր ընկերներին, ամարային մի գեղեցիկ առաւօտ մեկնում է Ապուլիայից, ուր դեռ երևում է հոռմէական մի սիւն՝ որպէս զօրութեան նշան, և դիմում է դէպի Հելլադա՝ ներդաշնակ գեղեցկութեան

Քրկիրը: Հերոսները, աստուածները և զիցաբանական զրոյցները զարթնում են նուիրական հովիտներում: Ատրէական ծովի ծոցում փակուած է զարհուրելի գեղեցկութիւնը, որ ծանրացած է աշխարհի վրայ իր մեղկութեան և ոճիրների ամբողջ բեռով: Բանաստեղծութիւնը զարթեցնում է, ինչ որ քնած է, և երեւան է հանում անշնչելի և անապականելի ներկան անցեալի մէջ, ճանաչում է կեանքի յաջորդական շարունակութիւնը դարերի շարքի մէջ: Հերմէսին ուղղած աղօթքի մէջ փառաբանւում է վաճառականութիւնը, ոսկու և իշխանութեան ծարաւը, մեքենաները, նաւերը, երկաթուղիների գնացքները, հեռագիրը, հեռախօսը, ճամբորդութիւնները, հետազոտութիւնները անծանօթ երկրների, երաժշտական գործիքները, ժամանակակից թատրոնները: Օլիմպոսից գալիս են Պատրաս և յետոյ դէպի Կորինթեան ծոցը: Ապա նաւում են Աքքէայի, Բէօտեան և Արգոլեան ափերով, տեմնում են Պարնասը, Կորնթոսը՝ նստած երկու ծովերի մէջ, յետոյ Թէբան, և Մեսենան. Գելոսը վերջին նաւահանգիստն է. այս կղզին՝ ամայի և ամուլ՝ ինչպէս դարերի արշալոյսին, վաւում է արևի տակ: Լատոնեան զիցուհու անիծած ժայռն է այն: Գալիս է այնուհետև ժայռերը բեղմնաւորող յոյնը, որ Միջերկրականի ժողովուրդների համար այդ ժայռը դարձրեց նուիրական վայր և շուկայ:

Այսպէս Իթակայի ժայռերից մինչև Յիկլատեան ժայռերն ու ամայութիւնը՝ բանաստեղծը իր սեփական օրէնքների դիմացկունութիւնը և իր երկաթեայ դիսցիպլինը գտնում է մարդկային ճշմարտութիւնների գիտակցութեան մէջ, իսկ այդ ճշմարտութիւնները երևան են գալիս հելլենական գեղեցկութեան ձևերով: «Աչքիդ առաջ ունեցիր միշտ հեռաւոր երկրի տեսիլքը. քո զօրութեան մէջ եղիր մենաւոր. թո՛ղ քո ոյժը լինի քո կամքը, և թող քո կամքը յաղթական լինի»:

Եւրոպական բոլոր գրականութիւնների համար պէտք է պարզ լինի, թէ ինչու՞մն է կայանում այս կլասսիցիզմը, որ վերատին յայտնւում է մայր հայրենիքում: Սա մի նոր ըմբռնումն է կեանքի, որ պարունակում է ամենամեծ եռանդ, ամենախորունկ անկեղծութիւն, որին կարիք ունի ժամանակակից մարդը:

Գնունցիծոն կարողացել է դասական բանաստեղծութիւնից անցնել ժամանակակից իրականութեանը, Կորինթեան ծոցից հասնել ժամանակակից ազգերի «զարհուրելի քաղաքները», զիցաբանութիւններից և հերոսացած պատերազմների երգերից՝ ժամանակակից մարդկանց և նրանց խաղաղութեան երգերին, որոնք աւելի մահացու են: Եւ այս փոխանցումը

կատարուել է յանկարծական թռիչքով, առանց արդելքների:

Պօէմայի երկրորդ մասը կապուած է առաջինին մի պարզ գիմումով դէպի կեանքը:

«Ո՛վ կեանք, կեանք, աստուածային զարհուրելի պարգև, դու մի հատու սուսեր ես, մի մոնչող բոց, դու Գորգոնն ես, կենտաւրոսի սոսկալի շապիկը:

«Աւելի անաւոր է այն երգը, որ չարաղէտ քաղաքների խաղաղութեան մէջ հնչում է այն ժամին, երբ կիզիչ ու լափող երկնքի տակ այրում է կուպրը կամ փայլում է սալայատակը ուղղաձիգ փողոցների, որտեղից անցնում է կեանքի կառքը առանց լծակի և քելիի, առանց արիւն-փրփուրով փայլփռլոց երիվարների»:

Եւ բանաստեղծը մտնում է «զարհուրելի քաղաքները»՝ իր դրամաններս բերելով ուրիշ մարդկանց դրամաների մէջ: Անանուն աշխարհի այս քաղաքները՝ աւելի լայն և աւելի զարհուրելի՝ առաւօտից երեկոյ և երեկոյից մինչև լուսաբաց լեփ-լեցուն են մարդկային մարմիններով, որոնք լողում են լուռ ախտերի, գաղտնի գարշութիւնների մէջ, մինչդեռ այդ բոլորից վեր սաւառնում է ոճրի ստուերը:

Իր կեանքի որոշ շրջանում բանաստեղծը ինքնիրան ընկճուած է զգում ցաւի ծանրութեան տակ: Նա տեսնում է թըշնամութեան ծուռ և արիւնոտ աչքերը. նա նկատում է, որ թշնամին մօտ է նրա վրայ յարձակուելու յետևից, և միւս կողմից ինքը վստահ չէ իր ոյժի վրայ. նա տեսնում է պղծուած պատերի վրայ յաղթահարուածների ստուերները իր սեփական ստուերի հետ: Նա զգում է, թէ ինչպէս իր ծնկները ծալում են ինչպէս այն յոգնած ձին, որ անկարող է տանել իր բեռը: Ահա իր դրաման, որի անունը նա յանկարծ ասում է իր սրտին.

«Եւ որպէս խստասիրտ որսորդը անտառում ուժգին սուլոցով կանչում է իր ցրուած բարակներին, այնպէս ամայի ճանապարհի վրայ ես իմ հպարտութեան ձիչով հաւաքեցի բոլոր ոյժերս, և իմ ազնիւ արեան վրէժխնդրութիւնը: Դէմքս բորբոքուեց, հայեացքս դարձաւ սառն և յստակ. ծնօտիս ոսկրը հաստատ էր և լաւ զինուած. բոլոր ջլերիս ոյժը թափ առաւ կծելու համար.

«Ատամներս կրճտելով ես նայեցի իմ ցաւին՝ իմ թշնամու վրայ յարձակուելու և գունատ այտի վրայ արիւնոտ նըշանը գնելու համար, և սիրտս զրնգաց, որպէս հարուածուած բրոնզը»:

Եւ «զարհուրելի քաղաքների» գիշերային անաւորութիւն-

նից ծնունդ է առնում լուսաբացը, որ հնչեցնում է հազարաւոր շեփորներ՝ քնածներին կանչելու դէպի աշխատանքի պայքարը: Յաղթուածների դրամայի վրայ հերոսների բանաստեղծը փայլեցնում է հաստատուն յուսոյ շողերը, նա հաւատում է ուժեղ մարդու յաղթանակին: Բանաստեղծը ձանձրացած՝ նկնգօրէն հաղնուած, ներկած շրթունքներով, կեղծ ատամներով մարդկանցից, որոնք միշտ ժպտուն են ու քաղցրախօս ինչպէս վաճառուող կանայք, գնում է փնտրելու բնազդներով ուժեղ մարդկանց: Նա ուզում է գտնել անկեղծ, իսկական, բնազդի ճշմարտութեամբ և անկեղծութեամբ վառուած մարդկանց «լըսելու համար աղաղակը արուի, որ բարձրացրել է ձեռքը ուժգնօրէն հարուածելու հակառակորդին»: Եւ այս նպատակով բանաստեղծը դուրս է գալիս «գարհուրելի քաղաքներից» և գնում է Հոտի շրջակաները՝ Աւրելեան հիւսուուրց ճանապարհի վրայ, ուր արիւնուշտ մարդիկ խաղում են փղոսկրէ կոթով, հատու դանակներով: Գինետները լի են կատաղի սայլորդներով, հօտաղներով, մահակներով զինուած ձիապաններով, շիկահեր ու փրճոտ, ամենքն էլ տակաւին չմեղկացած յետնորդներն են կատիումի աւազակների: Կոիւն այնտեղ բորբոքում է. արիւնը փայլում է տաք սալայատակի վրայ: Նախնական բնազդի անասնական արտայայտութիւնն է այս, որ կը մնայ բանաստեղծի աչքերի առաջ մինչև Միքստինի մատուռի կամարների տակ, արուեստի վեհութեան մէջ: Այստեղ Միքստինեան մատուռում՝ յափշտակուած բնութեան ոյժերի վսեմութեամբ, որ Միքել Անջելլօն դուրս է թափել իր տիեզերական հոգուց, բանաստեղծը լսում է անընկեր մնացած երիտասարդ հերոսից \*) գերագոյն յայտնութիւնը.

«Տեսակիդ մէջ և քո ճանապարհում մենակ եղիր, մենակ՝ վեհագոյն բարձունքում»:

Բանաստեղծը գնում է այնուհետև դէպի ամբոխները, նրանց զայրոյթին օրէնքներ տանելով և նրանց ուրախութեանը համար նոր պիցարանութիւններ, որ ինքն է շարահիւսել: Նա «մենակ կը լինի ամբոխի մէջ» ինչպէս Պինդարը, միաճեծան տէրը երգերի բոլոր յոյների մէջ, որոնք վազում էին Օլիմպոս նրան լսելու:

Եւ անապատում, հարաւային զառանցանքի մէջ առաջին անգամ բանաստեղծն զգում է երանութիւնը, հպարտ սրտի, ա-

\*) Միքել Անջելլօի մի Ֆրեսկոն է Միքստինեան մատուռում. ներկայացնում է երկու հսկայ, որոնցից մէկը ջնջուել է ժամանակի երեօից:

զատուած և ազատարար մտքի, բուն ոյժի, կատարեալ կեանքի երանութիւնը, որ նա չի փնտրել և որ գալիս է ինքնիրան:

Անա կեանքի գաղափարը, որ այժմ իշխում է իտալական հոգում: Նա՛ այդ գաղափարը զոյգ բնաւորութիւն ունի—քնարերգական և ղիւցազներգական, խոստովանութիւն մի հոգու և օրէնք ուրիշ հոգիների համար, վայրենի անասնականութեան արտայայտութիւններ և նրբացած, փարթամ, հարուստ կուլտուրա, որ արտայայտում է հակիրճ և թեթև ոտանաւորների մէջ, որոնք այնպէս հեշտութեամբ արտայայտում են էականը: Կեանքի այդ ըմբռնումը, որ նախնիքների պաշտամունքին է նուիրուած, ազատ է սակայն ամեն կապանքներից, լինի կրօնական թէ տիրական: Նա իտալացի է, ինչպէս որ իտալացի է Լատինումի կամ Միքէլ Անջելլօի սայլապանը, Տոսկանեան բլուրների ձիթենին, Աւանդինեան դափնին, ինչպէս որ իտալացի են Դանտէի զայրոյթն ու սէրը. նա տիեզերական է՝ դասական և ժամանակակից միանգամայն, նրա գեղեցկութիւնը իր անհաշտ տարրերի ներդաշնակութեան մէջ է, իսկ ճշմարտութիւնը՝ իր ոյժի և իր ցեղի մէջ, որից ծնունդ է առել:

Ջիովաննի Պասկուլիի Canti di Castelvecchio-ի մէջ իշխում է մահը: Հեղինակը ինքը գրում է այդ իր յառաջաբանում. «Չափազանց շուտ է մահը, կ'ասեն ինձ, բայց կեանքը առանց մահուան խորհրդածութիւնների, առանց կրօնի, առանց այն բոլորի՝ ինչ մեզ տարբերում է անասունից, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ընդհատական կամ յարատե գառացանք, ապուշ կամ տրագիկ»:

Մահուան գաղափարը իրօք դարձել է հեղինակի կրօնը, և այն՝ քրիստոնէական կրօնը: Պատմութեան մէջ կայ միայն մի հատ գերազանց սուրբ, դա սուրբ Ֆրանսուան է, և մեր ժամանակներում կայ անխառն քրիստոնէութեան էլի մի հատիկ առաքեալ, դա Տոլստոյն է: Բայց Պասկուլիի քրիստոնէութիւնը գերազանցում է ֆրանցիսկանութիւնից և տոլստոյականութիւնից: Պասկուլիի կեանքը կապուած է մի ոճրի պատճառած տանջանքի հետ, և դա իր սեփական հօր սպանութիւնն է: Իր սէրը հաստատուած է մի դարհուրելի մոռացութեան, ինչպէս և մի չմոռացուող թողութեան վրայ: Նա երգում է, որովհետև յիշում է: Ներել առանց մոռանալու՝ դա քրիստոնէութեան ծաղիկն է: Եւ այս ծաղիկը բացուել է բոմանական արիւնոտ ու ար իւնաձարաւ հողի վրայ, որ վառուած է վրէժխնդրութեամբ:

Տոլստոյի քրիստոնէութիւնը մարտական է: Հին սաղմի-

կը թագնուած է խաղաղութեան և սիրոյ նոր առաքեալի տակ: Ողորմածութեան խօսքերն ընկում են նրա շրթունքներից զայրոյթի շեշտով, աւետարանների վերաշինողը վերցրել է ս. Պօղոսից նրա սուրբ: Կարելի է կարծել, թէ իր վարդապետութիւնը թանկ է իր համար ոչ այնքան որպէս հաւատի վկայութիւն, որքան իրական գործողութիւն, ուր շեշտուած է իր բնոյթը: Իտալացի բանաստեղծն ընդհակառակն մի հատիկ ժեստ ունի, մի հատիկ շեշտ, մի տենչ, և այն հնազանդութեան ցաւի տենչ, չարիքի փոխարէն բարիք գործելու տենչ:

Պասկուլիի աշխարհը միշտ անսահման տիեզերքն է, որ պարփակուած է սակայն մի նեղ շրջանակի մէջ: Կենտրոնուած գերեզմանն է, որտեղից ճառագայթում է ընտանեկան սէրը և նրա շուրջը թռչունների ձայն ու թռիչք, գիւղական կեանքի բոլոր միւս պատկերները, երկնքի և երկրի ամենաամեղ բաները: Բանաստեղծի հոգին պատկերացնելու համար աւելորդ է չի լինի առաջ բերել նրա հետեւեալ միտքը.

«Մեռնել, այո, և՛ մենք, և՛ երկիրը, և՛ արեւը, և՛ բոլոր միւս աշխարհները պէտք է մեռնենք. բայց գոնէ մի բան ապրի, կենդանի մնայ, կամ ծնուի մեզանից յետոյ, թէկուզ մի հատիկ աշխարհ, մի հիւլէ անհունի մէջ: Որովհետեւ մեր հոգին նման է մի տխուր և հիւանդ երեսայի, որ չի ուզում քնել, եթէ մէկը արթուն չէ իր կողքին, եթէ իր մայրը իր փոքրիկ անկողնի մօտ կամ գոնէ սենեակում չէ»:

Պասկուլիի բանաստեղծութեան էութիւնը հնազանդութիւնն է, որ իր շուրջը փնտրում է եղբայրական յարաբերութիւններ ամենախեղճ արարածների հետ, այն էակները, որոնք կրում են չարիքը առանց կարողանալու պատասխանել չարիքով, որոնք չգիտեն, թէ ինչ ասել է յաղթութիւն: Եւ այն ցաւը, որ մենք տեսնում ենք նրա բոլոր բանաստեղծութիւնների խորքում, նրան էապէս տարբերում է նոյն տիպի ուրիշ բանաստեղծներից: Իտալական գրականութիւնը ցաւի մի մեծ երգիչ ունի, դա Լէօպարդին է. բայց նա երգում է աշխարհիկ վիշտը, և կեանքին ուղղած իր խօսքը աւելի շուտ մի անէճք է: Նա մի ըմբոստ է, որ գործում է կեանքում: Պասկուլին ընդհակառակը երգում է իր սեփական վիշտը և հնազանդ է:

Պասկուլիի բանաստեղծութիւնը սքանչելի է նրանով, որ կարողանում է մարդու մէջ յարուցանել որոշ զգացմունքներ, որոնք սովորաբար նիրհած են լինում: Ամեն մարդ իսկապէս մի տիեզերական էակ է, և բնութեան բոլոր օրգանները կան նրա մէջ: Բայց աշխատանքի, ինչպէս և առանձին վերցրած իւրաքանչիւր կեանքի նպատակների մէջ այդ օրգանների միայն.

մի որոշ թիւ է գործում, մինչդեռ միւսները մնում են անշարժ Մեծ բանաստեղծին է տուած յաղթել վերջինների անշարժութիւնը:

Իտալիան ունի նաև մի ամբողջ խումբ նշանաւոր վիպագիրներ, որոնցից մի քանիսը նոյնիսկ առանձին արժանիք ունին: Նրանց յետևում կան և աւելի երիտասարդները, որոնք յայտնի են արդէն ուշագրաւ գործերով:

Վերջին ժամանակները առաջնակարգ թէ երկրորդական վիպագիրները դադարեցրին իրանց աշխատանքները և արտադրեցին խիստ աննշան գործեր: Շատերը վէպից անցան թատերագրութեան. բաւական է յիշել դ'Անուոնցիօին. ֆոզայարածոն նոյնպէս մի փոքր զբաղուեց թատերական երկերով, ինչպէս և Ջիովաննի Վերգան: Երիտասարդ՝ բայց արդէն անուանի Բիւտտին մեծ յաջողութիւն ունի՝ մի երկու տարուց ի վեր: Իւգօ Օփիտտին դարձել է դէպի լրագրական գործը: Լիւչիանո Յուգոլին շարունակում է վէպեր տալ և ամենից աւելի ընտրող կողմեր է ներկայացնում: Նշանաւոր է մանաւանդ նրա «Ապաներ, ենթասպաներ, տասնապետներ և զինուորներ»-ը, որ զինուորական կեանքի պատկերն է խաղաղ ժամանակ:

Իտալական բոլոր երիտասարդ գրողները տարուած են երկու-երեք նշանաւոր ժամանակակից իդէաներով: Եթէ քննենք, կը տեսնենք, որ դրանք միեւնոյնն են, որոնցով առաջնորդում են դ'Անուոնցիօն և Պասկուլին: Կարելի է դրանց անուանել նոյնիսկ մշտական, թէև այժմ այդ իդէաներին տալիս են նոր, կամ նորոգուած անուններ, ինչպէս նիցչէականութիւն, նէօփրիստոնէութիւն, սոցիալիզմ, հիւմանիտարիզմ: Նիցչէականութիւնը այնպէս՝ ինչպէսնա ընդունուած, ուսկայցած է Իտալիայում շնորհիւ դ'Անուոնցիօի, իսկապէս սխալ է հասկացուած: Իտալիայում գերմարդը կոչուած է Կլաւդիօ Կանտելմօ (Vierges des Roches-ի հերոսն է), որ քաղաքականութեան մէջ Ներոն է (ինչո՞ւ՞ յայտնի չէ) և գեղասէր՝ արուեստի մէջ: Միւս կողմից տոլստոյականութիւնը և սոցիալիզմն է իշխում: Նեխլիւզովը և անխառն պրոպագանդիստը, այս բառի ամենասանտիմենտալ մտքով, ծեփուած են իրար՝ կազմելու համար ամենաքրիստոնեայ և ամենամարդասէր տիպը, որպիսին միայն կարելի է երևակայել: Ահա այն խորունկ նշանները, որոնք ընտրուած են երիտասարդ Իտալիայի ուրիշ մանաւանդ վիպագրութեան մէջ: Կարելի է ցոյց տալ տաս, քսան, յիսուն վէպ, որոնք կրում են իրանց վրայ անցիալում հոգիների մէջ աւերած գործող անհանգստութեան

նշանները. Նիցշէ-Տոլստոյի, կամ աւելի ճիշտ՝ դ'Անտոնցիօ — Նիցշէնի և Տոլստոյ-սոցիալիզմի ազդեցութիւնն է՝ այն: Այս երկու հոսանքներն էլ իշխում են, որովհետև երկուսն էլ ոգևորել են իտալական գրողներին: Ահա թէ ինչու խղճի հանգստութեան համար նրանք ստեղծել են մի վէպ, որ կարելի էր անուանել միաժամանակ պոլեմիական-էտիկական-քաղաքական-գրական:

Վէպը Իտալիայում ասես ձգտում է դասական տրագեդիաների պարզութեանը հասնել՝ ունենալով որպէս գլխաւոր դերակատար Նիցշէականութիւնը կամ տոլստոյականութիւնը, որոնք հակառակ են իրար: Նիցշէականութիւնը սովորաբար արտայայտուում է կէս աւազակ և կէս ապուշ մի տիպի մէջ, որ բռնաբարում է կանանց և լափում մարդկանց: Սրա հակառակ յայտնուում է սոցիալիզմի առաքեալը, մաքուր, ողջախոհ, բայց սրբազան շնչով և ժեստով, կրելով ճակատին ապագայի արեգակը, գեղեցիկ՝ ինչպէս մի ասպետ, ուժեղ՝ ինչպէս զլադիատոր, հեղձ որպէս Քրիստոս: Այսպիսով մենք տեսնում ենք սատուրնեան ժամանակների բանաստեղծներին, միայն այն տարբերութեամբ, որ դասական այն երգիչները երգում էին անյիշատակ ժամանակներում արդէն տեղի ունեցած երջանկութեան թագաւորութիւնը, մինչդեռ այժմ նախատեսնում են նրա մօտալուտ զարուստը: Այսպէս թէ այնպէս, սա մի լեզենդա է, որ ունի իր ոյժը և դոզման: Իտալական վէպը ցոյց է տալիս այն ուժգնութիւնը, որով այն կրօնը և այս լեզենդան թափանցում են սրտերում: Հասկանալի է, թէ որպիսի փաստերի շուրջն է դառնում այս վէպերի հիւսուածքը և լուծումը. այստեղ մենք տեսնում ենք անցեալի և ապագայի մարդու, ատելութեան և սիրոյ մարդու, ինչպէս հասարկութեան և ալտուրիզմի, Քրիստոսի և սատանայի պայքարը: Ընդհանրապէս՝ եթէ այս աշխատանքներից ծնունդ աւնի մի գլուխ գործոց, նա կարող է կոչուել մարդկութեան պլատոնական սիրոյ վէպ:

Եւ սակայն մինչև ճւր կարող է տանել մարդուն նմանուելու բնագրը: Երբեմն Յիսուսը խօսում է սատանայի լեզուով: Իսկապէս Իտալիայում ամենից աւելի տպաւորութիւն է գործել դ'անտոնցիօականութիւնը և սոցիալիզմը. վերջինս չափաւորուած է տոլստոյականութեամբ բարեմիտ բուրժուաների համար, որոնք չեն սիրում դասակարգային պայքարը, որովհետև խաղասէր են և այդպիսի մի պայքարի զոհեր են: Իտալական երկրասարդութեան ամենամեծ մասը էապէս սոցիալիստ է, իսկ ձևով դ'անտոնցիօական: Այսպիսով հաշտեցրուած են երկու անհաշտ հասկացողութիւններ: Դ'անտոնցիօականութիւնը և սո-

ցիալիզմը երկու տուններ են, որոնք փարել են իրար արմատներով և փաթաթուել բներով՝ հրէշաւոր գալարումներով:

Իտալական թատրոնը գլխաւորապէս եղել է և է այսօր ֆրանսիական արդիւնք: Ֆրանսիացի ընթերցողը կարող է քայլառքայլ հետևել իտալական թատրոնի զանազան շրջաններին իր երկրի թատրոնական պատմութեամբ: Պատահել է նոյնիսկ, որ Պարիզի որևէ գրական գեղարուեստական դպրոց Իտալիայի համար դարձել է միահեծան տիրող հոսանք: Այսպէս 1890 թուին իտալական թատրերգութիւնը եղաւ ամբողջապէս բնապաշտական և իրական: Կոմեդիան և դրաման, ինչպէս և իտալական ամբողջ գրականութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ճշգրիտ կեանքի ամենամերկ նկարագիր, կամ աւելի ճիշտ՝ ամեզրոհիկ և ամենաբիրտ կեանքի պատկեր:

Այն ժամանակ վրայ հասաւ մի նոր երևոյթ.—Իբսէն և հիւսիսի ուրիշ թատերագիրներ յայտնուեցին իտալական բեմի վրայ, և նրանց այս մուտքը փրկարար եղաւ: Իսկապէս երբէք իբսէնեան լրիւ թատրոն չեղաւ Իտալիայում, այլ միայն քանի մի զատ-զատ փորձեր այստեղ-այնտեղ: Ինքն իբսէնը նոյնիսկ իր ամենափառաւոր օրերում կատարեալ յաղթանակ չունեցաւ իտալական քաղաքների բեմի վրայ: Բայց նա յայտնուեց որպէս օտար երևոյթ, որ փշրեց բոլոր աւանգուծիւնները, ունեցաւ մոլեռանդ երկրպագուներ, առաքեալներ, միևնոյն ժամանակ կատաղի հակառակորդներ:

Իբսէնի ազդեցութիւնը այսքանից չանցաւ, ըսյց նա կարողացաւ յուզել մտքերը, լինէին նրանք համախոհ թէ հակառակ, և կարողացաւ հասկացնել զաղափարի գերազանցութիւնը նիւթականի վրայ: Այսպիսով բիրտ և անամաւարոյ բնապաշտութիւնը ընկճուեց:

Հիւսիսի ուրիշ գրողներ, գերմանացիներ, Իբսէնի հետ մտան Իտալիա. ֆրանսիական թատրոնը, այս հին բռնակալը եկաւ իր զաղափարի պաշտամունքով: Բանաստեղծութիւնը, պերճախօսութիւնը, սիմվոլը թափանցեցին դ'Անունցիօի հետ. հասարակական հարցերը ցնցեցին հոգիները: Այսպիսով անցեալ դարի վերջին տարիներում իտալական թատրոնը, մանաւանդ դրաման գտաւ իր իսկական ճանապարհը:

Այդ թատրոնը էլ աւելի պիտի առաջադիմէր, եթէ կարողանար ազատուել ոչ միայն օտար ազդեցութիւնից, այլ և ներքին մրցութիւններից, այսինքն գաւառաբարբառների թատերագրութիւնից: Այս վերջինները, մանաւանդ Տիւրինի, Նէա-

պոլի, վենետիկի և Միցիլիայի թատրոնը, բռնում են իտալական առանձնայատուկ կեանքի ամենակենդանի, ամենաթարմ, և ամենաանկեղծ մասը, այն՝ որ ժողովրդական է, որ կազմում է իտալիայի իսկական կեանքը և որ այնպէս տարբեր է ֆրանսիական, գերմանական, ռուսական կեանքից: Նա ասարբերում է իր բարքերով, թափով, իր լեզուի չափով (rythme)՝ սկսած վենետիկեան ոճից, որ հեղուկ է ծանր ալիքներով, մինչև սիցիլիականը, ուժգին ու կատաղի, որ կարծես էտնայի արզանդում մոնչոզ բոցերի կատաղութիւնից է ծնուած:

Եւ յետոյ իտալական լաւագոյն դերասանները այժմ գաւառացի են, այս կամ այն գաւառաբարբառով, միլանեցի Ֆերվիլա, վենետիկեցի Բենինի, նէապոլցի Սկարպետտա, կատանացի Զիոփաննի Գրասսօ. սրանցից իւրաքանչիւրը հոչակուած է ոչ միայն իր հայրենի քաղաքում, այլ ամբողջ իտալիայում:

Անցեալ տարին իտալական թատրոնի համար շատ պղտղաբեր է եղել: Շատերը, որոնք մինչև վերջին ժամանակ իրանց հոռու էին պահում թատրոնից, վերստին հրապարակ եկան, Մարկօ Պրազան իր Օնգինով, Անրիկօ Պանցաչին՝ աւելի քննադատ, քաղաքական գործիչ, բանաստեղծ, քան թատերագիր՝ տուեց իր «Հլօր՝ որպէս մահը», Ալֆրեդ Տեստոնին իր «Փոքրիկ դքսուհին», Զիանինօ, Անտօն Տրաւերսին իր «Ամենաերջանիկ օրերը», Բիւտտին «Հսկան և գաճաճները», Սարատինօ Լորեցը «Ամբողջ սէրը» և Բորերտօ Բրակիօն «Մայրութիւնը»:

Բորերտօ Բրակիօն հարուստ կերպով օժտուած տաղանդ է, բաղմնազան և բեղուն, շարունակ հետախուզող և փնտրող, խայթոզ՝ որպէս երգիծաբան, և ուժեղ՝ իբրև դրամատուրգ. նա մէկն է այն հազուագիւտ տաղանդներէից, որոնք կարողացան իտալական թատրոնում փայլեցնել շնորհալի բեմական խաղեր, և բանաստեղծութեան մի յայտնի գեղեցկութիւն: Ուրախ ու կրօնոտ, հասարակական բարոյականութեան դէմ ըմբոստ, առանց սակայն իսպառ մոռացութեան տալու այն, նա նետուում է մերթ գէպի ժողովուրդը, մերթ գէպի արխատօկրատիան, բէալիստ և սանտիմենտալ, նատիւրիստ և բոմանտիկ, ինքընամփոփ, խորհող մի բնաւորութիւն է նա: Իր կենցաղասիրութիւնը նոցն է, ինչ որ մենք տեսնում ենք իտալական բոլոր քաղաքների կոկուած դասի մէջ: Նրա բոմանտիզմը թեթև կերպով գունաւորուած է իբսէնականութեամբ:

Իր տաղանդի վերջին ապացոյցը նրա «Մայրութիւնը» չորս գործողութեամբ դրաման է, որ ներկայացուեց միքանի աւին աւաջ: Դա մի դրամա է, որ համապատասխանում է վեր-

նագրին—մայրութեան յաղթանակը: Մոնտեֆրանկօի մարկիզուհի Կլաւդիան, ազնուազարմ տիկին, խորապէս շխտակ, ազնիւ, մայրութեան հերոսուհին է: Նա իր զաւակի բախտաւորութեան համար հրաժարուեւ է աշխարհի երկու ամենաքաղցր բանից—պատուից ու կեանքից: Նրա ամուսինը գարշելի է, անձնասէր, անառակ, որին իր կնոջ յղութիւնը ուրախութիւն է պատճառուեւ միմիայն նրա համար, որովհետեւ ինքը տնտեսապէս քայքայուած է և շնորհիւ իր զաւակի կարող է ձեռք բերել հարուստ սպասկանի կարողութիւնը: Կլաւդիան իմանուեւ է այս հաշիւը և, որպէսզի իր մաքուր մայրութիւնը ոչինչ առնչութիւն չունենայ մի այսպիսի պիղծ հայրութեան հետ, նա յայտարարուեւ է և պնդուեւ, որ իր արգանդի երեխան ծածուկ կենակցութեան պտուղ է ուրիշից: Կլաւդիան այնուհետեւ գիւղումն է, բաժանուած ամուսնուց, մօտ է մայր դառնալու ժամը և նա երջանիկ յափշտակութեան մէջ է: Երկունքն սկսուած է: Բայց մի բժշկի անընդունակութեան շնորհիւ նա չի կարողանուեւ ծնել առանց վրտանգի: Իր ազատութիւնը երեխայի մահն է, իսկ կենդանի երեխան իր մահն է: Կլաւդիան կացութեան զիտակցութիւնն ունի, և երբ բժիշկները պիտի գան օպերացիա անելու, նա ըստպանուեւ է ինքն իրան զարհուրելի կերպով և իր հետ սպանուեւ է նաև արգանդի երեխան՝ իր մայրութեան մէջ չյուսախաբուելու համար:

Այսպէս է Բրակկօի վերջին դրաման, ուր վայրենի զգացմունքի կատաղութեանը խառնուեւ մի ինչ-որ հերոսական բան, այնքան, որքան ընտանեկան կեանքը ընդունակ է տալ: Այս հերոսութիւնը մենք չենք տեսնուեւ իտալական ոչ-գաւառական թատրոնում: Ահա այս և այլ պատճառներով, ինչպէս և շնորհիւ այն բազմազան տարրերի, որոնք այս երկի մէջ հիւսուած են հրաշալի ներդաշնակութեամբ և շինուածքի ամբողջ գեղեցկութեամբ, «Մայրութիւնը» առանձին տեղ է բռնուեւ իտալական վերջին տարիների դրականութեան մէջ:

ԱՆՐԻԿՕ ԿՈՐՐԱԴԻՆԵԻ

Թարգմ. \*\*\*

## Ճ Ա Շ Ո Ր Դ Ն Ե Ր <sup>\*)</sup>

(Ա. Չեխովի)

Մեղչանին Միխայիլ Պետրով Ձոտովը, եօթանասուն տարեկան մի ծերունի, գառամած ու մենակ, զարթնեց ցրտից ու ոսկրացաւից, որ բռնել էր նրա ամբողջ ծեր մարմինը: Սենեակը մութն էր, բայց փոքրիկ ճրագն այլևս չէր վառուում պատկերի առաջ: Ձոտովը բարձրացրեց վարագոյրը և նայեց լուսամուտից. երկնքում ամպերը նոր էին սկսում բաց գոյն ստանալ, և օդը պարզուժ էր. երևի ժամը հինգը դեռ չկար:

Ձոտովը կոկորդը մաքրեց, հազաց և ցրտից կուշ գալով՝ վեր կացաւ անկողնից: Ըստ հին սովորութեան նա երկար կանգնեց պատկերի առաջ և աղօթեց: Ասաց «Հայր մերը», «Աստուածածինը», «Հաւատամքը» և անունների մի երկար շարք: Թէ՛ ում անուններն էին դրանք, նա վաղուց արդէն մոռացել էր և կրկնում էր միայն ըստ սովորութեան: Ըստ նոյն սովորութեան նա աւելց սենեակն ու գոմը և զցեց իր հաստիկ չորստանի կարմիր պղնձէ ինքնատեղը: Ձոտովը չէր իմանալ, թէ ինչով անցկացնի իր ծերութիւնը, եթէ չլինէին նրա այդ սովորութիւնները:

Ինքնատեղը դանդաղօրէն վառուում էր և յանկարծ անսպասելի կերպով դողանջեց դողդոջիւն բասով:

— Հը՛, տնկտնկաց, — փնթփնթաց Ձոտովը: — Գլուխդ ուտես!

Եւ յիշեց ծերունին, որ այդ գիշեր նա երազում վառարան էր տեսել, իսկ երազում վառարան տեսնելը տխրութիւն է նշանակում:

Երազներն ու նշանները միակ բանն էր, որ կարող էր նրան մտածել տալ: Եւ այդ անգամ նա մի առանձին սիրով խորասուզուեց վճռելու այս հարցերը. ինչո՞ւ է ինքնատեղը դողանջում, ի՞նչ տխրութիւն է նախազուժում վառարանը: Երա-

\*) Нахлѣбника.

զը հէնց իսկոյնսեթ կատարուել սկսեց, երբ Զոտովը ամանը ողողեց և ուզեց թէյ ածել մէջը, արկղում թէյի ոչ մի կտոր չգտնուեց:

—Տաժանելի կեանք,— փնթփնթաց նա՝ բերանում շուռու-մուռ տալով սև հացի պատառները:—Շան կեանք է: Թէյ չկայ: Էլի ոչինչ, եթէ հասարակ մուժիկ լինէի, թէ չէ ախր մեշտա-նին եմ, տանտէր: Խայտառակութիւն:

Փնթփնթալով և ինքնիրան խօսելով՝ Զոտովը հագաւ իր կրինոլինի \*) նման վերարկուն, ոտները գցեց հագպին անճոռի կրկնակօշիկները (որ կարել էր կօշկակար Պրոխորը իջը 1867 թուականին) և դուրս եկաւ: Օղը դժգոյն էր, ցուրտ և դաժա-նօրէն-անդորր: Մեծ բակը՝ գանդրացած կռատուկով և ծածկու-ած դեղին տերևներով՝ թեթև կերպով ճերմակել էր աշնանային ե-ղեամով: Ոչ քամի կար, ոչ ձէնուձուն: Ծիրուկը նստեց իր ծոմնած դատիկոնի աստիճաններին, և իսկոյն տեղի ունեցաւ այն, ինչ որ տեղի էր ունենում ճշտութեամբ իւրաքանչիւր առաւօտ. նրան մօտեցաւ իր Լըիսկա շունը, մի զամփռ, սպի-տակագոյն, բայց սև բծերով, մազը թափուած, կիսասատկածի պէս, աջ աչքը փակ: Լըիսկան մօտենում էր երկչոտութեամբ, վա-խեցած ծոմուտելով, ասես նրա թաթիկները ոչ թէ գեանին էին կպչում, այլ շիկացած հնոցասալին, և ամբողջ նրա զառամած մարմինն արտայայտում էր ծայրայեղ անկեալութիւն: Զոտովը այնպէս ցոյց տուաւ, որ իբր թէ ուշադրութիւն չէ դարձնում նրա վրայ. բայց երբ շունը թոյլ-թոյլ շարժելով պոչը և ա-ռաջուայ նման ծոմուտելով՝ լիզեց նրա կրկնակօշիկները, այն ժամանակ նա բարկութեամբ ոտը գետնին իսկեց:

—Կորիր, սատկես դու,— գոռաց նա:—Ա-նիծ-ուած:

Լըիսկան դէնը գնաց, նստեց և իր միակ աչքը յառեց տի-րոջը:

—Դու եր, — շարունակեց Զոտովը:—Դձը էիք պակաս, ան-ըզգամներ, գլխիս խաթա էք դառել:

Եւ նա ատելութեամբ մտիկ արաւ իր բուսակալած թեք կտրով գոմին. այնտեղ գոմի դռնից նրան էր նայում մի ձիի մեծ գլուխ: Երևի տիրոջ ուշադրութիւնից շոյուած ու սիրտ առած՝ գլուխն առաջ շարժուեց, և գոմից երևաց մի ամբողջ ձի, նոյնպէս զառամած, ինչպէս Լըիսկան, նոյնպէս երկչոտ ու ան-կեալ, բարակ ոտներով, ալևոր, ներս ընկած փորով և ոսկրոտ մէջքով: Նա դուրս եկաւ գոմից և կանգ առաւ վարանման մէջ, կարծես քաշուած էր:

\*) Կնոջ շրջագրեստ:

—Չէք կոտորում, պրծնեմ...—շարունակեց Չոտովը:— Դեռ չէք չքուել աչքիս առաջից, անտէր մնացածներ... բայց ուտելը հօ կ'ուտէք,—քմծիծաղեց նա՝ ծումուկով իր չար դէմքն արհամարհական ժպտով:—Համեցէք, իսկոյն: Էդպիսի մեծագին նժոյզի համար պատրաստ ունիմ ամենալաւ գարի, որքան քէ-Փըզ տայ! Կերէք: Էս բոպէիս! Հիանալի թանգագին շան համար ևս ուտելու բան կը գտնուի: Բան է, թէ որ էդպիսի թանգագին շունդ, ինչպէս դուք էք, չէք ուզում հաց, էն ժամանակ կարելի է միս տալ!

Չոտովը մըթմըթաց կէս ժամի չափ՝ աւելի ու աւելի բորբոքուելով, վերջիվերջոյ նա իր մէջ եռացող բարկութիւնից չկարողանալով իրան պահել՝ վեր թռաւ, կրկնակօշիկներով գետնին խփեց և ամբողջ բակովը-մէկ թնդաց.

—Ես պարտաւոր չեմ ձեզ կերակրել, ձրիակերներ: Ես միլիօնատէր չեմ, որ դուք տունս-տեղս լափէք-լափէք: Ես ինքըս ուտելու բան չունիմ, պիղծ հացկատակներ, խորեբան ձեզ տանի: Չեզնից ի՞նչ խէր ունիմ, բացի շառից ու տնաքանդութիւնից: Ինչի՞ չէք կոտորում: Դուք էդ ի՞նչ նշանաւոր բաներ էք, որ մասն էլ չի բռնում ձեզ: Ուզում էք ապրել, քարը դըլուխներդ, բայց ես չեմ ուզում ձեզ կերակրել! Հերի՛ք է: Չեմ ուզում:

Չոտովը յուզւում էր, զայրանում, իսկ ձին ու շունը լըսում էին: Հասկանում էին արդեօք այդ երկու ճաշորդները, որ նրանց յանդիմանում են մի կտոր հացի համար,—չգիտեմ, բայց նրանց փորերն էլ աւելի էին ներս ընկել, և կերպարանքներն աւելի կուշ եկել, նսեմացնել, աւելի դէն ընկել... Նրանց խոնարհ տեսքն աւելի գրգռեց Չոտովին:

—Դուրս,—գոռաց նա՝ մի տեսակ ոգևորութեամբ բըռնուած:—Դուրս իմ տնից! Աչքս չտեսնի ձեզ: Ես պարտական չեմ իմ տանը-դրանը ամեն-մի անպէտք բան պահել! Դուրս:

Ծերուկն աճապարեց դէպի դարպասը, բաց արաւ և գետնից մի փայտ վերցնելով՝ սկսեց բակից դուրս քշել իր սեղանակիցներին: Ձին գլուխն օրօրեց, թիակները շարժեց և կաղալով դուրս գնաց դարպասից. շունը նրա յետևից: Երկուսն էլ դուրս եկան փողոց և քսան քայլի չափ անցնելով՝ կանգ առան ցանկապատի մօտ:

—Կը տեսնէք,—սպառնաց նրանց Չոտովը:

Իր տնկեցներին դուրս անելով՝ նա հանգստացաւ և սկսեց բազն աւելի: Երբեմնակի նա նայում էր դէպի փողոց. ձին ու շունը կանգնել էին ցանկապատի մօտ ինչպէս մեխուած և թախծագին նայում էին դարպասին:

—Ապա մէկ առանց ինձ ապրեցէք, տեսնե՛մ,—մըթմըթում էր ձերն՝ զգալով, թէ ինչպէս սրտից հեռանում է բարկութիւնը:—Ապա մէկ թնոյ մի ուրիշը ձեզ պահի-պահալանի, տեսնե՛մ: Ես համ ժլատ եմ, համ չար... ինձ հետ ապրել չի լինիլ, դէ ուրեմն թնոյ ուրիշը ձեզ պահի... Հա:

Կենդանիների ճնշուած տեսքից զուարճանալով և իրենթփնթալուց կշտացած՝ Ձոտովը դարպասից դուրս եկաւ և իր դէմքին վայրագ արտայայտութիւն տալով՝ գոռաց.

—է՛, ի՞նչ էք կանգնել: Ո՞ւմ էք սպասում: Ծանապահի մէջ տեղը կանգնել են ու մարդկանց անցուղարձը խանգարում! Գնացէք բակը:

Ձին ու շունը քաշ գցեցին իրանց գլուխները և մեղապարտի տեսքով ուղղուեցին դէպի դարպասը: Լըխկան երևի զգալով՝ որ թողութեան արժանի չէ, խղճալիօրէն կաղկանձեց:

—Կենալը՝ կացէք, բայց ինչ վերաբերում է կերակրուելուն—չէք տեսնիլ!—ասաց Ձոտովը՝ նրանց ներս անելով: —Սատկէք էլ, չեմ տալ:

Մինչ այս մինչ այն՝ արևն սկսեց ցոլցլալ առաւօտեան մէզի միջից. նրա շեղ ճառագայթները սողացին աշնանային ցօղի վրայով: Լսուեցին ոտնաձայներ և խօսքուզրոյց: Ձոտովը տեղը դրաւ աւելը և գնաց իր քաւոր ու հարևան Մարկ Իվանըիչի մօտ, որ մանրուքի փոքրիկ խանութ ունէր: Գալով քաւորի մօտ՝ Ձոտովը նստեց ծալովի աթոռին, ծանրումեծօրէն թառանչ քաշեց, միրուքը շփեց և խօսք բացաւ եղանակի մասին: Նրանք եղանակից անցան նոր տիրացուին, տիրացուից երգիչներին, և զրոյցը երկարեց: Քանի խօսում էին, ժամանակն անցնում էր անսկասկի կերպով. իսկ երբ խանութի աշկերտը բերաւ մեծ թէյամանը եռացած ջրով լիքը, և քաւորներն սկսեցին թէյ խմել, ժամանակն սկսեց թռչել ինչպէս թռչուն: Ձոտովը տաքացաւ, քէֆը բացուեց:

—Ախր ես քեզ մի խնդիրք ունիմ, Մարկ Իվանըիչ,— սկսեց նա վեցերորդ բաժակը խմելուց յետոյ՝ մատներով տընկտնկացնելով դա՛ղգեհոնը: —Դէ ի՞նչ ասեմ... իմ խաթեր համար էսօր էլ մի քիչ գարի տուր:

Մարկ Իվանըիչի առաջը դրած մեծ թէյարկղի յետից լըսուեց մի խորը հառաչ:

—Տուր, խաթրս մի կոտրիր,— շարունակեց Ձոտովը:—Թէյ, էհ, չեմ ուզում, մի տուր հիմի, բայց գարի տուր... Ամաչում եմ ուզեմ, շատ եմ նեղացնում քեզ իմ աղքատութեամբ, բայց... ձիս սոված է:

—Տալ կարելի է,— հառաչեց քաւորը:—Ինչո՞ւ չէ, կը տամ:

Բայց ասան ինզրեմ, ինչ զանրումարի համար ես պահում այդ ձրիակերներին: Ձին էլի մի բանի պէտք լինէր, կ'ասէի. թէ չէ—թիւն, մտիկ անելուց անգամ մարդ զգուժում է... Իսկ շունը —կատարեալ կմախք է: Ի՞նչ ցաւիս համար ես կերակրում նրանց:

—Բա ո՞ւր կորցնեմ:

—Պարզ է, թէ ուր: Տար ի գնատի քերթարանը,—պրծնի գնայ: Վաղուց պէտք է նրանք էստեղ լինէին: Նրանց իսկական տեղն է:

—Էդ էդպէս է!... Շատ կարելի է...

—Ինքդ ապրում ես ողորմութեամբ, բայց անասուններ ես պահում,—շարունակեց քաւորը:—Ես գարին չեմ ափսոսում... Աստուած քեզ հետ, բայց ախր, եղբայր, չի լինիլ ամեն օր տալ: Քո աղքատութիւնը ոչ չափ ունի, ոչ սահման! Տալիս ես՝ տալիս և չես իմանում, թէ վերջ ունենալով է, թէ՞ չէ: Քաւորը հառաչեց և շփեց իր կարմիր երեսը:

—Մեռնէիր, լաւ կը լինէր, հաւատան,—ասաց նա:—Ապրում ես, և ինքդ էլ չես իմանում, թէ ինչի համար... Աստուած վկայ! Թէ չէ եթէ Տէրը մահ չի տալիս քեզ, աւելի լաւ կը լինէր մի որևէ աղքատանոց կամ ապաստան գնայիր:

—Ինչո՞ւ: Ես ազգական ունիմ... Ես թոռ ունիմ...

Եւ Չոտովը սկսեց երկար պատմել այն մասին, թէ ինչոր մի տեղ մի գիւղում ապրում է նրա եղբոր-թոռ, Գլաշան, իր եղբոր-աղջիկ Կատերինայի դուստրը:

—Նա պարտաւոր է ինձ կերակրել!—ասաց նա:—Իմ տունը նրան է մնալու, ուրեմն թող նա էլ կերակրէ ինձ: Վեր կը կենամ գնամ նրա մօտ: Դա, ուրեմն, հասկանում ես. Գլաշան... Կատիայի աղջիկն է, իսկ Կատիան, հասկանում ես, իմ եղբայր Պանտելէյի խորթ աղջիկն է... հասկացա՞ր: Տունս նրան է մնալու... Թող կերակրէ ինձ:

—Ի՞նչ կը լինի որ: Քանթէ էդպէս ողորմութեամբ ապրես, աւելի լաւ կը լինէր՝ նրա մօտ գնայիր:

—Ես կը գնամ! Անիծում, թէ չգնամ: Նա պարտաւոր է: Մի ժամ անցած՝ երբ քաւորները մի-մի բաժակ օղի խմեցին, Չոտովը խանութի մէջտեղը կանգնած էր և ոգևորութեամբ ասում էր.

—Ես վաղուց եմ պատրաստուում նրա մօտ գնալ! չէնց էս սօրևեթ գնալու եմ!

—Դէ ինչրիկէ! Քանթէ էդպէս դատարկ ու բոշ ման գաս ու քաղցից սատկես, աւելի լաւ չէ՞ գիւղերը գնաս:

—Էս ըսպէիս կը գնամ! Կը գնամ ու կ'ասեմ. վերցրո՛ւ,

քեզ լինի տունս, միայն ինձ կերակրիր ու պատուիր: Պարտաւոր ես: Եթէ չես ուզում, էլ քեզ ոչ տունս կը տամ, ոչ օրհնութիւնս! Բարո՛վ մնաս, Իվանըիչ:

Չոտովը մի բաժակ օղի էլ խմեց և ոգևորուելով իր նոր մտքով՝ շտապեց տուն... Օղուց նա թուլացաւ, գլուխը պտըտուում էր, բայց նա չպառկեց, այլ մի կապոցի մէջ ժողովեց իր բոլոր շորերը, աղօթեց, վերցրեց փայտն ու տնից դուրս եկաւ: Առանց ետ նայելու, մրթմրթալով և փայտը քարերին խփելով՝ նա անցաւ ամբողջ փողոցը և դաշտը դուրս եկաւ: Մինչև գիւղը 10—12 վերստ կը լինէր: Նա գնում էր չոր ճանապարհով, նայում էր, թէ ինչպէս քաղաքի հօտը ծոյլ-ծոյլ ծածուկ է դեղին խոտը, ու մտածում էր իր ճաշորդները մասին: Տնից դուրս գալուց նա դարպասը չէր կողպել և այդպիսով նրանց ազատութիւն էր տուել գնալ, ուր կը ցանկանան:

Գաշտի միջով դեռ մի վերստ էլ չէր անցել, որ յետևից ոտնաձայներ լսուեցին: Ետ նայեց և բարկացած՝ ձեռներն իրար խփեց. նրա յետևից գլուխները քաշ գցած և պոչներն իրանց քաշած՝ հանդարտ գալիս էին ձին և Լըիսկան:

—Ե՛տ դարձէք,— ձեռքով արաւ նա:

Նրանք կանգ առան, իրար մտիկ տուին, նայեցին նրա վրայ: Նա շարունակեց գնալ, նրանք էլ յետևից: Այն ժամանակ նա կանգ առաւ և սկսեց միտք անել: Կիսածանօթ թոռ Գլաշայի մօտ գնալ այս արարածների հետ անկարելի էր, ետ դառնալ և նրանց տանը փակել չէր ուզում, ասենք չէր էլ կարող փակել, որովհետև դարպասը միանգամայն անպէտք էր:

«Գոմում կը կոտորուեն,— մտածեց Չոտովը:— Թէ՞ հէնց ուղղակի Իգնատի մօտ տանեմ»:

Իգնատի խրճիթը գտնուում էր նախրատեղում, ուղեփակից հարիւր քայլի չափ հեռաւորութեան վրայ: Չոտովը դեռ վերջնականապէս չորոշած և չիմանալով՝ ինչ անել, ուղղուեց դէպի այդ խրճիթը: Նրա գլուխը պտտուում էր, և աչքերը մթնում էին...

Նա քիչ ընդ է յիշում նրանից, թէ ինչ կատարուեց քերթիչ Իգնատի բակում: Նա յիշում է կաշու զգուելի ծանր հոտը, այն շնչի քաղցրահամ գոլորշին, որ ուտում էր Իգնատը, երբ ինքը մտաւ նրա մօտ: Կարծես երազում նա տեսնում էր, թէ ինչպէս Իգնատը նրան սպասել տալով երկու ժամի չափ՝ երկար պատրաստում էր ինչ-որ բան, շորերը փոխում էր, խօսում էր ինչ-որ մի կնոջ հետ սուլեմայի մասին. յիշում էր, որ ձին պրուեց մորթելու մեքենայում, որից յետոյ լսուեց երկու խուլ հարուած, մէկը գանգին, միւսը մեծ մարմինն ընկնելուց:

Երբ Լըիսկան տեսնելով իր ընկերոջ մահը՝ կաղկանձելով յար-  
ձակուեց Իգնատի վրայ, այն ժամանակ լսուեց երրորդ հա-  
րուածն էլ, որ անմիջապէս ընդհատեց կաղկանձոցը: Ապա Զո-  
տովը յիշում է, որ նա յիմարացած և հարբած՝ տեսնելով եր-  
կու դիակ, մօտեցաւ մեքենային և դէմ արաւ իր սեփական  
ճակատը...

Իրանից յետոյ մինչև երեկոյ նրա աչքերը բոնուած էին  
մութ շղարշով, և նա չէր կարողանում տեսնել նոյնիսկ իր  
մատները:

Թարգմ. ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆ

### ՎՐԱՅ ԿԵՆՆՔԻՑ ԵՒ ԳՐԵԿՆՈՒԹԻՒՆԻՑ

Զտք. ձիճինսձէի գրական գործունէութիւնը.—նրա նոր վրբերը հայերի դէմ:—  
Պոյս նունէի ազգութեան հարցը:—Մի գիտնականի կարծիքը վրաց գրականու-  
թիան մասին:—Մի ձեռագիր երգարան:

Վրաց բաղմաշխատ հրատարակիչ և գրող պ. Զտք. ձիճի-  
նսձէն շարադրել է ու սպազրել մօտերս մի շարք գրքոյկներ  
այլևայլ սպառէզներում անուն հանած վրացիների մասին:  
Այդ գրքոյկներից երկուսը՝ «Պաւլէ Շահյուլեան» և «Իվան  
Գվարամաձէ» կսոյ ունին հայերի հետ: Հայերի հետ մեծ կապ  
ունի նոյնպէս նրա մի ուրիշ աշխատութիւնը, որի մասին յայ-  
տարարուած է թէ մամուլի տակ է և կրում է «Վրացի-գրիգո-  
րեաններ» անունը: Բայց հայերի մասին խօսում է ու «պատ-  
մական տեսութիւններ» է գրում պ. ձիճինսձէն համարեա իր  
բոլոր յօդուածներում ու գրքոյկներում, որոնց թիւը արդէն  
տասնեակների է հասնում: Եւ այլապէս չէր էլ կարող լինել,  
քանի որ նա վերջին տարիներս բոնուած է մի սարսափելի,  
իրան ոչ մի ըսպէ հանգստութիւն չտուող ցաւով, նա ուզում  
է անպատճառ կրկնապատկել իր հայրենակիցների թիւը...  
Իսկ այդ ցաւից ազատուելու համար նա ընտրել է իր  
միամտութեանը վայել մի շատ կարճ ու հեշտ ճանապարհ՝  
վրացի-գրիգորեան (լուսաւորչական) և վրացի կաթողիկ հրա-  
տարակելով Վրաստանում ապրող բոլոր հայերին... Սրանից  
մի տասը՝ տարի առաջ այդ «եռանդոտ հայրենասէրի» պահանջ-

ները աւելի համեստ էին. նա այդ ժամանակ արծարծեց ու մըշակեց «վրացի-մահմէդականների» հարցը, բայց այժմ, ինչպէս երևում է, նրա ծրագրերը սաստիկ ընդարձակուել է, և նա հայերին «նուսճելովը» չբաւականանալով՝ մամուլին է յանձնել արդէն «վրացի-հրէաներ» անունով մի գրքոյկ, որ լոյս պէտք է տեսնէ նրա միւս նոր, կէս դիւփին տեսղենցիօզ աշխատասիրութիւնների հետ միասին («վրացի-գրիգորեաններ», «վրացի փաշաները Տաճկաստանում» և այլն)...

Շատ բնորոշ ու առանձնակի դէմք է պ. Ճ. վրաց գրողների շարքում: Նա այժմ մօտ 50 տարեկան, «անուսում» մարդ է: Նա սովորել է միայն ծխական դպրոցում և, ինչպէս վկայում է Վ. Գունիան իր «վրաստանի օրացոյց»-ում, նա այդ ուսման կէսը ստացել է ուսաց, իսկ միւս կէսը - հայոց ծխական ուսումնարանում: Երևի այդ է պատճառը, որ Ճ. այժմ էլ գիտէ հայերէն և իր երևելի «պատմական տեսութիւնների» համար նիւթեր է քաղում նաև հայ գրականութիւնից: Ծխական դպրոցից յետոյ նա մինչև 18 տարեկան հասակը դեպերել է իբրև աշակերտ այլևայլ արհեստաւորների մօտ: Այնուհետև դառնալով միառժամանակ «Դրօէբա» լրագրի լրատու՝ նա ձեռք է զարկում շուտով հրատարակչական գործին, որև տանում է մինչև օրս հազուագիւտ աշխատասիրութեամբ ու անձնուիրութեամբ: Բաւական է ասել, որ նա տուել է մինչև օրս իր հայրենակիցներին ոչ պակաս քան 250 անուն մեծ ու փոքր գիրք... Սկզբում նա բաւականանում էր լոկ հրատարակչի դերով, բայց այս վերջին տասը տարին կատարելապէս հեղեղել է վրաց գրականութիւնը իր այլևայլ «տեսութիւններով»: Տարի չի անցնի որ միջին հաշուով հինգ-վեց գրքոյկ չչարագրէ: Գրում է հայրենիքի հին և նոր գործողների կենսագրութիւններ, պատմական տեսութիւններ է անում վրաց համբարների, վաճառականութեան, արդիւնագործութեան, տպագրութեան, պարբերական հրատարակութիւնների և այլն մասին ու նկարագրում վրաստանի այլևայլ գաւառները: Այդ գրքոյկների թւում լինում են յաճախ նաև բաւական խոշոր գրուածներ. այդպէս, օրինակ, սրանից մի երկու ամիս առաջ նա տպագրեց «վրաց արդիւնագործութեան պատմութիւնը», որ պարունակում է ամբողջ 224 երես և արժէ մի բուբլի:

Ճ. այդ հերոսական աշխատասիրութիւնը և նրա երկաթի կամբը կատարելապէս սքանչացնում են մարդուն, բայց ցաւը նրանումն է, որ այդ գրուածները կորցնում են ինտելիգենտ մարդու աչքում իրանց արժէքի  $\frac{9}{10}$  մասը՝ իրանց հեղինակի խոշոր պակասութիւնների պատճառով... Երևակայեցէք, որ այդ

ամեն քայլափոխին մի-մի «պատմական տեսութիւն» թխող պարոնը հիմնաւոր կերպով ծանօթ չէ նոյնիսկ վրացի միակ պատմագիրք «Քարթլիս-Յիսովրեբայի» հետ... պատմական տեսութեան անունով նա ներկայացնում է իր ընթերցողներին այլևայլ կասկածելի լեզենդաների, պառաւներից լսած բարբաջանքների և ղէսից-ղէնից հաւաքած ասէկօսէնների ժողովածուներ... Աւերացէք զրան ընդհանուր զարգացման, զօրեղ լոգիկայի բացակայութիւնն ու հայատեցական ողորմելի, անմաքուր տենդենցիւմները,—և պատկերը կատարեալ կը լինի... Նրա անտրամաբան, ակեղցփեղ դատողութիւնները ուղղակի չափ և սահման չունին...

Այս անգամուայ համար մենք բաւականանում ենք ծանօթացնելով մեր ընթերցողներին վերոյիշեալ «Պաւլէ Շահդուլեան» գրքոյկի հետ, որ ամբողջապէս վերաբերում է հայերին և պարունակում է 72 միջադիր երես:

Ինչ՞նչ է գրել ձ. այդ գիրքը:—Ախալցխայում ծնուել է 1769 թուին Շահդուլեան ազգանունով մի մարդ և 87 տարի ապրելով աշխարհում՝ մեռել է իր ծննդավայրում նոյն ազգանունով: Ամբողջ 60 տարի (1795—1855) այդ մարդը եղել է հայ-կաթոլիկների քահանայ՝ Պօղոս վարդապետ Շահդուլեան անունով, որպիսի անունը փորագրուած է նաև նրա գերեզմանի վրայ՝ վրացերէն ու լատիներէն լեզուներով: Իր ամբողջ կեանքում նա բարձրաբարբառ քարոզել է ամեն տեղ իր ծխականներին, որ թէ ինքը, և թէ նրանք ազգով հայ են, կրօնով հայ-կաթոլիկ: Քարոզելիս (օրինակ՝ Թիֆլիզում) նա միշտ յայտարարել է ժողովրդին, որ ինքը վրացերէն լեզուով է ատենաբանում այն պատճառով, որ ամենքին մատչելի լինի: Նա հրմուտ հայկաբան էր և կազմել է ընդարձակ հայերէն-վրացերէն բառարան: Նա այն կարծիքի էր, որ բոլոր կաթոլիկ քահանաները պէտք է շատ լաւ իմանան տեղական տիրապետող հայերէն ու վրացերէն լեզուները, և զրա համար էլ նա հիմնովին ուսումնասիրել էր այդ երկուսն էլ: Վրացիք, այսինքն պ. ձ. մեծ թուով ընդունած վրացի-կաթոլիկները, իրանց թշնամին են եղել ճանաչած Շահդուլեանին և կասկածով են եղել նայելիս նրա վրայ...

Այժմ ի՞նչ էք կարծում, ի՞նչ ազգի մարդ պէտք է լինի այդ Շահդուլեանը:—Պ. ձ. իր գրքի ամեն երեսի վրայ մի տաւառն անդամ կրկնում է, որ այդ կաթոլիկ վարդապետը վրացի էր... Ի՞նչ հիման վրայ, կը զարմանայ ընթերցողը:—Այն հիման վրայ, որ նա զգալով կրօնական գրքերի կարիք իր վրացախօս հաւատացեալների համար՝ իտալերէնից մի քանի գիրք

է թարգմանել այդ տեղական լեզուով... «Հապա ինչո՞ւ էր վերացերէն լեզուով գրքեր թարգմանում, եթէ հայ էր»,—բացազանչում է տղայօրէն մեր խելօք հեղինակը... Մի ուրիշ տեղք նա անցողակի կերպով ասում է, թէ «ինչպէս վերջին տարիներս մենք հաստատ կերպով խմացանք, Շահողութեանները հնումը (?) ձիւրմուզաշվիլի ազգանունով են եղել յայտնի»: Այդքան միայն... Իսկ մենք ինչո՞վ համոզուենք, որ դա ճիշտ է, որ դոկումենտի հիման վրայ, չէ՞ որ պատմութիւն էք գրում, պ. «պատմաբան»... Յաճախ, երբ հանգամանքները ստիպում են մեր հեղինակին խոստովանուել Շահողութեանի ոչ-վրացասիրութիւնը,—նա իսկոյն երկխայօրէն շտապում է աւելացնել. «Բայց ես համոզուած եմ, որ Շահողութեանը հոգով իսկական վրացի էր»... Իսկ ինչո՞վ բացատրել վարդապետի ազգուրացութիւնը, ի՞նչու էր նա ինքն իրան «իսկական հայ» համարում: Դրա գաղտնիքը, պ. Ճ. ասելով, կայանում է նրանում, որ նա երիտասարդ ժամանակ Հոովմում ընկնում է Մխիթարեան վարդապետների ազդեցութեան տակ, որոնք և նրա գլխից հանում են վրացութիւնը...

Մենք իսկապէս ուրախ կը լինէինք, որ Շահող. ոտով-գլխով պատկանէր ձիւրմուզաշվի հայրենակիցներին: Նա ոչ միայն «մի գատ չէ», այլև, ինչպէս այդ երևում է հեղինակի գուցէ միամտաբար տուած տեղեկութիւններից,—մի շատ անհամակրելի մարդ: Երևակայեցէք մի հոգևոր հովիւ, որ ամբողջ վաթսուռն տարի աշխարհը տակնուվրայ է անում իր փառասիրական ձգտումների համար: Հօտի մէջ խոովութիւններ ձգել, եղբօրը եղբօր դէմ զինել, քսութիւններ անել, մի օր հայոց, միւս օր—վրաց թշնամի լինել, մի օր Ախալցխայի փաշայի (մինչև ուսմաների այնտեղ մտնելը), միւս օր—կովկասի կառավարչապետի փեշի տակը անտրգաբար կծկուել, պարզ մատնութիւններ անել, հաւատացնել տէրութեանը, թէ ինչպէս Եւրոպայից եկած պատերները, այնպէս էլ Վենետիկից ուղարկուած Մխիթարեան վարդապետները—ուս թաղաւորի թշնամիներ են,—անա ձեզ Ճ. փայփայած մարդու երկարամեայ ամբողջ կեանքը...

Ո՞րքան ողորմելի մարդ պէտք է լինի մի գրող, որ իբր թէ իր ազգին ծառայութիւն մատուցանելու համար լայեղ անինոյնիսկ այդպիսի մի անհամակրելի մարդուն «գողանալ» մի ուրիշ ազգից ու բերել փաթաթել իր սիրելի հայրենակիցներ լվին... Շահողութեանը լեզուագէտ էր, գիրք ունեցող մարդ էր,—և այդքանը բաւական է Ճ. խելքից հանելու համար...

Բայց Ճ. գրքի ամբողջ «աղը» դեռ այդքանը չէ. նա իբր

աշխատութեան առաջին երրորդ ( $\frac{1}{3}$ ) մասը գործ է դրել ապացուցանելու, որ հայերը դարերի ընթացքում «կուլ են տուել» ու շարունակում են մինչև օրս կուլ տալ վրացիներին... Մենք զանց ենք անում այն ամենը, ինչ որ նա թութակի պէս կրկրնել է իլիա ճաւճաւաձէի և Ակակի Ծերեթելու ասածներից։ Լսենք միայն Ճիճ.-ի սեփական փաստերը։

Այդ պատմաբանի «ճիշտ տեղեկութիւնների» հիման վրայ հայերը գաղթել են Վրաստան մինչև 19-րդ դարու կէսը ուղիղ հինգ անգամ։ «Վրաստան» բառը այստեղ պէտք է հասկանալ ձ. մտքով, այսինքն նրա մէջ պէտք է մտցնել նաև Ախալցխայի, Ախալքալաքի, Արդահանի և Արդանուշի գաւառները։ Գաղթականութիւնը տեղի է ունեցել 12-դ, 17-դ, 18-դ և 19-դ դարերին։ Վերջինը վերաբերում է 1830 թ. Կարնի Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ կատարած մեծ գաղթականութեանը։ Արդ, պ. Ճ.-ի հաշուով ամեն անգամ գաղթականութիւնը տեղի է ունեցել միայն միքանի ընտանիքով, բացառութիւն կազմել է միայն 1830 թիւը, երբ Վրաստան են անցել յիշեալ եպիսկոպոսի հետ միայն միքանի հարիւր հոգի... «Եթէ այդ բոլոր 5 նուազ Վրաստան տեղափոխուած հայերին միասին հաշուենք,—շարունակում է պարոնը,—ամենաշատը կարող է դուրս գալ հինգ հազար հոգի, մինչդեռ այսօր ամբողջ Վրաստանն ու Կախէթը լիքն են հայերով։ Կարելի է արդեօք ընդունել, որ այդ 5000 հոգին հարիւր (?) տարուայ ընթացքում վերածուէին երկուհարիւրից մինչև երեք հարիւր հազար հոգու»...

Այդպիսով նախ և առաջ ամբողջ 800 տարուայ միջոցը վերափոխուած է 100 տարուան, և երկրորդ՝ 800 տարի շարունակ անազին հրոսակներով գաղթող հայերը դառնում են ընդամենը 5000 հոգի, մինչդեռ վերջին երեխային էլ յայտնի է այսօր, որ միմիայն Կարնի գաղթականները 1830 թ. կազմում էին 90,000 հոգի...

Եւ այդ մտացածին, կեղծ, ծիծաղելի հաշիւները դրւում են այսօր վրացախօս հայերի առաջ այն նպատակով, որ նրանց համոզեն, թէ նրանք ազգով հայ չեն, այլ միայն հայերի կրօնն են դաւանում, վրացի—գրիգորեան են...

Մեր «պատմաբանը» ձեռքը պարզում է այնուհետև մի շարք հայկական յայտնի անունների վրայ և վճռում, որ նրանք ամենևին հայ չեն։ Այսպէս նշանաւոր կապիտալիստ Աղ. Մանթաշեանը առաջ է եկել Մէնթէշաշվիլի-ներից, դրամատուրգ Գաբ. Սունդուկեանը—Սունդակիշվիլի-ներից, «Վումայի» խմբագիր հայր Աղանեանը—Չուստիճամիաշվիլի-ների այսինքն

Չուստ-ուսողենց) ցեղից, բարեգործ տիկին Նազիրեանի ազգը հնումը եղած է Նազիրաձէ, վենետիկի վարդապետ Սափարեանինը—Սափարաշվիլի, որովհետև «հին ժամանակ Ախալցխայի մօտ եղել է Սափար անունով մի վրաց վանք», և այլ այսպիսի ասի ասի եղանակով, ապշեցուցիչ յայտնութիւններ, առանց որևէ հիմքի ու դրուումներ...

Այնուհետև, երկիւղ կրելով, որ մի գուցէ այդ երեք հարիւր հազար «վրացի-գրիգորեանները» չհաւատան իր միամիտ աչքակապութիւններին, դիմում է նրանց՝ ճարը կտրած՝ այնպիսի մի մուրացիկ ազաչանքով, որ չենք կարող բառաւորաւ չբերել այստեղ. «Ենթադրենք, թէ այդպէս չէ, և վրաստանում ապրող բոլոր հայերը գուտ հայկական ծագումից են. միթէ նրանք այդ դէպքում պէտք է իրանց հայ համարեն, քանի որ դարերի ընթացքում իրանց ազգութիւնից այլևս ոչինչ չեն պահել, այլ լեզուով, բարբով ու բնաւորութեամբ միացել են վրացիներին հետ և այն աստիճան նմանուել բնիկներին, որ նըրանց (հայերին ու վրացիներին) համարեա թէ այլևս անկարելի է միմիանցից զանազանել: Եւ ի՞նչ կ'ասի դրանց մասին մի եւրոպական կրթութիւն ստացած մարդ, եթէ լսի, որ դրանք իրանց հայ են համարում: Միթէ վայելուչ բան կը լինի, որ այդպիսի մի ժողովուրդ իր երեսն ու սիրտը դարձնէ այն ազգի հայրենիքից, որտեղ իրանց նախնիներին սերունդներն են ապրել, որտեղ իրանց պապերն են մեռել, որտեղ այդ վերջինների գերեզմաններն են մնացել: Կարելի՞ է արդեօք, որ մի այդպիսի ժողովուրդ ստոնութիւն ցոյց տայ դէպի իր վրայ երախտիք ունեցած ազգի լեզուն, բարքն ու բնութիւնը և մօտենայ այնպիսի մի ազգի (հայերի) լեզուին ու սովորութիւններին, որից ո՛վ գիտէ երբ և ո՛ր դարում հեռացել է մի օր: Այդպիսի մի վարմունք ինձ անվայել է երևում: Դա մոլորութիւն է, անշափ մեծամտութիւն ու ֆանատիկոսութիւն: Այդ վարմունքը ոչօքի համար ընդունելի չի լինի, և այդօրինակ մի ուրացութիւն ամենտեղ դատապարտելի կը լինի»...

Ահա՛ ձեզ անմիտ բառերի մի կոյտ... Եկէք ու հիմայ պատասխան տուէք դրան... Միթէ ճիճիհաձէն չգիտէ «ուրացութիւն» ու «ֆանատիկոսութիւն» (մոլեռանդութիւն) բառերի միտքը, կամ որ մի եւրոպացի երբէք չի դատապարտի մի հայի, որը կը կամենայ իր ազգութիւնը պահպանել: Իհարկէ, շատ լաւ գիտէ, բայց նա հէնց այդպիսի աչքակապութիւններով է ուզում մի տեսակ շարժել տգէտ ժողովրդի գութը: Դա մի անճար մարդու ազաչանքն է, վերջին միջոցը... Դրան կ'ասեն

մուրալով տանել այն, ինչ որ չէ յաջողում տանել իրաւունքով...

Հայր պ. Կարբելաշվիլին, որի պ. Մարրի դէմ կատարած յարձակումների մասին տեղեկութիւն տուինք «Մուրճի» անցեալ համարում, տպագրել է սորերս մի բաւական հաստ, հետաքրքրի գիրք «Վրաստանի եկեղեցու քահանայապետութիւնը» վերնագրով: Տէր-հայրը, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, սաստիկ ատոււ է հայագէտ պրոֆեսսորին՝ նրա քննադատական ոգու պատճառով: Պ. Ս. Գորգաձէն, որ մասնագէտորէն ծանօթ է վրաց եկեղեցու պատմութեան, ցաւ է յայտնում իր մի ընդարձակ գրախօսութեան մէջ («Իվերիա», № 153), որ հ. Կարբելաշվիլին ամենևին նեղութիւն չի կրել քննական բովի միջով անցկացնելու այն բազմաթիւ պատմական տեղեկութիւնները, որոնց մասին նա աջուձախ տալիս է շատ համարձակ ու իրան միայն հաճելի վճիռներ... Նա չէ յանձն առնում գոնէ իմաց տալու ընթերցողներին, որ այդ «անզգոյշ» ու սխալ վճիռները կազմում են իր սեփական կարծիքները կամ ներկայացնում հասարակութեան մի մասի ենթադրութիւնները: Բերելով տէր-հօր գործած այդպիսի սխալ վրձիռների մի ամբողջ շարք՝ պ. Գորգաձէն չէ կարողանում մասնաւոր զսպել իր զարմանքը՝ տեսնելով, թէ ինչպէս հ. Կարբելաշվիլին առանց այլևայլութեան սովորեցնում է իր ընթերցողներին, թէ Վրաստանում քրիստոնէութիւն տարածող կոյս Նունէն ծագումով կապագովկիացի վրացուհի էր... Այդ, ասում է պ. Գ., միայն մի խումբ մարդկանց ենթադրութիւնն է, մինչդեռ մասնագիտական գրականութեան մէջ աւելի տիրապետում են այն համոզումները, թէ Նունէն եղել է հայ կամ յոյն: Եւ ընդամենը սրանից երեք տարի առաջ իտալացի Ա. Պալմիրին մի ամբողջ գիրք է յօրինել այդ մասին, որի մէջ աշխատում է ապացուցանել, որ կոյս Նունէն հայ էր: Հարցը յամենայն դէպս վճռուած չէ համարւում, և պէտք է միայն ապշել հ. Կարբելաշվիլու գործ դրած «մեթոդի» վրայ: Եւ այդ ամենից յետոյ շատ հասկանալի է դառնում այն խոր ատելութիւնը, որ տածում է տէր-հայրը պ. Մարրի նման մի քննասէր, բարեխիղճ, գիտուն մարդու դէմ... Բայց չնայելով գրքի այդ խոշոր պակասութիւններին՝ նա, ինչպէս վկայում է պ. Գորգաձէն, արժանի է ուշադրութեան նախ այն պատճառով, որ դրանով հայր Կ. առաջին փորձն է անում տալու համայն վրաստանի կաթո-

զիկոմների ու հովուապետների պատմութիւնը, և երկրորդ՝ գրքի յօրինողը մեծ ջանք է գործ դրել քաղելու հին ձեռագրերից բազմաթիւ հետաքրքիր ու կարևոր տեղեկութիւններ:

Բերլինի համալսարանի բեկտոր պ. Հարնակի մի մասնաւոր նամակից «Իվերիան» (№ 112) քաղում է իր ընթերցողների համար հետևեալ կտորը. «Վրաց ձեռագիր աղբիւրներին, որքան պարզուել է վերջերս, տրուում է այժմ գիտութեան մէջ նոյնքան մեծ նշանակութիւն, որքան տրուում էր մինչև օրս ասորական գրականութեան մնացորդներին. ուստի այսուհետև յատուկ ուշադրութիւն կը դարձնուի վրաց կուլտուրայի, նրանց լեզուի և մինչև մեզ հասած գրական թանկագին զանձերի ուսումնասիրութեան վրայ»: Գերմանական գիտնականի տուած այդ աւետումը մեծ ոգևորութիւն է պատճառել վրաց լրագրին, և նա գրում է այդ առիթով այսպէս. «Իժբազդարար մինչև այժմ տպագրուած է միայն մի աննշան մասը մեր հին գրականութեան մնացորդներից: Երբ մեր բոլոր ձեռագիրները տպուեն, այն ժամանակ գիտնականները կը զարմանան մեր անցեալի հոյակապութեան վրայ: Քանի որ այդպիսի մի նպաստաւոր միտք է առաջացել գիտնականների շրջանում, պէտք է հաւատացած լինենք, որ բախտը մեզ էլ կը ժպտի, և մօտիկ ապագայում արևմտեան Եւրոպայի մայրաքաղաքներում կը հիմնուեն վարդ լեզուի ամբիոններ: Պէտք է մեր հասարակութիւնն էլ աշխատէ իր կողմից նպաստելու այդ մեծ գործի զլուխ գալուն»:

Ոմն Սասօէբաձէ գտել է, ինչպէս ինքը հազորդում է «Իվերիայում» (№ 124), Գորու մի ազնուականի տոհմական գրադարանում մի կարևոր ձեռագիր երգերի ժողովածու: Երգարանի յօրինողն է Ասլան Սուրգաղուլին, որ հռչակուած է եղել 19-դ դարի առաջին կիսում իբրև երգիչ (աշուղ), թառածող ու բանաստեղծ: Պ. Սասօէբաձէի հաւաքած տեղեկութիւններին նայելով, Սուրգաղուլու պապ Հուսէյնը բորչալուցի թուրք է եղել և էրէկլէ Բ. թագաւորի օրով քրիստոնէութիւն է ընդունել: Երգարանը պարունակում է իր մէջ 327 երգ, որոնցից միայն մի մասը (21 հատ) գրել է ինքը աշուղը, իսկ մնացածները պատկանում են 75 այլևայլ անձանց: Ոտանաւորների ահագին մեծամասնութիւնը կորած էր համարուում մինչև օրս վրաց գրականութեան համար: Բերուած

հեղինակները մէջ մենք տեսնում ենք մի խումբ հայեր, ինչպէս են, օրինակ, Սայաթ-Նովան, Ղ. Բեհբուժեանը, Շամիրխանեանը, Ի. Աքիմեանը, Գ. Ղորղանեանը, միքանի թումանովներ և միքանի ուրիշներ, որ կրում են նոյնպէս հայկական ծանօթ ազգանուններ: Առաջ բերելով այդ շատ կողմից հետաքրքիր երգերի ցուցակը՝ յօդուածագիրն ասում է, որ նրանց մէջ «չափազանց լաւ է մանաւանդ մի կծու ոտանաւոր, որ գրել է Դաւիթ արքայորդին (Վրացի) հայերի դէմ»: Պարոնը չափազանց ոգևորուած է իր գիւտով և աղաչում է իր հայրենակիցներին, որ շտապեն երգարանի այժմեան տէր Ի. Սուլխանովից ձեռք բերելու ձեռագիրը և տպագրութեան յանձնելու: Նա խնդրում է նոյնպէս, որ յիշեալ խումբի անդամները մասին տեղեկութիւններ ունեցողները շտապեն յայտնելու վրաց գործողներին, քանի որ ժամանակը չէ անցել և «քանի որ նրան (աշուղին) իրան սեփականացընելը դեռևս չէ մտածել մեր հարևան մի ազգ (հայերը), որ շատ հմուտ է այդպիսի գործերում»... Մենք էլ մեր կողմից կը խնդրէինք վրացիներին, որ այդ խեղճ Սասօէրածէի աղաչանքը շուտով կատարէին, ապա թէ ոչ՝ նա կարող է անհամբերութիւնից ճաբել... Բայց չլինի՞ թէ այդտեղ մի բան կայ, որ այդքան գովաւորել է նրան. պէտք է մի փոքր մտածել!..

S. ՓԻՐՈՒՄԵԱՆ

## ՔՆՆԵՎԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԵԽՕՍՈՒԹԻՒՆ

Դրանու Մէգրեյի՝ «Ա.Ամեղ գոհ», վրաց. թարգմանեց Ղ. Կ. Թիֆլիզ, գինն է 8 կոպ.:

Վրացերէնից թարգմանուած երրորդ գրքոյկն է այս, որ մենք թերթեցինք հաճութեամբ: Մեր զգացած հաճոյքը այս փոքրիկ պատմուածքի գեղարուստական աչքի ընկնող արժանիքների համար չէ: Հեղինակն ինչպէս երևում է անփորձի մէկն է, որին պակասում է կարճ պատմուածքներին ուժղնութիւն ու թափ տուող բանաստեղծական թռիչքը: Այս պատմուածքը հետաքրքիր է զուտ հասարակական տեսակէտից. նա մի փոքր ծանօթութիւն է տալիս մեզ մեր դարաւոր հարեանների մասին, որոնց հետ ապրում ենք մի երկնքի տակ, բայց համարեա միշտ օտար: Կոծիան գիւղացի մի խեղճ հրիտասարդ է, որ աշխատանքի ազնուացնող առաքինութիւնն է ըմբռնել և օրուգիշեր դադար չունի իր պառաւ մօր հետ: Նա մշակում է իր փոքրիկ այգին, որ կարողանայ ապրուստը հայթհայթել. բայց ազնուական և կալուածատէր Զուրաբը աչք ունի հէնց այդ վտանգի ենթարկել, բանտ նստեցնել տալ և այգուն տիրանալ: Այդ այնքան էլ դժուար չէր, որովհետև Զուրաբին են լսում գիւղական ջոջերը, իշխանները, գրագիրը, դատաւորները, նա դրամ ունի և ազդեցութիւն, և Կոծիան կորչում է, առանց որ նրա աղաղակը մի մարդ լսի: Նա խեղճ է և անզօր, նա «անմեղ գոհն» է:

Այս վէպիկի ընթերցանութիւնը մեզ ասում է, որ վրացի ժողովուրդն էլ տառապում է նոյն չարիքից, ինչ որ մերը: Այստեղ էլ խեղճը, աշխատաւորը՝ շահագործուած, իրաւազուրկ է հարեան ուժեղների ձեռքից. նա «անմեղ գոհ» է, նա իր վաստակի, իր պատուի, իր կեանքի տէրը չէ, նա անզօր է պայքարի մէջ, կեանքում չի տեսել արդարութիւն և իրաւունք: Տարբերութիւնն այն է, որ մեզանում կեղեքիչը մի Սար-

գիտ կամ Մարտիրոս աղա է, իսկ վրացի գիւղում մի Զուրաբ կամ ազնուական X...շվիլի:

«Որտեղ տանձ—այնտեղ պոչ» . իւրաքանչիւր ժողովուրդ հէնց իր մէջ, իր ծոցումն է կրում սեփական կեանքը կրծող չարիքը, իր կողքին է բուն դրել հազար գլխանի հիգրան, որ խեղդում, պատառոտում է անմեղ գոհերին: Զարմանալի է, թէ ինչ տրամաբանութեամբ վրացի մի կարգ հրապարակախօսներ իրանց ժողովրդի դժբախտութիւնը փնտրում են բոլորովին հեռու, իրանց երկրից դուրս, իրանց այլացեղ հարեանների մէջ:

Դուռու Մէգրելին ինչպէս երևում է աւելի ճիշտ է ըմբռնել իր հայրենի իրականութիւնը, նրա Զուրաբը վրացի է, նոյնիսկ ազնուական: Անօգուտ է հողմաղացների վրայ տէգեր կոտրատել չարիքի դէմ կռուելու համար, պէտք է շրջանկատ լինել և մատը վէրքի վրայ դնել:

Պատմուածքի լեզուն բաւականին սահուն է և կարգացւում է հաճութեամբ:

Կ. ՀԱՐ.

Իլդէ Փրայակ՝ «Անիծուած վայրը», նովելա Կովկասի կեանքից. գերմ. քարգմ. Ա. Տէր-Պօղոսեան, Ս.-Պետերբուրգ, 1903:

Իլդէ Փրայան՝ այս տաղանդաւոր և համակրելի գերմանուհին արդէն մի շատ ծանօթ անուն է ոչ միայն իր հայրենիքում, այլև հարևան երկիրներում \*): Նրա վէպերը, որոնց մէջ շնորհալի հեղինակը կարողանում է դնել կանացի այնքան նուրբ զգացմունք և դիտողութիւն՝ միացած օրիգինալ և լուսաւոր իրենաների հետ, միշտ կարգացում են յափշտակութեամբ: «Անիծուած վայրը» պատմուածքը նրա վէպերի ամբողջ սերիայի մէջ առանձին տեղ է բռնում, որովհետև նիւթը վերցրուած է միանգամայն անծանօթ միջավայրից՝ յատկապէս հայ կեանքից: Այդ նիւթը չափազանց պարզ է. «Անիծուած վայրը»—Բագու է գնում ազայիշէնցի մի հայ երիտասարդ Տիգրան անունով, որ «փող աշխատի ուղարկի տուն. փողը հաւաքուի և յետոյ նա դառնայ Նարգիսի հետ նշանադրութեան հանդէսը կատարի»: Երիտասարդը սակայն իր նպատակին չի հասնում. նա դո՛ւ է գնում «անիծուած վայրում» գործող մեքենաներին, մա-

\*) Դեռ անցեալ տարի նրա մի վէպը՝ Յիւրիի ուսանողուհիների կեանքից, մեծ ազնուկ հանց ամբողջ ձվէյցարիայում:

հանում է վաղաժամ և թաղում այն աւաղների մէջ, որոնց լի-  
զում են բոցաշունչ հողմերը: Սա մէկն է այն պարզ, բայց  
ցնցող տրագեդիաներից, որոնց ծագումը գիւղումն է լինում,  
իսկ վախճանը «անիծուած վայրում»—Բագում:

Պատմուածքը գրուած է ուժեղ բանաստեղծական լեզուով.  
ամեն մի տողի մէջ երևում է բուռն, անկեղծ զգացմունք. զրա  
հետ միաժամանակ հիանալի կերպով է տարուած կեանք և  
էներգիաներ լափող «անիծուած վայրի» ու նահապետական,  
անմեղ գիւղի սուր հակադրութիւնը: Հեշտ վաստակի ծարա-  
ւով գիւղից քաղաք դիմող երիտասարդի միամտութիւնը այս-  
տեղ դարձել է ցնցող տրագեդիա, որ հերոսը չի գիտակցում  
մինչև գերեզման:

Տիկին Ֆրայան չափազանց շնորհալի գրող է, որ այսքա-  
նը մեզ զարմացնէր: Ինչ որ առանձնապէս ուշագրաւ է այս  
փոքրիկ պատմուածքի մէջ, դա այն խորին ծանօթութիւնն է  
հայ գիւղական կեանքի, մեր ժողովրդի նիստուկացի, աշ-  
խարհայեացքի, որ նա ցոյց է տալիս իւրաքանչիւր պարբերու-  
թեան մէջ: Թւում է, թէ գրողը տարիներ շարունակ ապրել է  
հայ գիւղում, խօսել է հայ կնոջ հետ, ծանօթացել է նրանց  
հոգու հետ. բայց իրօք նա մեր երկիրը բնաւ չի այցելել, իր  
տեղեկութիւնները քաղել է իր հայ ամուսնուց:

Նայեցէք, թէ նա ինչպէս է նկարագրում հայ երիտասար-  
դի հագուստը.

«Գառան մորթուց նոր սև գլխարկը ծածկում էր նրա ճա-  
կատը: Մայրը նրան զարդարել է վայելուչ կերպով. սե ար-  
խալուզը նոր արծաթէ ժապաւէն ունէր, որ ձգւում էր փող-  
պատի շուրջն ու առջևը: Կանաչ-կարմիր և կապոյտ գոյներով  
էին ներկուած սև վարտիկի ծայրերն ամփոփող նոր սոնապան-  
ները՝ դօլաղները: Նա նայում էր իր ոտների վրայ և ուրախ  
ժպտում: Նարգիսի (նշանածի) մայրը երէկ իրիկնապահին բե-  
րեց այս նոր, զարդարուն, դէպի վեր ծոած ծայրերով մուճակ-  
ները, այս նախշուն գուլպաները, որոնց մէջ սեղմուած էին իր  
ոտները: Միրականը ցանկացել էր իրեն բարի ճանապարհ մաղ-  
թել, ինքն այդ գգում է: Մայրը բուրդ է մանել, գոյնզգոյն  
թելերից խուրջին է գործել որդու համար, և՛ գործել է, և՛  
լացել. նշանածն էլ իր մօրից ծածուկ հաւաքած բրդից դուլ-  
պաներ է հիւսել և իր արցունքով ցօղիլ իր ընծան»:

Այնուհետև գեղեցիկ, պատկերաւոր ոճով նկարագրւում է  
հայ գիւղը՝ իր խղճուկ հողածածկ խրճիթներով, իր դէզերով,  
և ծուխը, որ պալան-պալան բարձրանում է երգիկներից, և  
դաշտերը և ծաղկազարդ բլուրները, ճանապարհները, խաղողի

այգիները: Եւ այս բոլորի մէջ աշխատաւոր հայ գիւղացին իր արտ ու արօտով, իր կալ ու կուտով, իր եզն ու գոմէշով, իր հօտով ու սրինգով: Ամբողջ մեր գիւղական աշխարհն է այս, որ տաղանդաւոր աիկնոջ գրչի տակից բարձրանում է հարաւի պայծառ շողերի և կապոյտ երկնքի տակ, մի գրաւիչ աշխարհ, ուր ժպիտը վախկոտ է և արցունքը ծածուկ: Ահա մի ուրիշ պատկեր մեր հայրենի իրականութիւնից.

«Նրա ետեւը մնաց բրնձի արտը, որտեղ նա վար է արել, նրա ետեւը՝ ուրախ կալատեղը, ուր նա ընկերների հետ այնքան յաճախ նստել է սահող կամի վրայ: Խոնարհած գլխով շրջան էր կատարում առջևից լծած եզը և կամտողը հեշտութեամբ, առանց ձեռները շարժելու, իր սեփական մարմնի ծանրութեամբ միայն, որ ճնշում է կամը փռուած հունձքի վրայ, լիքը հասկերից դուրս է պոկում հասած հատիկները: Նրա ետեւը մնաց բլրակը, ուր նա սպանել է փասիան, հնդկահաւ. նրա ետեւ՝ խիտ անտառը, ուր նա սատկացրել է գայլին, լուսանին ցած է գլորել, նրա ետը մնացին: Ամեն ինչ նրա ետեւը»:

Եւ նա թողնում է այս բոլորը ու գնում «անիծուած վայրը» փող վաստակելու: Մնացածը յայտնի է, գնում է և էլ չի վերադառնում, ինչպէս շատ ուրիշները: Գիւղը իր անխուսափելի հարկն է տալիս, էներգիայի և արեան հարկը այն զարհուրելի Մոլոխին, որի անունն է «գործարանական քաղաք»:

Կարդալով ծայրէիծայր այս գեղեցիկ պատմուածքը՝ մարդ երբէք չէր կարող կարծել, թէ օտար հեղինակի գործ է, եթէ չլինէր միանգամայն անհաճոյ վերջը, ուր հայ մայրը և առհասարակ մայրը սխալ է ըմբռնուած: Որդու զարհուրելի մահը սգալու, նրա գերեզմանը գրկելու համար քաղաք եկած վշտից կիսախելագար մայրը յանկարծ սաստիկ ուրախանում է, երբ նրան իբրև իր զաւակի արեան գին՝ հինգ հարիւր ընդլի են տալիս: Սա մի վերին աստիճանի ցաւալի և կոպիտ սխալ է: Աշխարհում ընդհանրապէս չկայ ոչինչ, որ կարողանայ մի մօր մոռացնել տալ զաւակի կորուստը. իսկ հայ մայրը, այն էլ գիւղացի մայրը իր այգիսի ծանր հարուածից յետոյ վշտի խորունկ անաւորութեամբ քար կը լացացնի, ուր մնաց թէ ցնծութեամբ ընդունի իր զաւակի արեան գինը: Այս սխալը կրկնակի ցաւալի է դառնում, քանի որ հեղինակը մի կին է և այն զգայուն սրտի տէր կին: Հաւանականաբար դա մի դիպուած է, որ նըրան այդ ձևով է հաղորդուած, և հեղինակը անհասկանալի պատճառով չի կամեցել հեռանալ կարծեցեալ իրողութիւնից:

«Անիծուած վայրը» այնուամենայնիւ կարգացում է յա-

փրշտակութեամբ, ափսոս որ թարգմանիչը չի կարողացել լեզուն հայացնել, պարզ է, որ նա բնագրին հետևել է ստրկօրէն: Օրինակ.

«Սոնարհած գլխով շրջան էր կատարում առջևից լծած եզը» կամ «դուրս է պոկում հասած հատիկները», դուրս հանել, դուրս քաշել կայ, բայց դուրս պոկել... «խոնուեցին իրար վրայ». «կարծես ձանձրացած դագաղի մէջ դրուած մնալուց», «գորգ գործելը և պտուղ ու ծաղիկ հասցնելով զբաղուելուն էլ կանանց աշխատանքն է արգէն». «ձեռքը թուլացած քաշ ընկաւ էլի». «փոքրիկ, ճանապարհը կորցրած երեխայի պէս»—փոխանակ՝ ճանապարհը կորցրած փոքրիկ երեխայի պէս. գրքոյկը ծայրէիծայր լի է այսպիսի անհարթ դարձուածքներով. կարգալու ժամանակ մարդ ասես քայլում է մի խորթութի, անծանօթ ճանապարհով: Նոյնքան՝ եթէ ոչ աւելի անյաշող է ոտանաւորների թարգմանութիւնը, նրանց մէջ բնագրի պօէզիան սպանուած է և մնացել է մի խղճուկ բան:

Այս արտաքին թերութիւններով հանդերձ հետաքրքիր է կարգալ օտար հեղինակի այս երկը, որ մեր իրականութիւնից վերցրած մի յաջողուած պատկեր է:

Կ. ՀԱՐ.

Գ. Անանեակ՝ «Առաւմուտ», պիէս (բ) 5 գործողութեամբ, 1904 թ. Թիֆլիզ, գ. 40 կ.:

«Պիէս»... Ահա մի գրուածք, որի հեղինակն անգամ չէ կարողացել որոշել, թէ դա դրամատիկական երկերի որ տեսակին է պատկանում, — դրամա է, թէ՞ կոմեդիա, տրագեդիա է, թէ՞ ֆարս... և անուանել է ուղակի «պիէս»... Ինչ ուզում ես՝ հասկացիր... Իսկ այդ հինգ «մեծ-մեծ» գործողութիւնը!.. Հանդիսատեսն ամբողջ կէս ժամ խաղամիջոցին (անտրակտ) պէտք է սպասէ, մինչև որ դեկորասիօնները փոխուեն, ապա գնայ նստէ իր տեղը՝ լսելու երրորդ գործողութիւնն ընդամենը... երկու կամ երեք բուլետ, և յետոյ կէս ժամ նորից հանգստանայ... ձանձրանալով, որպէսզի նորից գայ լսելու չորրորդ գործողութիւնը նոյնպէս երկու կամ երեք բուլետ... այդպէս և՛ հինգերորդ գործողութիւնը: Ո՛րպիսի ծանօթութիւն դրամատիկական երկի տեխնիկայի! ծաղր չէ՞ սա:

Ո՛չ տեսիլներ, ո՛չ գլուխներ. այդպիսով օցնարիուսը կարող է գլուխը կորցնել ուղղակի, և բեմը կը դառնայ շիւափաւ:—Բեմի անունը տալիս ենք այն պատճառով, որ «հեղինակն» աւելորդ չէ համարել զրքի երեսին նախագգուշացնել,

թէ իր «գոհարի» ներկայացման իրաւունքը վերապահուած է»...

Բայց ի՞նչ է ուզում ասել հեղինակն իր այդ «պիէս»-ով:—Ահա մի հարց, որին պատասխանել չէ կարող համոզուած ենք՝ և ոչ մի ընթերցող. ո՞վ գիտէ՝ ի՞նչ. մանաւանդ որ գիրքը ծայրէիծայր ամենայն ուշադրութեամբ իսկ կարդալուց յետոյ տեսնում ես, որ յիշողութեանդ մէջ ոչինչ չէ մնացել... որովհետեւ բովանդակութիւն անգամ չունի... Ի՞նչ կեանքից է՝ չգիտես. միանգամայն անծանօթ խօսքեր, վարմունքներ, սեթևեթութիւններ, անծանօթ... յիմարութիւններ...

Միւթէ գտնելու համար յետ դառնանք՝ նորից թերթելու գիրքը:—Մի վաճառական (իբր թէ հայ...)—Աւետ Աւետիչ—կանչում է իր տունը մի քանի ուրիշ վաճառականներին՝ ինչ-որ աւտարական դաշնագիր ստորագրելու. նրանք էլ ստորագրում են լուռուսուս, առանց նոյնիսկ ստուգելու, թէ ինչ կայ գրուած պայմանաթղթում (բացառութեամբ մէկ սկեպտիկի, որը փորձ է անում ծանօթանալ գրածի էութեանը, բայց միայն «նայում է» թղթին և ստորագրում՝ առանց մի-երկու տող իսկ կարդալու). մէկը նոյնիսկ չէ էլ իմանում, թէ որտեղ պէտք է ստորագրէ:

Երկրորդ գործողութեան մէջ այդ առիթով քէֆ են սարքում,—էլ դուզուկ, էլ զուռնա, կատարեալ «Օրթաճալի քէֆ»-ի էֆֆեկաններ... Եւրոպական վալ՝սն ու մազուրկան էլ միւս կողմից են այդ «դաւուլ-զուռնա»-յի անվերջ «տուշ»-երի հետ մըրցում... Այդտեղ երևան է գալիս մի Դոն-Քիշոտ—Լևոն Մինայիչ անունով, որպէսզի a là Չացկիյ երկու «կրակէ» խօսք ասէ. «Այո, այժմ հայ կանանցը (մենք ենք ընդգծում) անպատոււմ, այլանդակում են յանուն ազատութեան...» և հեռանայ՝ Չացկիյի պէս ասելով. «Кареты мнѣ, кареты!»—«աւելի լաւ է հեռանալ, ընդ միշտ հեռանալ այստեղից. երևի ինձ վիճակուած է թափառել շարունակ (իմա՛ն այն պատճառով, որպէսզի հայերի պէս հրէշաւոր մարդիկ չտեսնէ...), բայց աւելի լաւ է թափառական կեանքը քան մենակութիւնը. հաշտուել այս մարզկանց հետ անկարելի է»։—Միթէ!..

Երրորդ գործողութիւնը... Բայց անհնարին է որևէ ուրիշ կերպով արտայայտել, բացի հեղինակի ընտրած ձևից. իսկ այդ ձեռնտու չէ թղթի էկոնոմիայի տեսակէտից...

Չորրորդ գործողութեան մէջ՝ վերը յիշած վաճառականի—Աւետ Աւետիչի կիներն զբօսնում է փաստաբան Ալէքսէյ Ստեփանիչի հետ, որը նկատելով Աւետ Աւետիչը՝ ուշաթափուում է... ներեցէք, միայն «ընկնում է աթոռի վրայ»... Ճմարտութիւնը

լրիւ ասած լինելու համար յայտնենք, որ այդ գործողութեան մէջ Աւետ Աւետիչի երկու աղջիկները—Մանեան—16 տարեկան և Օլեան—15 տարեկան—վիճում են իրար հետ, թէ իրանցից որի՞ վրայ է սիրահարուած այն ինչ աշակերտը, և տեղնուտեղն ստուգելու նպատակով հարցնում են հէնց այդ աշակերտից, ու բանից դուրս է գալիս, որ երկուան էլ զժգոհ լինելու առիթ չունեն...

Հինգերորդ գործողութեան մէջ Աւետ Աւետիչի կինն ամուսնուն թողնում՝ փախչում է, մեզ միանգամայն անտեղեակ թողնելով իր այդ քայլի շարժառիթից, զրդումից... Աւետ Աւետիչի աղջիկն էլ միւս կողմից է դուրս գալիս և դանդաղում հօրը, թէ ինքը կորած է. ընկերներն էլ միւս կողմից են գալիս՝ Աւետ Աւետիչից իրանց փողը պահանջում (?!), որովհետեւ իրանց գործը ցանկալի արդիւնքը չէր տուել... այդպէս՝ ընկերներից մինը պարտաւորուած է հասուցանել ամենքին իրանց մնասը՝ չգիտենք՝ որ առևտրական օրէնքի հիման վրայ: Կեանքն այդպէս չէ, այդքան էլ միամիտ ձևով չալանթալան» չէ կատարում վաճառային աշխարհում, այն էլ «փորձուած» վաճառականների մէջ. այդպիսի բան ուրիշ շրջաններում, խեղճերի աշխարհում միայն կարող է տեղի ունենալ...

Իսկ գրուածքի լեզուն... կատարեալ բարեկոնեան խառնակութիւն՝

Թիֆլիզի բարբառն աղաւաղուած է սոսկալի կերպով:  
Կէտադրութիւնն... անտանելի է:

Աւելորդ կը լինէր պարոն «հեղինակ»-ին որևէ խորհուրդ տալը, եթէ միայն նա չվախեցնէր ընթերցողներին. յուսանք, որ պարոնը կը կարողանայ այնքան համեստութիւն ունենալ, որ չի իրագործիլ իր սպառնալիքը—«շուտով լոյս կը տեսնի «Հացի խնդիր» դրամա 1 գործ. 4 պատկերով», և այդ դրաման էլ իր այս արդէն «լոյս տեսած» «Կորածներ» «պիէսի» և զբրանց գրելու վրայ կորցրած ժամանակի հետ միասին կը համարէ «կորած» հայ գրականութեան համար և կը բաւականանայ այդ բառով:

Ա.ՐՇ. Ա.Թ.Ա.

Մ. Գօրկիյ՝ «Մակար Չուգրա», թարգմ. Մ. Բարիսն, Տիֆլիզ, 1903, գ. 10 կ.:

«Մակար Չուգրա»-ն այնպիսի գեղարուեստական գրութեանքներից է, որոնց արժանիքը երևան հանելու համար անհրաժեշտ է շատ գեղեցիկ թարգմանել, այլապէս նրանք կը

կորցնեն իրանց գեղարուեստականութիւնը: Սակայն Գոր'կիյի գրչի այդ բանաստեղծական արտագրութիւնը ոչ միայն գեղեցիկ չէ թարգմանուել, այլ ուղղակի մի անորմալ դանգի անմիտ ցնդարանութեան տպաւորութիւն է թողնում: Հետեւեալ ցիտատները բաւական են, որպէսզի ապացուցանեն մեր ասածը.—

„Такъ ты ходишь? Это хорошо! Ты главную долю выбралъ себѣ, соколъ. Такъ и надо: ходи и смотри; насмотрился, лягъ и умирай—вотъ и все!“

«Ուրեմն դու զնձում ես: Այդ լաւ է: Դու լաւ բաժին ես ընտրել քեզ համար, բարեկամ. այդպէս էլ պէտք է. զննա և նայիր. կշտայար նայելուց, պառկիր ու մեռիր—այդ է բոլորը» (եր. 4):

Ինչպէս տեսնում էք, բառերը ճիշտ են թարգմանուած, բայց միթէ՞ այդ հայերէն է. որ հայը կարող է հասկանալ. երևակայեցէք, որ Չուգրան ուղղում է ասել, թէ կեանքն ազատ թափառելու, աշխարհ տեսնելու մէջ է. միթէ՞ վերը բերած հատուածն այդպէս է հասկացում:

„Ты и не знаешь такихъ краевъ, гдѣ я бывалъ. Такъ нужно жить: иди, иди—и все тутъ.“

«Դու չգիտես էլ այնպիսի տեղեր, ուր ես եղել եմ: Այնպէս պէտք է ապրել. գնա, գնա,—անա այդ է բոլորը» (եր. 6):

„А онъ себѣ жилъ, и ужъ коли ему понравился конь...“

«Իսկ նա ապրում էր իր համար, և եթէ արդէն նրան դուր քար մի ձի...» (եր. 9):

„А я съ Кошутомъ воевалъ“ (այսինքն՝ կոշուտի դէմ եմ կռուել):

«Իսկ ես Կոշուտի հետ միասին եմ կռուել» (եր. 12):

„А она все (բանի գնում՝ այնքան) ближе—իսկ նա միշտ մտնում էր, изъ темноты вырѣзался—մթութեան միջից պարզ երևաց. усы легли на плечи—բիսերն իջել են ուսերի վրայ. стоитъ весь... въ огнѣ костра“ (այսինքն՝ ողջ հասակովը մէկ կանգնած է խարոյկի լուսում)—կանգնած է ողջ, խարոյկի կրակում (այդպէս հօ խեղճը կ'այրուի):

«Անիծուած լինեմ ես, եթէ չէի սիրում նրան արդէն ինչպէս ինձ աւելի առաջ, քան նա ինձ մի խօսք ասաց կամ պարզապէս նկատեց, որ ես էլ նոյնպէս ապրում եմ աշխարհիս երեսին»:

Հերթք է այսքանն էլ. վերջ չունի. սա նշանակում է հայերէն բառերով գրել ոսերէն և ցոյց է տալիս, թէ թարգմանիչը ոչ միայն կարգին հայերէն չգիտէ, այլև նա չէ ըմբռնում ուսական ոճաբանութեան ոգին, նրան մանաւանդ միանգամայն անձանօթ է ուս ժողովրդի լեզուն:

ԱՐՇ. ԱԹԱ.

#### ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ Պ. Լ. ԻՆ

«Մուրճ»-ի մայիսի գրքոյկում տպուեց իմ թողուցիկ մատենախօսական ակնարկը Գրիգոր Արծրունու աշխատութիւնների առաջին հատորի մասին, ուրիշ խօսքով Արծրունու այն յօդուածների մասին, որ նա գրել էր «Մշակ»-ի հրատարակութիւնից առաջ, մեծ մասամբ՝ ուսանող ժամանակը:

Պ. Լ. հարկաւոր համարեց քննադատել այդ թողուցիկ ակնարկը «Մշակ»-ի երեք բանասիրական բռնող յօդուածով («Մուրճի քննադատին» — №№ 116, 117 և 119):

Ես կը պատասխանեմ այդ յօդուածի միմիայն էական կէտերին:

Ես գրել էի ի միջի այլոց հետևեալը. «Իր սկզբնական յօդուածներում Գրիգոր Արծրունին ցոյց է տալիս նաև իր անտեղեկութիւնը հայոց պատմութիւնից»:

Իբրև փաստ բերել էի հետևեալ հանգամանքը.

Սօսելով մի Փրանսիացի հեղինակի մասին, որի կարծիքով հայերը մինչև տասնիններորդ դարը այբուբեն չունէին, Արծրունին գրում էր 1870 թուին. «Ուրեմն հեղինակը չգիտէ, թէ մեր այժմեան օրագիրներում գործածուած գրերը նոյն են, որոնք IV դարում մեր Գրիգոր Լուսաւորիչն էր գործածում իր աստուածաբանական գրուածքներում: Չարմացած կարգացինք զրբի մէջ, թէ հեղինակը Կ. Պօլսի մէջ է ապրում...»

Իերելով Արծրունու յօդուածի այդ տողերը՝ ես աւելացրել էի. «Նոյնքան, գուցէ և աւելի զարմանալի էր, իհարկէ, այն, որ Գրիգոր Արծրունին, հայ լինելով, չգիտէր, որ «այժմեան օրագիրներում գործածուող գրերի» գիւտը եղել է Գրիգոր Լուսաւորչից շատ յետոյ»:

Այդ սոսիթով պ. Լ. բացազանչում է. «Մենք էլ, ճիշտն»

ասած, դարձանում ենք, որ պ. Յովհաննիսեանը հայ լինելով, չգիտէ մի ուրիշ բան,—այն ժամանակը, երբ գրուած են Արծրունու այդ խօսքերը», և աշխատում է ապացուցանել, թէ Արծրունին վերոյիշեալ տողերը գրելիս «ասել է այն, ինչ սովորել է» Մխիթարեաններից:

Պ. Յովհաննիսեանին, անշուշտ, յայտնի է,—գրում է պ. Լ.,—որ մինչև այժմ մենք ունենք հայոց հին գրականութեան մի հատ պատմութիւն միայն, հ. Զարբանալեանի գրած պատմութիւնը: Այդտեղ ասուած է, թէ Գրիգոր Լուսաւորիչը իր «Յաճախապատումը» գրել է հայերէն լեզուով»: Այնուհետև պ. Լ. այն փաստն է բերում, որ առաջ շատերը կարծում էին, թէ Մեսրոպից առաջ հայերէն տառեր կային:

Շատ լաւ. սակայն ի՞նչ է ապացուցանում այդ: Ոչինչ: Առաջ կարծում էին, այժմ էլ կարող են կարծել, որ Մեսրոպից առաջ հայերէն տառեր կային, բայց այդպէս կարծողները միշտ այն էլ են ասել, որ հայերը այդ տառերից չէին օգտուում, այլ գրում էին օտար տառերով (յունարէն, ասորերէն, զէնդերէն, կամ պարսկերէն), այնպէս որ նախամեսրոպեան տառերի գաղտնիքն իմանալու համար պէտք էր գլուխ ջարդել, ճանապարհորդութիւններ անել, դիմել Միջագետք՝ Գանիէլ եպիսկոպոսին: Ի՞նչ տառեր էին դրանք, այդ մասին էլ ոչոք ոչինչ հաստատ բան չի իմացել, և ով որ խօսել է այդ տառերի մասին, ենթադրութեան սահմանից չի անցել: Մինչդեռ Գրիգոր Արծրունին պնդում է, որ Գրիգոր Լուսաւորիչը գրել է իր գրքերը «մեր այժմեան օրագիրներում գործածուող գրերով» և զարմանում է, որ Պոլսում ապրող մի օտարազգի չգիտէ այդ բանը:

Արծրունին այնքան միամիտ չէր, որ պահանջէր մի օտարազգուց, թէկուզ Պոլսում ապրող օտարազգուց, իմանալ, թէ ի՞նչ ենթադրութիւններ կային նախամեսրոպեան տառերի մասին: Օտարազգուց միմիայն տարրական, հանրայայտնի գիտելիքներ կարելի է պահանջել, և Գրիգոր Արծրունու գրածի տոնից ամեն մի չնախապաշարուած ընթերցողի համար պարզ է, որ նա այդպիսի տարրական, հանրայայտնի գիտելիք էր համարում այն, որ Գրիգոր Լուսաւորիչն իր աստուածաբանական գրքերը գրել է այն գրերով, որոնք այժմ մեր օրագիրներում են գործածուում: Մինչդեռ այդպիսի ենթադրութիւն անգամ անող չի եղել: Վերցրէք այն ժամանակուայ դասագրքերը, հայոց պատմութիւնները և կը տեսնէք, որ Արծրունու ասածը Գրիգոր Լուսաւորչի մասին իր սեփական «անտեղեակութեան» արդիւնքն է, և եթէ պ. Լ. հայր Զարբանալեանի հեղինակութեամբն է ուզում ծածկել Արծրունու ակներև կո-

պիտ սխալը, այդ առաջանում է նրանից, որ պ. Լ. շատ է ուզում, որ Արծրունին նոյնիսկ ուսանող ժամանակ սխալուած չլինի, և զլիսաւորապէս նրանից, որ պ. Լ. անուշազիր կերպով է կարգացել «հայոց հին գրականութեան մի հատիկ պատմութիւնը, հ. Զարբանալեանի գրած պատմութիւնը»:

Իր այդ պատմութեան առաջին հատորում խօսելով Գրիգոր Լուսաւորչին վերագրուող *Յաճախապատումի մասին*, հայր Զարբանալեան գրում է ի միջի այլոց հետեւեալը.

«Խնդիր է թէ ինչ լեզուով շարադրած է այս զիրքս Լուսաւորիչ: Ոմանք կը համարին թէ հայերէն շարադրած ըլլայ, այլք յունարէն. և պատճառ կը բերեն թէ այն ժամանակ հայերէն զիր չըլլալուն՝ հարկ էր որ յունարէն գրէր: —Սակայն մեզի առջի կարծիքը հաւանական կ'երևնայ. որովհետև Հայոց համար էր այս աշխատութիւնը՝ ընտկանաբար պէտք էր որ Լուսաւորիչ այն լեզուով գրէր՝ որ իր սպղին մեծագոյն մասին հասկնալի ըլլար. ապա թէ ոչ՝ զբեթէ ընդունայն աշխատութիւն և անպատճառ յոգնիլ կ'ըլլար: Հայերէն գիր չըլլալուն՝ անշուշտ ինքն ալ իր ժամանակակիցի ալ յոյն տաւերը գործածած են, հայկական քառեր սրտայրեղու հաւնար» (եր. 97—98):

Փաստը ինքնըստինքեան չափից վեր պերճախօս է, և պ. Լ.-ի սխալը ակներև, ուստի աւելորդ եմ համարում այլևս ծանրութեանալ բանակոտի այդ կէտի վրայ. սակայն չեմ կարող չյիշատակել, որ իր վերոյիշեալ անհիմն պատճառաբանութիւնը պ. Լ. սկսել է այնպիսի խօսքերով, որոնք կարող էին Արծրունու յիշատակը յարգողներին տրամադրել ինձ դէմ:

«Մեղուականները շատ էին սիրում կրկնել,—գրում է պ. Լ.,—թէ Արծրունին հասկացողութիւն չունի իր սպղի անցեալի մասին, ծանօթ չէ հայոց պատմութեան: Պ. Տ. Յովհաննիսեանն էլ իր յօդուածի մէջ հարկաւոր է համարել առանձին խնամքով ընդգծել մի հանգամանք, որ, նրա (այսինքն՝ իմ) կարծիքով, ցոյց է տալիս նրա (այսինքն՝ Արծրունու) «անտեղեկութիւնը հայոց պատմութիւնից»:

«Խնամքով ընդգծել» խօսքերը և «մեղուականները» այստեղ մէջ են բերուած իբրև *argumentum ad hominem*: Ոնկնդիրների ու ընթերցողների հոգեբանութեան վրայ հիմնուած այդ ապացոյցները իրանց որոշ տեղն ունեն վիճաբանութեան ու բանակոտի մէջ, բայց այս դէպքում և իմ վերաբերմամբ, կարծում եմ, պ. Լ. զուր է դիմել այդ միջոցին:

Արծրունու սխալը մատնացոյց անելով՝ ևս չեմ ղեկավարուել որևէ կողմնակի շարժառիթով, այլ լոկ հետեւել եմ լատինական յայտնի առածին՝ «*Amicus Plato, sed magis amica veritas*» («բարեկամս է Պլատոնը, բայց աւելի ևս բարեկամ է ինձ ճշմարտութիւնը»), որ ոչ մի գրողի համար այնքան պարտադիր չէ, որքան քննադատի համար: Ոչ մի գրող իրաւունք չունի, իհարկէ, մեղանշել ճշմարտութեան դէմ և սեղ սպիտակի տեղ անցկացնել, բայց ոչ մի գրողից այն աստիճան չի պա-

հանջուում ասել ամբողջ նշմարտութիւնը, որքան քննադատից: Եթէ քննադատն իր մէջ չի գգում մի հրամայական պահանջ ասելու ամբողջ ճշմարտութիւնը, եթէ հրա մտքի համար սովորոյթ չէ դարձել ամեն բանում, ամեն տեղ և ամենից առաջ փնտրել ճշմարտութիւնը և միմիայն ճշմարտութիւնը, աւելի լաւ է այդպիսի քննադատը ջարդի իր գրելը և ուրիշ բանով դբաղուի:

Անցնում եմ պ. Լ.-ի յօդուածի երկրորդ էական կէտին:

«Երբ խօսք է լինում,—գրում է պ. Լ.,—հիմնական, նշանաւոր հարցի, սկզբունքի նշանակութիւն ունեցող հանգամանքի մասին, այնտեղ բառեր չը պէտք է գործածել, այլ փաստեր. Գ. Տ. Յովհաննիսեան իր յօդուածի մէջ մի երկու անգամ անուանում է Արծրունու ազատամտութիւնը ծայրայեղութիւններ, միակողմանիութիւն պարունակող: Մենք աշտգրութիւն զարձրինք այդ բանի վրա այն պատճառով. որ պ. Տ. Յովհաննիսեանը առաջին անգամը չէ, որ այդ բառերը շարում է լիբերալիզմի կողքին. նոյն «Մուրճի» էջերից, եթէ չենք սր-խալում, մի երկու անգամ էլ նա անուանել է լիբերալիզմը և՛ ծայրայեղութիւն, և՛ միակողմանիութիւն, և՛ անհեռատեղութիւն: Բառեր են դրանք, որոնք բառեր էլ մնացել են և մնում են: Այսքան ժամանակ պ. Յովհաննիսեանը նեղութիւն չը կրեց փաստերով ապացուցանելու «Մուրճի» ընթերցողներին լիբերալիզմի այդ յատկութիւնները: Մինչդեռ շատ և շատ հարկուտը էր դա: Երբ ցոյց էք տալիս ցտցատական, անհամակրելի երևոյթը, դուք պիտի ցոյց տար և այն, ինչ, ձեր կարծիքով, փրկութիւն է մարդկային ազգի համար: Ծայրայեղութիւնը վատ է,—ապացուցէք, դրէք մարդկանց առջև այն չափաւորութիւնը, որից մեղրի ու կաթի աղբիւրներ են բղխում: Մարդկութիւնը իր համար երջանկութիւն է սրտում. լիբերալիզմը կարծել է թէ ինքը ցոյց կը տայ այդ երջանկութիւնը: Գ. Յովհաննիսեան գիտէ, որ լիբերալիզմը չափազանցութիւն է, ծայրայեղութիւն է. նա, ուրեմն, դիտէ և իսկական երջանկութեան աղբիւր չափաւորութիւնն ու միջինը, բայց չէ ցոյց տալիս: Բայց սրբան հեշտ էք մի այդպիսի բան անել: Մի ամբողջ հատուք էք դրված նրա առջև. կարող էք մի բանի նախադասութիւն արտագրել նրանից, կարող էք գտնէ զրքի մի քանի երևանները ցոյց տալ, որպէս զի ընթերցողը իմանայ, թէ պ. Յովհաննիսեանի համար ինչն է ծայրայեղութիւնը: Եւ դուք է եկել մի շատ ցաւալի դրութիւն: Գրիգոր Արծրունու անթիւ հակառակորդները շարունակ այդ բառերն էին գործածում—չափազանցութիւն, ծայրայեղութիւն: Բայց չեն կարողացել համոզել, որ ճիշտ են գործադրում այդ բառերը: Մի՞թէ պ. Յովհաննիսեանը միայն կրկնում է հին, մաշված բառերը: Չենք ուզում հուսատալ»:

Պ. Լ.-ի յօդուածի այդ մասը ամբողջապէս հիւսուած է թիւրիմացութիւններէց:

Լիբերալիզմի մասին, ճիշտ է, ես շատ անգամ եմ խօսել, բայց երբէք լիբերալիզմը ծայրայեղութիւն, ծայրայեղ կուսակցութիւն չեմ անուանել: Ես միշտ քննադատել եմ լիբերալիզմը աւելի արմատական աշխարհահայեացքի տեսակէտից, և ապշած մնացի՛ կարգալով պ. Լ.-ի վերևը բերուած տողերը: Լիբերալիզմի մասին ես բաւական մանրամասն խօսել եմ «Մուրճ»-ում (1902 թ., № 12) Գրիգոր Արծրունու մահուան

տասնամեակի առիթով, և հէնց միմիայն այդ յօդուածը բաւական է ապացուցանելու համար, որ ես քննադատել եմ լիբերալիզմը ոչ թէ չափաւորականների, այլ արմատականների տեսակէտից և որ ես միմիայն բառերով չեմ բաւականացել, այլ ցոյց եմ տուել լիբերալիզմի էութիւնը և պակասութիւնները:

Այդ յօդուածում ես շեշտել եմ, որ «լիբերալիզմը բուրժուազիայի ծնունդն է», որ նա կատարել է իր պատմական գերը, և գրել եմ սե տառերով սպիտակ թղթի վրայ հետեւեալը.

«Լիբերալիզմի տեսակէտից՝ աշխարհիս բոլոր շարիքները յառաջ են եկել ապատութեան պակասութիւնից: Տուէք մարդկանց ապտութիւն, թոյլ տուէք, որ անշտառ ապրի և գործի ազատօրէն, և երկիրը գրախտ կը դառնայ... Ժողովուրդը միացաւ բուրժուազիայի հետ և ապատութիւն ձեռք բերեց: Բայց ժողովրդի ատապաճանքները շատ քիչ թիվեացան: Բուրժուազիան առիւծի բաժին վերցրեց ապատութեան տուած բարիքներէն... Պարզ էր, որ միմիայն ապատութիւնը անկարող է դարձանել բոլոր շարիքները: Պէտք էր մի ուրիշ բան բացի ապատութիւնից: Եւ սեա այդ ուրիշ բանը յիստորիկ շարժումն էր: Եւ լիբերալիզմը եւրոպայում կորցրեց իր հրատարակ, իսկ շտաբի աշքում՝ նոյն-իսկ իր սմբողջ վարկը: Այժմ եւրոպայում յիստորիկ ժողովրդական կուսակցութիւնների ամենաբոլոր ստորեւ են կազմուած»:

Նոյն յօդուածում ես մասնացոյց էի արել և այն հանգամանքը, որ լիբերալներ չեն Տոլստոյ, Միխայլովսկի, Բեբել և Ժորէս (ընդհակառակը, լիբերալիզմի թունդ հակառակորդներ են, — կ'աւելայցնեմ այժմ), որ համակրելի ու տաղանդաւոր լիբերալներ այժմ Եւրոպայում կարելի է գտնել իբրև հաղուագիւտ բացատրութիւններ (ինչպէս նաև մեզնում, օրինակ պ. Լ., — կ'աւելայցնեմ այժմ), և որ Արծրունու թաղման մասնակցող հայ ինտելլիգենցիայի մէջ «կային ոչ միայն գուտ լիբերալներ, այլև արմատական հայեացքների ներկայացուցիչներ, որոնք շատ և շատ հարցերում համաձայն չիներով Արծրունուն՝ գգում էին սակայն, որ դեռ իրանց և լիբերալների ճանապարհները գուգահեռաբար են գնում, և մեծ յարգանքով էին վերաբերում Արծրունուն, իբրև անկեղծ, շիտակ ու դեմոկրատ լիբերալի և տաղանդաւոր մարդու»:

Այդ է եղել միշտ իմ տեսակէտը Արծրունու գործունէութեան մասին, և, կարծում եմ, այդ գաղտնիք չէր ոչոքի, մանաւանդ պ. Լ.-ի համար. իսկ եթէ այժմ նա ինձ չափաւորութեան ասպետի դերում է ներկայացնում իր յօդուածում, այդ լոկ թիւրիմացութեան արգիւնք է: Ես գրել եմ, որ Արծրունու հայեացքները երբեմն հասնում էին պարագոքս չափեր ընդունող ծայրայեղութեան: Պ. Լ.-ին թուացել է, թէ դրանով ես ուզում եմ ասել, որ լիբերալիզմը ծայրայեղութիւն է:

Ներողութիւն եմ խնդրում ընթերցողից, որ այդ առիթով ստիպուած եմ տարրական բաներ բացատրել:

Հայեացքների ծայրայեղութիւնը ծայրայեղ կուսակցութիւնների մենաշնորհը չէ: Ծայրայեղ կուսակցութիւն անուանում են այն կուսակցութիւնները, որոնք ծայրայեղ հայեացքներ ունեն սոցիալ-քաղաքական որոշ էական հարցերի մասին, բայց կարելի է շատ չափաւոր հայեացքներ ունենալ այդ հարցերի մասին \*) և ծայրայեղութեան հասնել ուրիշ հարցերում: Աւելին կ'ասեմ. կարելի է ծայրայեղութեան հասցնել յետադիմական հայեացքներ:

«Արտաքոյ կաթոլիկ եկեղեցւոյ չիք փրկութիւն»,—սա ծայրայեղ հայեացք է, բայց կղերականների հայեացք:

Անդլիացի փիլիսոփա Հորբսի հիմնական հայեացքը, թէ անհատը պէտք է լինի պետական մեխանիզմի ստրուկ մասնիկը,— ծայրայեղ բոնապետական հայեացք է:

Ծայրայեղ հայեացք է դրա հակառակ անիշխանական հայեացքը, բայց ծիծաղելի կը լինի չափաւորութեան ասպետ համարել ամեն մէկին, որ ծայրայեղութիւն է համարում անիշխանականների այդ հայեացքը, թէն անիշխանականութիւնը անկասկած ծայրայեղ կուսակցութիւն է:

Աշխատանքի բաժանման ծայրայեղութեան հասցրած ըսկզբունքը պահպանողական սկզբունք է:

Տոլստոյ ծայրայեղութեան է հասցնում «չարին չհակառակելու» սկզբունքը, որ այնքան անախորժ է ծայրայեղ կուսակցութիւններին:

Շովինիստները, որոնք առհասարակ պահպանողականներ են լինում, ծայրայեղութեան են հասցնում ազգասիրութեան սկզբունքը:

Հէնց սոցիալիստների անկասկած ծայրայեղ կուսակցութիւնն է ամենից շատ յարձակում լիբերալների վրայ այն բանի համար, որ նրանք՝ իրանց laissez faire, laissez passer սկզբունքով՝ ծայրայեղութեան են հասցնում անհատի ազատութեան սկզբունքը անտեսական հարցերում: Կան լիբերալներ, որոնք այն աստիճան ծայրայեղութեան են հասնում այդ հարցերում, որ դէմ են բանուորներին հովանաւորող օրէնքներին, գործարանական օրէնսդրութեան կայլն կայլն: Եւ իսկապէս ա-

\*) Օրինակ, Արծրունին իր նախաձեռնական յօդուածներում ծայրայեղ ուտիլիտարիստ է ու ընտրիստ և միևնույն ժամանակ հակալեղափոխական է. «Գերմանիան,— գրում է նա 1870 թուին, ուրեմն «Մշակի» հրատարակութիւնից երկու տարի առաջ,— նշանակում է ազատութիւն, իսկ Փրանսիան միայն յեղափոխութիւն, ուրեմն Փրանսիան պաշտպանում է արդեան մի զաղափարը, իսկ Փրանսիան դժբախտապէս հետևում է մի հնացած զաղափարին» (330 էր.):

սած, հէնց այդպիսիներն են pur sang լիբերալները, իսկական լիբերալիզմի ուղղադաւան աւանդապահները:

Վերջապէս կային և կան ծայրայեղ նատուրալիստներ, սիմվոլիստներ, ուտիլիտարիստներ, դարվինիստներ ևայլն ևայլն, որոնք միևնոյն ժամանակ վերին աստիճանի չափաւոր են սոցիալ-քաղաքական հարցերում:

Հէնց այն ժամանակ, երբ Արծրունին մի կողմից հերքում էր Ռաֆայէլի նկարների նշանակութիւնը և միւս կողմից յայտարարում, թէ յեղափոխութիւնը հնացած (ուրիշ խօսքով ասած՝ յետադիմական) դադափար է, կային թունդ յեղափոխականներ, որոնք սքանչանում էին այդ նկարներից, և եթէ այդպիսի մի յեղափոխական քննադատելով Արծրունու յօդուածը՝ գրէր, թէ նա Ռաֆայէլի նկարների մասին խօսելիս ծայրայեղութեան է հասցնում օգտի տեսակէտը, տարօրինակ կը լինէր, եթէ մէկը վեր կենար և ճգնէր արացուցանել, թէ այդ յեղափոխականը պաշտպանում է «չափաւորութիւնը, որից մեղրի ու կաթի աղբիւրներ են բղխում»:

Սակայն ինչո՞ւ եմ այդքան հետուները գնում: Ինքը պ. Լ., իմ դէմ գրած յօդուածից մի քիչ յետոյ, իր «նոր բանբերներ մեր զրականութեան մէջ» յօդուածում, վիճելով պ. Ադոնցի հետ և խօսելով հայկական տառերի բեֆորմի մասին՝ գրում է. «Մեր բեֆորմատորները անհետադական են, կիսատ-պոստ գործ են կատարում, փաթաթված են նախապաշարմունքների մէջ, այնպէս որ նրանց արածը միակողմանիութեամբ, ծայրայեղութեամբ իսկապէս ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ կոյր ատելութիւն այս կամ այն տառի դէմ» («Մշակ», № 133):

Ուրեմն, հէնց իր, պ. Լ.-ի կարծիքով, կարելի է «կիսատ-պոստ գործ» անել, «նախապաշարմունքների մէջ փաթաթված» լինել, «կոյր ատելութիւն» տածել դէպի այս կամ այն տառը և ծայրայեղութեան հասնել:

Այդպէս՝ մի էական թիւրիմացութեան զո՞հ դառնալուց յետոյ պ. Լ. խճճւում է և՛ ուրիշ թիւրիմացութիւնների մէջ:

Նա պնդում է, թէ ես խօսելով Արծրունու հայեացքների ծայրայեղութեան մասին՝ փաստեր, օրինակներ չեմ բերել, մինչդեռ այդ փաստերը սև տառերով տպուած են «Մուրճ»-ի սպիտակ էջերի վրայ. օրինակ, Արծրունու բացասական վերաբերմունքը դէպի Ռաֆայէլի նկարները, կամ այն, որ նա Պօլ դը Կոկլին մարդկութեան ամենատերեւի գրողների շարքն էր դասում և ցաւ էր յայտնում, որ հայերիս մէջ չկան Պօլ դը Կոկլի նման գրողներ:

Սակայն պ. Լ. պնդում է, թէ Արծրունին այդպիսի բան

չի ասել Պօլ դը Կոկի նկատմամբ, և իմ գրածը հերքելու համար բերում է Արծրունու խօսքերը, որոնք իսկևիսկ ապացուցանում են իմ գրածը և միևնոյն ժամանակ ցոյց են տալիս,— թող ների ինձ պ. Լ. այս խօսքերը,— թէ որ աստիճանի կուրութեան կարող է հասնել մի գրող այն ընկերներին, երբ նա Պլատոնին գերադասում է ճշմարտութիւնից և ուզում է իր ուսուցչի երիտասարդական գրուածքները մեկնել այնպէս, ինչպէս աստուածաբանը մեկնում է Աստուածաշունչը:

Ահա Արծրունու խօսքերը.

«Եւրոպայում այն գրողներից, որոնք ներկայացրին իրանց ազգի կեանքը իր պակասութիւններով և անբարոյականութեամբ, ամենաերևելի սոքա են իմ կարծիքով. Անգլիայում Դիկէնս, Ռուսաստանում Գոգօլ և Պուշկին, Ֆրանսիայում Պօլ դը Կօկ և Դիւմա որդի»:

«Եւրոպայի հասարակութեան մէջ պակասութիւններ կան, անբարոյականութիւն կայ,— բայց և կան մարդիկ, որոնք այդ պակասութիւնները յայտնում են, անբարոյականութեան երեւոյթները քննում են: Մեր ժողովրդի մէջ, հայերի մէջ միթէ անբարոյականութիւն չը կայ,— բայց կան արդեօք Պօլ դը Կօկի կամ Դիւմաների նման գրողներ, որոնք ներկայացնէին հասարակութեան կեանք, պակասութիւններ յայտնէին...»

Ի նկատի ունենալով Արծրունու այդ տողերը՝ ես գրել էի. «Թէ որ աստիճանի միակողմանիութեան և ծայրայեղութեան էր հասնում Արծրունին իր սկզբնական յօդուածներում, երևում է նաև նրանից, որ Պօլ դը Կոկին մարդկութեան ամենաերևելի գրողների շարքն է դասում և ցաւ է յայտնում, որ հայերիս մէջ չկան Պօլ դը Կոկի նման գրողներ»:

Պ. Լ. իր յօդուածում պնդում է, որ Արծրունին այդ չէ ասել, իսկ ինչ որ ասել է, ճիշտ է ասել:

Բերելով Արծրունու յօդուածից մի ընդարձակ ցիտատ,— որի մէջ նաև վերև բերուած երկու հատուածները,— պ. Լ. բացազանչում է.

«Պարզ հասկանալի է, որ Արծրունին ի նկատի ունի պակասութիւններ նկարագրող վէպի հասարակական նշանակութիւնը»:

Այդ, իհարկէ, պարզ հասկանալի է, բայց իմ ասածս էլ հէնց այն էր, որ պաշտպանելով պակասութիւններ նկարագրող վէպի հասարակական նշանակութիւնը, ուրեմն մի ճիշտ հայեացք, Արծրունին հասնում էր միակողմանիութեան և ծայրայեղութեան և, կ'աւելացնեմ, այն աստիճան ծայրայեղութեան,

որ պնդում էր, թէ Պօլ դը Կոկի գրուածքները պէտք է տալ կարդալու նոյնիսկ հրեխաններին (եր. 100):

Երեխաների մասին պ. Լ. իր յօդուածում ոչինչ չի ասում, բայց ընդհանրապէս ճիշտ է համարում Արծրունու կարծիքը, օրինակ է բերում Ջոլ'այի «Նանան» և բացազանչում է.

«Ասացէք խնդրեմ, մե՞ծ է տարբերութիւնը «Խաթաբալայի», «Պէպօի» մէջ պատկերացրած անբարոյականութեան և Ջօլայի, Դիււայի, Պօլ դը Կօկի նկարագրած անբարոյականութիւնների մէջ: Թէ՞ պ. Յովհաննիսեանի համար վատը, ծածկելի միայն սեռական անբարոյականութիւնն է»:

Որ սեռական անբարոյականութիւնը գրականութեան մէջ ցուցադրելու բան չէ, — ես համարում եմ ախտօմա: Որ թղենու տերևներն անհրաժեշտ են գրականութեան համար, այդ էլ իմ կարծիքով անվիճելի է: Բայց գլխաւորն այդ չէ: Բանն «անբարոյականութիւնների տարբերութեան» մէջ չէ, այլ նրա մէջ, թէ ինչպէս է վերաբերուած գեղարուեստագէտը դէպի անբարոյականութիւնը: Միևնոյն, թէկուզ սեռական, անբարոյականութիւնը կարելի է նկարագրել a և լà Պօլ դը Կոկ և a և լà Շչեզրին, a և լà Նանա և a և լà Դոստօսկիյ, և մի դէպքում կ'ունենանք տեղ-տեղ պոռնկագրութեան մօտեցող գրուածք, իսկ միւս դէպքում հասարակական պակասութիւնները և անբարոյականութիւնը խարաղանոց գրականութիւն: Նմանապէս, կանացի մերկ մարմինը կարելի է նկարել այնպէս, ինչպէս սիրում են այժմ նկարել (օրինակ՝ բաց նամակների վրայ), և այնպէս, ինչպէս նկարում էին վերածնութեան շրջանի նկարիչները, կարելի է բանդակել a և լà Նանա և այնպէս, ինչպէս քանդակում էին յոյն արձանագործները, և մի դէպքում դուք կ'ունենաք մարդու մէջ անասունը զարթեցնող միջոց, իսկ միւս դէպքում մի իսկական գեղարուեստական պործ:

Պ. Լ. ուզում էր իմ հայեացքը իմանալ: Ահաւաստիկ ասացի, իսկ եթէ այդ քիչ է, կը մասնաւորեմ:

Պօլ դը Կոկի մասին ես նոյն հայեացքն ունեմ, ինչ-որ, ի միջի այլոց, ունէր Պիսարելը, որի կարծիքն էր ուզում հերքել Արծրունին իր «Երկուսից սրն է լաւը» յօդուածում, այսինքն, որ Պօլ դը Կոկի գրուածքների ընթերցանութիւնը «գատարկապորտութեան պտուղ է» և «կրկնապատիկ անբարոյական և այլանդակ երեխաների համար»:

Ինչ վերաբերում է Ջոլ'այի «Նանային», ես գերազասում եմ շատ շատերի, ի միջի այլոց և՛ Շչեզրինի — ու Միխայլովսկու հետ (որոնց ոչոք կեղծ ամօթխած չի կարծիլ) համարել այդ վէպը այնպիսի գրուածքներից մէկը, որոնք օրօրում են մեր-

կացրած իրանը ամեն բանից վեր դասող կուշտ բուրժուայի անտարբեր հանգիստը \*), քան պ. Լ.-ի հետ բարոյական հաւասարութեան նշան դնել նրա և «Պէպօի» մէջ: Երեխաների ձեռքը իհարկէ չի կարելի տալ «Նանան» իսկ եթէ կարգին մարդկանցից շատերը կարդում են «Նանան», այդ նրանից է, որ այդ գրուածքի մէջ էլ, բացի պոռնկագրութեան մօտեցող տարրից, կայ իսկական գեղարուեստ, որ երբէք անբարոյական լինել չի կարող: Նոյնիսկ Սողոմ-Փոստը կարելի է խնայել, եթէ տաան արդար մարդ լինի մէջը, բայց ուրիշ բան է ներդրամտութեամբ վերաբերուել, ուրիշ բան՝ օրինակելի համարել, յանձնարարել:

Արծրունին կարող էր ներողամիտ վերաբերուել դէպի Պօլ դը Կոկի գրուածքները, կարող էր խիստ համարել Պիսարելի կարծիքը Պօլ դը Կոկի գրուածքների մասին, բայց համարել Պօլ դը Կոկին, Դիւմա-որդու հետ, Ֆրանսիական հասարակութեան պակասութիւնները դատափետող ամենաերևելի գրող, — դա անկասկած չափազանցութիւն էր ու ծայրայեղութիւն:

Իբրև Արծրունու ուախիտարիստ և բէալիտ հայեացքների պարագոքսի չափեր ընդունող ծայրայեղութեան ապացոյց ես բերել էի նաև Արծրունու հայեացքը հայոց լեզուի մասին:

«Ինչպէս Պիսարելը, — գրել էի ես, — Արծրունին էլ շատ պրիմիտիւ վաղափար ունի օգտի մասին: Որ հայը պէտք է հայերէն իմանայ և սովորի, դա աքսիօմա չէ Արծրունու համար, և նրանք, որոնք այդ բանը ինքնըստինքեան հասկանալի և անհրաժեշտ են համարում, դատարկ իդէալիստներ են նրա աչքում: Լեզուն միջոց է և ոչ թէ նպատակ, — բացազանչում է Արծրունին, մոռանալով, որ լեզուն ազգի մարմնացած հոգին է»:

Պ. Լ. աշխատում է այդ ասածս էլ հերքել՝ դարձեալ ցիտատներ բերելով Արծրունուց, դարձեալ ընկնելով Աստուածաշունչը մեկնող աստուածաբանի դրութեան մէջ:

\*) „Натурализмъ пришелся по плечу современному французскому обществу съ его „безъидейною сытостью“ (выраженіе Шедрина). Хожденіе вокругъ обнаженнаго торса доставляетъ пикантное развлеченіе, а если есть возможность сказать, что я, дескать, голой правды ищю, когда смо трю на голую женщину, такъ чего-же лучше?.. Этнхъ сытыхъ, спокойныхъ, самодовольныхъ людей не тяготитъ непристроенность нравственнаго чувства. Но кромѣ сытыхъ есть еще пресыщенныя, чья взношенная душа, если и способна ощущать боль внутренней разодранности, то находить въ ней особаго рода тонкое сладострастіе, смакуеть его“.

Ահա պ. Լ.-ի բերած վերջին ցիտատը.

«Ես,—գրում է Արծրունին,—հայկական լեզուի վրայ չեմ նայում որպէս նպատակի վրա, բայց ինչպէս միջոցի վրա: Ոչ թէ կարգանք, որովհետև «հայեր ենք», այլ կարգանք հայերէն, որովհետև հայերէն առաւել լաւ ենք հասկանում քան թէ ուրիշ լեզու»:

Ահա և պ. Լ.-ի եզրակացութիւնը. «Այստեղ՝ ուրեմն, Արծրունին մեծ նշանակութիւն չէ տալիս ոճին, յօդուածի լեզուին: Բայց որ մայրենի լեզուի նշանակութիւնը հասկանում է, այդ երևում է նրանից, որ այդ լեզուի մասին ասում է, թէ մենք նրան աւելի լաւ ենք հասկանում քան թէ մի ուրիշ լեզու: Մայրենի լեզուի ամենագլխաւոր ոյժն էլ հէնց այդ է: Եւ նըկատեցէք, Արծրունին գիտէ, որ հայերը իրանց հասարակական և ընտանեկան յարաբերութիւնների մէջ օտար լեզու են գործածում (օրինակ, վրացերէն), բայց և այնպէս գիտէ, որ այնուամենայնիւ, հայերէն պէտք է գրել և խօսել, որովհետև հայերէնը, իբրև մայրենի լեզու, աւելի հասկանալի է»:

Սակայն նոյն Արծրունին գրում էր. «Վրաստանում հայերը վրացերէն առաւել լաւ են խօսում քան հայերէն» (երևս 121), և անշուշտ գիտէր, որ Վրաստանում հայերի մեծամասնութիւնը ոչ միայն հայերէն աւելի լաւ չի հասկանում, քան վրացերէն, այլ և ամենեին չի հասկանում, ինչպէս շատ վատ էին հասկանում կամ չէին հասկանում հայերէն լեզուն հայկական հին գաղթականութիւնների մնացորդներից շատերը և բազմաթիւ արխատօկրատ կամ իրանց այդպէս համարող հայ ընտանիքներ:

Այն իդէալիստների կարծիքով, որոնց վրայ յարձակում էր Արծրունին, այդ հայերը պէտք է սովորէին հայերէն լեզուն, որովհետև հայ էին, իսկ ի՞նչ պէտք է անէին նրանք՝ հետևելով Արծրունու այն ժամանակ քարոզած ուտիլիտարիստ սկզբունքին:

Ով որ քարոզում է, թէ հայը հայերէն պէտք է կարգայ միմիայն այն պատճառով, որ հայերէն աւելի լաւ է հասկանում, քան մի ուրիշ լեզու, պէտք է ոչ-հայախօս հային հայախօս դարձնելու դէմ լինի: Եւ հէնց այդ էր, որ ես ծայրայեղութիւն էի համարում, թէև իհարկէ գիտէի, որ Արծրունու յօդուածների նպատակը բարի է, այն է՝ համոզել հայերին, որ հայերէնագիտութիւնը օգտով գործ զնեն և չպահեն իբրև թաղանուած քանքար:

Այն էլ պէտք է ասել, որ սովորական ընթերցողը նոյնիսկ չէր կարող հեշտութեամբ որոշել Արծրունու այդ բարի նպա-

տակը այն պարագովաների տակից, որոնցով լիքն են նրա «Գրականութիւն չը կայ» և «Իգէալիստներ» յօդուածները, և բոլորովին հասկանալի է այն հանգամանքը, որ «Հայկական աշխարհի» խմբագրութիւնը 8—9 ամիս պահել էր, չէր տպել «Գրականութիւն չը կայ» յօդուածը՝ անհնար համարելով իր վերայ վերցնել այդ յօդուածի պատասխանատուութիւնը, թէև դանում էր, որ այդ յօդուածում կան շատ «խելացի և միանգամայն օգտուէտ մտքեր»:

Անցնում եմ պ. Լ.-ի յօդուածի վերջին էական կէտին:

Խօսելով Արծրունու նախամշակական յօդուածների ձևի մասին՝ ես ասել էի, որ այդ յօդուածները մեծ մասամբ զուրկ են գրական արժանաւորութիւններից, իսկ տեղ-տեղ նոյնիսկ աշակերտական շարագրութիւնների տպաւորութիւն են գործում:

Պ. Լ.-ի կարծիքով, ես չեմ կարողացել ըմբռնել Արծրունու յօդուածների արժանաւորութիւնները և մոռացել եմ, որ այն ժամանակ, երբ նա գրում էր այդ յօդուածները, հայերս մշակուած, հարուստ լեզու չունէինք:

Երբ մի լեզու դեռ մշակուած ու հարուստ չէ, այդ լեզուով գրուածքները չեն կարող իհարկէ ունենալ շատ կանոնաւոր, փայլուն ու դիզիցիկ ոճ, բայց լեզուի անմշակ ու աղքատ գրութիւնը չի կարող խանգարել, որ գրուածքը որոշ ոճ ունենայ, ոճ, որ ինքը մարդն է, ոճ, որ գրողի անհատականութեան, ինքնուրոյնութեան արտայայտութիւնն է: Կարելի է գրել անմշակ ու աղքատ լեզուով և այնուամենայնիւ գործածել զօրեղ, արասյայտիչ, հակիրճ, ցայտուն կամ պատկերաւոր դարձուածքներ, «թեւաւոր» խօսքեր, սրամիտ, ինքնուրոյն, գունագեղ համեմատութիւններ:

Այդպիսի արժանաւորութիւններ ևս համարեա չեմ զրտնում Արծրունու նախամշակական յօդուածներում, որոնք, պընդում եմ, տեղ-տեղ աշակերտական շարագրութեան տպաւորութիւն են գործում:

Անշուտ կամ ես չեմ կարողանում հասկանալ Արծրունու երիտասարդական յօդուածների գրական արժանաւորութիւնները, կամ պ. Լ. սխալ հասկացողութիւն ունի «գրական արժանաւորութիւն» ասած բանի մասին:

Այդ էլ թող ուրիշները վճռեն:

S. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՆՈՐ ՄՏԱՅՈՒԱԾ ԳՐԻՆԵՐ

- 1) Ս. Մ. Ծոցրիկեան՝ «Ճարածուած ախարը», Բագու, 1904, գ. 3 կ.:
- 2) Բժ.-ուս. Գ. Մաղաքեան՝ «Բժշկականութիւն և հասարակութիւն», Թիֆլիզ, 1904, գ. 25 կ.:
- 3) Ֆ. Հոֆման՝ «Աշխատաւորի սրղիքը», ռուս. թարգմ. Մ. Շամբորեանց, Վաղարշապատ, 1904, գ. 25 կ.:
- 4) «Փարոսի վրայ», փոխադր. Յ. Սուրխաթեան, արատուպ. «Մշակ»-ից, 1904, գ. 5 կ.:
- 5) Յ. Սուրխաթեան՝ «Մեքոն աղային վերջաբանութիւնը», Ս.-Պետերբուրգ, 1904, գ. 20 կ.:
- 6) Շիլլեր՝ «Օտար փունջեր», ա. հիւսք, թարգմ. Մ. վ. Մաքսուդեանց, Դավրէժ, 1904, գ. 20 կ.:
- 7) Յ. Սօլօվեան՝ «Մեռած ծովում», Մոսկուա, 1902, գ. 1 ը.:
- 8) Գ. Անանեան՝ «Կորածներ», Թիֆլիզ, 1904, գ. 40 կ.:
- 9) Ա. վ. Դլոճեան՝ «Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն և քաղաքացիական պսակ», Ալէքսանդրապօլ, 1904, գ. 75 կ.:
- 10) Մ. Գորկիյ՝ «Դանկօի սիրտը», թարգմ. Գ. Անանեան, Թիֆլիս, 1904, գ. 3 կ.:
- 11) «Каталогъ газетъ и журналовъ на 1904, г.», издание конторы объявлений «Герольдъ», С.-Петербургъ.
- 12) Բժ. Ա. Բուզուզեան՝ «Գոյութեան կռիւ», Ս.-Պետերբուրգ, 1904, գ. 20 կ.:
- 13) Յ. Մանանդեան՝ «Դաւիթ անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ», Վաղարշապատ, 1904, գ. 25 կ.:
- 14) Խ. Բաբայեան՝ «Բանաստեղծութիւններ», ա. հատոր, Թիֆլիս, 1904, գ. 50 կ.:
- 15) Մկրտիչ Պէշիկթաշեանի «Բերթուածներն ու ճառերը», ծանօթագրութիւններով, հրատ. Ա. Չոպանեան, Փարիզ, 1904, գ. 4 ֆր.:
- 16) Ս. Բաբիեան՝ «Բանաստեղծութիւններ», Ս.-Պետերբուրգ, 1904, գ. 20 կ.:
- 17) Լէօ՝ «Կարմիր գլակը», Բագու, 1904, գ. 3 կ.:
- 18) Գէօթէ՝ «Հերման և Դորոթէա», թարգմ. Յ. Պետրոսեան, Վաղարշապատ, 1904, գ. 40 կ.:

## ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

ԲԻՕԼՈԳԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ \*)

### V

*Բակտերիոլոգիական հետազոտութիւններ.*

Բակտերիաները ամենապարզ սպորատու բոյսեր են: Բակտերիաները բազմա-  
մանում են արագ կերպով: Ինքնակամ ծաղում: Ջրերում գտնուող բակտերիա-  
ները: Օդի բակտերիաները:

XIX դարի ամենափայլուն գործերից մէկն էլ բակտե-  
րիոլոգիան է: Թէև XVIII դարում էլ գիտնականները գաղա-  
փար ունէին բակտերիաների գոյութեան մասին, սակայն այդ  
խնդրի վերաբերեալ տեղեկութիւնները շատ թերի էին այն  
ժամանակ: Միմիայն անցեալ դարում հնարաւոր եղաւ հիմնա-  
ւորապէս ուսումնասիրել այդ տարօրինակ օրգանիզմները շը-  
նորհիւ կատարելագործուած խոշորացոյցների: Առհասարակ  
պէտք է ասել, որ բակտերիոլոգիայի զարգացումը սերտ կեր-  
պով կապուած է եղել խոշորացոյցների կատարելագործ-  
ման հետ. որովհետև բակտերիաները չափազանց մանր են,  
ուստի նրանց կարելի է ուսումնասիրել միայն խոշորացոյցի  
օգնութեամբ, և որքան նուրբ լինի խոշորացոյցը, այնքան ա-  
ւելի մանրամասնութիւններ հնարաւոր կը լինի ուսումնասի-  
րել:

Բակտերիոլոգիայի հետ կապուած են մի շարք երևելի  
գիտնականների անունները. իտալացի Սպալանցանին, ֆրան-  
սիացի Պաստեօրը, գերմանացի Կոխը ու անգլիացի Լիստերը  
բակտերիոլոգիայի հիմքը դրին. մանաւանդ նշանաւոր են  
Պաստեօրը ու Կոխը, որոնք բացի բազմաթիւ գիւտերից նաև  
մշակեցին նոր գիտութեան մեթոդները: Դրանք ունեցան ան-

\*) Տես «Մուրճ», № 4.

Թիւ աշակերտներ, որոնք զարմանալի եռանդով շարունակեցին իրանց հանճարեղ ուսուցիչների սկսած գործը: Այդպիսի տենդային աշխատանքի հետեանքը այն եղաւ, որ մի դարի ընթացքում բակտերիոլոգիան սկիզբն առաւ և միևնոյն ժամանակ զարմանալի զարգացման հասաւ: Ով ցանկանում է իմանալ, թէ որքան զօրեղ են ու նուրբ դրական գիտութիւնների այժմեան մեթոդները, նա անպայման պիտի ուսումնասիրի բակտերիոլոգիան:

Սակայն տեսնենք ի՞նչպիսի էակներ են բակտերիաները: Առաջ դրանց համարում էին կենդանիներ, յետոյ երբ ծանօթացան նրանց բազմութեան հետ, եկան այն եզրակացութեան, որ բակտերիաները բոյսիկներ են և պատկանում են սպորատու բոյսերի շարքին: Յայտնի է, որ սպորատու բոյսերը ամենապարզ օրգանիզմներն են ամբողջ բուսական թագաւորութեան մէջ: Մինչդեռ բազմաթիւ սպորատու բոյսերի նոյնիսկ անունները յայտնի չեն հասարակութեանը, բակտերիաները ընդհակառակը աւելի բախտաւոր են, նրանց անունը հանրածանօթ է: Այս հանգամանքը պէտք է բացատրել ոչ թէ նրանով, որ բակտերիաները հետաքրքրական են բուսաբանական տեսակէտից, այլ նրանով, որ գործնական կեանքում անթիւ երևոյթներ կախումն ունին բակտերիաներից. որ կողմը նայէք, բակտերիաների գործունէութեանը կը հանդիպէք: Բակտերիաները մտնում են ջրերի մէջ, լողում են օդի մէջ, վխտում են հողի մէջ. նրանք թթուեցնում են կաթը, փչացնում են մեր գինիները, քայքայում են կենդանիների և բոյսերի մարմինները. նրանք երբեմն երկրագործի ամինամտերիմ բարեկամն են դառնում, օգնելով նրան գիւղատնտեսական բազմաթիւ պարապմունքների ժամանակ. բակտերիաները մտնում են մեր թռքերի մէջ, ազատ անցողարձ են անում մեր մարսողական խողովակի մէջ, մտնում են արեան անօթների մէջ, երբեմն վարակում են մեզ և առաջացնում տարափոխիկ հիւանդութիւններ: Սակայն ես յիշեցի բակտերիաների գործունէութեան ամենաչընչին մասը. մարդիկ, կենդանիները և բոյսերը ամեն վայրկեան ենթարկւում են այդ զարմանալի էակների ազդեցութեանը: Այդպիսով բակտերիաները անադին դեր են կատարում բնութեան մէջ. այդ դերը յաճախ օգտակար է մարդկանց համար, յաճախ էլ վերին աստիճանի վնասակար:

Այս է պատճառը, որ իւրաքանչիւրը մեզնից հետաքրքրւում է բակտերիաների կեանքով, և ի՞նչպէս չհետաքրքրուենք, քանի որ մեր կեանքը կապուած է նրանց կեանքի հետ:

Իւրաքանչիւր բախտերիայի մարմինը բաղկացած է մի հատ քջիջից. նա բազմանում է այնպէս, ինչպէս բազմանում են սո-  
վորաբար միւս կենդանական կամ բուսական բջիջները. այ-  
սինքն զարգացած բախտերիան ուղղակի բաժանւում է երկու  
հաւասար մասի, որոնցից ամեն մէկը մեծանալով՝ նորից բա-  
ժանւում է երկու մասի կայն: Բախտերիաները բազմանում  
են զարմանալի արագութեամբ. իւրաքանչիւր «նորածին» բախ-  
տերիա ըստ մեծի մասին արդէն մի ժամուայ ընթացքում  
հասնում է կատարեալ զարգացման և մէկ-երկու ժամից յետոյ  
առաջացնում է նոր սերունդ...

Մէկ գիտնական—Ֆրանկլանտը—ուսումնասիրելով այս  
խնդիրը՝ ստացաւ հետեւել թուերը. մէկ խորանարդ սանտիմետր  
ջրի մէջ նա գտաւ սկզբում 1073 հատ բախտերիաներ, ո-  
րոնք մի քանի ժամուայ ընթացքում բազմացած հետեւել քա-  
նակութեամբ.

Սկզբում . . .	— 1073 հատ բախտերիա
6 ժամից յետոյ	— 6028 » »
24 » »	— 7262 » »
48 » »	— 48100 » »

Այսինքն 1073 հատ բախտերիան 2 օրուայ ընթացքում  
քաղմանալով դարձաւ 48100 հատ ! Մէկ ուրիշ փորձից երևում  
է, որ մէկ խորանարդ սանտիմետր ջրի մէջ սկզբում կար ըն-  
գամենը եօթը բախտերիա, իսկ երեք օրից յետոյ իւրաքանչիւր  
խորանարդ սանտիմետրի մէջ կային արդէն 495000 հատ բախ-  
տերիաներ: Տեղեկութիւններ կան, որ բարեպատեն հանգա-  
մանքներում բախտերիաները աւելի ևս արագ կարող են բազ-  
մանալ:

Պարզ բան է, որ այս տարօրինակ էակների դէմ կոխ  
ձեղելը չափազանց դժուար կը լինի, որովհետեւ նրանք կարճ  
ժամանակամիջոցում ընդունակ են առաջ բերելու նոր սերունդ-  
ների անթիւ լեգէժներ:

Աննպաստ պայմաններում բախտերիաները ուրիշ կերպ  
են բազմանում. նրանց մարմնի մէջ առաջանում են «սպորներ»,  
որոնք մօտաւորապէս համապատասխան են բոյսերի սերմերին:  
Ուրեմն սպորները պարունակում են իրանց մէջ բախտերիանե-  
րի սաղմեր. սպորները շրջապատուած են լինում շատ հաստ  
թաղանթներով, որոնք պաշտպանում են սաղմերին փրասակար  
գործօնների ազդեցութիւնից:

Բախտերիաների սպորները չափազանց մանր և թեթեւ լի-  
նելով՝ քամին նրանց բարձրացնում է օդի մէջ, և այդպիսով  
բախտերիաների սաղմերը ընդունակ են լողալ օդի մէջ օրերով

և շաբաթներով. օգից սաղմերը ընկնում են ջրի ու հողի մէջ և զարգանում են: Նոյնպէս օգից բակտերիաների սպորները փոշուհետ ընկնում են կաթնի, գինու մէջ և զարգանալով թթուեցրնում նրանց:

Անցեալ դարի առաջին կիսում գիտնականները ուրիշ կարծիք ունէին այդ խնդրի վերաբերմամբ. նրանք կարծում էին, թէ բակտերիաները առաջանում են ոչ թէ սաղմերից, այլ զանազան փթող նիւթերից, օրինակ եթէ միսն սկսի փթել, նըրանից կը գոյանան բակտերիաներ, թէկուզ վերջինների սաղմերն էլ չլինեն մսի մէջ: Այդպէս էին դատում առաջուայ գիտնականները: Այդ կարծիքի հիման վրայ՝ զանազան նիւթեր եթէ նոյնիսկ կատարելապէս ազատ լինեն բակտերիաների սաղմերից, այնուամենայնիւ կարճ ժամանակից յետոյ կ'արտադրեն բակտերիաներ: Այդտեսակ ծագմանը նոյնիսկ առանձին անուն էին տուել, ինքնակամ ծագում (самопроизвольное зарождение) էին անուանում բակտերիաների ծագումը զանազան փթող նիւթերից: Քանի որ տիրում էր այդպիսի հայեացք, գիտական բակտերիօլոգիան չէր կարող գոյութիւն ունենալ:

Ինքնակամ ծագման վարդապետութիւնը պաշտպանողներից մէկը—Պուշէն 1858 թուին յայտնեց Ֆրանսիական ձեմարանին, որ իրան յաջողուել է բակտերիաներ առաջացնել զանազան փթող նիւթերից առանց սաղմերի, և որ ինքը կարող է այդ ապացուցանել փորձերով: Պուշէի դէմ դուրս եկաւ Պաստօրը, որը պնդում էր, թէ Պուշէի ելրակացութիւնը միանգամայն սխալ է: Որովհետև վիճաբանուած խնդիրը չափազանց նշանաւոր էր, ուստի Ֆրանսիական Գիտութեանց ձեմարանը 1860 թուականին մրցանակ նշանակեց այդ խնդիրը պարզելու համար: Ձեմարանը պահանջում էր գիտնականներից «նոր լոյս ձեռքել ինքնակամ ծագման խնդրի վրայ լաւ կազմակերպուած փորձերի օգնութեամբ»: Չորս տարուց յետոյ Պաստօրը ներկայացրեց Գիտութեանց ձեմարանին իր հիանալի հետազօտութիւնների նկարագիրը. զարմանալի նուրբ ու ճիշտ փորձերով Պաստօրը բազմաթիւ հանդիսականների առաջ ապացուցեց, որ բակտերիաները չեն կարող ծագել փթող նիւթերից, դր բակտերիաները առաջանում են սաղմերից, ինչպէս և միւս բոյսերն ու կենդանիները. Պաստօրը փորձով ցոյց տուեց, որ ոչ թէ բակտերիաներ են առաջանում փթող նիւթերից, այլ իրանք բակտերիաներն օգից ընկնում են զանազան նիւթերի (մսի, գինու) վրայ և փթեցնում են նրանց. ուրեմն բակտերիաները ոչ թէ փթելու հետեանքն են, այլ ընդհակառակը նրանք փթելու պատճառն են: Պաստօրը ցոյց տուեց, որ ե-

Թէ վերոյիշեալ նիւթերը ազատ լինին բակտերիաներից, նրանք կարող են մնալ տասնեակ տարիներ առանց փթելու. նա ներկայացրեց բազմաթիւ անօթներ, որոնց մէջ կային գարեջուր, մէզ կայն, այսինքն այնպիսի նիւթեր, որոնք սովորաբար շատ շուտ են լուծուում, փթում: Բայց Պաստեօրի անօթներում այդ նիւթերը չէին փթել, նրանք լաւ պահպանուել էին տարիների ընթացքում, չնայած որ անօթների բերանները տարիների ընթացքում մնացել էին բաց, որովհետեւ Պաստեօրը թոյլ չէր տալիս, որ օդից բակտերիաներ ընկնեն հեղուկների մէջ:

Ճեմարանը մասնաժողով էր նշանակել փորձերին ներկայ լինելու համար: Պաստեօրի փորձերը այնքան լուրջ էին, այնքան համոզեցուցիչ էին, որ անհնարին էր նրանց չընդունել: Պաստեօրը ստացաւ նշանակուած մրցանակը:

Այդ ժամանակից սկսուած դիտութեան մէջ հաստատուեցին Պաստեօրի գաղափարները: Բակտերիօլոգիայի պատմութեան մէջ Պուշէի և Պաստեօրի բանակութիւնը ամենափայլուն էջերից մէկն է կազմում. այդ խնդրի լուծումից կախուած էր գիտութեան յետագայ ընթացքը: Իրան, եթէ ճշտուէր Պուշէի կարծիքը, այն ժամանակ հաղիւ թէ հնարաւոր լինէր կռուել բակտերիաների դէմ, որովհետեւ Պուշէն ասում էր. «Ի՛նչպէս կ'ուզէք—պահեցէք նիւթերը, նրանք անպատճառ կը փթեն և կարտադրեն բակտերիաներ, թէկուզ մի հատիկ սաղմ էլ չլինի նրանց մէջ:» Պաստեօրը ընդհակառակը ցոյց տուեց, որ թշնամին միշտ զրսից է մտնում նիւթերի մէջ և փոփոխում նրանց, և որ յաճախ մեզնից է կախուած բակտերիաների վիճակը. եթէ մաքուր պահպանենք նիւթերը և ոչնչացնենք բակտերիաների սաղմերը, նիւթերը կը մնան անփոփոխ տասնեակ տարիների ընթացքում:

Նոյնպէս, երբ բակտերիաները հիւանդութիւններ են առաջացնում մեր մարմնի զանազան դործարաններում, այդ գիտնականները բոլորովին հաւաստի են, որ բակտերիաները մարմնի մէջ մտնում են զրսից. եթէ զրսից մեր մարմնի մէջ չմտնեն վնասակար բակտերիաներ, այդ դէպքում տարափոխիկ հիւանդութիւններ չեն կարող առաջանալ: Երբէք չի կարող պատահել, որ բակտերիաներ առաջանան զիցուք մեր արիւնի քաղաղըրիչ մասերից, այլ սովորաբար բակտերիաների սաղմերը զրսից որևէ ճանապարհով մտնում են մեր արիւնի մէջ, սաստիկ արագ բազմանում են արիւնի մէջ և առաջացնում են հիւանդութիւններ: Ուրեմն յաճախ մեզնից է կախուած վարակուելը. եթէ կատարեալ մաքրութիւն կը տիրէ մեր հագուստի և բնակարանների մէջ, եթէ մաքուր կը պահենք մեր մարմինը,

եթէ մաքրութիւն կը տիրէ մեզ շրջապատող միջավայրում—օդում, տներում, փողոցներում, քաղաքում, շրերում—այն ժամանակ մեր շուրջը քիչ բակտերիաներ կը լինին, և աւելի հաւանական է, որ այդ պայմաններում բակտերիաները չկարողանան մտնել մեր մարմինը և վարակել մեզ \*):

Այդպէս են դատում այժմեան բակտերիոլոգները, և ընթերցողը նկատում է, որ այդ նոյն մտքերն են, որ քարոզում էր Պաստեօրը:

Վերև ես առիթ ունեցայ ցոյց տալու, որ բակտերիաները տարածուած են օդի, ջրի, հողի, կաթնի մէջ կայն. բազմաթիւ գիտնականներ մանրամասն ուսումնասիրեցին օդը, ջուրը, հողը բակտերիոլոգիական տեսակէտից, որպէս զի աւելի լաւ պարզեն բակտերիաների ազդեցութեան խնդիրը թէ մարդկանց և թէ առհասարակ բնութեան վրայ: Մանաւանդ նշանաւոր են Ֆրանկլանտի, Պետտենկոֆերի, Միքէլի և ուրիշների հետազոտութիւնները ջրի բակտերիոլոգիայի վերաբերմամբ:

Այդ գիտնականների հետազոտութիւններից երևաց, որ համարեա բոլոր տեսակ ջրերը պարունակում են բակտերիաներ, միայն զանազան քանակութեամբ. ամենից քիչ պարունակում են բակտերիաներ խոր ջրհորների ջրերը, ծովի ջուրը աւելի շատ է պարունակում, իսկ գետերի ջրերը աւելի բակտերիաներ են ունենում, քան ջրհորների ու ծովերի ջրերը:

Որևէ ջրի պէտքական կամ անպէտք լինելը որոշում են մասամբ նրա մէջ գտնուած բակտերիաների թուով. օրինակ, եթէ մէկ խորանարդ սանտիմետր ջրի մէջ լինում է մինչև 100—150 հատ բակտերիա, այդ ջուրը լաւ ջուր է համարւում. եթէ բակտերիաների թիւը հասնում է 500, ջուրը համարւում է միջակ, ոչ շատ լաւ, ոչ շատ վատ. իսկ այն ջուրը, որը մէկ խորանարդ սանտիմետրի մէջ պարունակում 500—1000 կամ էլ աւելի բակտերիաներ, համարւում է վնասակար խմելու համար:

Գետերը զանազան մասերում զանազան քանակութեամբ բակտերիաներ են պարունակում. մանաւանդ շատանում է բակտերիաների քանակութիւնը քաղաքների մօտ. առհասարակ

\*) Այժմ ընդհանուր կարծիք կայ, որ բակտերիաների մտնելը յաճախ բաւական չէ մարմինը վարակելու համար. շատ անգամ վնասակար բակտերիաներ մտնում են մարմնի մէջ, բայց չեն կարողանում հիւանդութիւն առաջ բերել, որովհետև օրգանիզմը յաճախ դիմադրում է թշնամիներին: Սակայն այս երևոյթը չէ հակասում վերև առաջ բերած մտքին, թէ տարափոխիկ հիւանդութիւնները հետևանք են մարմնի մէջ մտած վնասակար բակտերիաների զործունէութեան:

որքան աւելի է կեղտոտուում ջուրը, այնքան աւելանում է նրա մէջ գտնուած բակտերիաների թիւը: Ահա մէկ օրինակ. գիտնական Պրաունիցը հետազօտելով Իզար գետի ջուրը Միւնխենից բարձր, Միւնխենում և Միւնխենից ցածր, ստացաւ հետևեալ թուերը.

Միւնխենից բարձր (1 խոր. սանտ. ջրում)	531 բակտ.
Միւնխեն քաղաքում	» » » » 227,369 »
Միւնխենից 22 կիլոմ. ցած	» » » » 4,796 »
» 33 » » » »	2,378 » *)

Մարդ ապշում է՝ գննելով այս աղիւսակը. Պրաունիցի աղիւսակը ցոյց է տալիս, որ գետի ջուրը ղեռ քաղաք չմտած մէկ խորան. սանտիմ. մէջ պարունակում էր ընդամենը 531 հատ, իսկ քաղաքում ջրի նոյն քանակութեան մէջ կային 227,369 հատ բակտերիա ! ազգաբնակութիւնը ուղղակի թունաւորում է ջուրը, որը այնքան անհրաժեշտ է նրա առօրեայ կեանքում: Այդտեսակ հետազօտութիւնները ցոյց են տալիս, թէ քաղաքային վարչութիւնների վրայ որչափ մեծ պատասխանատուութիւն կայ. ազգաբնակութեան առողջապահութիւնը ապահովելու համար քաղաքային վարչութիւնները պէտք է անընդհատ մաքառեն ջրի վարակման դէմ:

Գիտնական Ֆրանկլանտը հետազօտելով Թեմզա և Լի գետերի ջուրը տարուայ զանազան ժամանակներում՝ եկաւ այն եզրակացութեան, որ բակտերիաների քանակութիւնը գետի հէնց միևնոյն տեղում փոփոխւում է. ամենից շատ բակտերիաներ լինում են ձմեռուայ ամիսներում, ամենից քիչ ամառուայ ամիսներում: Այդ երևոյթը բացատրում են նրանով, որ ամառը գետերի ջրերը կազմւում են գլխաւորապէս մաքուր աղբիւրների ջրերից, որոնք համեմատաբար քիչ բակտերիաներ են պարունակում: Իսկ տարուայ միւս եղանակներին աղբիւրների ջրերի հետ խառնւում են բակտերիօլոգիական տեսակէտից անմաքուր ջրեր, որոնք և աւելացնում են բակտերիաների քանակութիւնը:

Երբեմն գետերի ջրերը բացի սովորական չէզոք բակտերիաներից պարունակում են պաթոգեն \*\*) բակտերիաներ. այդ դէպքում ջուրը դառնում է ոչ միայն անպէտք, այլ և վտանգաւոր ազգաբնակութեան առողջութեան համար. այդտեսակ ջրերի շնորհիւ առաջանում են համաճարակ հիւանդու-

\*) Պրաունիցի աղիւսակը վերցրել եմ նիւմանի «Bakterien» աշխատութիւնից, էջ 58:

\*\*) Հիւանդութիւն առաջացնող բակտերիաները կոչւում են «պաթոգեն»:

թիւններ, որոնք յաճախ աւերում են երկիրը: Ջրերի մէջ գըտնուած պաթոգէն բակտերիաներից ամենայայտնին խոլերայի բացիւն է, որը կոչւում է նաև «Կոխի ստորակէտ» ի պատիւ գերմանացի բակտերիոլոգ Ռոբերտ Կոխի, որը առաջին անգամ մատնացոյց արաւ այդ բակտերիայի վրայ և բացատրեց, թէ դա է խոլերայի իսկական պատճառը: Այդ բակտերիաները հաւաքւում են հիւանդի մարսողական խողովակում, իսկ նրանց թունաւոր արտադրութիւնները թափանցում են արեան անօթների մէջ:

Գիտնականները հետաքրքրուեցին նաև հետևեալ խնդրով. ցանկալի էր իմանալ, թէ ինչպիսի վիճակ են ունենում գետերի ջրերը քաղաքներից հեռանալուց յետոյ. արդեօք երկար ժամանակ են մնում ջրի մէջ քաղաքներից թափուած բակտերիաները: Հետազօտութիւնները ցոյց տուին, որ գետերը քաղաքների միջով անցնելիս լցւում են բակտերիաներով, բայց քանի աւելի են հեռանում քաղաքից, այնքան բարերախտաբար պակասում է բակտերիաների քանակութիւնը, հեռանալով քաղաքներից՝ գետերը նորից մաքրւում են: Այդ պարզ երևում է Պրատունիցի վերև բերած աղիւսակից. ըստ այդ աղիւսակի՝ Միւնխեն քաղաքում կար մէկ խորանարդ սանտ. ջրի մէջ 227,369 բակտերիա. իսկ գետը հեռանալով Միւնխենից 22 կիլոմետր՝ ջրի նոյն քանակութեան մէջ պարունակում էր միմիայն 4,796 բակտերիա, աւելի ևս հեռանալով (33 կիլոմետր)՝ նոյն գետը պարունակում էր 2,378 հատ բակտերիա: Նոյնը նկատուում է նաև Սենա գետի վերաբերմամբ. անցնելով Պարիզի միջով՝ այդ գետը սաստիկ կեղտոտւում է, լցւում է բակտերիաներով, բայց հեռանալով Պարիզից 20—30 մղոն՝ Սենան այնքան է մաքրւում, որ կարծես նա չէ անցել Պարիզի պէս հագին քաղաքի միջով:

Բակտերիաների անհետանալը վերոյիշեալ դէպքերում բացատրւում է միքանի պատճառներով: Նախ՝ մեծ քանակութեամբ բակտերիաները մեծ թուով կոտորւում են արեգակի ճառագայթների ազդեցութեան տակ. գիտնականները վաղուց գիտէին, որ եթէ բակտերիաներով լի անօթը ենթարկենք արեգակի ճառագայթների ազդեցութեանը, կարճ ժամանակից ետոյ բակտերիաները կ'ոչնչանան. ուրեմն արեգակի լոյսը սպանում է ջախտերիաներին: Նոյնպէս ազդելով գետերի ջրերի վրայ՝ արեգակի լոյսը ոչնչացնում է ջրի մէջ եղած բակտերիաներին:

Դիտողութիւնը ցոյց տուեց, որ ջուրը աւելի արագ է մաքրւում, երբ անցնում է աւազի միջով. բակտերիաները մնում են

աւազի շերտի մէջ, իսկ մաքուր ջուրը դուրս է հոսում: Կոխի կարծիքով երբ մշտապէս բակտերիաներով վարակուած ջուրը քամուած է աւազի մէջ, նա աւազի մէջ է թողնում բակտերիաները. այդպիսով ջուրը դառնում է անմշտաւ և գործադրելի:

Այդ հիման վրայ քաղաքներում շինում են աւազաններ, որոնց մէջ է թափուած ազգաբնակութեան համար նշանակուած ջուրը. աւազանները կիսով չափ լցուած են լինում աւազով. ջուրը անցնելով աւազի միջով՝ մաքրուած է, յետոյ հոսում է դէպի քաղաք:

Հետեւեալ օրինակը պարզ ցոյց է տուլիս այդ միջոցի օգտակարութիւնը. Փրանկլանտը հետազօտելով Թեմպա գետի ջուրը՝ նկատեց, որ սկզբում մէկ խորանարդ սանտիմետր ջրի մէջ կային 16,138 բակտերիաներ, իսկ երբ այդ ջուրը անցաւ աւազի միջով, նրա մէջ մնաց միմիայն 34 հատ բակտերիա:

Նոյնպիսի եռանդով գիտնականները ուսումնասիրեցին և՛ օդի բակտերիաները: Այս խնդրի վերաբերեալ ամենանշանաւոր հետազօտութիւնները կատարեցին Լուի Պաստօրը, Կոխը, Փրանկլանտը, Ջոն Տինգալը, Միքէլը և ուրիշները:

Պարզուեց, որ բակտերիաները ընկնում են օդի մէջ գետնի մակերևոյթից. հողի մէջ, ուր մանաւանդ փթող նիւթեր շատ կան, բակտերիաները բազմանում են անհամար թուով. ահա դրանց մի մասը տարածուած է օդի մէջ: Դիտողութիւնը ցոյց տուեց, որ երբ գետինը թաց է լինում, բակտերիաները անկարող են լինում գետնից բարձրանալ օդի մէջ. բայց երբ գետնի մակերևոյթը չորանում է, նոյնիսկ թեթեւ քամին գետնից բարձրացնում է բակտերիաների սպորներ (սաղմեր) և տարածում օդի մէջ: Նոյնիսկ եթէ հողը վարակուած լինի պաթոգեն բակտերիաներով (թոքախտի, խոլերայի բացիլներով) և միևնոյն ժամանակ թաց լինի, այդ դէպքում, ինչպէս ցոյց են տալիս հետազօտութիւնները, օդը ազատ կը լինի այդ բակտերիաներից, ուրեմն և անմշտաւ կը լինի:

Օդի մէջ բակտերիաները տարածուած են անհաւասար քանակութեամբ. քաղաքների օդը պարունակում է աւելի շատ բակտերիաներ, քան գիւղերի օդը. քաղաքների շրջակայքում սովորաբար աւելի քիչ բակտերիա է լինում, քան կենտրոնում. դաշտերի օդը աւելի մաքուր է՝ համեմատած այն օդի հետ, որ գտնուում է փակ տեղերում (ազգաբնակութեան մօտ տեղերում կային): Օրինակ՝ բակտերիօլոգ Միքէլի դիտողութիւնները ցոյց են տալիս, որ Մոնսուրի դիտարանում \*) օդի մէկ խորանարդ

\*) Գտնուած է Պարիզի շրջակայքում:

մետրը պարունակում է մօտաւորապէս 500 հատ բակտերիա. իսկ Պարիզի կենտրոնում օդի նոյն քանակութիւնը պարունակում է 4000 բակտերիա:

Հասկանալի բան է, որ բոլոր քաղաքների համար չէ կարող լինել մի ընդհանուր թիւ. կան քաղաքներ, որոնց փողոցները պահոււմ են շատ անմաքուր. այդպիսի քաղաքներում բակտերիաների թիւը օդի մէջ շատ մեծ է լինում, և ընդհակառակը՝ լաւ սալայատակած մաքուր քաղաքների օդում համեմատաբար քիչ բակտերիաներ են լինում:

Բացի այդ՝ պարզուեց, որ օդի ստորին շերտերում աւելի բակտերիա կայ, քան վերևի շերտերում, իսկ գետնից 3,000—4,000 մետր բարձրութեան վրայ օդը համարեա ազատ է բակտերիաներից:

Ի՞նչ ասել կ'ուզէ, որ մեր շնչառութեան ժամանակ բակտերիաները օդի հետ մտնում են մեր թոքերի մէջ: Մի քանի գիտնականների կարծիքով՝ մէկ մարդ մի ժամուայ ընթացքում ներշնչում է 1,500-ից մինչև 14,000 բակտերիա: Մէկ ուրիշ գիտնական (Ֆլիւզզէ) հաշուել է, որ մէկ մարդ իր կեանքի ընթացքում ներշնչում է մօտաւորապէս 25 միլ. բակտերիա!

Զարմանալին այն է, որ օդը գուրս գալով մեր թոքերից՝ համարեա բոլորովին ազատ է լինում բակտերիաներից, ուրեմն բակտերիաները մի ում են մեր մարմնի մէջ: Այդ երևոյթը բացատրուում է հետեւալ կերպով. յայտնի է, որ մեր քթի, բերանի և թոքերի մակերևոյթը ծածկուած է յուզաթաղանթով և միշտ խոնաւ է. ահա այդ խոնաւ թաղանթին են կապուած ներշնչած բակտերիաները: Դիտողութիւնը ցոյց տուեց, որ ներշնչած բակտերիաների մեծագոյն մասը կապուած են քթի յուզաթաղանթներին, իսկ փոքրագոյն մասը համնում է թոքերին:

Վերև մենք տեսանք, որ խոնաւ գետնից չեն բարձրանում բակտերիաներ օդի մէջ: Իսկապէս նոյն երևոյթն է նկատուում նաև շնչառութեան ժամանակ. շնչառութեան գործարանի թաց մակերևոյթից չեն կարողանում պոկուել բակտերիաները, ուստի արտաշնչած օդը համարեա չէ պարունակում բակտերիաներ:

Շատերի երկիւղը, իբր թէ մարդ կարող է վարակուել թոքախտաւոր հիւանդի արտաշնչած օդով, իսկապէս անհիմն է, որովհետև, ինչպէս տեսանք, բակտերիաները չեն կարող դուրս գալ թոքերից արտաշնչած օդի հետ: Իսկ վարակում կարող է լինել այն դէպքում, երբ թոքախտաւորի թուքը չորանայ, և բակտերիաները օդը բարձրանան: Ներշնչելով այդպիսի օդը՝ մենք կարող ենք վարակուել:

(Գը շարունակուի)

Ս. ԲԱԼԱՂԵԱՆ

## Ա. Պ. Չ Ե Խ Ո Վ \*)

Առօրեայ հոգսերից ու գործերից, ընթացիկ հասարակական շահերից ու մտահոգութիւններից վեր կան մտքեր ու տրամադրութիւններ, որոնք կապում են միայուն առեղծուածներին... Եւ ով մերուած չէ կեանքի հետ, ով նրա ժխտրից բարձր է պահում իր աչքն ու ականջը—նա տեմնում է մենաւոր ընկեր-ոգիներ, որոնք աշխարհի ամեն անկիւնից «առանց լեզուի և կրօնի խտրութեան» խօսում են նրա հետ այդ առեղծուածներից... Այդ կարգի ոգի էր Չեխովը, և, համոզուած եմ, ով ապրել է նրա երկերով, խորապէս վշտացաւ նրա մահուան լուրն առնելով: Պակասեց մի լրջմիտ, խոհուն և թախծալի բարեկամ, մի հոգու ընկեր, որ անգագար խօսում էր մարդու հետ և մարդու մասին...

Այս բոպէին յիշողութեանս մէջ նրա բազմաթիւ դէպքերի ու դէմքերի միջից բարձրանում են որոշապէս նրա երկու պատկերը. մէկը մօտ 25 տարեկան հասակից, միւսը վերջին լուսանկարներից մինը, որ և տարածուածն է: Ո՛րքան մեծ տարբերութիւն կայ այդ երկու պատկերի միջև. կարծես միևնոյն անձինը չլինին:

Մէկը մի թարմ երիտասարդ՝ ապրելու առողջ տենչով, մանկական պարզ ու խելացի հայեացքով և հմայիչ շրթունքով, ճակատն անկնճիո, առոյգ ու թարմ, գարնան մի ծաղկաբոյր և յուսաւէտ առաւօտ...

Միւսը մի լուրջ՝ մինչև իսկ խիստ մարդ, սմբած այտերով, բաց ճակատը տառապանքի մռայլ հետքերով, հայեացքը լուրջ ու սուր՝ ակնոցի տակից... Ծաղրաթերթերի աշխատակիցը չէ սա՛ առոյգ ու ժպտուն. կեանքից վշտաբեկ և յուսախար մարդն է սա. աշնան մի դալուկ, վշտաբեր օր...

\*) Անտոն Պաւլովիչ Չեխովը ծն. 1860 թ., աւարտել է Մոսկուայի համալսարանի բժշկական բաժինը: Այս թռուցիկ նկատողութիւնները գրելիս մենք ոչ մի աղբիւր չունենք ձեռքի տակ՝ բացի մեր յիշողութիւնը:

Ո՛րքան զժուար է եղել այն ճանապարհը, որով անցել է այն թարմ երիտասարդը այսպիսի մի այր դառնալու համար. ս՛րքան դառնութիւն և հրասթափութիւն... նախ ժամանակը, երբ նա երևաց. 80-ական թուականները, «մանր գործերի» շրջանը... Չեխովի ամհնալաւ տարիներում «երազներն ապրում էին դեռ, ոսկի երազներն (սուսի) փրկութեան» (Յով. Թուման.) անցել էր 60-ական թուականների փայլուն շրջանը, բայց դեռ չէր հասել 80-ական թուականների յետադիմութիւնը. դեռ հաւատ կար գործողի սրտում, ժողովրդասիրութիւնը իշխում էր գրականութեան և կեանքի մէջ: Այս լաւ օրերի գլուխկանոթեամբ սնուած, բնականից կեանքի զուարճալի կողմը դիտելուն հակամէտ՝ նա գալիս է գրական աշխարհ: Բայց ուս կեանքում իրար ետեից հասնում են դառն օրեր. նոր սերունդը բոլոր գաղափարներից ձեռնթափ, մտքի և խղճի մատախուղի մէջ՝ հետամուտ է անձնական բարօրութեան. լաւ մարդիկն՝ անուժ, բողոքը՝ թոյլ, գործն՝ անսերտ, հորիզոնները՝ մութ...

Այս միջնորոտում ոչ մի առողջ բոյս չէր կարող աճել. և Չեխովի ուրախ գրիչը թախծալի է դառնում, գոյները գորշանում են, և առոյգ տրամադրութիւնը թուլանում է: Նրա բազմաթիւ գրութիւնները, որ այսօր հարիւր հազարաւոր օրինակներով ցրուած են ամեն տեղ, մեզ չէլառէլ տալիս են այդ թարմ ծաղկի թօշնելու պատմութիւնը:

Այս վախճանին պիտի հասցնէր նաև նրա տաղանդի ամենալաւ կողմը—ճիշտ և նուրբ գիտելու ընդունակութիւնը: Սոհուն մարդկանցից որի՞ համար չէ պարզ, որ Աստծու պատկերը իրիտ աղարտուած է մարդու մէջ. ո՞վ չգիտէ, որ ամենատարրական իրաւունքներն ու պայմանները մարդավայել գոյութեան՝ իդէալ դարձած սուտուում են բարձր, մարդկանց առաջին՝ առանց կեանքի մէջ կայան գտնելու: Յիշեցէք այն զգուանքը, որ մարդ զգում է երազների աշխարհից բիրտ իրականութեան հանդիպելիս. տգիտութիւնը, նեղսրտութիւնը, վախկոտութիւնը, ստորութիւնը, չնչինութիւնը, կեղծիքն ու սուտը, իրանց բարեկամներով ու ազգականներով, որ շրջապատում են մարդուն և կեանքը մի տառապանք դարձնում...

Եւ այս բոլոր անկատարութեան մէջ մի զգայուն, թարմ, իդէալի ծարաւի երիտասարդ՝ դիտելու մեծ ընդունակութեամբ: Ամեն նուրբ գիտողութիւն թոյն ու հրասթափութիւն է, ամեն ճիշտ գիտողութիւն յուսախաբ է անում այդպիսի մարդու... «Մի հին պատմութիւն, որ միշտ նոր է մնում». այս ճամբով են գնացել բոլոր մեծ բանաստեղծները և մեծ գիտողները: Որքան խորն ես թափանցում կեանքն ու բո ներսը, այն-

քան սոսկալի է դառնում շուրջդ, տեսնում ես ամեն բան անկարգ, անխորհուրդ, չնչին...

Հիմայ ուշադրութեան առէք այն հանգամանքը, որ Չեխովի դիտողութեան շրջանը չափազանց լայն է և դիտողութիւնը չափազանց բազմազան, հարուստ ու նուրբ: Ռուսաստանի բոլոր գասակարգերը տեղ ունին նրան երկերում. դիւղացին, բանուորը, արհեստաւորը, վաճառականը, ագնուականը, հոգևորականը ևայլն: Այնտեղ գուք կը պատահէք ամեն շրջանի և պարսպմունքի մարդու. անգրագէտ, բանուոր և հոչակաւոր պրոֆեսսոր, պատուաւոր և «անպատիւ» կանայք, տէրեր և ծառաներ, գողեր և գող պահողներ, դատաւորներ և դատուողներ, ուսուցիչ և աշակերտ, ղինուոր և զօրապետ, գերասան և գերասանուհի, նրկարիչ և երաժիշտ, ուսանող և ուսանողուհի, կիսաշխարհի տիկին և կար անող աղջիկ, գործակատար և զրամատէր, գործաւրանատէր ու գործաւոր, տիրացուներ և եպիսկոպոս, քահանայ և սարկաւազ, վիպասան և թատերագիր, բժիշկ, գիւղատնտես, ևայլն ևայլն ևայլն անթիւ, անհամար...

Եւ այս ամենը ընդարձակ Ռուսաստանի ամեն անկիւնից—Վարչաւայից մինչև Մախալին, Պետերբուրգից մինչև Մուխոմ ու Ղրիմ... գործողութեան տեղերը նոյնքան բազմաթիւ են, որքան անձերը. սալոնից մինչև գիւղացու խրճիթը, հիւանդանոցից մինչև միկիտանի դուքանը, մեծ քաղաքից մինչև Հարաւային Ռուսաստանի ագարակները, անբնակ Սիբիրից մինչև Խաղաղ Ովկիանոսի ջրերում լողացող նաւը, մինչև Իտալիա ևայլըն... Նրա դիտողութիւնները վերաբերում են ոուսի հետ նաև գերմանացուն, ֆրանսիացուն և անգլիացուն, լեհացուն և հային, հրէային ու թաթարին... Մինչև իսկ գործող անձն է ընտրում անասուններին—շուն, սագ ևայլն («Каштанки»).

Այս նրա դիտողութեան ծաւալը: բայց նոյնքան հարուստ է և՛ բովանդակութիւնը: Մի տեղ՝ օրինակ՝ մի ճոթավաճառի գործակատար բան է ծախում մի աղջկայ և մէջէմէջ խօսում իրանց սիրային գործից. պէտք է տեսնէք, թէ սրբան ժանեսակի ու ժապաւէնի անուն կայ այդ փոքրիկ պատկերում. մի ուրիշ տեղ նա տալիս է թնդանօթաձիգ կառքերի սարքուկարգը, մի այլ տեղ մի շարք «ձիական» ազգանուններ, մի երրորդ տեղ մի հիւանդանոցի կազմութիւն ևայլն ևայլն...

Սրան զուգընթաց գնում է սիւժէների հարստութիւնը: Փորձեցէք մի փոքրիկ պատկեր ուրուագծել և կը տեսնէք, թէ սրբան դժուար բան է ունեցած դիտողութեան յուլունքը շարելու համար թել դտնելը: Եղել են գրողներ, որոնք ահագին դիտողութեան պաշարը չեն իմացել ինչ ձևով կապեն իրար

հետ ու տան ընթերցողին: Մինչդեռ դուք տեսէք թէ, ի՞նչ անըսպառ ամբար է այդ կողմից Չեխովը: Կեանքի ամենապարզ գէպքին նա կարողանում է այնպիսի կերպարանք տալ, որ ըստացուում է մի պատկեր, լիքը հարուստ բովանդակութեամբ...

Նկատելու արժանի է, որ նրա պատկերներից ոչ մէկն այն վախճանը չի ունենում, ինչ որ ենթադրում կամ սպասում ես առաջուց. բոլորը կեանքի պէս անսպասելի և անբաւարար հոսանքով են գնում, և ոչ մէկի լուծումը շինովի կամ մտացածին չէ, այլ շատ բնական, կարծես արդարացնելու համար այն իմաստուն խօսքը, թէ ամենամահաւատալին հէնց այն է, որ պատահում է: Ես առանձնապէս շեշտում եմ նրա գրութեան այս կողմը. սա ցոյց է տալիս, թէ հեղինակը որքան խորն է ըմբռնում կեանքը:

Դիտելով կեանքն ամեն ուղղութեամբ և ամեն կէտերում, նա շաղ է տալիս իր գրութիւնների մէջ բազմաթիւ մտքեր, խօհեր, խորհրդածութիւններ, նկատողութիւններ ու հայեացքներ կեանքի մասին. մարդու բնաւորութիւնը, նրա դիտաւորութիւնները, նրա վերաբերմունքը գէպի կիւնը, գէպի անձերն ու գործերը, նրա տրամադրութեան ելևէջները, մանաւանդ նրա կեանքի տաղտուկը և անգունութիւնը, զեռահաս կեանքի յոյսերն ու մատաղ յոյգերը, մարդու անկումը, փոքրացումը, ըստորացումը, յուսախաբութիւնն ու հիասթափութիւնը, անյուսութիւնն ու խելագարութիւնը և շատ ուրիշ գրութիւններ ու հոգեկան վիճակներ գրաւել են նրա ուշադրութիւնը:

Կեանքի այս բազմազոյն համայնապատկերը նա դիտում է մի ինքնուրոյն տեսակէտից և յատուկ տրամադրութեամբ, ուստի և նա մեր առաջ ցուցադրում է մուրրիւ բնութեան նոր կողմերը, կամ յայտնի կողմերի նոր լուսաբանութիւնը: Կան զրոյներ, որոնք մեզ ասում են, թէ ի՞նչ պիտի անենք. Չեխովը նրանցից չէ: Նրա համար կեանքն ու մարդը մի առեղծուած է, քննութեան և հետազոտութեան կարօտ: Եւ նա յանձն է առել այդ ծանր և պատասխանատու գործը. նրա երկերը վկայում են, թէ սրպիսի եռանդով ու ջանասիրութեամբ նա դիմում էր այդ նպատակին: Քառասունուչորս տարեկան հասակում նա թողեց աշխարհը. համեմատելով այդ կարճ ժամանակամիջոցը նրա երկերի հետ, տեսնելով, թէ որքան հարուստ հոգեկան կեանք է գամուած այդ էջերին—մարդ պատկառում է նրա տաղանդի ուժից...

Նրա տաղանդը յոգնել չգիտէր, քայլառքայլ առաջ էր գնում կեանքն ու մարդուն հասկանալու դժուարին ճանապով, և գիտակցութեան ամեն նոր քայլ, դիտողութեան ամեն նոր պա-

շար նա ամուր փակում էր կարճ պատկերներում՝ ստեղծելով իր համար աւելի խորքերն իջնելու մի սանդուխ... նա կանգ չէր առնում, և այդ է պատճառը, որ նրա երկերից բուրում է մի թարմութիւն. շատերը կարծես գրուած են առաւօտեան շողով ու ցօղով...

Ես վերն ասացի «կարճ պատկերներ». և իսկապէս նա ոչ մի վէպ չի գրել. մեծ մասը փոքրիկ պատկերներ են, շնա-շատ՝ վիպակներ: Բայց ծաւալը գրականութեան մէջ ոչ մի նշանակութիւն չունի. առածներ կան, որոնք գրքեր են բովանդակում: Չեխովն արուեստագէտն էր և ոչ բելլետրիստ. նա գնում էր սուս մեծ արուեստագէտների ճանպոյտ. նա շարունակում էր Պուշկինի, Գոգոլի, Տուրգենի և Տոլստոյի գործը, ուստի նա ձգտում էր արտայայտութեան կարճութեան. մի քանի բառով նա կարողանում է ապրող պատկերներ ու գրութիւններ ստեղծել. նրա արտայայտութիւնները միշտ թարմ են և ընթերցողի երևակայութեանը խօսող. նրա բառերը ընտրովի են և այն բառերն են, ինչ որ հարկաւոր է. նրանք գործ են ածուած ամենամեծ ժլատութեամբ և ինամքով, ուստի նրա երկերում «դատարկ ֆրազ» չէք գտնի: Տնտեսութիւնը, որ գեղարուեստի մեծագոյն օրէնքն է, իշխում է նաև նրա կառուցումների վրայ. զէպքերի խմբումը, բնորոշ գծերի գասաւորութիւնը, վարձուներների ընտրութիւնն ու պատճառարանութիւնը, շարժառիթների մեկնութիւնը բոլորը խիստ տնտեսութեամբ են գործի դրուած:

Դիտելու ընդունակութիւնից ոչ պակաս արժէք ունի դիտածը տնտեսօրէն գործադրելու ընդունակութիւնը, մի գիծ, որ շատ է պակասում գրողներին: Ռուսահայերիս գեղարուեստական կրթութեան համար ես աւելի լաւ միջոց չեմ ճանաչում, քան այս հեղինակի երկերն ուսումնասիրելը: Ես առաջարկում եմ սրան ոչ թէ այն պատճառով, որ մի կատարեալ հեղինակ է, այլ որ շատ լաւ միջնորդ է մարդկութեան մեծագոյն երկերն ուսումնասիրելու համար: Մեր գրողները շատ քիչ կարևորութիւն են տալիս բառին, մերոնք խօսում ու մտածում են խօսքերով. մինչդեռ բառն ինքը մի բանաստեղծութիւն է, և ամեն բառ պիտի սպրել ու զգալ նախքան գործադրելը:

Կեանքի անհուն բազմազանութեան մէջ Չեխովին հետաքրքրում է երկու մեծ և համատարած երևոյթ—մարդու տիւմարութիւնը եւ կեանքի անիմաստ ընթացքը, որոնք սերտ կապուած են իրար հետ և արգելք են մարդու երջանկութեան կամ ուրիշ խօսքով՝ քնազդական ուժերի հզօրութիւնը եւ մարդու մտքի ու խղճի անզօրութիւնն այդ ուժերը սանձա-

հարելու և՛ իբրև հետևանք այս անորմալ զրույթեան՝ անթիւ աններդաշնակ և խորտակուող կեանքեր... Մեր կարծիքով այս է այն վայրը, որտեղ կանգնած է Չեխովի մտքի ճրագը լուսաւորելու համար կեանքի իրար կարող մութ ալիքները: Ես օրինակներ չեմ բերի, թող ընթերցողներն իրանք վերլուծեն նրա պատկերները և նրա երկերի վրայ նայեն այս ընդհանուր տեսակէտից, այն ժամանակ շատ բան կը պարզուի և հասկանալի կը դառնայ...

Չնայելով այն անագին ոչնչացումի դաշտին, որ փուռում է Չեխովի աչքի առաջ, նա յոռետես չէ. նա գնահատում է այդ ամպամած արևը, որ խիղճ է կոչուում, և նրա հազիւ խաւարը թափանցող շողը, որ կոչուում է բանականութիւն: Խաւարը գին չունի նրա աչքին. մարդու տխմարութիւնը տանջում է նրան. նա յուսախարուած է ներկայի վերարեբմամբ, բայց նոր ու հաստատուն յուսով նայում է մօտիկ ապագային... Ձգուած իր շրջապատից՝ նա սիրով ապրում է ապագայում և այն հեռաւոր աշխարհից նայում է թախծութեամբ մեր կեանքին. ներկայի արժէքը ընկնում է նրա աչքում, և նա հոգով թոչում է շատ վերև, կտրում է ժամանակի ընթացքը յետ ու առաջ և զգում ու գնահատում է իբրև վկայ անհուն դարերի: Այս զրույթեան մէջ նա ունենում է մի տեսակ «տիեզերական տրամադրութիւն»—հոգին գնալով աւելի մաքրուում ու նրբանում է, աւելի «մարդկային» է դառնում բառի վիճ մտքով և աւելի ընդունակ մաքուր հայելու նման պարզ պատկերելու կեանքի զարշիլ երեսը...

Այստեղից հասկանալի են դառնում նրա լիրիզմը և նրա սէրը դէպի անորոշութիւնը: Չեխովը լիբիկ է. խորին թախիժ կայ նրա պատկերներում, խորին վիշտը աշխարհի և մարդու մասին: Վերից նայելով կեանքի հոսանքին և ատու նրա անիմաստութիւնն ու տխմարութիւնը՝ նա ցաւում է այդ ամենի վրայ, մանաւանդ բոլոր թարմ ծիլերի սոչորման ու թօշնելու համար: Այդ անմիտ ժխորում ապականւում է մարդու գեղեցիկ պատկերը, սիրոյ երկնատաք վայելքը, փոխադարձ սիրալիլ վերարեբմունքը և մատաղհասութեան ազնիւ ու խիզախ երազները...

Անդադար առաջ գնալով՝ Չեխովը չի սիրում ոչ մի կանգնած շուր. ինչ որ որոշ է, եթէ երբեմն պատկառանք է ազդում նրա հոգուն, բայց և այնպէս սիրելի չէ. (օր.՝ «Домъ съ мезониномъ»). նա սիրում է ծիլերը, անորոշ որոնումները: Սրանով կարելի է բացատրել նրա սէրը դէպի երեխաները, դեռահասները, աղջիկները և հոգով դեռ ապրող մարդիկ: Թարմու-

թիւնը նրա պաշտած յատկութիւնն է. ինչ որ անորոշ է, թարմ է, նա դեռ կարող է լաւ դուրս գալ, նա գրաւական է կատարելութեան. մինչդեռ այն, ինչ որ որոշ կերպարանք ունի, արդէն խեղդուած է ընդդիմադիր ուժերից. ձևակերպուածը սխալ է միշտ, որոշուածը՝ մոլորութիւն...

Այս աղբիւրից է հոսում նաև նրա բնութեան սէրը: Այդ անորոշ, յաւէտ թարմ ու ստեղծող խոր բնութիւնը կազմում է նրա գրութիւնների ֆոնը, մանաւանդ վերջին շրջանում: Բնութեան հարուստ կեանքը անսպառ վայելքներ ունի որոնողի համար, և տաղտուկն ու յոգնութիւնն անձանօթ են բնութիւնը սիրողին: Այստեղ նա մխիթարում է՝ տեսնելով, թէ ինչպէս անցնում է ամեն կեանք, և ուրեմն ինչպէս անխուսափօրէն պիտի սրբուի աշխարհի երեսից այսօրուայ անիմաստ կեանքն ու կացութիւնը...

Նրա աշխարհայեացքը որոշ չէր: Որոշ աշխարհայեացք ունենալու համար պէտք է որևէ կերպով հանգստացնել ապրատամբ միտքը և բողբոջ խեղճը. մինչդեռ Չեխովի համար աշխարհը առեղծուածների մի հանգոյց էր, և նա մինչև վերջն էլ աշխատում էր քանդել այդ հանգոյցը... Այս է պատճառը, որ մենք գիտենք նրա տրամադրութիւնները, բայց ոչ վճիռները աշխարհի այս կամ այն մեծ խնդրի վերաբերմամբ. նա ունի դուրեկան և անդուրեկան, համակրելի և անհամակրելի անձեր, վիճակներ և դրութիւններ...

Աշխարհայեացքի անորոշութիւնը ցոյց է տալիս նրա մտքի անկարողութիւնը ընդհանրացումներ անելու, ուստի նա ունի բազմաթիւ անձեր ու դրութիւններ, որոնք շատ բնորոշ են և բնուրոյն, բայց ոչ մի տիպական անձնաւորութիւն չունի: Նրա միտքը վերլուծող է, բարեխիղճ ու մանրազնին դիտող, հայեացքը շատ տեղ է համնում, բայց խորը չի թափանցում ըմբռնելու համար տիեզերական կարգը իր հիմքում: Նա իր երկերում հաւաքել է հարուստ պաշար մարդու ուսումնասիրութեան համար, բայց այդ նիւթից շէնք կառուցանելու ճարտարապետն ինքը չէր կարող լինել: Այս կողմից նա պակաս նշանաւոր է քան իր մեծ նախորդները՝ Պուշկին, Լերմոնտով, Տուրգենև, Գոգոլ:

Ոչ ժամանակը, ոչ էլ հանգամանքները չեն ներում մեզ հանգամանօրէն խօսել այս նրբազգաց և սիրելի հեղինակի մասին. նրա երկերը ուսումնասիրութեան առատ նիւթ են տալիս ստեղծագործութեան հոգեբանութիւնը և հասարակական կեանքը ուսումնասիրողին: Այս թուղթիկ նկատողութիւններով մենք

շտապում ենք մեր ցաւը յայտնելու մի իսկ որ տաղանդաւոր  
և ազնիւ մարդու մահուան համար...

Վեհ բնութեան մէջ թօշնեց մի նուրբ կեանք ևս, որ մեզ  
պատմում էր Աստծու աղարտուած պատկերի մասին: Երկիրը  
նոյն աշխուժով, ինչպէս հազարաւոր տարիներ մեզանից առաջ,  
տատանում է իր ծովերն ու լեռները աստղերի դիմաց և նա-  
զելով լողում արևի շողերով, մինչդեռ նրա անմեկին գաղտ-  
նիքների գուռը բաղխողներից մինը մի նեղ գոնով Պիացաւ  
անհունին: Իբրև բժիշկ և իբրև բանաստեղծ նա գիտութեան  
ու երևակայութեան շնորհիւ գիտէր այդ վախճանի մասին,  
բայց միշտ ապրում էր երկինքը սրտում և այսօրուայ  
կեանքից սրտնեղած՝ միշտ յուսալից առաջ էր նայում, թէ ա-  
ւելի լաւ կը լինի մի յիսուն, մի հարիւր տարի յետոյ...

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը եւ գրականութիւնը:—Կեանքի արժանիքը եւ ներքինը:—Աշխարհի գոհուածները:—Հասարակական խոշոր չարիք. խօշորս. դասախօսութիւնները:—Տրագիկ հեռանկարներ կեանքի մեջ:—Ազգային քառասունամեակի գիծ. սեռականութիւնները:—Կովկասի քիւրճ մամուլը—Չարքը Ռուս:—Վեհաճ Զեյնով:—Ս. Փարսեանի գործը զինուորակ. դասարանում:—Վսեմակի փոխ. նախնական Ենդրեէ:—Կազանի մայր եկեղեցու կողմնակիցը:—Վ Սուր-մայրուի գաւառական Բոգուշաւիչ:—Վ ներքին գործերի միջնորդ Պիլի:

Ամեն անգամ, որ մարդ գրիչ է ձեռք առնում մեր ներքին կեանքի մասին խօսելու, միշտ նրա առաջ կոշմարի պէս ցցուում է այս վհատեցուցիչ, այս խեղդող հարցը. «Ի՞նչ օգուտ, ի՞նչ օգուտ...» Արդարեւ ի՞նչ շահ այն բազմաթիւ բարի ցանկութիւններից, այն ըստ երևոյթին անկեղծ խորհուրդներից, այն անվերջ «ցանկալի»-ներից, որոնք մեր մամուլի մէջ այնպէս առատ են: Կեանքի մէջ մեծաւ մասամբ նրանք նմանում են հողմերի թափով տարուող այն սերմերին, որոնք կայան ու հող չեն գտնում բեղմնաւորուելու համար և ոչնչանում են չոր, պղնձուած ժայռերի կատարներին:

Արդեօք կեանքն է անպատրաստ ըմբռնելու և իրագործելու մամուլի մէջ արծարծուող գաղափարները, սնբարեպատեհ հանգամանքներն են արդեւք հանդիսանում իդէայի առաջխաղացութեանը, թէ՛ պարզապէս բոլոր այդ «ցանկալիները», բոլոր այդ բարի խորհուրդները վաղուց հետէ կորցրել են իրանց արժէքը, դարձել են ընթացիկ, բանալ՝ և այս պատճառով անցնում են առանց ապրելու:

Սրանք հարցեր են, ցաւոտ հարցեր, որոնց տարաբաղադարար պատասխանել հեշտ չէ. իրողութիւն է սակայն, որ մեր կեանքի և գրականութեան մէջ անհրաժեշտ կապը մինչև մի որոշ աստիճան խզուած է: Առօրեայ չար ու բարիով զբաղուած գրականութիւնը, կեանքին փայլ և ուղղութիւն տալու կոչուած մամուլը այժմ նմանում է այն որսորդին, որ նշան է բռնում դէպի արևելք, և զննակը սուլում է դէպի հիւսիս: Կեանք և գրականութիւն... երկու

ճամբորդներ են սրանք, որոնք նայում են իրար հեռուից և շարունակում իրանց ընթացքը տարբեր ուղղութեամբ առանց իրար հանդիպելու: Մէկի կոչն ու խորհուրդները միւսին չի հասնում կամ անհասկանալի են, և իւրաքանչիւրն ընթանում է՝ ծանրաբեռնուած իր սեփական խոհերով: Դա մի արտասուելի անտազոնիզմ է, որ ընդունակ է թուլացնել, կազմալուծել ամենաբուռն եռանդը, ամենագեղեցիկ ձգտումները, ամենաազնիւ պատրաստակամութիւնը:

Վհատեցուցիչ է մտածել, որ բոլորն, ինչ ասում է մասուլի մէջ, բոլոր հարցերը, արծարծուած բոլոր գաղափարները, խորհուրդներն ու բարեմիտ ծրագրները վերաբերում են համարեա բացառապէս կեանքի արտաքինին, այն կոկիկ, փայլուն կեղևին, որ գիտէ ծածկել խորունկ տրագեդիաներ, լուսցաւեր, մխացող վէրքեր:

Արտաքինով, պատշաճաւորութեամբ, վայելուչ ձևերով ենք ապրում. մեր լեզուն, մեր նիստուկացը, մեր արտայայտած մտքերը ողջ այն խղճուկ, շլացուցիչ փայլի համար է, որ կոչւում է վայելչութիւն, բարեմիտ, զգուշաւոր առաքինութիւն: Եւ սակայն գոյութիւնների ներքին ծալքերում, մարդկային հոգիների խուլ անկիւններում կայ մի ուրիշ կեանք, համր, բայց ուժգին, որ թափով դառնում է ինքն իր վրայ, եռում է, աղմկում իրան յատուկ օրէնքներով, իր սեփական տրամաբանութեամբ, որ իր գոյութեան և իրաւունքների առանձին գլխատակցութիւնն ունի, որ հեզնում է արտաքին փայլը, կեղծիքը, վիւլգեր իրականութիւնը, որով ապրում է և գոհ է աշխարհը:

Յե՛տ քաշել արդեօք այդ իսկական իրականութիւնը ծածկող հինաւուրց քօղը, բաց անել արդեօք ծածուկ վէրքերն ու ցաւերը, որոնց վկայութիւնը հէնց այն իրանց բար լուութեան մէջ է:

Բայց դա հակառակ կը լինէր ընդունուած պատշաճաւորութեան, չափաւոր, առաձգական առաքինութեան, երջանիկ զգուշաւորութեան:

Մեր ամբողջ դաստիարակութիւնը դեռ հեռաւոր մանկութիւնից սովորեցրել է լռել, լռել և լռել: Յիշեցէք մայրերի և տատերի շրթունքներին դրած ցուցամատը, որ պաժուիրում է փոքրիկին չասել այս և ասել այն: Արտաքինի և ներքինի անդարձ բաժանումն է այն, որ մանուկները սովորում են: Երկու բարոյականութիւն, երկու ճշմարտութիւն, երկու առաքինութիւն, ահա հիմունքը այդ դաստիարակութեան: Եւ այդ զոյգ զրահներով վիճուած մակութիւնը դառնում է ապագայ

կեանքի մարտիկը՝ ամեն տեղ ներս բերելով նողկալի կեղծիքը:  
Եւ աշխարհը գոհ է մնում:

Աշխարհի գոհութիւնը... շատ բան հարկաւոր չէ դրա հա-  
մար: Եւ նրանք, որոնք տառապում են անուշիկի չարիքի տակ և՛  
նրանք, որոնք յանձն են առել այդ չարիքի դարմանը որպէս  
հասարական կեանքի, մտքի վարիչներ, գիտեն բաւականանալ  
շատ քչով: Որքան մէկը բարիքի մէջ ժլատ է, գձուձ, նոյնքան  
միւսը՝ կարօտեալը գիտէ բաւականանալ քչով, համարեա ոչըն-  
չով:

Մեր կեանքի իւրաքանչիւր հասարակական երևոյթ ան-  
խուսափելի կերպով կրում է իր վրայ մի կողմից այդ ծայրա-  
յեղ ժլատութեան, գձձուութեան և միւս կողմից այն վնասեցու-  
ցիչ, այն անյոյս խեղճութեան կնիքը, որ գիտէ բաւականանալ  
փշրանքներով և գարշանքի, աղտեղութեան մէջ սողալ, սողալ,  
սողալ... Խեղճութիւնը ակամայից ֆատալիստ է, կեանքի խո-  
րունկ ցաւի աղբիւրը այդտեղ է թագնուած: Նա է դարձնում  
այս յոգնեցուցիչ կեանքը այդքան միակերպ, անտանելի:

Ընթացիկ, կրկնուած չարիքը, սովորական դարձած  
ցաւերն ու տառապանքները միանգամայն անկարող են յուզել  
այդ միակերպութիւնը, ինչպէս որ միջնադարեան ճգնաւորի  
մարմնի մէջ ցցուած մեխը անկարող էր խռովել նրա հանգիս-  
տը: Հարկաւոր է խոշոր ու յանկարծական չարիք, որպէսզի  
մարդիկ ապրել, ձգտել, շարժուել սկսեն: Այդպիսի մի չարիք  
եղաւ օրինակ նորերս Պարսկաստանից մեզ սպառնացող խոլե-  
րան: Քաղաքային վարչութիւններն ու հասարակական այդ կո-  
չուած խնամակալները իրար անցան. ժամանակ էր մի փոքր մը-  
տածել տրորուած, արհամարուած, կեղտի մէջ սողացող խեղճու-  
թեան մասին: Մաքրուում են փողոցները, բակերը, մաքուր  
հագնուած մարդիկ իջնում են խուլ, մոռացուած խրճիթները,  
ուր կեղտի, մուրի, մթութեան մէջ ապրում են մարդկային ա-  
րարածներ, իրերի ոյժով ֆատալիստ, հնազանդ դարձած կեան-  
քի խորթ զաւակները:

Արտաքինի հոգսը դարձեալ հրապարակ եկաւ, պէտք էր  
կոկիկ, սրբել, փայլեցնել ամեն ինչ խոլերան ընդունելու հա-  
մար:

Սպառնացող չարիքի առաջ բերած իրարանցումը կամաց-  
կամաց կը դադարի, մեխը վերստին կը տեղաւորուի վէրքի մէջ,  
և իրերը կ'ընթանան իրանց նախկին ճանապարհով դանդաղ, մի-  
ակերպ, կեանքի ներսը կրծող հասարակական չարիքը կրկին

կը բունաւորուի, և աշխարհը վերստին գոհ կը լինի, գոհ կը լինին ամենքը, և՛ տառապող խեղճութիւնը, և՛ մաքուր հազնուած պարոնները, որոնք էլ չեն իջնի խրճիթներն ու ցաւերի բները ու կ'երթան, հանդարտութեամբ կը բռնեն իրանց տեղերը քաղաքային վարչութիւնների մէջ և ճառեր կ'ասեն:

Ճառեր, ճառեր... խոստովանում ենք, մեծ արիութիւն է հարկաւոր խօսելու համար այդքան... ապարդիւն կերպով: Միւրաբօի թողած ժառանգութիւնն է այդ, որ աշխարհի բոլոր ծայրերում բուրժուա առաքինութիւնը դեռ շարունակում է շահագործել: Կեանքի հիմնական չարիքը չշօշափել, ցաւերի արմատներին ձեռք չտալ, բայց արտաքինի և վայելչութեան մասին խօսել եռանդով, մինչևիսկ ինքնամոռաց անկեղծութեամբ: Անցեալ ձմեռ դասախօսութիւններ եղան թիֆլիսում թորախտի դէմ կռուելու միջոցների մասին, անցեալ օրը երեք լեզուներով դասախօսում էին խոլերայի մասին: Ի՞նչ էին մըտածում իրանք դասախօսողները, ի՞նչ արժէք էին տալիս իրանց արածին, չգիտենք, բայց մեզ համար դրանք միայն ճառեր են, անվերջ, յոգնեցուցիչ ճառեր:

Ես չգիտեմ, այդ դասախօսութիւններին ներկայ էր նաև այն խեղճ, գունատ, վտիտ կինը, որին պատահելու առիթն ունեցայ նորերս: Շրջապատի փարթամութեան անզգայ, իւզոտ երջանկութեան և հոյակապ տներին մօտիկ նա ապրում է մի զարհուրելի նկուղում, որի բորբոսնած պատերից քիչ է մնում ջուրը կաթկաթի, ուր լոյս չի թափանցում, ուր իշխում է խաւարն ու կեղտը: Այնտեղ՝ այն անտանելի բնում մօր հետ հիւժւում, կամաց-կամաց մեռնում են խոնաւութիւնից, խաւարից, գուցէ և քաղցից նաև նրա երեք զաւակները: Եւ այդ բոլոր չարիքը կրելու համար խեղճ կինը վճարում է ամսական վեց բուրլի: Մէկ են, երկու են դրանք, այդ կենդանի թաղածները, բոլոր հիւանդութիւնների, բոլոր ցաւերի այդ նշանակուած զոհերը: Հազարներով կարելի է հաշուել իւրաքանչիւր խոշոր քաղաքում. նրանց բոլորի պատկերն է այդ նկարագրած դժբախտ կինը. իրաւունք չունի՞ նա հիւանդութիւնների մասին եղած դասախօսութեան ժամանակ բացազանչել. «Ճառեր, սուտ է, սուտ է...» կրկնում ենք, մեծ արիութիւն է հարկաւոր հասարակական կեանքի մեր ներկայ պայմաններում խօսել այդքան ապարդիւն կերպով:

Այսպէս է, այս կեանքը, նա լի է տրագիկ հակասութիւններով: Անցեալները հայկական ներկայացումների մասին խօսե-

լիս՝ մի տիկին անկեղծ կերպով հաւատացած էր, թէ Թիֆլիսի հայերը չեն յաճախում մայրենի բեմի ներկայացումներին, որովհետև կիրթ ճաշակ ունին, և գեղարուեստական բաւականութիւն չեն ստանում: Բուրժուաների ընդհանուր կարծիքն է այս: Թիֆլիսը թէկուզ մի փոքր ճանաչողը ծայրայեղ քաղաքավարութիւնից միայն կարող է գսպել իր բարձրաձայն քըրքիջը այդ «կիրթ» ճաշակի հանդէպ:

Զարմանալի է, որ այդ «կիրթ» ճաշակը արտայայտուում է միայն թատրոնում: Իսկ դճւրսը... փողոցներում, մեր շրջապատում ոչի՞նչ չկայ, ոչի՞նչ չի կատարում, որ գոնէ մի փոքր վիրաւորէր նրանց նրբացած զգացմունքները, և սակայն նրանք իրանց այդ «կիրթ ճաշակները» չեն քաշուում շարունակ ման ածել լայնարձակ փողոցներում ու հրապարակներում և չեն ճշում ներքին ցաւից: Ո՞վ չի տեսել այն խենթ կիներ, որ իր զարհուրելի այլանդակութիւնը ամեն օր քաշ է տալիս պրոսպեկտի վրայ. հապա բոլոր այն խելացնորները, միտտանիները, միձեռնանիները, այն սողացող, ցեխերի մէջ թաւալուող, ոռնացող, ճչացող, ողորմութիւն ուզող դժբախտները, որոնց մօտից, վըրայից անցնում են պերճ տիկիներն ու կոկ, ճաշակաւոր պարոնները: Կեանքի այս զազիր պատկերը չի՞ յուզում, չի՞ վիրաւորում «ճաշակաւոր» հասարակութեանը:

Ո՞նց՞ հայ թատրոն. դուրս է գալիս, որ նա աւելի վիրաւորական է հայ բուրժուայի «նուրբ ճաշակի» համար, քան կեանքի այդ բոլոր զաւրջ այլանդակութիւնները:

Հրէշաւոր հակասութիւններ կան, որոնք կրժուում են հասարակական կեանքը, կան և ուրիշները, որոնք բարեբաղդաբար անգրադառնում են նոյն այդ հակասութիւնների հեղինակ անհատների վրայ՝ որպէս անխուսափելի պատիժ բարոյական օրէնքները խախտելու համար: Վերջին ժամանակները Բագուից աւելի ու աւելի յաճախ են լսում սնանկութեան ձայներ: Անուանները այս դէպքում նշանակութիւն չունին, փլչում են... պրոլետարիատի արիւնի և քրտինքի կաթիլներով բարձրացած շէնքերը, որոնք քաշել, ծծել էին գաւառների բոլոր կենսական հիւթերը, բոլոր էներգիան, ընկնում և անհետանում են իրար յետևից: Քանի տարիներ առաջ տրեխաւոր ու փափախաւոր բանուորը յանկարծ այդ զարմանալի Բագուում դառնում էր հարուստ դրամատէր և ապրում ապարանքներում, այժմ էլ երեկուայ ձոխ մեծատունը յանկարծ իջնում է բարձրութիւնից, ուր նրան հանել էր կամ դիպուածը կամ կողոպուտը և դառնում է իր արհամարհած, տրորած, քամած անհատներից մէկը:

Հարիւր հազարներն ու միլիոնները այս գուհիկ փարթամութեան մէջ չեն անցնում նոյնիսկ երկրորդ սերնդին և լուծուում են կէս ճանապարհին: Հասարակական գուցէ և էսոսպսիխօլոգիական տեսակէտից այս երևոյթը վերին աստիճանի նըշանակալից է:

Հայը հռչակուած է իբրև տնտեսագէտ, ընդունակ վաճառական, գործունեայ, ձեռներէց: Սա ընդհանրացած կարծիք է, գուցէ և մասամբ իրաւացի: Բայց, ինչպէս երևում է, կայ և մի երկրորդ բնորոշ գիծ, որ գուցէ նոյնքան ընդհանուր է, որքան առաջինը, և որի մասին օտարները ոչինչ չգիտեն—գանրա ծայրայեղ զձձութիւնն է իր փարթամութեան մէջ, երբ պէտք է հասարակական բարիք գործել, և դրա հետ միաժամանակ անսանձ, խայտառակ, համարեա ցինիկ շոյալուծիւնն է իր սեփական կեանքի ամենաբիրտ պահանջների համար: Ազնեցուցիչ է, թէ ինչպէս յանկարծակի հարստացած բիրտ հայը արագութեամբ իւրացնում է եւրոպական կեանքի այն բոլոր բացասական կողմերը, որոնց դէմ արեւմուտքի լաւագոյն մտքերը, հասարակական և քաղաքական գործիչները կուում են: Ե՛ւ թղթախաղ, և՛ անքուն գիշերներ վաճառուող կանանց հետ, և՛ խելագար ծախսեր կուրորաններում և արտասահմանում; որից ոչինչ չեն հասկանում, և՛ սեփական կառքեր, և՛ ոսկեհուռ մեծածախս զգեստներ, որոնց կրել անգամ չգիտեն, և ակնեղէններ ու ոսկիներ, բոլորը, բոլորը, ինչ այնպէս ստորացնում է բանական մարդուն, ինչ նրան դարձնում է մի զգուելի էգոիստ՝ զբաղուած բացառապէս իր անասնական հաճոյքներով, իր բիրտ զուարճութիւններով: Կատաղի բռն-վիվաններ կան, որոնց մայրերը ապրել են լուացարարութեամբ, և սալոնական կարգերի համաձայն ձեռքները կավալերների համբոյրին տուող տիկիներ կան, որոնց աշխարհայեացքը, խելքը ամենասովորական կեկեղներիցը բարձր չէ: Հասարակական կեանքը իր բոլոր ցաւոտ խնդիրներով, հարիւր հազար զրկուածների, կեղեքուածների դատը, գաւառներում մայր ժողովուրդի կուրծքը յուզող բոցոտ հարցերը նրանց համար գոյութիւն չունին, ինչպէս և՛ չկան նրանց համար այն բոլոր վսեմ յոյգերը, թէկուզ արցունքով շաղախուած, որով ապրում է, որոնց համար տքնում է, տառապում մի ամբողջ ժողովուրդ:

Եւ ահա այս անզգայ ու բիրտ չափաւորութիւնը, այս անսկզբունք, անմիտ գոյութիւնների բազմութիւնն է կրծում միլիոնները, կրծում է և հրապարակ նետուում ձեռնունայն:

Եւ լաւ է, որ այդպէս է լինում, լաւ է, որ փլչում են այդ խայտառակ շէնքերը:

Անմիտ, անարժան չարախնդացութիւնը չէ, որ մեր մէջ խօսում է. աւելին կ'ասենք. մենք նոյնիսկ յարգում ենք անհատականութիւնը, նրա կամքի խելացի, բարոյական արտայայտութիւնները. մենք գտնում ենք, որ անհատը, ով և լինի նա, բացարձակօրէն տէր է իր արդար վաստակի և իրաւունք ունի վարուել նրա հետ, ինչպէս կամենայ: Բայց կայ վաստակ և վաստակ: Կան անհատներ, որոնց վաստակը իրանց սեփական արիւն-քրտինքի արգիւնք է. կան ուրիշները, որոնց զրամագրւութիւնը հազարների արիւն-քրտինքի շաղախ է: Եթէ ժամանակակից հասարական կեանքը ղեկավարող դրական օրէնքները դեռ չեն հասել այն կատարելութեան ու արդարութեան, որ բեռը այդ աստիճան ծանր չլինի, երբ մէկը տառապում է ամենաանհրաժեշտի համար, իսկ միւսը յղփացած՝ չգիտէ անգամ ինչպէս վաստակ իր հարստութիւնը—այդ դեռ ոչոքի չի ազատում բարոյական պատասխանատուութիւնից: Իւրաքանչիւր խոշոր դրամագրութիւն անպայման հասարակական հարստութիւն է և անհրաժեշտ է, որ գէթ մասամբ հասարակութեան բարիքի համար գործադրուի, անհրաժեշտ է, բարոյական է, որ նա չվատնուի խայսառակ, անարգ ձևով:

Իւրաքանչիւր գիւղացի, իւրաքանչիւր բանուոր, որ թողնում է հայրենի հողն ու ջուրը և ոտք է ներս դնում գործարանի շեմքից, նա իր հետ բերում է կազմուելիք խոշոր դրամագրութի մի մասը. և քանի՜ այդպիսիները: Պէտք է յետ տալ գաւառին, գիւղին այն, ինչ խլուած է նրանից իբրև էներգիա: Սա արդարութեան միջնորդ է: Չկայ այդ արդարութեան ամենասովորական գիտակցութիւնը, աւելորդ է մազի չափ անգամ ցաւել, որ փլչում են այն գոռոզ մոլոխները, որոնց երեկուայ անունն էր կապիտալիստ, այսօրուանը՝ սնանկ:

Յայտնի է, որ Կովկասում թիւրք մամուլ կայ և թիֆլիսում մի թիւրք լրագիր՝ «Շարզը Ռուս»: Մենք ամեն անգամ ուրախութեամբ ենք արձանագրել «Մուրճ»-ի էջերում քմեն մի լուսաւոր հոսանք կամ ձեռնարկութիւն, որ զալիս է թարմացնելու մեր հարեան թիւրքերի և վրացիների հասարակական կեանքը: Մենք նոյնիսկ առանձին բաժին ունենք յատկացրած այդ նպատակի համար:

«Շարզը Ռուս»-ի երեւալը առհասարակ մասնաւոր հետաքրքրութեան և ուշադրութեան առարկայ եղաւ, որովհետև ընդհանուր հաւատ կար, որ այդ թերթը պիտի կարողանայ երոպական նոր, առողջ գաղափարներ սերմանել թիւրքական խաւար մասսայի մէջ և այսպիսով օժանդակ հանդիսանալ մեր յետա-

մընաց հարեանները քաղաքակրթական առաջադիմութեան: Սակայն նորերս նրա յարուցած մի վէճը Մշակի հետ վերին աստիճանի տխուր լոյս է սփռում «Շարզը Ռուս»-ի աշխարհայեացքի, քաղաքական-հասարակական դաւանանքների վրայ:

Վէճի առարկան Պարսկաստանի Սարգվար քաղաքում տեղի ունեցած հակաքրիստոնէական յուզումն է: Թիւրք թերթը պնդում է, թէ Մշակը սխալ լուր է հաղորդել, և թէ այդպիսի բան տեղի չի ունեցել: Ինչ ասել կ'ուզի, որ առաջինը Մշակը ինքը կ'ուրախանայ, որ այդպիսի ցաւալի դէպք տեղի ունեցած չլինի Պարսկաստանում. բայց խնդիրը դրանում չէ. մէջ է իրաճանաչում նաև շէյխ Մահմադ Հասան մամադանցի միւշտէիդի անունը: «Շարզը Ռուս»-ը գտնում է, որ Մշակը բաւականաչափ յարգանքով չի վերաբերուել յիշեալ կրօնապետին՝ նրա անունը տալու ժամանակ չթուելով բոլոր տիտղոսները: Եւ ապացուցանելու համար, թէ ինչ մեծ նեղինակութիւն է վայելում շէյխ Մահմադ Հասան մամադանցի միւշտէիդը, նա ասում է, որ ներկայ Մուզաֆֆէր-էդդին շահը կամեցաւ տեսակցել այդ միւշտէիդի հետ, բայց սա ինքը չբարեհաճեց գնալ շահի այցելութեան, այլ իրան շահին «իւ ուխտագնացութեան բերաւ», այսինքն շահը ստիպուեց ինքը գնալ իր ոտքով միւշտէիդին տեսութեան:

«Շարզը Ռուս»-ի խմբագիրը Եւրոպա է եղել և երևի այնտեղից է բերել այն համոզմունքը, թէ իր ժողովրդի բարօրութեան և Պարսկաստանի առաջադիմութեան համար լաւ է, որ շահը իր ոտքով ստիպուած լինի տեսակցութեան գնալ միւշտէիդին!.. Բացատրութիւնների կարիք չկայ: Եւրոպական քաղաքակրթութեան առաջադիմութեան նոր գաղափարները երևի տարբեր մարդիկ պէտք է տարբեր ձևով հասկանան և ոչ թէ միակերպ. «Շարզը Ռուս»-ի խմբագիրն էլ այսպէս է հասկացել:

Ճաշակի գործ է. նկատենք սակայն, որ պարսիկ ժողովրդին այդքանն ասելու համար բնաւ կարիք չկար Եւրոպա այցելել և յետոյ գալ «Շարզը Ռուս» հրատարակել: Պարսկաստանում այդ լեզուն բոլորովին հասկանալի է առանց «Շարզը Ռուս»-ի էլ:

Մեռաւ Անտոն Զեխով... դա մի անփոխարինելի կորուստ է ուս գրականութեան համար: Համակրելի և վերին աստիճանի տաղանդաւոր այդ գաղափարական նեղինակը դեռ այնքան երիտասարդ էր, որ հաւանականաբար էլի մի շարք գլուաւիչ երկերով պիտի հարստացնէր ուս գրականութիւնը:

Նեղինակների կեանքը շատ անգամ ոչ բազմազան է լինում և ոչ փոթորկալի: Նրանց յոյզերը, խոշոր ալեկոծումները

Ներքին են և արտայայտում են երկերի մէջ: Իւրաքանչիւր հեղինակ պէտք է փնդրել հէնց նրա սեփական երկերի մէջ, որոնցից դուրս նա շատ անգամ կեանք էլ չունի: Հարուստ չէ խոշոր ցնցումներով նաև Անտոն Չեխովի կեանքը: Նա ծնուել է 1860 թուի յունուարի 17-ին Տագանրոգ քաղաքում, ուր ստացել է իր սկզբնական և միջնակարգ կրթութիւնը, և այնտեղից էլ գնացել է Մոսկուայի համալսարանը, մտել բժշկական ֆակուլտետը և 1884 թուին աւարտել է իբր բժիշկ: Բժշկական գործով նա համարեա երբէք չէ պարապել: Դեռ ուսանող ժամանակից (1879-ից) նա Չեխովն է կեղծ անունով մասնակցում էր ծաղրական թերթերին («Стрекоза», «Будильник», «Осколки», և այլն) իսկ յետոյ անցաւ «Пет. Газета» և «Нов. Вр.» լրագիրների մէջ: Այդ ծաղրական և լուրջ թերթերում նա գլուխում էր մանր ֆելիէտոններ, ծաղրական փոքրիկ պատմութիւններ, կատակներ և այլն: 1886 թուին դուրս եկաւ նրա առաջին ժողովածուն, իսկ 1887-ին—երկրորդը «Въ симеркахъ» խորագրով:

Այդ երկու հատոր ժողովածուները բաւական մեծ ու ջերմ ընդունելութիւն դտան հասարակութեան կողմից: Գրական քննադատութիւնը մեծ գովեստով վերաբերուեց նրանց: Ահա այդ խոշոր ընդունելութեան ազդեցութեան տակ Չեխովը թողեց իր նախկին՝ ֆելիէտոնական ձևը և անցաւ խոշոր ամսագիրների մէջ, ինչպէս «Сѣвер. Вѣст.», «Рус. Мысль», աւելի յետոյ «Жизнь»: Այդ հաստ ամսագիրներում նա զետեղում էր բաւական մեծ պատմուածներ, պատկերներ, կոմեդիաներ, դրամաներ և այլն:

Առանձին ուշադրութիւն զարձրին իրանց վրայ նրա «Степь», «Скучная исторія», «Дуэль» և այլ պատմուածները և պիէսներից՝ «Чайка», «Дядя Ваня», և «Три сестры»:

Երիտասարդ գրողի գործերն այնպէս արագ էին տարածւում, որ նրա ժողովածուները 7-ից սկսած մինչև 14 հրատարակութիւններ ունեցան կարճ ժամանակում: 1903 թուին «Нива» շաբաթաթերթը բաժանորդներ գրաւելու համար տուեց Չեխովի գործերի հաւաքածուն: Նա չսխալուեց—իր բաժանորդների թիւը սաստիկ արագ աճեց: Բայց ընթերցող հասարակութիւնն սկզբի հատորներն ստանալով՝ բաւական յուսախաբուեց և զժգոհ մնաց Չեխով—Չեխովն էի մանր, լրագրական և բաւական անտաղանդ երգիծաբանական արտադրութիւններից: Իսկ հետեւեալ հատորները, որոնց մէջ զետեղուած էին նրա համեմատաբար աւելի խոշոր գործերը, կարողացան նորից կապել իրանց հետ ընթերցողներին:

Ընթերցողները կը գտնեն «Մուրճ»-ի ներկայ համարում Չեխովի խոշոր գրական արժանիքի մասին Ն. Աղբալեանի յօգուածը: Այստեղ մենք կանգ կ'առնենք նրա կեանքի մի հետաքրքիր փաստի վրայ, որ դեռ շարունակում է ազմուկ հանել ուս մամուլի մէջ:

Մի քանի տարի առաջ Չեխովը իր բոլոր գրուած և զբրուելիք երկերի հրատարակութեան իրաւունքը ծախել է հրատարակիչ Մարկսին 75 հազար ռուբլով: Փորձը ցոյց է տուել, որ խեղճ հեղինակը միամտօրէն սխալուել է, և հրատարակիչը մեծապէս շահուել է՝ հաւանականաբար մի քանի անգամ 75 հազար ռուբլիներ ստանալով Չեխովի երկերից:

Ահա այս փաստն է, որ Չեխովի մահից յետոյ ազմուկ հանեց մամուլի մէջ: Պատմում են, որ ինքը Չեխովը միշտ սաստիկ դառնացել է իր երկրի այս վաճառքի մասին խօսելիս և վշտով ասել է յաճախ, թէ ինքը ծախուած է, ստրկացած է Մարկսի ձեռքում: Մարկսը փորձեց արդարանալ՝ ինչպէս կարող էր: Նա դրա համար որոշ իրաւաբանական հիմունքներ ունէր, ազատ կամքով առուծախսի հիմունքներ: Մակայն հասարակական խղճի դատաստանի առաջ նա երբէք արդարանալ չի կարող: Ամենատարրական արդարութեան զգացմունքը պահանջում էր, որ այդ ճարպիկ հրատարակիչը վերստին յիշէր հիւանդ զրոյին, որի ցաւատանջ մտքերի արիւնոտ արցունքով հարստութիւն էր դիզում: Նա պարտական էր ինքնարեւաբար պատուել այդ խայտառակ պայմանագիրը, որ հեղինակի միամտութիւնը գրել էր նրա ձեռքում, ինչպէս որ վարուել էր մի օր Ձոլայի հրատարակիչը: Մարկսը այդ չարեց, նա գերազասեց հեշտ հարստութիւնը բարոյական մի գրաւիչ, մի համակրելի ակտից, մի գեղեցիկ ժեստից. այժմ անօգուտ է արդարանալ. հիւանդ, հիւժուած Չեխովի ուրուականը նրա հարստութեան կողքին ցցուած կը մնայ:

Ա. Ա.

— Յուլիսի 5 մինչև 7 կովկասեան զինուորական նահանգական դատարանում դռնփակ նոյն դատարանի նախագահ գեներալ Կ. Կ. Մակեդոնսկու նախագահութեամբ պատերազմական ժամանակի օրէնքներով քննուած էր թիւրքահպատակ Կարապետ Պօղոսեանի, Վաղարշապատ գիւղի բնակիչ Յովհաննէս Բալօեանի և էջմիածնի գաւառի Մաչլու գիւղի բնակիչ Թորոս Դաւթեանի գործը, որոնք մեղադրուած էին Վաղարշապատ գիւղի բնակիչ Սարգիս Փոթօեանի սպանութեան համար: Մեղա-

դրում էր կովկասեան զինուորական նահանգական դատարանի դատախազը: Մեղադրեալներին պաշտպանում էին երգուեալ հաւատարմատար Տիգրան Յովհաննիսեան և զինուորական փաստարան կապիտան Իգմայլով: Դատավճիռը ղոնքաց յայտարարուեց: Կովկասեան զինուորական նահանգական դատարանը բոլոր մեղադրեալներին անպարտ ճանաչեց և արդարացրեց:

— Յուլիսի 4-ին Հաջիբէնդ աւանում երեկոյեան ժամ 7-ին, ինչպէս հաղորդեցին հեռագրերը, սպանուած է Գանձակի նահանգի փոխ-նահանգապետ Անդրէ և հետեւալ հանգամանքներում, որ առաջ ենք բերում՝ քաղելով տեղական լրագրներից.

«Յուլիսի 4-ին երեկոյեան ժամը 6 և 45 րոպէին, Ֆորերի հիւրանոցի մօտ թեք խճուղու վրայ ատրճանակի հարուածներով սպանուեց նահանգապետի օգնական Անդրէնը: Մահը վայրկենական էր առատ արիւնհոսութեան պատճառով, որն առաջացել էր ձախ անրակի տակի զարկերակի պատռուելուց և ներքին նախաանրակի փշրուելուց: Հանգուցեալը վերադառնում էր Ներքին-Հաջիբէնդից՝ առանց ուղեկից ծառայի: Դրժբախտութիւնը պատահեց հանդիպած պաշտօնեաների հետ ունեցած խօսակցութիւնից 2 րոպէ յետոյ: Չարագործը 6 հարուած տուեց թիկունքին և թեք ճանապարհով անյայտացաւ անտառում»: Այդ առիթով «Нов. Об.» լրագիրն ասում է, որ սպանութիւնից անմիջապէս յետոյ տեղական պրիստաւը ոստիկանութեան և ստրաժնիկների խմբով ընկել է սպանողի ետևից: Թէև նա դեռ ձերբակալուած չէ, բայց անունն արդէն յայտնի է»:

— Յունիսի 19-ին առաւօտեան վաղ Կազանի կանանց մեծաստանի մայրապետ Տատիանան անցնելով մայր տաճարի ձորով լսեց տաճարի ներքնայարկից օգնութեան կոչող թոյլ աղաղակներ: Նա իսկոյն ձայն տուեց ղոնապաններին: Երևաց, որ ներքնայարկից գոչում էր պահապան Զախարովը: Ներքնայարկի գուռը փակած էր, դրսից սողնակի մէջ մի ձեռնափայտ խոթած լինելով: Բաց արին, ազատեցին Զախարովին, որը պատմեց, թէ զիշերը պահապանութիւն արած ժամանակը եկեղեցու սանգուղների վրայ նկատեց 4 երիտասարդ. դիմելով նրանց՝ բղաւեց. «Ո՞վ էք», բայց չարագործները մօտ վազեցին, բռնեցին իրան, բերանը փակեցին և ներքնայարկը նետեցին՝ սպառնալով ատրճանակով և դանակով: Որովհետև եկեղեցու շրջակայքի քննութիւնը ցոյց տուեց, որ խկապէս չարագործներ եղել են, դրա համար իսկոյն իմաց տրուեց ոստիկանութեան, որ եկաւ քննիչի և պրոկուրորի հետ

միասին: Երևաց, որ եկեղեցին կողոպտուած է: Չարագործները տարել են տեղական սրբութիւնը—կազանի Աստուածամօր հրաշագործ պատկերը և Փրկչի պատկերը: Այդ երկու պատկերն էլ զարդարուած են թանգազին քարերով ու ոսկով՝ մօտ 100,000 ռ. արժէքով: Երևաց, որ կոտրել են 2 մոմատուփեր և տարել մէջը եղած մօտ 300 ռուբլի գումարը: Եկեղեցու բակի և շրջակայ տների քննութիւնը ցոյց տուեց, որ չարագործները մտել և դուրս են եկել եկեղեցու ցանկապատով: Նրանք Պոպրեադուխինի տան պարտէզումն են եղել. այդ տան աղացիայի թփի վրայ գտնուել է Աստուածամօր պատկերի կարմիր ժապաւէնի 2 կտորը, նոյն տեղում դետնի վրայ գտել են նոյն պատկերի 10 մարգարիտները և ոսկէ զարդերից մի կտոր—մի փոքրիկ սիրտ: Ոստիկանութիւնը եռանդով որոնում է այդ սրբապղծութեան հեղինակներին: Բռնուած են կասկածուած մի քանի անձեր: Պահապան Չախարովը ճանաչել է նրանցից երկուսին: Բայց, ինչպէս այդ երկուսը, այնպէս էլ միւս բոլոր ձերբակալուածները հաստատում են, որ իրանք բաղաքից բացակայ են եղել»:

—Ինչպէս հաղորդում է տեղական «Кав.» լրագիրը, յուլիսի 10-ին գիշերուայ ժամը 2-ին Երևանի նահ. Սուրմալու գաւառի Իգդիր ւանում սպանուած է գաւառապետ Բոգուսլաւսկիյ:

—Ռուսաց հեռագրական գործակալութիւնը Պետերբուրգից հաղորդեց տեղական լրագրերին, որ յուլիսի 15-ին առաւօտեան մօտ 10 ժամին դէպի բալտիական վոկպալը տանող ճանապարհի վրայ վարչաւեան երկաթուղիական կայարանի մօտ սպանուեց ներքին գործերի մինիստր Վ. Կ. Պլեվէ: Կառքի տակ ուումը էր գցուած: Մինիստրը և կառապանը սպանուած են:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են ներքին գործերի մինիստրի սպանութեան հետեւեալ մանրամասնութիւնները.

«Յուլիսի 15-ի առաւօտեան 9 ժամ 50 րոպէին, ասում է «Р. В.» լրագիրը, անյայտ չարագործի ձեռքով սպանուեց ներքին գործերի մինիստր ստատս-սեկրետար Վ. Կ. Պլեվէ: Մինիստրը կառքով գնում էր բալտեան երկաթուղու կայարանը Կրասնօիէ-Սելօ մեկնելու համար: Երբ նրա կառքը հաւասարուեց «Վարչաւ» հիւրանոցի մուտքին, որ գտնուում է Իգմայիլեան փողոցի և Օբվոզնւրի ջրանցքի անկիւնում, հիւրանոցի դռնից դուրս թաւ մի երիտասարդ 23—24 տարեկան, երկաթուղային գործակալի զլխարկով. նրա ձեռքում կար մի ուումը, որ դրան մօտ նստած առևտուր անող կինն ընդունել էր կազամբի զլխի տեղ: Արագ վազելով դէպի կառքը՝ նա ուումը նետեց կառքի տակը: Որոտաց խլացուցիչ պայթիւնը, որից հիւ-

բանոցի 5-յարկանի տան բոլոր պատուհանների ապակիները փշուր-փշուր եղան թէ փողոցի կողմում և թէ Օբվոդնըից ջրանցքի ափի կողմում. վարչաւեան կայարանի դերարկաղերի հսկայական պատուհանի ապակիներն էլ փշրուեցին: Պրոսպեկտի վրայ գտնուած ոստիկանութիւնը և ժողովուրդը թափուեցին պայթիւնի տեղը և սալայատակի վրայ մինիստրին գտան արդէն մեռած, ջախջախուած գանգով ու ծնօտով, ծակոտուած կրծքով, պատոտուած շրջագգեստով: Նա կիսապառկած վիճակի մէջ էր. թաթախուած իր արեան մէջ, սալայատակի վրայ, շրջապատուած կառքի մանր կտորտանքով: Կառքի ամբողջ ետևի մասը ոչնչացել էր, մնացել էր միայն առաջին մասը, որ վիրաւորուած ձիերը փախցրին տարան կայարանի ուղղութիւնով: Ծանր վիրաւորուած կառապանը ընկնելով իր նստելու տեղից՝ խճճուեց սանձերի մէջ և մի քանի քայլ քարշ ածուեց, մինչև որ ձիերին կանգնեցրին: Կառապանին տարան վարչաւեան կայարանի մօտի պարտէզը, ուր նա շուտով մեռաւ: Մարդասպանն իսկոյն ձերբակալուեց անցորդներից մէկի ցուցումով և խոստովանեց իր ոճիրը, բայց որովհետև վիրաւորուած էր, դրա համար ուղարկեցին նրան Ալեքսանդրեան հիւանդանոցը՝ բանւորների համար: Այնտեղ քննութեան ժամանակ երևաց, որ վիրաւորուած են նրա երեսը, ոտները, և ուռմբի կտորները պատռել են նրա փորի ներքին մասերը և աղիքները: Ոճրագործը ոչինչ չէր ասում, միայն հեծկլտում էր: Կէսօրից յետոյ ժամը 3-ին սկսեցին ուռմբի կտորտանքը հանել: Պայթիւնը միայն մինիստրին ու նրա կառապանին չսպանեց, սաստիկ միասուեց նաև կառքի ետևից պատահաբար գնացող Սեմեճնովսկի դնդի գվարդիական կապիտան Յվեցինսկին: Ռուսների կտորտանքը նրա գանգին երկու բարդ վէրք է հասցրել: Վիրաւորը մինչև Ալեքսանդրեան հիւանդանոց ճանապարհի կէսը ոտով եկաւ, յետոյ՝ կառքով հիւանդանոց գալով՝ դեռ էլի պատմում էր զէպքի մասին, բայց շուտով սկսեց կորցնել գիտակցութիւնը. ստիպուած ելան երկու տեղ նրա գանգը տրեպանացիայի ենթարկել: Նրա դրութիւնը ծանր է: Շուտով նոյն հիւանդանոցը բերին մի գիւղացու իր կնոջ և երեխայի հետ: Պեռերբուրգ ժամանելով նրանք կայարանից ոտով էին գնում և պայթիւնի բոպէին մինիստրի կառքի մօտն էին: Գիւղացին վայր է ընկել և մի քիչ քերծուածք ստացել. նրա կնոջ սրունքը ջախջախուել է, իսկ երեխայի երեսն է մի քիչ քերծուել: Հանգուցեալ մինիստրի դիակը «Արագ օդնութեան» կառքով իր բնակարանը տարուեց: Վարչաւեան կայարանում ժամը 10<sup>1</sup>/<sub>2</sub>-ին ժողովրդի նախաձեռնութեամբ հոգեհանգիստ կատարուեց:

Մինիստրի ընտանիքը հէնց նախընթաց օրը մեկնել էր արտասահման:—«Վարչաւա» հիւրանոցի ծառաներն ասում են, թէ ոճրագործն առաւօտեան եկաւ հիւրանոց, պահանջեց թէյ և օղի: Յանկարծ նա վեր թռաւ տեղիցը և վաղեց դէպի դուռը: Հազիւ մի քանի ակնթարթ անցած՝ լսուեց որոտը: Մարդասպանի գրպանում գտնուել է 6-հարուածեան մի ատրճանակ: Ոճրագործն արտաքինով 25—27 տարեկան է երևում, շիկադէմ է և բարձրահասակ:—Լուրջ վէրքեր է ստացել ոստիկանութեան մի գործակալ: Յվէցինսկու մասին արդէն ասացինք: Պատահաբար այդ տեղով անցնող պետական կոնտրոլի աստիճանաւոր Իվ. Իվ. Լաւրենտիևը աննշան վէրք ստացաւ գլխից: Կան և ուրիշ քիչ կամ շատ նշանաւոր վէրքեր ստացողներ: Ընդհանուր թիւն է 18 հոգի վիրաւոր:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-նապոկական պատերազմը:—Անգլո-գերմանական համաձայնութիւնը:—Խաղաղասիրական շարժումը Փրանսիայում:—Գրոսական միաբանութիւնների գիւժ հրահարակուած նոր օտկեր: Երկամեայ զինուորական ծառայութիւն:—Փրանսիա և Վասիլիան:—Եպիսկոպոսների միջնապէսը:—Փրանսիական կառավարութեան վերջին որոշումը:—Թիւրքական գործեր:—Նոր ջարդեր քիւրահայկական նահանգներում և ռեֆորմների խնդիրը:—Մակեդոնիա:—† Գօլ Կրիզեր:

Ամբողջ աշխարհի ուշադրութիւնը շարունակում է գրաւուած մնալ Հեռաւոր Արևելքով, ուր երկու խոշոր պետութիւնների՝ Ռուսաստանի և Ճապոնիայի ուղղակի ոյժերը ծայրայեղ ճիգերով զարկում են իրար: Արդէն կէս տարի է, որ արիւնոտ դէպքերը յաջորդում են իրար Խաղաղ Ովկիանոսի ափերին, մանջութեան դաշտերում ու լեռներում համարեա ամենայն օր մարդկային արիւնը հոսում է, երկու կողմից հազարաւոր կեանքեր քաղում են պատերազմի անողոք Աստուծո ձեռքով, և դեռ դժուար է թէկուզ մօտաւոր ձևով ասել, թէ ուր է հաւանական վախճանը այս հսկայական մենամարտի: Չնայելով արիւնոտ դէպքերի, խոշոր ընդհարումների այս խեղդող առատութեան, այնուամենայնիւ թւում է, թէ սպասողական վիճակը շատ է տևում, որ անհրաժեշտ էր էլ աւելի արագացնել անցքերը՝ մօտենալու համար պատերազմական գործի վախճանական լուծումին, որպէսզի շուտով դադար առնէր արիւննեղութիւնը: Բայց այդ լուծումն, ինչպէս ասացինք, թըւում է դեռ շատ հեռու, և չնայելով ճապոնական բանակի անընդհատ առաջխաղացութեան և ռուսականին հանջին, պատերազմը կարծես նոր է սկսում:

Պորտ-Արտուրի շրջանից հասնող լուրերը կցկտուր են, յաճախ հակասական: Փաստն այն է, որ բերդի պաշարումը ցամաքից ու ծովից շարունակում է, երկու կողմից էլ անընդհատ տեղի են ունենում ուժեղ թմրութիւններ: Վճռական յարձակումը ճապոնացիների կողմից, որի մասին այնքան խօսւում էր բերդի պաշարման սկզբում, մինչև այժմ տեղի չունեցաւ:

Ինչպէս երևում է, բերդը լաւ է ամրացրուած, և ճապոնացիները վճռական զործողութիւններ սկսելու համար օգնական զօրքերի պէտք ունին: Արդարև հեռագիրները հաղորդեցին, որ մարշալ Օյամայի հետ Դալ'նի են իջել էլի բասն հազար հոգի Պորտ-Արտուրը պաշարող բանակն ուժեղացնելու համար:

Ցամաքի վրայ յունիսի վերջերից պատերազմը մտել է մի նոր ֆազիսի մէջ, որ համարում է չորրորդը: Չսպասելով ընդհանուր հրամանատար մարշալ Օյամայի դալստեանը՝ Կուրոկի և Օկու գեներալները ձեռնարկեցին վճռական գործողութիւնների արդէն յունիսի վերջերից և սկսեցին շարժուել դէպի հիւսիս: Ներկայ պատերազմի սկսուած այս չորրորդ շրջանում պայքարի առարկան է Լեաօխէ գետի հովիտը, կամ ուրիշ խօսքով Ինկու, Լեաօեան և Մուկդեն. ճապոնացիների առաջխաղաց շարժումն սկսուեց նախ դէպի Գայջօու, որ բանալին է Լեաօխէի հովտի: Օկուի զօրաբանակը դեռ յունիսի 26-ին Գայջօուի մօտերքում ընդհարուեց ուսականի հետ. մանրամասնութիւնները թէև յայտնի չեղան, բայց Լոնդոնի ճապոնական դեսպանատունը իր ժամանակին յայտարարեց, թէ այդ քաղաքը ճապոնացիները վերցրել են: Նոյն մտքով լուր հաղորդեց նաև առևտր. հեռ. գործակալութիւնը յունիսի 28-ին Դաշինցաօից: Միննոյն ժամանակ յայտնուեց, որ ուսները յետ են նահանջել դէպի Դաշիցաօ, ուր հրամանատարութիւնը յանձն առաւ ինքը գեներալ Կուրօպատկինը: Իր ժամանակին «РҮС. ВѢД.» գրում էր. «Եթէ մեր դիւանոր ոյժերը գտնուած են Գայջօուից հիւսիս, այն ժամանակ 26-ի կուրը պէտք է համարել միայն նախաբան իսկական ճակատամարտերի, որոնք տեղի պիտի ունենան Գայջօուի և Դաշիցաօի մօտ: Անհաւանական չի լինի, որ գեն. Կուրօպատկինը վճռած լինի ընդունել մեծ ճակատամարտը ոչ թէ Գայջօուի մօտ, այլ Գայջօու-խէ գետից հիւսիս ձգուած հարթութեան վրայ»:

Գայջօուի գրաւուելու հետ համարեա միաժամանակ ճապոնական երրորդ զօրաբանակը առաջ շարժուեց իր դիրքից դէպի հարթութիւնը և գրաւեց Սինդեանը, որ գտնուած է Սիւեանից Դաշիցաօ կէս ճանապարհին: Կարծուած էր, որ այնուհետև պատերազմական գործողութիւնները արագութեամբ կը յաջորդեն իրար, և որ ճապոնացիները շարունակեն իրանց առաջխաղացութիւնը: Բայց մի ամբողջ շաբաթ երկու բանակները վրձնելով իրանց ճակատները մօտ հարիւր վերստի վրայ դէմադէմ՝ մնացին անզորձ, եթէ չհաշուենք այն բազմաթիւ մանրմունք կռիւները, որ նրանց առաջապահ գնդերի մէջ տեղի էին ունենում: Միայն յուլիսի սկզբներին նորից սկսեցին լուրջ

գործողութիւններ: Այս անգամ նախայարձակ եղան ուսմանը, որոնք զիմեցին Մոտիենլինեան լեոնացքի վրայ յուլիսի 4-ին, բայց յուլիսի 7-ին յետ քաշուեցին: Այդ կռուի մասին Բէյտերի գործակալութեան հեռագիրը անա թէ ինչ էր հաղորդում. «Յուլիսի 7-ին ճապոնացիները գրոհ տուին Չանտանի վրայ: Մտացուած մանրամասնութիւնները ցոյց են տալիս, որ գործը լուրջ էր: Մասնակցում էին մի քանի ուսական զիմիզիաներ: Արտիլերիան գործում էր լայն չափերով: Մոտիենլինեան լեոնացքում սպանուածները թիւն այնքան մեծ է, որ դիակները դեռ չեն կարողացել հողին յանձնել: Ներկայումս բանակն այրում է դիակները»:

«Իէլի Մայլ»-ը հաղորդում է յուլիսի 8-ից, որ նախընթաց օրը Օկուի բանակը նորից սկից առաջխաղացութիւնը և գրաւեց Չինսիլինը: Ռուս զօրքերն աննշան բանակութեամբ յետ նահանջեցին՝ բլրի վրայ դրուած Լրկու թնդանութիւնների պաշտպանութեան տակ»: Այս բոլորից պարզ է, որ ճապոնացիները վճռական գործողութիւնների ժամանակը իրանց համար հասած են համարում: Նրանք մի կողմից շարժուեցին դէպի Դաշիցասօ, և միւս կողմից՝ Նիւչժուան: Տեանցզինից քաշուած մի հեռագիր ասում է, որ «գեներալ Կուրօպատկինի հրամանով ուսմանը յուլիսի 11-ին սկսեցին մարտի Նիւչժուանը. հաղորդում են, որ ուսաց Երկաթուղային կայարանը այրում էր առաւօտեան.— ճապոնացիները դեռ չեն մտել Նիւչժուան: Ռուսաց քաղաքացիական իշխանութիւնները սկսեցին քանդել ուսաց վարչական շինութիւնները»: Եթէ հաւատանք այս հեռագրին, ուրեմն ուսմանը ազգամարտական նպատակով հարկ են համարել թողնել նաև Նիւչժուանը: Նրանք հաւանականաբար նահանջել են դէպի Սայչեն: Հեռագիրն ասում է, որ Նիւչժուանի մօտ կռիւքը շարունակուել է 14 ժամ մեծ կորուստներով երկու կողմի համար: Նիւչժուանի գրաւումը ճապոնացիների կողմից կատարուել է յուլիսի 12-ին:

Ոչ պակաս լուրջ է եղել նաև յուլիսի 11-ին Դաշիցասօի մօտ եղած կռիւքը: Առաջ ենք բերում այդ մասին Մուկղենից հաղորդուած հեռագրերը. «Լուրերին նայելով, ճապոնացիների փոքր զօրաբաժիններ շարժուում են դէպի Բինսիխու 60 վերստ դէպի արևելք Անտայ կայարանից և դէպի Սինչինտին: Այդ լուրը եթէ ճշտուել, ցոյց է տալիս, որ ճապոնացիները ձգտում են անցնել Լեասեանի միւս կողմը Մուկղենի ուղղութեամբ: Մասնակցողների ասելով յուլիսի 11-ի կռիւքը Դաշիցասօի մօտ սկսուեց առաւօտեան 6 ժամին և շարունակուեց մինչև գիշերուայ 11 ժամը: Մեր զօրքերը

պահեցին դիրքերը: Դաշիցաօից տաս վերստ դէպի հարաւ կոիւր արտիլլերիական էր: Հիմք կայ ենթադրելու, որ այսօր շարունակուող կռուի միայն նախապատրաստութիւնն էր այդ: Հետեանքը առայժմ յայտնի չէ: Երկրորդ հեռագիր. Մուկղեն. «Յուլիսի 11-ին Դաշիցաօի մօտ տեղի ունեցած թնդանօթային կըռուին մեր կողմից մասնակցում էին 100 թնդանօթներ: Կրակը շատ աջող էր և հակառակորդին լուրջ վնասներ հասցրեց: Ջարդուած են շատ թնդանօթներ և ումբային արկղներ: Ճապոնացիները փորձեցին յարձակում գործել զօրքի զետեղման կենտրոնի վրայ, բայց յետ մղուեցին: Մեր զօրքերին հրամայուեց նահանջել և գրաւել այն բարձրութիւնները, որոնք գտնուում են եօթ վերստ հիւսիս Դաշիցաօից. նահանջը կատարուեց կատարեալ կարգապահութեամբ: Մեր կորուստները յուլիսի 11-ին 50-ից աւելի չէ»: Յուլիսի 13-ի պաշտօնական հեռագրով գեն. Կուրօպատկինը հաղորդում է, որ յուլիս 12-ին ճապոնացիք գրաւեցին Դաշիցաօն:

Եւ այսպէս հետզհետէ թողնելով Դայչօու, Դաշիցաօ, և Նիւշօուան՝ գեն. Կուրօպատկինն իր գլխաւոր ոյժերը յետ է քաշում դէպի հիւսիս, դէպի Սայչեն և Լեաօեան, որոնք վաղուց հետէ լաւ ամրացրուած են: Կասկած չկայ, որ այդ կէտերում կըռուի կը լինի չափազանց լուրջ և հետեանքը վճռական այս կամ այն կողմի համար: Ինչ կը լինի մօտալուտ կռուի վախճանը, դժուար է կանխատեսել: Մի բան միայն պարզ է, որ նա կը լինի արիւնհեղութեամբ սարսափելի, որովհետեւ երկու կողմերն էլ լաւ են պատրաստուած: Ճապոնացիները իրանց գործունէութեան չափազանց զգուշաւոր և դանդաղ ընթացքով լայն ժամանակ տուին գեն. Կուրօպատկինին մի կողմից օգնական զօրքեր ստանալ: Անկասկած է, որ Ռուսաստանի բոլոր ծայրերից ամեն օր սիրիւրեան երկաթուղով նորանոր փնդեր են հասնում պատերազմական բեմը: Միւս կողմից շարունակ և դանդաղօրէն յետ քաշուելով՝ ոռւանները զգալի կերպով մօտեցել են իրանց գործողութեան յենակէտին և հեշտացրել պաշար ու սաղմամթերք հայթայթելու գործը: Սրանք առաւելութիւններ են, որոնք կարող են վճռական նշանակութիւն ունենալ առաջիկայ կոիւններում:

Որքան մեծ է այժմ ոռուական զօրքի թիւը, այդ դժուար է ասել որոշակի: Ինչ վերաբերում է ճապոնականին, այդ մասին աւելի կամ պակաս ենթադրութիւններ կան. առաջ ենք բերում միքանի թուեր՝ քաղելով Рус. Вѣд.-ից:

Ռուս թերթը իր հաշիւը հիմնում է ճապոնական զօրքերի քանակի մասին զանազան ժամանակ հաղորդուած հեռագրական լուրերի, տեղի ունեցած ճակամարտերում մասնակցող

գնդերի և պարբերաբար կատարուած դեսանդներէ չափի վրայ: Նա հաւանական է համարում, որ յուլիս ամսի սկզբներում ճապոնական բանակի կազմը մօտաւորապէս հետեւելը է.

I Գին. կուրոկին վարում է 2, 5, 9, 12 դիվիզիաները՝ 128 հազար մարդ, 294 թնդ.

II Մարշ Օկուն վարում է 4, 7, 8 դիվիզիաները՝ 81 հազար հոգ., 306 թնդ.

III Մարշ. Նոդզուն վարում է 10, 11, 13 դիվիզիաները՝ 76 հազար հոգ., 182 թնդ.

IV Մարշ Օյաման վարում է 1, 3, 6 դիվիզիաները՝ 87 հազ. հոգ., 458 թնդ.:

Ընդհանուր թիւն է 372 հազ. հոգ., 1240 թնդ.:

«Բոլոր հարցը նրանում է, ասում է «Рyс. Вѣд.», թէ միջոցներ կ'ունենայ ճապոնիան դուրս հանելու նորանոր գնդեր: Ծապոնիայի զինուորական ֆոնդը մեր «Вѣст. Финансовъ»-ի ասելով համնում է 559 միլիոն ռուբլու, մի գումար, որ հնարաւորութիւն կը տայ ճապոնիային պատերազմի դաշտ հանել 600,000 զինուորից ոչ պակաս: Առհասարակ, շարունակում է ուսս թերթը, վատ ծառայութիւն է մատուցանում հասարակութեան մեր մամուլի որոշ մասը, որ եռանդով տարածում է մտացածին լուրեր ճապոնիայի տնտեսական քայքայման և նրա բանակը քայքայող սովի և հիւանդութիւնների մասին: Զօրեղ թշնամուն յաղթելու համար մի մեծ երկիր իր յոյսը պէտք է դնի ոչ թէ այնպիսի դաշնակիցների վրայ, ինչպէս են սովը, հիւանդութիւնները, անձրևը, դեզինտերիան, խոլերան կամ լրագրական զովքերը, այլ միմիայն իր բանակի ոյժի, իր զինուորների արիութեան և իր զօրավարների հմտութեան վրայ»:

Ամեն անգամ, որ մի խոշոր պատերազմ պալիս է ազմկելու ազգերի խաղաղութիւնը, սովորաբար ընդհանուր երկիրը է ծագում, թէ մի գուցէ բռնկուած հրդեհը դառնայ ընդհանուր՝ ոտքի հանելով նաև չէզոք պետութիւններին: Նոյնպիսի երկիրը յայտնուեց նաև ուս-ճապոնական պատերազմի սկզբում: Բարեբախտաբար մինչև վերջերս այդ երկիրը չարդարացաւ, երկու կուռող ազգերը ձգուեցին իրանց ճակատագրին: Միակ նոր ամպը, որ խտացաւ քաղաքական հորիզոնի վրայ, Անգլիայի և Ռուսաստանի մէջ ծագած ինցիդենտն է: Հեռագրերը հաղորդեցին, որ ուսական «Պետերբուրգ» և «Մոտրենսկ» նաւերը կարմիր ծովում բռնել են անգլիական «Մալակկա» շոգենաւը: Նաւի քննութիւնից երևաց, որ նա տանում էր պատերազմական կոնտրաբանդ, և այդ պատճառով ուսները հարկ համարեցին տանել նրան Սեվոստոպոլ՝ համաձայն միջազգային օրէնքների: Սա-

կայն անգլիական կառավարութիւնը «Մալակկա»-ի բռնուելը համարում է ապօրինի, որովհետև, ասում է նա, նաևի վրայ եղած ռազմամթերքը տարւում էր Հոնգ-Կոնգ անգլիական պէտքերի համար: Գործի մէջ խառնուեց նաև Թիւրքիան, որ թոյլ էր տուել առևտրական «Պետերբուրգ» և «Սմոլենսկ» նաւերին առևտրական զբօշակի տակ անցնել Դարդանելից:

Անգլիական մամուլը այդ դէպքին խիստ մեծ նշանակութիւն տուեց. համարեա բոլոր թերթերը միաբերան պահանջում են իրանց կառավարութիւնից արագ և վճռական գործողութիւն: Միւս կողմից Պետերբուրգի և Լոնդոնի կարիներտները բանակցութեան մէջ մտան: Ռուսաց ղեսպանը Լոնդոնում անձամբ բացատրութիւններ է տուել անգլիական արտաքին գործերի մինիստրին: Թէև վերջին հեռագիրը հաղորդում է յուլիսի 14-ից, որ «Մալակկա»-ն ռուսական զբօշակով հասել է Ալժիր, ուրեմն դեռ ազատ ձգուած չէ, բայց հազիւ թէ այս դէպքը առաջ բերի լուրջ բարդութիւններ Ռուսաստանի և Անգլիայի մէջ: Հաւանականաբար վէճը կը լուծուի դիպլոմատիական ճանապարհով:

Եթէ մի կողմից ներկայ պատերազմը իր սարսափներով ծանրացած է դեռ աշխարհի վրայ, միւս կողմից միսթարական է տեսնել, որ արևմտեան Եւրոպայում խաղաղասիրական գործը նոյնպէս նորանոր քայլեր է անում: Փրանսիայի, Անգլիայի և Իտալիայի մերձեցումը արդէն տալիս է իր պտուղները: Նախ անհաւանական չէ այն ենթադրութիւնը, թէ մասամբ գուցէ այդ երեք պետութիւնների, մանաւանդ առաջին երկուսի համաձայնութեանն ենք պարտական ներկայ պատերազմի այս առանձնացումը երկու կողմող կողմերի մէջ: Եւ յետոյ՝ խաղաղասիրական շարժումը աւելի և աւելի լայն ծաւալ է ստանում. վերջերս՝ երբ էդուարդ VII Կիլում այցելեց գերմանական կայսրերին, շատերը այն կարծիքի էին, որ երկու պետերի տեսակցութիւնը ոչ մի քաղաքական նշանակութիւն չունի: Բայց հազիւ անգլիական թագաւորը վերադարձել էր, որ հեռագրերն երբ հաղորդեցին, թէ Անգլիայի և Գերմանիայի մէջ նոյնպիսի համաձայնութիւն է կայացել, որպէս Փրանսիայի և Անգլիայի մէջ:

Փաստը վերին աստիճանի միսթարական է, ևս առաւել որ այս անգամ միջնորդ դատարանին դիմելու ցանկութիւն յայտնողը Բիսմարկի Գերմանիան է, այն ռազմասէր պետութիւնը, որի համար մինչև այժմ զէնքը լաւագոյն դատաւորն է հանդիսացել միջազգային խնդիրներում: Հաւատանք արդեօք:

որ այս համաձայնութիւնները մեծ պետութիւնների մէջ պիտի կարողանան լուծում տալ բազմաթիւ մանր ու խոշոր հարցերին, որոնք ծանրացած են մարդկութեան գլխին և որոնք այնքան անմեղ արեան պատճառ են դառնում, ինչպէս արևելեան հարցն է նրա հետ կապուած քրիստոնեայ ժողովուրդների ճակատագրով: Գերմանիան, որ մինչև այժմ շարունակ քաջալերել է տաճիկ կառավարութեան խժոժութիւնները իր հպատակ քրիստոնեաների դէմ, այս համաձայնութիւնից յետոյ պէտք կը համարի՞ արդեօք զոնէ չխանգարել միւս պետութիւնների ջանքերը զսպելու տաճիկական գազանութիւնները, այդ ցոյց կը տայ մօտաւոր ասպագան: Առայժմ գո՞ լինենք և՛ նրանով, որ խաղաղասիրական շարժումը աւելի ու աւելի լայն ծաւալ ստանալով՝ բռնում է քաղաքակիրթ ազգերին, և յուսանք, որ չնայելով պատերազմի ահաւոր կոշմարին, որ ցցուած է աշխարհի առաջ, այնուամենայնիւ յաղթանակը պատկանում է լուսաւոր մտքերին, մարդասիրութեան, կեանքի խաղաղ առաջադիմութեանը: Արեան պաշտամունքը, հին դարերի ժառանգութիւնը բանականութեան, քաղաքակիրթ հասկացողութիւններին բոլորովին ներհակ մի երևոյթ է, որ վերջիվերջոյ պիտի թաղուի ժամանակի հետ, ինչպէս շատ ուրիշ նախապաշարմունքներ, որոնցից մնացել են յիշողութիւններ միայն:

Յայտնի է, որ խաղաղասիրական այս շարժումը ծագում առաւ և ձևակերպուեց Փրանսիայում: Կարելի է ասել, որ ո՛չ մի երկրի մտքի մարդիկ այնպիսի մեծ թուով չեն մասնակցում այդ շարժմանը, որքան Փրանսիայում: Այս երկիրը, որ նոր, լուսաւոր գաղափարների այնքան սիրահար է և այնպէս բուռն կերպով յափշտակում է նրանցով, այս օրերն օրէնսգրական երկու նոր ակտերով դարձեալ փառաւոր օրինակ հանդիսացաւ քաղաքակիրթութեան մեծ ճանապարհի վրայ: Հեռագիրները համարեա միաժամանակ հաղորդեցին երկու կարևոր լուր Փրանսիայից. — Պարլամենտը միջանի փոփոխութիւններով ընդունել է զինուորական երկամեայ ծառայութեան օրինագիծը, իսկ սենատը առանց փոփոխութիւնների ընդունել է կրօնական միաբանութիւնների դպրոցները ոչնչացնելու օրինագիծը: Այս երկու օրինագիծների ընդունուելու օրը ժորեսը համարում է մեծ՝ Փրանսիական դեմոկրատիայի պատմութեան մէջ: Հռչակաւոր հրապարակախօսի և մտածողի այս գնահատումը չափազանցութիւն չի: Երրորդ հանրապետութիւնը այս վճռական քայլերով դէպի աշխարհիկ գաղափարների և խաղաղութեան ու արդարութեան յաղթանակը՝ ապացուցեց, որ նա բաւականա-

չափ հօր է արդէն իր ամենադժուար, բայց և ամենակենսական խնդիրները վճռելու համար:

Կրօնական միաբանութիւններին վերաբերեալ նոր օրէնքով հանրապետական կառավարութիւնն իրաւունք է ստանում փակել ամեն մի կղերական դպրոց, երբ պէտք համարի, իսկ տաս տարուց յետոյ նա պարտաւոր է բոլոր այդպիսի դպրոցների փոխարէն բանալ աշխարհական դպրոցներ: Կղերականութիւնը ճկուն է, նա գիտէ հազարումի կերպարանք ընդունել, յարմարուել անհին ու ժամանակին. գուցէ նա կարող լինի էլի տարբեր ձևերի տակ փրկել միջանի դպրոց, միջանի մոլեռանդ դասատուներին, բայց այդքանը չափազանց քիչ է՝ համեմատելով այն հսկայական ցանցի հետ, որով կաթոլիկ կղերը պատել էր ամբողջ Ֆրանսիան: Մինչև այժմ շնորհիւ բազմաթիւ դպրոցների Ֆրանսիայի հասարակական, քաղաքական և նոյնիսկ ընտանեկան կեանքը համարեա ամբողջապէս կղերի ձեռքին էր, մի հանգամանք, որ հնարաւոր էր դարձնում յօգուտ այս կամ այն գահական թեկնածուի կամ պարզապէս արկածախնդրի առաջ բերել coup d'état-ներ: Եթէ երեսուն տարուայ գոյութիւնից յետոյ հանրապետական կարգերը Ֆրանսիայում դեռ բաւականաչափ հաստատ չեն համարւում, այդ մեծաւ մասամբ վերագրելի է կրօնական միաբանութիւնների կրթական հաստատութիւնների ազդեցութեանը: Գամբետտան իրաւունք ունէր, երբ բացազանչում էր. «Le cléricalisme, voilà l'ennemi!» (կղերականութիւն, ահա թշնամին): Այժմ շնորհիւ նոր օրէնքի այդ կարևոր թշնամին ընկնում է, եթէ միայն կոմբին յաջորդող կառավարութիւնները շարունակեն նոյն եռանդով իրագործել ընդունուած օրէնքը:

Ինչ վերաբերում է զինուորական երկու տարուայ ծառայութեան, դա ոչ միայն ընդհանուր քաղաքական տեսակէտից խոշոր առաջադիմական քայլ է, այլ և Ֆրանսիայի ներքին կեանքում դա արդարութեան գործ է: Նոր օրէնքով ջնջւում են այն բազմաթիւ արտօնութիւնները, որոնցով օգտւում էին Ֆրանսիայում հարուստ և կրթուած դասակարգերը: Աշխարհի այս բախտաւորները կարողանում էին ազատուել զինուորական ծառայութիւնից զանազան միջոցներով կամ շատ կարճ ժամանակ ծառայել, օր.<sup>1</sup> մի տարի, և երկրի պաշտպանութեան ամբողջ ծանրութիւնն ընկնում էր միայն միջին և ստորին դասակարգերի վրայ: Սրանք էին սովորական զինուորները, իսկ արտօնեալ դասակարգերը եթէ բարեհաճէին ծառայել, դա կը լինէր միայն սպայ զառնալու համար: Նոր օրէնքով իւրաքանչիւր Ֆրանսիացի առանց բացառութեան պարտաւոր է

ծառայել երկու տարի: Այսպիսով վերանում է այն անարդարութիւնը, որ թոյլ էր տալիս աղքատ, կարօտ ծնողի որդուն խլել իր աշխատանքներից և միքանի տարի փակել զօրանուցում, մինչդեռ հարուստը, ապահովուածը, որ աշխատող ձեռքերի պէտք էլ չէր զգում, կարողանում էր իր որդուն կրթութիւն տալ և ազատել զինուորական ծառայութիւնից: Նոր օրէնքը երևի վերջնականապէս ոյժ կը ստանայ մի կամ երկու տարուց յետոյ, և այդպիսի զինուորական ծառայութեան նախկին ժամանակամիջոցը կը կրճատուի զգալի չափով չունևոր դասի համար:

Երբորդ իոշոր քաղաքական-հասարակական հարցը, որ ներկայումս յեղեղում է Փրանսիական ձեռնհաս շրջաններում, դա եկեղեցու և պետութեան բաժանումն է: Դա մի հարց է, որ իր ոչ շատ հեռուոր պատմութիւնն ունի: 1801 թ. յուլիսի 15-ին Պիոս VII պապը համաձայնութեան մտաւ Նապոլէօն I-ի հետ, որ այն ժամանակ առաջին կոնսուլ էր, վերջ սալու համար կղերականութեան և եկեղեցու դէմ Մեծ Յեզափոխութեան ժամանակից սկսած հալածանքներին: Այդ համաձայնութեամբ հոգևորականները ստանում էին Փրանսիական կառավարութիւնից վայելուչ վարձատրութիւն: Եկեղեցիները վերագարձնւում էին եպիսկոպոսներին, բացի նրանցից, որոնք վերջը նականապէս զբաւուած էին համարում: Դրա փոխարէն Փրանսիական կառավարութիւնն իրաւունք էր ստանում նշանակել եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ, ապա առաջարկել պապին ի հաստատութիւն: Եպիսկոպոսները նշանակում էին քահանաներին, որոնք յետոյ պէտք է հաստատուէին կառավարութիւնից: Բոլոր հոգևորականները պաշտօն ստանձնելիս պարտաւոր էին երդումն տալ և եկեղեցիներում աղօթել կառավարութեան համար: Ահա այս փոխադարձ համաձայնութիւնն է Հոմի քահանայապետութեան և Փրանսիական կառավարութեան մէջ, որ յայտնի է «կոնկորդատ» անունով: Այս օրէնքը ոյժ ստացաւ 1802 թ. ապրիլին. այնուհետև ըստաւերացիայի ժամանակ որոշ յաւելացումներ և կրճատումներ եղան կոնկորդատի մէջ, բայց ընդհանուր և էական մասը մնաց անփոփոխ մինչև մեր օրերը, և նրա վերայ են հաստատուած Փրանսիական եկեղեցու և կառավարութեան յարաբերութիւնները: Մի ամբողջ դարի պատմութիւնը ցոյց առեց, որ կոնկորդատի վրայ հիմնուելով՝ կաթոլիկ եկեղեցին Փրանսիայում ապրում էր պետական գանձարանի տուած նպաստով և միևնոյն ժամանակ շարունակ աշխատում էր նոյն պետութեան, մասնաւորապէս հանրապետական կարգերի դէմ: Ահա այս կացութիւնն են ուզում վերացնել Փրանսիական ա-

դատ մտքի լաւագոյն ներկայացուցիչները՝ բաժանելով եկեղեցին պետութիւնից:

Աղմուկն ու հակառակութիւնը պահպանողական-կղերական շրջաններում ահագին է: Բաժանել եկեղեցին պետութիւնից նշանակում է ջնջել կոնկորդատը, բացարձակապէս հերքել որևէ դաւանութեան առաւելութիւնը պետութեան մէջ, չճանաչել պետական կրօն և թողնել, որ բոլոր եկեղեցիները հաւասար իրաւունքներով և պարտքերով կառավարուեն ջերմեռանդ ծխականների կամաւոր նուէրներով:

Վաղուց էր, որ մամուլի մէջ և նոյն կառավարչական շրջաններում ծեծւում էր այս հարցը. դեմոկրատիական կուսակցութիւնները պարլամենտում յարմար առիթ էին որոնում վճռական ձևով հրապարակի վրայ դնելու արդէն հասունացած ինդիքը, և այդ փառաւոր առիթը նրանց տուեց Պիոս X պապը իր վերին աստիճանի անդգոյշ և չմտածուած քայլով: Ուրիշ անուն չի կարելի տալ նրա սրբաբոյս բողոքին Լուբէի այցելութեան դէմ իտալական թագաւորին: Յայտնի է, որ Փրանսիական կառավարութիւնը պապի ընթացքից վրդովուած՝ յետ կանչեց Վատիկանի իր դեսպան Նիզարին: Պապը ի պատասխան Փրանսիական կառավարութեան այս խիստ քայլին հրամայեց Լաւալի և Դիժոնի եպիսկոպոսներին հրաժարուել իրանց պաշտօններից, իսկ Րուանի, Ալբիի, Աւինիօնի, Մանզի եպիսկոպոսներին կանչեց Հոմ, մի հրաւէր, որ հաւասար է պաշտօնանկութեան: Բոլոր այս եպիսկոպոսները համարւում են հանրապետութեան հաւատարիմ մարդիկ, ուստի հասկանալի է Վատիկանի խտտութիւնը նրանց վերաբերմամբ:

Փրանսիայի դէմ արած Պիոս X-ի այս նոր քայլը ահագին վրդովմունք առաջ բերեց: Ազատամիտ մամուլը եռանդուն կերպով պահանջում է, որ Կոմբն էլ չբաւականանայ կիսատ միջոցներով և զնայ մինչև վերջը—այսինքն եկեղեցու և պետութեան բաժանումը: Շատ հաւանական է, որ Փրանսիական կառավարութեան և Վատիկանի մէջ առաջ եկած խոշոր ընդհարումը կարողանայ վերջիվերջոյ պսակել ղիմոկրատների վաղուց հետէ փայփայած իղձերը, մի բան, որ կարելի է ի բոլոր սրտէ ողջունել:

Վերջին ժամին լրագիրները հաղորդում են Պարիզից, որ յուլիսի 3-ին կայացաւ մինիստրական խորհուրդ քննելու համար Վատիկանի հետ ունեցած ընդհարումը: Նիստը չափազանց արմըկալի էր: Սկզբում Կոմբը ներկայացրեց միջնադէպի պատմութիւնը և հաղորդեց, որ Վատիկանը Դիժոնի և Լաւալի եպիսկոպոսներին դիմել է չորս նամակով, որոնցից իւրաքանչիւրը առանձին

վերցրած՝ կոնկորդատի խախտումն է: Մինիստր-նախագահն առաջարկեց իր ընկերակիցներին դիմել Վատիկանին՝ մի վերջնագրով (ու՛լտիմատում) և պահանջել, որ այդ նամակները յետ վերցնուեն. իսկ եթէ Վատիկանը չի համաձայնուիլ այդ անել, այն ժամանակ դիպլոմատիական յարաբերութիւնների խզումը Ֆրանսիայի և Վատիկանի մէջ պէտք է լինի վերջնական, և պապական նունցիան Պարիզում պէտք է իսկոյն յետ ստանայ իր հաւատարմաթղթերը: Կոմբի առաջարկը հանդիպեց առարկութիւնների միջանի մինիստրների կողմից: Բայց վերջիվերջոյ նրա կարծիքը գերակշիռ հանդիսացաւ, որովհետև Կոմբը փաստաթղթերով ապացուցեց, որ Վատիկանի նամակները բացարձակօրէն հակասում են կոնկորդատին: Մինիստրական խորհուրդը յանձնարարեց արտաքին գործերի մինիստր Դելկասսէին յայտնել պապական նունցիային այդ վճիռը ամենակարճ ժամանակում:

Ահա մօտաւորապէս ինչ դրութեան մէջ են Վատիկանի և Ֆրանսիական կառավարութեան յարաբերութիւնները:

Այս գարնանն սկսուած սարսափները դեռ շարունակուած են Թիւրքիայի հայկական նահանգներում: Ինչպէս յայտնի է լրագրերից, Մասունն իսպառ աւերուած է, իսկ Մշոյ դաշտի բազմաթիւ գիւղեր ենթարկուել և ենթարկուած են քիւրդ հրոսակների և տաճիկ զօրքերի կատաղի յարձակումներին: Խաղաղ ազգաբնակչութիւնը ցրիւ է եկել, բազմաթիւ կանայք, երեխաներ, ձերեր կոտորուել են անողորմ կերպով: Ահա թէ ինչ է ասում Մասունի կոտորածի մասին անգլիական «Daily News» լրագիրը, որ շատ տեղեակ է թիւրքական գործերին.

«Մասունի լեռնային գիւղերում աղէտից առաջ 12,000-ից աւելի ժողովուրդ կար (և անգլիական լրագիրը յականէ անուանէ առաջ է բերում գիւղերի ցուցակը ամեն-մէկի բնակիչների թուով): Դրանցից մօտ 2800-ը տարուել են Մուշ, այդքան հողի էլ պատասպարուել են սարերում: Մնացած ժողովուրդը, 5—6000 մարդ, կոտորուել է: Հացը կամ ուրիշ ուտելիքը այրել են, տաւարը մորթուել են կամ քշել տարել: Կոտորածին մասնակցող քիւրդերը պատկանում են այս ցեղերին—սարոն, շալայ, բաղդան, շէյխուլթան, պարիկ և բշկոտան: Նրանց պարագլուխն էր գէլանցի շէյխ Անմէդը, շէյխ Մահմուդի որդին, որ 1894-ի կոտորածի ժամանակ հռչակուեց իր անդթութիւններով: Պաշարուած Տալփորիկից փախած մօտ 300 հայ ընտանիք ընկան քիւրդերի լարած թակարդի մէջ և սրախողխող եղան թուով մօտ 1500 հոգի: Մի ուրիշ շարդ տեղի ունեցաւ Ախրի գիւղի

մօտ, ուր սպանուածները մարմինները գետը թափուած լինելով՝ ջրի առաջը կտրել էին: Որպէսզի ջուրը չյորդէ, թիւրքերը հայերի դիակներէց կազմուած թումբը ցրեցին թընդանօթների հարուածներով: Քիւրդերի և թիւրքերի զո՞հ դարձան մեծ մասամբ անպաշտպան կանայք և երեխաներ»:

Այդ դեռ Սասունի մասին. նման սարսափներ շարունակուում են ինչպէս ասացինք նաև Մշոյ դաշտի վրայ՝ Հնայելով և Երոպական կոնսուլների ներկայութեանը և սուլթանի մի իրադէին, որով պատուիրուում է փախստական հայերին իրանց բնակավայրը հասցնել վերստին: Առհասարակ շատ լաւ յայտնի է սուլթանական իրադէների արժէքը, մանաւանդ երբ հարցը վերաբերուում է քրիստոնեաների վիճակի բարուոքման: Սուլթանը այս նոր իրադէով էլի մի նոր փաստ տուեց այն խայտառակ նենգութիւններին, որ կոչուում է թիւրքական քաղաքականութիւն: Արդարև ահա թէ ինչ են գրում, «Daily News» և «Humanité» թերթերը՝ քաղելով իրանց տեղեկութիւնները ճշգրիտ աղբիւրներից:

«Սուլթանի իրադէն Սասունի փախստականներին իրանց տեղերը վերահաստատելու մասին միայն մի մանէօվը էր, որի նպատակն էր խաբել պետութիւնների աշակրջութիւնը. հէնց նոյնիսկ իրադէի հրատարակման օրը քիւրդերը աւերեցին միքանի քաղաքներ և կոտորեցին շատ ժողովուրդ: Մուշում առաջուայ պէս կեանք չկայ. խանութները փակուած են. ոչոք չէ վստահանում փողոց դուրս գալ: Այնուամենայնիւ ամեն օր սպանուած են գտնում այս կամ այն հարուստ հային: Թիւրքաց վարչութիւնը գիտէ այդ մասին ամենից առաջ. իսկոյն նշանակուում է խնամակալութիւն, և ժառանգները մուրացկան են դառնում: Մուշի և շրջականների մէջ ոչ մի յարաբերութիւն չկայ. ով յանդգնոււմ է դուրս գալ գիւղերից, քիւրդերի զոհն է գտնում: Ամեն տեղ Մուշում և շրջականերում սով է: Անդրանիկի դուրսը գնահատուած է 1000 լիւր (8500 բուբլի)»:

Թիւրքական կառավարութիւնը չափազանց լաւ է ուսումնասիրել «եւրոպական համաձայնութիւն» կոչուած քառակուսի անուաւոր սայլը, որպէսզի իր կատարած գազանութիւնների մէջ մի բոպէ կանգ առնի՝ քաշուելով եւրոպական ներկայացուցիչներէց, որոնք այժմ գտնուում են սարսափների ենթարկուած վայրերում: Տարօրինակ չէ, որ Լոնդոնի «Standard» լրագիրը հետեւեալ տեղեկութիւնն է ստացել Կ. Պոլսի իր թղթակցից. «Եւրոպական պետութիւնների Մուշ ուղարկուած երեք փոխ-հիւպատոսները զեկուցանում են, որ աւելորդ են համարում իրանց բնակութիւնը այդտեղ, որովհետև նրանք անգոր են արգելել

Թիւրքերին անգթութիւններ կատարել հայերի դէմ: Թիւրքերը ազդու կերպով հերքում են այդ մեղադրանքների արդարացիութիւնը: Դեսպանութիւնները մանրամասն քննութիւն սկսեցին, բայց դեռ մինչև այժմ չեն ստացել ճիշտ տեղեկութիւններ: Սպասում են, որ Վանի փոխ-հիւպատոսների ձեռնարկած ուղևորութիւնը երկրում հարկաւոր նիւթը կը հայթայթէ գործերի իսկական գրութիւնը քննելու համար: Առհասարակ Թիւրքիայում ապրող եւրոպացիները այն կարծիքի են, թէ եւրոպական պետութիւնները նախքան սկսեն Բ. Դրան դէմ դիպլոմատիկական արշաւանք, պարտաւոր են որոշել, թէ մինչև որ աստիճան պէտք է առաջ տանեն այդ արշաւանքը: Այլապէս Թիւրքերը հմտացած ձգձգման արուեստի մէջ միշտ գիտեն ձգձգել ամեն մի գործ, մինչև որ եւրոպական դիպլոմատիան կը յոգնէ և կը ձանձրանայ»:

Եւրոպան քննում է դեռ, իսկ այնտեղ Սասունի բարձունքների և Մշոյ դաշտում հազարաւոր անմեղներ ամենայն օր կոտորւում են սովից, Թիւրքի, քիւրդի սրերից: Իրերի այս կացութեան մէջ, ինչպէս ասում է եւրոպական մամուլը, տարօրինակ չէ, որ յուսահատուած ժողովուրդը դիմում է ծայրայեղ միջոցների, որ դժբախտ երկրի այս կամ այն կէտում յայտնւում են հայ հրոսակախմբեր: Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դելկասսէն անգամ, որի զգուշաւորութիւնը այս հարցում երբեմն հասնում է վրդովեցուցիչ անտարբերութեան, վերջիվերջոյ ստիպուած եղաւ պարլամենտում հրապարակով ասել, թէ Թիւրքահայերին զէնքի դիմելուց դուրս ուրիշ միջոց չի մնում:

Մի բան միայն մխիթարական է, որ եւրոպական զանազան պետութիւնների հասարակական կարծիքը ընդհանրապէս սաստիկ վրդովուած է Թիւրքական այս վերջ չառնող զազանութիւններից: Ինչպէս երևում է մայրաքաղաքի մամուլի հաղորդած հատուկաւոր տեղեկութիւններից, այդ վրդովմունքը ի միջի այլոց շատ խոշոր չափեր է ընդունել մանաւանդ Իտալիայում: Այսպէս «Новое Время» լրագիրը գրում է.

«Հռոմում գոյութիւն ունի մի ընկերութիւն «Pro Macedonia e Armenia» («Մակեդոնիայի և Հայաստանի դրութեան բարուորման համար»): Նորերս, ինչպէս հաղորդում է Սոֆիայի «Вечерняя Почта» լրագիրը, նա կազմակերպեց «Adriano» թատրոնում ժողով, որին ներկայ էին սենատորների, պատգամաւորների, զրոյնների, պրոֆեսսորների մեծ թիւ և շատ անձինք, որոնք ցաւակցում են երկու երկրների ծանր դրութեան: Շատ ձառեր արասանուեցին, որոնց մէջ դատապարտւում էր իտա-

լական կառավարութեան ծայրայեղ զիջող վերաբերմունքը դէպի Բ. Դուռը, որ շարունակում է իր քրիստոնեայ հպատակների վերաբերմամբ բռնակալութեան իր վաղեմի քաղաքականութիւնը: Իբրև վերջարան՝ ընդունուեց մի որոշումն, որով բողոք է յայտնում Հայաստանում և Մակեդոնիայում կատարուող անզթութիւնների դէմ թիւրքաց զինուորների ձեռքով և համոզում է ևրոպական պետութիւններին պնդել Բերլինի դաշնագրի և խոստացուած բեֆորմների իրագործման վրայ»:

Աւելի խոշոր և աւելի ազդու է եղել յունիսի 29-ին Լոնդոնում Ձէմս Բրայսի նախագահութեամբ գումարած միջազգային միտինգը, ուր ներկայ էին պատգամաւորներ Ֆրանսիայից, Իտալիայից և Անգլիայից: Ահա թէ ինչ է գրում այդ մասին Humanité-ի ուղարկած յատուկ թղթակիցը. «Ո՛չ մի դժբախտութիւն այնքան մեծ չէ, որքան այն, ինչ բաժին է ընկել թիւրքահայ ժողովրդին, այս մարտիրոս ժողովրդին, ինչպէս իրաւացի կերպով անուանեց Պիեր Բիշարը: Տաս տարի է, ինչ լուում են նրա օգնութեան աղաղակները, ունրա ճիչերը, յուսահատ ճիչերը դէպի քաղաքակիրթ համարուած ազգերը, առանց որ կառավարութիւնները մի վճռական ժեստով ապահովեն մարդկային հաղարաւոր արարածների գոյութիւնը: Սակայն մի քանի մարդիկ աշխատել են զարթեցնել հասարակական ուշադրութիւնը, յուզել ևրոպական հասարակաց կարծիքը և անընկճելի տոկունութեամբ աշխատել են ստեղծել վրդովմունքի և յոյզի մեծ շարժումը, որ պիտի կարողանայ բռնադատել անտարբեր կառավարութիւններին: Շնորհիւ Անգլո-հայկական ընկերութեան և Pro Armenia-ի խմբի հնարաւոր եղաւ դէպի այս մարդասիրական գործը ստեղծել աւելի և աւելի աճող հետաքրքրութիւն: Այսօր շնորհիւ ժորեսի, Պրեսանսէի, Սամբայի ամենքը տեղեակ են հայկական հարցին:

Միևնոյն ժամանակ հայասիրական շարժումը բռնեց Իտալիան, և մի շատ գործունեայ կոմիտէ կազմուեց այնտեղ, որի գործունէութիւնը այսօր տարածուած է իտալական ամբողջ թերակղզու վրայ»:

Այսպէս էր երկրի կացութիւնը, երբ Սասունի անցքերի լուրը Եւրոպա հասաւ: Կարմիր Սուլթանը իր մանր կոտորածների սխտեմից վերստին անցել է խոշոր ջարդերի: Ամեն կողմից բարձրացան զայրոյթի աղաղակներ 1894 թ. սարսափների այս վերանորոգութեան դէմ: Իտալիան՝ թէև վերջինը միայն և այս շարժմանը՝ ամենահզօր կերպով բողոքեց: Պաւլիայում, Պալերմոյում, Հոմոնում հազարաւոր քաղաքացիներ նշաւակեցին թիւրքական գազանութիւնները ազդու ցոյցերով:

Ձարդերի զէմ սկսած այս շարժումը զօրացնելու համար վճռուեց Լոնդոնում գումարել մի միջազգային կոնգրեսս անգլո-հայկական ընկերութեան հրաւերով: Կազմակերպող կոմիտէին ամեն կողմից հասան ամենանշանաւոր մարդկանց համաձայնութիւնները: Որոնք անկարող եղան ներկայ լինել, ուղարկեցին իրանց ջերմ համակրութեան արտայայտութիւնները նամակով:

Այսպէս Անատոլ Ֆրանսը գրում է. «Սիրելի պարոններ: Սորապէս ցաւում եմ, որ անկարող եմ ներկայ լինիլ Հայաստանի համար գումարուած այս կոնգրեսին: Դուք հաւաքուել էք մարդասիրական և խաղաղասիրական միեւնոյն նպատակով: Անօգուտ ցանկութիւնների, դատարկ բողոքների համար չէ այս գումարումը: Ձեր պահանջը որոշ է, օրինական և գործնական. դա Բերլինի դաշնագրի կատարեալ իրականացումն է: Այս դաշնագրով Եւրոպան խնամակալ է Թիւրքիային: Հնարաւոր է, որ Եւրոպան թոյլ տայ իրան ասել սուլթանին. «Կոտորիք, միայն թէ վճարիք»: Հնարաւոր բան է, որ Եւրոպան, այս խնամակալ Եւրոպան, որ իրան բաւականաչափ զինուած է համարում, երբ հարկաւոր է թնդանօթի որոտով վճարել տալ իր պարտամուրհակները, ինքն իրան անուօր գտնի, երբ կոտորում են երեք հարիւր հազար սուլթանի հպատակներ: Միթէ տնտեսական հարցերն են միայն հետաքրքրում Եւրոպային: Պարոններ, հայկական հարցը նոյնիսկ մի անտեսական հարց է, եթէ կամենում էք: Քիւրդերի կոտորած այս ժողովուրդը սրբան օգտակար կարող էր լինել քաղաքակրթութեան: Իրանց խելքով, գործունեայ բնաւորութեամբ հայերն ընդունակ են ստեղծելու սերտ յարաբերութիւններ Եւրոպայի և Ասիայի մէջ: Նրանց պատմական դերն է փոխանակել աշխարհի այս երկու մասերի արտադրութիւնները: Թող նրանց միայն թոյլ տան ապրել, և նրանք կը դառնան վերստին այն, ինչ էին մի ժամանակ, այսինքն քաղաքակրթութեան ամենաեռանդուն գործակալներ Արևելքում:

Ձեր շնորհիւ, պարոններ, հայկական այս խոշոր հարցը մտնում է մի նոր շրջանի մէջ: Նախ նա յուզեց հասարակութեան խիղճը, այսօր նա բերուել է Ձեր երկիրը, գործնական խնդիրների, անընկճելի էներգիայի այս երկիրը, և այն այնպիսի կառավարական մարդկանց առաջ, որոնք կարող են ազգել պետական իշխանութիւնների վրայ: Եւ այդ հանգամանքըն ինձ ուրախացնում է Հայաստանի և մարդկութեան համար»:

Յայտնի հրատարակախօս և Ֆրանսիական պարլամենտի անդամ Պրեսանսէն բազմաթիւ ճառերից յետոյ ներկայացնում

է հետեւեալ բանաձևը, որ ընդունուում է միաձայն, ինչպէս հարորդում է «Рус. Вѣд.» լրագիրը.

«Սորին հաճոյքի զգացումով կոնֆերենցիան հաստատում է, որ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև կատարեալ միութիւն կայ, որ այնքան կարևոր է, ի նկատի ունենալով Թիւրքիայի ցաւալի վերաբերմունքը այն պարտաւորութիւններին, որ դրուած են նրա վրայ Բերլինի դաշնագրի 23 և 61 յօդուածներով, որոնք ապահովացնում են ընդհանրապէս եւրոպական և ասիական վիլայէթների համար. կոնֆերենցիան յոյս ունի, որ Լոնդոնի, Պարիզի և Հոմոմի կաբինետները առանց ժամանակ կորցնելու կ'անեն այն, ինչ որ կախուած է իրանցից, որպէսզի ամենաշուտ կերպով մտցնեն ընդհանրապէս օսմանեան կայսրութեան մէջ»: Այդպիսի ոգով, բայց աւելի խիստ ոճերով կազմուած են ուրիշ բանաձևներ, որ ներկայացրին Հերեֆորդի եպիսկոպոսը, դ'էտուրնել դը-Կոնստան և կոնֆերենցիայի ուրիշ անդամները: Բնորոշ է Սերբիայի, Բուլղարիայի և Մոնտենեգրոյի պատուիրակների բացակայութիւնը կոնֆերենցիայում:

Նոյն կոնգրեսի մասին «Рус. Вѣд.» թերթը հրատարակեց մի վերին աստիճանի հետաքրքիր առաջնորդող, որ առաջ ենք բերում քաղուածօրէն.

«Լոնդոնում հէնց նոր աւարտեց իր աշխատանքները միջպարլամենտային կոնֆերենցիան, որը զբաղուում էր արևելեան հարցով: Այդ կոնֆերենցիային մասնակցում էին Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի աչքի ընկնող պատգամաւորներից և ուրիշ քաղաքական գործիչներից շատերը, որոնց թւում Չեմս Բրայս, Պրեսանսէ, կոմս Էբերդին և շատ ուրիշները:

Բրիտանական արտաքին գործերի մինիստր լորդ Լանսդոուն պաշտօնապէս յայտնեց կոնֆերենցիայում, որ Անգլիան երբէք չի հրաժարուի իր բարոյական պարտաւորութիւնից Թիւրքիայի ճնշուած քրիստոնեայ ազգաբնակչութեան վերաբերմամբ: Ինչպէս երևում է Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրութեան մօտիկ օրգանի՝ «Temps» լրագրի առաջնորդող յօդուածից, նոյն կարծիքն ունի և Դելկասսէն: Ինկատի ունենալով այդ, շատ հաւանական է դառնում այն լուրը, որ միաժամանակ հազորդեցին միքանի լրագրներ այն մասին, թէ երեք պետութիւններ՝ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան պատրաստուում են միաբան քայլ անել ստիպելու համար Բ. Դրանը՝ բարենորոգումներ մտցնելու Ասիական Թիւրքիայի այն վիլայէթներում, որոնց ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կազմում են հայերը: Պետութիւնների այդպիսի քայլը

միակ ելքն է այն ծանր դրութիւնից, որի մէջ տանջւում են թիւրքահայերը, և որը այդքան հասկանալի է դարձնում նրանց պարբերական ապստամբութիւնները թիւրքաց տիրապետութեան դէմ: Բ. Դուռը ոչ մի ցանկութիւն չունի բեֆորմներ մտցնելու: Նրա համար մի բեռ է նրա քրիստոնեայ ազգարնակութիւնը, որին նա միշտ համարում է իր անհաշտ թշնամին և աշխատում է, որ այդ թշնամիները պակաս լինեն»:

Վերոյիշեալ յօդուածում «Temps» լրագիրը անհրաժեշտ է համարում ծովային ցոյցը այն դէպքում, եթէ թիւրքիան չի կատարի միանգամից նրանից արած պահանջները, և Պարիզի զգոյշ օրգանի այդ կարծիքը, որ երբէք առանց կարիքի ասպարէզ չի գալիս ի պաշտպանութիւն ծայրայեղ միջոցների, հազիւ թէ կարելի է անհամապատասխան համարել Արեւելքում ստեղծուած քաղաքական դրութեան: Հայերին փրկելու և ապագայ սպանութիւնների առաջն առնելու համար հարկաւոր են արագ և կտրական միջոցներ, չի կարելի բաւականանալ այնպիսի պալլիատիվներով, ինչպէս էր 1895 թուի այսպէս անուանուած արձանագրութիւնը, որ մտցնում էր բեֆորմներ. չի կարելի բաւականանալ մինչև անգամ միւրցշտէգեան տիպի բեֆորմներով, որոնք գործադրւում են Մակեդոնիայում և անբաւարար են համարւում այնպիսի մարդու կողմից, ինչպէս է աւստրիական գործակալ Փոն Միւլլէր: Հարցի լաւագոյն լուծումը կը լինէր այն սիստեմի մտցնելը, որը տիրապետում է այժմ Կրետէ կղզու վրայ: Հայկական պայմաններին յարմարեցնելով՝ նա պէտք է այնպէս ձևափոխուի, որպէսզի այն վեց վիլայէթները, որոնց մէջ հայերը մեծամասնութիւն են կազմում, առանձին շրջան կազմեն քրիստոնեայ գեներալ-նահանգապետի վարչութեան տակ: Դա ամենաբնական ելքն է ճգնաժամից, և նիւթական կողմից աւելի շահաւէտ կը լինի թէ թիւրքիայի համար, որովհետև երկրի արդիւնաբերութիւնը անկասկած կը բարձրանայ, և թէ հարկերը կը մտնեն զանձաբան՝ պաշտօնեաների զրպաններից ազատուելով և աւելի էլ մեծ քանակութեամբ»:

Այնքան ժամանակ, մինչև որ կոնգրեսները, Եւրոպայում սկսուած հայասիրական շարժումը գործնական հետևանքի չեն հասնի, թիւրքիայում քրոնիկական դարձած յուզումները չեն դադարի: Այդ է ասում այդ դժբախտ երկրի անցեալի և առհասարակ պատմութեան ամենապարզ տրամաբանութիւնը: Թիւրքերն ու քրիւղերը կոտորում են անմեղ հայ կանանց ու երեխաներին, իսկ ժողովրդի արական էլեմենտը բնականաբար զենք է ձեռք առնում և լեռները քաշում: Ինչպէս երևում է, Անգրանի-

կի խմբից դուրս երկրի ներսում գործում են բազմաթիւ այլ փոքր ու մեծ խմբեր:

Հաւատանք, որ ամեն չարիք վերջ ունի, և որ քաղաքակիրթ մարդկութիւնը էլ չի կարող հանդուրժել անմեղ և քաղաքակրթական հակումներով մեծապէս օժտուած մի ժողովրդի սիստեմատիկ կոտորածներն ու ջնջումը:

Առաջուայ պէս դժբախտ է նաև Մակեդոնիան: Ծրագրուած ընֆորմներն՝ ինչպէս երևում է՝ շօշափելի արդիւնք չտուին: Առաջուայ պէս բաշխողականներն ու թիւրք զօրքերը կատարում են առանց այն էլ աւերակ երկրում ամեն տեսակ խժգոնութիւններ: Եւրոպական քաղաքացիական գործակալների ներկայութիւնը այնտեղ նոյնքան ապարդիւն է մնում, որքան կոնսուլների ներկայութիւնը Հայաստանում: Ընդհանուր կարծիք է Եւրոպայում, որ լաւագոյն ելքը այդ երկու երկիրներում և՛ ըրոպացի նահանգապետներ նշանակելն է անկախ սուլթանից: Բայց մինչև այդ՝ մակեդոնական յուսահատուած շեռաները վերստին սկսել են իրանց գործունէութիւնը:

Այսպէս յայտնի է, որ խմբապետ Ապոստոլի չետան Գիւմէշլիի մօտ ընդհարուեց թիւրք զօրքերի հետ, հետևանքն այն եղաւ, որ թիւրքերը աւերեցին 29 տուն:

«Neue Freie Presse»-ը հաղորդում է, որ Սուլունի շրջակայներում երկաթուղային գծի վրայ ուումը է դրուած եղել: Հաւատացնում են, որ գնացք է խորտակուած:

Վերջին ժամին լսում է, որ Սարաֆոյն էլ յայտնուել է Մակեդոնիայում և վերստին սկսուելու է ընդհանուր ապստամբական շարժում:

Եւ ուրիշ կերպ չի էլ կարող լինել, քանի որ չարիքը, թիւրքական ընթիմը արմատախիլ չի լինի չարատանջ երկրներից!

Յուլիսի 14-ին Շվէյցարիայի Կլարան աւանում մեռաւ Պօլ՝ Կրիւզերը, Տրանսվաալի նախկին հանրապետութեան նախագահը, եօթանասուն ինն տարեկան հասակում: Յուզիչ գէպքերը, որոնք կապուած են այդ նշանաւոր և դժբախտ ծերունու անուան հետ, դեռ չափազանց թարմ են ժամանակակից սերնդի յիշողութեան մէջ, որպէսզի հարկ լինի վերստին յիշեցնել:

Ասենք միայն, որ նա ծնուեց 1825 թ. և դեռ բուրրովին երեխայ՝ իր ընտանիքի հետ թողեց իր ծննդավայրը հուլանդական մի խումբ զժգոհ գաղթականների հետ, որոնք գնում էին նոր հայրենիք փնտրելու: Սրանք էին, որ յետոյ Աֆրիկայի հարաւում ստեղծեցին մի ազգ՝ բօէրներ, և երկու փոք-

ըիկ հանրապետութիւն—Տրանսվաալ՝ և Օրանժ: Հեշտ չէր գործը, պէտք էր չանգուել կարծր հողը, լեռների ամայի կուրծքը մշակութեան համար, պէտք էր կուռել վայրի գաղանների և նրանցից ոչ պակաս կատաղի զուլումների հետ մի սեփական անկիւն ունենալու: Ազատ, անկախ ապրելու և զարգանալու տենչը շատ էր մեծ այս հերոսական ժողովրդի սրտում, որ պէտքի նա կանգ առնէր այդպիսի դժուարութիւնների հանդէպ: Եւ նա, այդ փոքրիկ ժողովուրդը յաղթեց և՛ Աֆրիկայի բնութեանը և՛ մարդուն: Այսպէս ստեղծուեցին երկու զարմանալի հանրապետութիւնները:

Կրիւզեր՝ իբրև սոսկ քաղաքացի և իբրև նախագահ ապրեց իր հայրենիքի ծննդեան երկունքը, տառապեց նրա հետ և ցնծաց նրա յաջողութեամբ: Բայց այդ յաջողութեանը վերապահուած էր մի տրագիկական վախճան:

Տրանսվաալի հանքային հարստութիւնները գրաւեցին շատ անգլիացիների, որոնք հաստատուեցին այնտեղ, և կարճ ժամանակից յետոյ բնականապէս առաջ եկաւ յարարերութիւնների բարդութիւն նորեկների և բօէրների մէջ: Հարկաւոր էր գուցէ ընտրողական քանի մի ղեջողութիւններ անել անգլիացիներին՝ խուսափելու համար վերջնական կործանումից: Պօլ՝ Կրիւզեր իբրև նախագահ այդ զգուշաւորութիւնը չունեցաւ: Հզօր Անգլիայի դէմ դուրս գալով՝ նա վստահ էր իր բուրգերների և մանաւանդ իր աստուածաշնչի վրայ: «Մենք կը զարմացնենք աշխարհ», ասաց նա պատերազմի սկզբում:

Եւ իբօք նրանք զարմացրին աշխարհը: Վաղուց հետէ անցած հերոսական ժամանակների մի մոռացուած պատկեր էր բօէրների ցոյց տուած սքանչելի արիութիւնը և ռազմական առաքինութիւնները: Կռիւը անհաւասար էր. աշխարհը սքանչացած՝ ականատես եղաւ, բարձրաձայն արտայայտեց իր հիացմունքը, հեռուից ոգևորեց բօէրներին շարունակել անկարելի կռիւը: Խեղճ Կրիւզերը համակրութեան այդ բարձրագոյ աղաղակներով ոգևորուած՝ թողեց հայրենիքը, Եւրոպա անցաւ շօշափելի օգնութիւն, որնէ միջամտութիւն առաջ բերելու, և նրա հիասթափութիւնը կատարեալ եղաւ: Ոմանք իրանց դոնները լայն բաց արին նրա առաջ, ծափահարեցին, ներբողներ կարգացին, աւերուած հանրապետութիւնների զրոշմերը ծածանեցին նրա գլխին, ինչպէս Փրանսիան, առանց սակայն որնէ իրական օգնութիւն ցոյց տալու, ուրիշները անսիրտ կոշտութեամբ իրանց դոնները փակեցին նրա առաջ, ինչպէս գերմանական կայսրը:

Երկերեսանի աշխարհն էր տեսնում իր առաջ այս նահա-

պետական ծերունին. նա այդ օրերում լուսթեամբ երևի լացեց իր աստուածաշնչի վրայ, որին շատ էր հաւատացել, լացեց նաև իր հայրենիքի անդամալի կորուստը: Օգնութիւն չկար, և երկու հանրապետութիւններն ընկան վերջնականապէս. էլ ոչինչ չէր մնում դժբախտ ծերունուն, բայց եթէ մեռնել, և այդ օրուանիցնա մեռնում էր կամաց-կամաց: Յուլիսի 14-ը մեծ մարդու հոգու այդ մեծ տրագեդիայի վերջին գործողութիւնը կնքեց:

Ա. Ա.

### ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՒՆՆԵՐ

«Քանաւէր». Մարտ—ապրիլ:— Ինչպէս անցեալներում հաղորդեց «Հանգէս Ամսօրեայ», պրոֆ. Ստըզգովսկի պնդում է, թէ Աախէնի մայր եկեղեցին Գերմանիայում և Ժերմինյի-զէ-Պրէ (Germaini-des-Prés) եկեղեցին Փրանսիայում շինուած են հայկական ոճով:

Այժմ այս առթիւ խօսելով պ. Կ. Բասմաճեան իր ամսագրի վերջին համարում՝ գալիս է այն բաւականին համարձակ և ուշազրու եղրակացութեան, թէ աթենական Պարթենոնի և հայկական-ուրարդեան Մուցացիք քաղաքի (այժմ Քէլիշին գիւղ) կառուցած Խալդիա և Բագրատու աստուածների տաճարի մէջ ոճի մեծ նմանութիւն կայ:

«Ենթագրութեանս բաւական դօրւտը ապացոյց է, ասում է պ. Կ. Բասմաճեան, Պարթենոնի և Մուցացիքի տաճարներուն ճակատի պսակին (Fronton) նմանութիւնը: Ճակատի պրոնակին այս եռանկիւն ձևը կրող ամենահին յիշատակարանն է՝ բոլոր աշխարհիս մէջ՝ Մուցացիքի տաճարը: Ուրարտացիներու հետ մշտական շրփումի ու պատերազմի մէջ գտնուող ազգերէն և ոչ մէկը, ոչ Ասորեստան և ոչ Բաբելոն, երբէք չեն ունեցած այս

եռանկիւնը, որ նախ անցած է փոխզայնեցու և լիւզայնեցու, յետոյ՝ ասոնց միջոցով մտած է Աթէնք, և ետքն ալ Պարսկաստան, Կիւրոսի արշաւանքներու հետեանքով: Կիւրոսի ժամանակ (558—529 թ. ա.) շատուց կործանած էր Մուցացիքի տաճարը, ուստի չէր կրնար անոր վրայէն կուրապարել՝ Կիւրոսի եռտնկիւնի ճակատով զամբարանը շինող ճարտարապետ—քանդակագործը:

«Որոշ կերպով չի գիտցուիք թէ երբ հիմնուած է Մուցացիքի տաճարը, բայց հաւանական կը կարծեմ թէ Ուրարտուի թագաւոր Իշպուէնիշի (Քրքիստուէ առաջ 828—784 ?) ժամանակ շինուած լինի այն. վասն զի Մուցացիքի վրայ առաջին անգամ արշաւող և իրեն հպատակեցնողն եղած է այս թագաւորը. իսկ տակաւին հարիւր տարի չ'անցած՝ Մուցացիք բաղաբը և անոր աաճարը հիմնայատակ եղած են Ասորեստանի թագաւոր Սարգոնի (722—705 թ. ա.) ձեռքով, Քրքիստուէ առաջ 714 թուականին.

«Մուցացիքի տաճարի ճարտարապետական ոճը չէր կրնար օրինակուիլ «յունական» կողուող ձևերէն, քանի որ յունական ճարտարապետութեան ամենահին ներկայացուցիչը—Պարթե-

նոնի տաճարը—շինուած է Պերիկլէսի ժամանակ, Քրիստոսէ առաջ 454—438 թուականներուն, Փիդիասի հսկողութեան տակ: Ուրեմն Մուցսցիբի տաճարը երեք հարիւր տարիի շափ առաջ շինուած է, քան Պարթենոնի տաճարը»:

Որեւէ ժողովրդի փիլիսոփայութիւնը, զեղարուեստն ու ճարտարապետութիւնն ինչքան և ինքնուրոյն, առանձնայատուկ համարուելու հանգամանքներն ունենան, ինչպէս Յունաստանում, այնուամենայնիւ ազատ չեն կարող համարուել օտար անելի կամ պակաս ազդեցութիւնի: Ժողովուրդներէ հողորդ կեանքի շղթան ժամանակի և տարածութեան մէջ անընդհատ է: Յունական փիլիսոփայութեան վրայ արեւելքի ազդեցութիւնն ահագին է, զարմանալի չի լինի, որ այդ երկրի ճարտարապետութիւնն էլ որոշ տարրեր փոխ առած լինի իր մօտաւոր կամ հեռաւոր հարեաններէ: Այս դէպքում քաղաքակրթութեան աստիճանն էլ առանձին նշանակութիւն չունի, շատ անգամ անելի բարձր կանգնած ժողովուրդ հնարաւոր է գտնուի որեւէ օրիգինալ, նոր բան փոխ առնել քաղաքակրթական անելի ստոր աստիճանի վրայ կանգնած ժողովրդից: Յունական Պարթենոնի ճարտարապետական սքանչելի հիւսուածքի մէջ Արեւելքը կարող է իր բաժինն ունենայ, բայց պնդելու համար, որ այդ ազդեցութիւնը հայկական է, կարծում ենք՝ մի փոքր համարձակ վճիռ է. և երեկ պ. Բասմաճեան իր այդ թեզը վերջը նախանապէս համոզիչ դարձնելու համար հարկաւոր կը համարի էլի նոր փաստեր տալ: Այն, որ Պարթենոնը Մուցսցիբի տաճարից յետոյ է շինուած և միևնոյն ժամանակ որոշ նմանութիւններ ունի երկրորդին, անշուշտ շատ հետաքրքիր է, բայց կարծում ենք անբաւարար է այդ հետաքրքիր թեզը կատարելապէս ապացուցանելու համար: Միթէ այդ երկսի ոճն էլ չէին կարող մի երրորդ ընդհանուր ազդիւր ունենալ և այն ոչ

հայկական: Որքան հին տաճարներ կան, որոնց հետքն անգամ լիզել է ժամանակը, իսկ Արեւելքը քանի-քանի քաղաքակրթութիւնների դամբարան է:

«Արեւելեան Մամուլ». Յունիս 16:—Մ. Մամուրեանի շարաթաթերթի այս համարում ուշազրու աղեկութիւն ենք գտնում ս. Կարապետի վանքում գոյութիւն ունեցող մի վարժարանի մասին: Այցելու հեղինակը (Ռ. Զարդարեան) այդ կրթական հաստատութիւնը համարում է «բարձրագոյն վարժարան»: Եթէ ընդունենք, որ մեր թիւրքահայ եղբայրները աժականների գերադրական վերջաւորութեանը համար մասնաւոր թուլութիւն ունին, այնուամենայնիւ կը մնայ մի վերին սասիճանի հետաքրքիր հաստատութիւն ս. Կարապետի վանքում: Ահա թէ ինչ է ասում այդ մասին պ. Ռ. Զարդարեանը.

«Կը կարծեմ, թէ խիստ քիչըր տեղեկութիւն ունին հեռուները մանաւանդ մեր կողմի գաւառները այս կրթական հաստատութեան նկատմամբ, որը սակայն պէտք էր վաղուց ծանօթ եղած ըլլար: Վարժարանը գիշերօթիկ և թոշակաւոր ուսանողներ միայն կ'ընդունի, բաժնուած ըլլալով վեց դասարաններու: Նախամուտքի համար՝ ներկայացող աշակերտներէն կը պահանջուի հայերէն հասարակ ընթերցանութեան լաւ վարժութիւն, թուրքանական շորս գործողութիւն և քերականական սկզբնաւորութիւն: Իբրև տարեթուակ առաջին տարուան համար բացառաբար 11<sup>1</sup>/<sub>2</sub>, իսկ միւս տարիներուն իւրաքանչիւրին համար 11-ական ոսկի: Այս տարի աւարտած է վարժարանին նոր շէնքը սմբողջ սրբատաշ քարով, ընդարձակ ու բարձրադիր, բաղկացած լուսաւոր և օդասուն մեծ սրահէ մը, որուն մէջ կը բացուին դասարանները: Սրահը զարդարուած է իւղաներկ և ջրաներկ պատկերներով, ամենքն ալ աշակերտներու կամ ուսուցչին գործերը, սրտնք առաջին նայուածքով չպիտի կրնային

զանազանուիլ ամենևին երոպական արտադրութիւններէ, այնքան զոյնի և բնականութեան յաջողութիւնը կը կրեն իրենց վրայ: Սրահի դռան վերև, ճակատը՝ Ազն. Գէորգ էֆ. էսայեանի իւղաներկ անծաղիր պատկերը, արժանի այդ յարզանքին և կարծես յուշարար ուսանողներու առաքինութեան, քանի որ ինք կամ իր զաւակները 1889—1896՝ 1020 ոսկի դումար մը նուիրած են նոյն կրթական հաստատութեան ինքնարեքարը»:

Եյս վարժարանի վերին հսկողութիւնը վարում է Տրդատ եպիսկոպոս Գնախան իրան օգնական ունենալով վանքի երկու երիտասարդ միաբանները՝ Տրդատ և Սմբտ վարդապետները: Գանձակ մի խումբ աշխարհական ուսուցիչներ: Դասախօսուող առարկաներըն են՝—կրօնագիտութիւն, պատմութիւն, օսմաներէն, իրաւագիտութիւն և տոմարակալութիւն, ֆրանսերէն, ըրուսաբանութիւն, հայերէն և ընդ. պատմութիւն, բնական և շտիական գիտութիւններ, զծագրութիւն և աշխարհագրութիւն: Վարժարանն ունի նաև այցելու բժիշկ և երկու գիշերապահ: Աշակերտների թիւը վաթսու է:

Եյս նկարագրութիւնից պարզ է, որ ս. Կարապետի գիշերօթիկ դպրոցը՝ միջնակարգ կրթական հաստատութիւն է, որ մօտենում է եւրոպական կոլլեժներին:

Եյսպէս թէ այնպէս ս. Կարապետի վանքում, որի շուրջը այնպէս հոծ հայ ազգաբնակչութիւն կայ, այսպիսի մի կրթական հաստատութեան գոյութիւնը մի խոշոր և վերին աստիճանի միջնակարգ երևոյթ է և արժանի ամենալուրջ ուշադրութեան և ամենաբընթոյշ հողածովութեան:

Եւ պ. Զարգարեան իրաւացի կերպով ասում է.

«Եյս վարժարանը պէտք է որ ճանչցուի ամեն կողմ և պէտք է որ սիրով ամենուն կողմէ, որովհետև գաւառներու օտար բարձրագոյն վարժարաններու դէմ արդէն սկսած է հակակրճիւ մը ստեղծել հիմա և վաղը միւս

օրը կարգ մը յաւելումներով ու քիչ մը բարձրացումով կոչուած է յաջող մրցակից մը հանդիսանալու»:

Ի դէպ՝ յիշեալ տողերի հեղինակ Ռ. Զարգարեանի մասին: Դա մի ծանօթ անուն է թիւրքահայ գրականութեան մէջ: Զարգարեան և Թլկատանցի զաւառացի, ժողովրդից ծնուած վիպագիրներ են, որոնք վերջին տարիներս կարողացան ստեղծել զրական մի նոր հոսանք՝ ներս բերելով թիւրքահայկական գրականութեան մէջ ազգային ժողովրդական տարրը: Գաւառը՝ մոռացուած ու անջուտ հայ գիւղացին նրանց զրչի տակ լսօնեց, բայ տրեց իր դարդոտ սիրակ, և նրա խօսքը ցնցող էր ու թարմ, ուժեղ և պարարիչ, որպէս լեռների կուսական շունչը: Բոսֆորեան ճոռում և էկզոտիկ գրականութեան լուծն էր թօթափում: Խրիմեան, Սրուանձտեան, Սարգսեան և ուրիշները գուր շէին աշխատել տարիներ առաջ: Համակրելի և տառադաւար Զարգարեան երկար տարիներ անցկացրեց հայրենի ժողովրդի մէջ ուսուցչական պաշտօնով, ապրեց նրա ցաւերն ու ուրախութիւնները:

Եյժմ, ինչպէս լսում ենք, նա թողնում է Խորրեբրդ և անցնում է աւելի խոշոր կենտրոն—Ձմիւռնիա: Երեկ գաւառում կացութիւնն անհանդուրժելի էր դարձել զրոյի համար, որովհետև ինչպէս մի քանի ամիս առաջ հաղորդեցին արտասահմանեան հայ թերթերը՝ Զարգարեան բանտարկուած է եղել: Նա այժմ դտնուում է Ձմիւռնիայում:

«Համակրելի գրագէտը, ասում է նոյն «Արևելեան Մամուլը», մինչև առաջիկայ տարեշրջանի վարժարանաց վերաբարցումը պատրաստ է ստանձնելու մասնաւոր դասեր»:

Մասնաւոր դասեր... դժբախտ հայ գրականութիւն, որի մշակների գերագոյն ապաւէնը մնում են միշտ ձանձրալի, խղճով դասերը: Մասնաւոր դաս է տալիս և՛ երիտասարդ հայ սկսնակը, և՛ յայտնի գրագէտը, և՛ մի ամբողջ լաւ սերնդից մնացած գաւառ-

մեալ մոհիկանը: Իր ծեր օրերում ջը-  
րադացական դարձած Խորենացու լե-  
զենդան կարծէք ճակատագիր է դար-  
ձել. վախճանն ո՞ր է այս կացութեան:

«Ա.Աստի».— Ապրիլ—մայիս: —  
Պարիզի հայ ամսագիրը էր այս թուով  
մի վերին աստիճանի ցաւալի կորուստ  
է դուժում, որ անփոխարինելի լինե-  
լու բոլոր դատնութիւնն ունի:

«Ապրիլ 19-ի օրը հողին յանձնե-  
ցինք Գրիգոր Վիլպէնկը, և իր քսան-  
երեք տարիներուն սիրուն ու թարմ  
փունջին հետ՝ թաղեցինք վալլուն ա-  
պագայի մը ազատով յոյսերուն անդին  
դրասանդը: Այդ անհունապէս տարա-  
ժամ մահը, որ խեղճ Գրիգորին արիւ-  
նակեցներուն և մտերիմներուն համար  
անմիթարելի կոկիծ մը եղաւ. պիտի  
ողբայուի նաև ամբողջ հայ ազգէն:  
Գրիգոր Վիլպէնկ սահմանուած էր  
Քոմետի Փրանսէզին մէջ տեղ մ'ունե-  
նալու»:

Գրիգոր Վիլպէնկ 1900-ին Պարիզ  
է եկել և շնորհիւ աշխ ընկնող գե-  
րասանական ձիրքերի զբաւել է հըռ-  
չակաւոր Մունէ-Սիլիի ուշադրութիւ-  
թիւնը: Վերջինիս համակրութիւնն  
ու հաւատք գէտի երիտասարդ հայի  
բեմական փայլուն ապագան այնքան  
մեծ է եղել, որ նոյնիսկ հակառակ իր  
սովորութեան յանձն է առել անձամբ  
հետեւել նրա զորգացմանը և մշտկու-  
թեանը: Եւ նրա յոյսերն արգարայեղ  
են կարճ ժամանակում: Այնուհետև  
նշանաւոր վարժապետը իր սիրելի ա-  
շակերտին իր հետ տարի է Փրանսիա-  
կան դաւառներ բեմ դուրս գալու փո-  
քըր դերերի մէջ: Նոյնքան հետաքը-  
բութիւն և ուշադրութիւն է նուիրել  
Վիլպէնկեանին և՛ Մունէ-Սիլիի եղբ.  
Պոլ՝ Մունէ: Տարաբախտաբար երկու  
տարի լետոյ երիտասարդը հիւանդա-  
ցել է թոքախտով: Չնայելով դրան՝ նա  
1903-ին կարողացել է յաջողութեամբ  
անցնել Պարիզի կոնսերվատուարի  
քննութիւնը: Եւ երբևէ հէնց այդ աշ-  
խատանքն է մահացու եղել, որովհե-  
տև կացութիւնը վատացել է արագու-

թեամբ, և մահը վրայ է հասել երիտա-  
սարդ արտիստին ապրիլի 19-ին՝ խո-  
րին ցաւ պատճառելով իր Փրանսիա-  
ցի վարպետներին, բարեկամներին և  
հայ զաղութին: Փրանսիացի բարե-  
կամները խնդրել են հանգուցեալի եղ-  
բօրը Արտ. Վիլպէնկեանին, որ թոյլ  
տայ իրանց Գրիգորի գերեզմանի վը-  
րայ մահարձան կանգնեցնել: «Պ. Վիլ-  
պէնկեան, ասում է «Անահիտ», տեղի  
տուաւ իր եղբօր օտարազգի բարե-  
կամներուն այդ աղնիւ փափագին առ-  
ջև, նկատելով որ անոնց այդ տենչին  
իրականացումը մեր ամբողջ ցեղին  
համար պատուարեք ու սրտաշարժ  
արտայայտութիւն մըն էր՝ զոր ան-  
հընար էր մերժել: Մունէ-Սիլիի մտա-  
զիբ է այդ մահարձանին վրայ գետե-  
ղել իր ձեռքով իսկ քանդակուած մե-  
տալօն մը Գրիգորին դէմքը ներկայա-  
ցընող»:

«Անահիտ»-ի նոյն թուից իմանում  
ենք նշանաւոր հայ նկարիչ Ջահի-  
նի մի նոր յաջողութիւնը: «Փրանսիա-  
կան կառավարութիւնը գնած է, ա-  
սում է «Անահիտ», մին այն գեղեցիկ  
զծագրութիւններէն, զոր էտկար Ջա-  
հին ցուցադրած է այս տարուան  
«Ջան-տը-Մարսի Սալօն»-ին մէջ, շարք  
մը նոր փորագրութեանց հետ. այդ  
զծագրութիւնը պիտի դրուի Լիւքսամ-  
պուրի մուսէոնը, որու վարչութիւնը  
խնդրած է նաև Ջահինէն, որ հաճի  
նուիրել իր փորագրութեանց ամբող-  
ջական հաւաքածուն: Հաճոյքով կ'ի-  
մանանք նաև թէ Ջահին Societaire  
ընտրուած է «Ջան-տը-Մարսի Սալօն»-ը  
կազմակերպող և վարող գեղարուես-  
տից ազգային Ընկերութեան»:

Այս բոլորը լաւ է. մենք հաճոյքով  
բաժանում ենք «Անահիտ»-ի ուրախու-  
թիւնը: Սակայն շենք կարող այս առ-  
թիւ մի փոքրիկ նկատողութիւն շա-  
նել: Պ. էտկար Ջահինի զործերին ի  
մօտոյ ծանօթ չենք, դիտենք միայն,  
որ նա իբրև գեղարուեստագէտ արդէն  
բաւական յայտնի անուն է ունի Փը-  
րանսիայում, նաև դուրսը: Պան

Պարբիզում կան և ուրիշ հայ արուեստագէտներ աւելի կամ պակաս յայտնի անուններով, որոնք ամենքը միասին մեր ցեղական հանճարի պայծառ ցուրքերն են օտարների առաջ: Սա ինքընդատինքեան անկախ նրանց ընտրած նիւթից արդէն մի աշքի ընկնող ծառայութիւն է նրանց ծնունդ տուող ժողովրդին. բայց դա բոլորը չէ. Պարբիզի հայ արուեստագէտները՝ (մեծամասամբ - եթէ ոչ ամբողջովին - թիւրքահայեր) յաճախ ցաւալի մոռացութեան են ապիս իրանց երկերում իրանց շարատանջ, արիւնոտ հայրենիքը. ուր այնքան շատ են ցնցող, աղելարը սիւմէներ. մենք առիթ ենք ունեցել այցելել Պարբիզի Սալօնը, ուր ի միջի այլոց եղել են նաև շատ հայ արուեստագէտների գործեր, և նրանց մէջ համարեա ոչ մէկը, որ խօսէր հայ երկրից, մեր ժողովրդից, կամ պարզապէս ներկայացնէր մեր այնքան հետաքրքիր ընտանեկան, ժողովրդական կեանքի որևէ ուշադրու կողմը: Միթէ հայ արտիստները, որոնք դեռ երեկ թողեցին այդ արիւնոտ վայրերը, ոչ մի խոշոր ներշնչում բերած չեն իրանց հետ՝ օտար հորիզոններում, օտար երկրների տակ ուժգնօրէն արտայայտելու համար: Մեզ կ'առաջեն զուցէ, թէ «գեղարուեստը հայրենիք չունի»: Ծեծուած Քրազա... բայց հոգին հայրենիք ունի, նա արիւնի թելերով կապուած է մի երկրի հետ: Թող շմեղագրեն մեզ չոր, բիրտ ուտիլիտարիզմի մէջ. երբ խնդիրը վերաբերում է մի ժողովրդի խորունկ, արիւնոտ ցաւերին, ուտիլիտարիզմի մասին խօսք լինել չի կարող: Իսկական գեղարուեստը գիտէ անհատական, ցեղական ցաւը տիեզերական դարձնել իր հզօր, ստեղծագործող շնչով: Յաւի պօէդիան անհուն է և անուայնող: Մենք կ'ուզէինք. որ մեր թիւրքահայ արեստագէտները այդ խորունկ ճշմարտութիւնը մոռացութեան չտային. այն ժամանակ իւրաքանչիւր հայի ցնձութիւնն ու խնդակցութիւնը նրանց յաջողութիւններով պիտի կրկնապատկուէր:

«Տազմալիպ». Յուլիս. — Առաջնորդող յօդուածում սաստիկ ցաւ է յայտնում արտասահմանի հայ գաղութների՝ դէպի իրանց ծննդավայրը ցոյց տուած անտարբերութեան համար. «Արտասահմանի գաղթականութիւնը, ասում է «Տազմալիպ», խողաղ լճակի մը անտարբերութիւնը ցոյց կուտայ: Եւ ինչ հեղձուցիչ խաղաղութիւն, ինչ ապերձանիկ երջանկութիւն:

«Ո՞ւր է այն կենդանարար կազմուած գործի փոթորիկը: Հիմա սիրելի է մեռելական անհող եսականութիւնը: Գողթականութեան սրտէն այլևս կը հալածուի հայրենիքի հովաներէն հասած հառաչներու մըմունջը: Ի նպաստ հայրենիքի փլած խըրճիթներուն կազմակերպուած քնկերութիւնները, հանդէսները, թատրոնները, բունախօսութիւնները երթալով կը նուազին. արտասահմանը իր եսական անուշ գեփիւտով կը փչէ երջանկութիւն մը, ուր սակայն թունաւոր է գաղթականներու թորերուն համար: Ու հիմա կարելի է ըսել, որ օտար ստորդերու տակ ծնած հանգստութիւնը մեզի համար մեռած ու նեխուած երջանկութիւն մըն է:

«Մեր մարմնոյն մեծ զանգուածներէն հոս արտասահման նոր հասնող դարիպներէն հարցնենք իսպրիկներ. մենք պիտի առնենք միւլիթարական լուրեր, պիտի իմանանք, որ հոն գորուվական օրօրանին մէջ կենանք, կենդանութիւն, պարտաճանաչութիւն կայ, հոն ծնած են հասարակական այնպիսի առարիւնթիւններ, որոնց առջև արտասահմանի անտարբերութեան ուրուականը շառաղունած պիտի թալկանայ: Եւ սակայն դարիպ երջանիկներէն կ'անկալուի ինչք...»

Արտասահմանեան հայ գաղութի, «դարիպ երջանիկները» բարոյական այս պատկերը շափազանց վհատեցուցիչ է, եթէ ճիշտ է գծագրուած: Բայց ինչո՞ւ միայն նրանք. հապա՞ հայրենիքում եղած «երջանիկները...» որոնք անասնական փարթամութեան մէջ լուում են և իրանց կեանքով, իրանց

նիստ ու կացով քայքայում են ազգի բարոյական շէնքը: Ոչինչ, ոչինչ չի յուզում նրանց այս իրգոտ երջանկութիւնը, ոչ մի աղաղակ չի թափանցում նրանց հոգիներէ բրոնդեայ դռներին: Սա էլ մի օտարացած գաղութ է, բայց հայրենիքի մէջ, այնպէս ծովում, մի պղնձուած, ամալի, անիծուած ժայռ, որի շոր կրծքի վրայ զալիս են փշրուելու բուրբ հեծեծող ալիքները: Հայի աւանդական բարեգործութիւնը հին ճանապարհը կորցրել է, նորը չի տեսնում, որովհետեւ կայր է և խուլ:

«REVUE», 15 juin.— Յայտնի է, որ վերջին տարիներում խաղաղասիրական գործը քաղաքակիրթ երկրներում զգալի յառաջդրումներ են աւել շնորհիւ մի շարք յայտնի գործիչներին, որոնց առաքելութեան նշանակաւոր է ազգային անկարելի դարձնել պատերազմները: Սովորաբար խաղաղասիրական այս շարժումը համարում է նոր և մեր ժամանակների ողու արտայայտութիւն: Այժմ յայտնուում է, որ նման շարժում գոյութիւն է ունեցել մեզանից շատ առաջ, նոյնիսկ IX դարում: «Ոչինչ նոր արեւի տակ» *Nul novi sub sole*—ասում է *Revue*-ն. մի հին մազաղաթ է գտնուել, որ վերկայում է IX-դ դարում մի խաղաղութեան լիզայի գոյութիւնը: Այս լիզան անշուտ ներշնչուած էր աւետարանից և կազմակերպուած էր կրօնաւորների ձեռքով, և ղեկավարներն էլ եպիսկոպոսներ էին: Լիզան իւրաքանչիւր ծխի մէջ երկ-երկու աշխարհական պատգամաւորներ ունէր: Վերջինների պարտականութիւնն էր նիւթական օժանդակութիւն հաւաքել, բողոքներ լսել, և զսպել ըմբոստներին կամաւոր միլիցիայի ձեռքով, որ կարգուած էր պաշտպանելու լիզայի հովանաւորութեան տակ գտնուող վայրերը:

«Պատմութիւնը մեզ ասում է, որ այս փորձը կատարեալ յաջողութիւն չունեցաւ. այս կանխաժամանակեայ ջանքերը գուցէ իրեն արդիւնք ունե-

ցան այն սովորութիւնը, որի հիման վրայ խաղաղութեան որոշ օրեր (*Le treve de Dieu*—Աստու հանգիստ) սահմանուեցին: Այդ օրերում արգելուած էր կռուել. գանդառուները ենթարկում էին եկեղեցական բանագրանքի: Հազար տարուց յետոյ այս խաղաղասիրական կազմակերպութիւնը կարող է ծառայել սրբալս նմուշ: Նըպատակը նոյնն է—Աստու դադար տարեկան 365 օր նոյնիսկ 366 օր նահանջ տարիներում:

„Русское Богатство“, Յունիս.— «Իշխան Մեչչերսկու հոգացողութիւնը ժամանակակից և ազազայ սերունդների մասին»: Այս վերնագրի տակ ռուս ամսագիրը առաջ է բերում *Гражданство*-ի խմբագրի մի նոր տարբրինակ միտքը:

«Իշխան Մեչչերսկու *Гражданство*-ը, ասում է *Рус. Богат.*-ն, լուրջ կերպով մտահոգութեան մէջ է պատերազմի առաջ բերած անտեսական զբոսարութիւնների առթիւ: Պետութեան խաղաղ ժամանակի կարիքների համար նշանակուած ծախքերի կրճատումը կարող է առաջ բերել աղքատութիւն և աշխատանքի պակասութիւն, ինչպէս և արհեստական կերպով կանդ կ'անի երկրի անտեսական կեանքը: Այսպիսով վատտակի նուազման և ընդհանրապէս արտադրութեան սահմանափակման հետեանքը կը լինի և «ոգու թուլութիւնը», որ այնքան անհրաժեշտ է պատերազմը վարելու համար: «Պատերազմի ծանրութիւնը տանելու համար ժողովրդին պէտք է ամրապնդել և ոչ թէ ծայրայեղ կերպով թուլացնել. այս ևս համարում եմ մի ակտիւստ»:

«Խելացի խօսքեր, հաճելի է լսել, շարունակում է *Рус. Богат.*, բայց դժբախտաբար իշխանի մնացած գատողութիւնները նոյնքան անվիճելի չեն: Նա «իրան թոյլ է տալիս ենթադրել, որ ներկայ Ռուսաստանի պատերազմական ծախքերին պէտք է» մասնակից անել նաև ազազայ Ռուսաստանը և դրա համար պատերազմը

հարկաւոր է վարել որքան կարելի է քիչ՝ ի հաշիւ սովորական թիւքետի և և որքան կարելի է շատ՝ ի հաշիւ փոխառութեան: Եւ այդ նրա համար, որ փոխառութեան տոկոսները վճարելու կը մասնակցի նաև ապագայ Ռուսաստանը, մինչդեռ պատերազմական ծախքերի համար սովորական թիւքետի կը ճատսուցի տուժում է միմիայն ժամանակակից Ռուսաստանը: Մի կողմ թողնելով, ստում է Рyc. Богат.-ն, այս ծրագրի գործնականութեան հարցը, քննենք այն գուտ բարոյագիտատական տեսակէտից: Նախ՝ մինչև ճորտահան ժամանակակից սերունդն իրաւունք ունի այս կամ այն պարտաւորութիւնների ծանրութիւնները զնել ապագայ սերնդի վրայ: Ո՛րքան մեծ է հայրերի իրաւունքը իրանց գաւակների բախտը տնօրինելիս: Եթէ հնում ծնողները ամուսնացնում էին իրանց գաւակներին դեռ օրօրոցից և այդ համարում էին իրանց բնական իրաւունքը, այժմ մեզ այդպիսի իրաւունքը թւում է բարբարոսական...

«Ժամանակակից կարիքների և հասերի մասին մտածելիս՝ մտքդիկ յաճախ հակամէտ են շատ շնչին նշանակութիւն տալ ապագայ սերունդների շահերին: Միթէ մենք մտածում ենք նրանց մասին, երբ օրինակ անխնայ կերպով ոչնչացնում ենք անտառները և դարերով հողի տակ հաւարում հարստութիւնները, ինչպէս օրինակ քարածուխը: Մենք կարծես ապրում ենք ի հաշիւ մեր գալիք սերունդների.— *après nous le deluge...* (մեզից յետոյ ջրհեղեղ): Բայց ի՞նչ կ'առնեն ապագայ սերունդները: Ձնորհակալ կը լինին մեզանից:

«Ըստ չի հայեացքին իշխան Մեշերսկու ծրագիրը իսկապէս նմանու-

թիւն չունի վերը յիշած օրինակի հետ: Երգարև մենք շնչը, որ պիտի օգտուենք «Սիրիբեան մեծ ճանապարհի» և «չսառչող նաւահանգստի» անուտրական շահերով: Մենք ժամանակակիցներս հաղի որևէ բարիք ստանանք Մանջուրիայի կամ Կորէայի տիրապետելուց «որպէս արդիւնք յաղթական պատերազմի» Ծագող Արևի երկրի հետ: Մենք միայն տուտութեամբ կը թափենք (ինչպէս որ թափել ենք արդէն) մեր արիւնը Մեծ Ովկիանոսի անհիւրընկալ ափերին... Սովորական արդարութիւնը չի՞ պահանջում արդեօք, որ մեր յետնորդները, որոնց համար իսկապէս կատարուում է այս բոլորը, գոնէ դրամով վըճարէին իրանց համար պատրաստուած այս գանձերի փոխարէն:

«Ըստ երևոյթիւն դա միանգամայն արգար կը լինէր: Բայց ցամա այն է, որ շատ յաճախ յետնորդների ճաշակը տարբերում է մերինից... Ի՞նչ կ'անէր, եթէ նրանք յանկարծ ասեն մեզ՝ ինչնեքիս է պէտք ձեր Մանջուրիան, որ բնակուած է մեզ համար օտար ժողովրդով: Ճշմարիտ է, այդ ժողովուրդը ամբողջ դարեր քնած էր, բայց վաղ թէ ուշ նա կը գարթնի և հզօր ու յոգնաթիւ, գուցէ կամենայ ուժով յետ խլել այն, ինչ մի ժամանակ նրան էր պատկանում: Ի՞նչ զբաւական ունի իշխան Մեշերսկին մտածելու համար, թէ ինքը գտել է ճշմարտութիւնը:

«Անշուշտ մի ուրիշ ծայրայեղութիւն կը լինէր իսպառ խլել ժամանակակից սերունդների իրաւունքը հողալ և աշխատել ապագայի մասին: Բայց անկասկած է, որ պետական գործիչների ծրագրների և գործունէութեան մէջ սուրիեկալի և զիպուածական շրջանը պէտք է հնարաւոր շափով նեղանայ»:

Վ Ր Ի Պ Ա Կ

Անցեալ №-ում.

երեսու տող տպւում է ալետք է լինի  
157 5 (ներքևից) հաւաքամանը Լեոսինգը

# Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՇՆԲՈԹԻԿ ՎՐԹԱՐԱՆ

ԼՈՋԱՆ, ՅՎԷՅՅԱՐԻԸ

ԵՐՐՈՐԴ ԽԱՐԻ

Հայկազեան վարժարանին երրորդ տարեշրջանի դասախօսութիւնները կ'սկսին սեպտ. 1-էն:

Վարժարանս, փոխադրուած իր նոր շինութեան մէջ, կ'ընդունի 10-էն 20 տարեկան սաներ, որոնց կու տայ հայ և եւրոպական առողջ, լուրջ և հիմնական կրթութիւն: Շրջանաւարտները կարող են մտնել համալսարան կայն:

Վարժարանիս տնօրէնը և տիկին Նալբանդեան յանձն կ'առնեն նաև հայ օրիորդներու բարոյական և մտաւոր կրթութեան վրայ հսկելու գործը:

Վարժարանիս պատկերազարդ յայտագիրը ձրի կ'ուղարկուի ամեն փափագողի:

Դիմել՝ Թիֆլիս, Գուտտենբերգ գրավաճառատունը, կամ տնօրէնին՝

M. Nalbandian,  
Institut arménien,  
Lausanne (Suisse).

## „Գ Ի Տ ՈՒ Թ Ի Ի Ն“

Պատկերազարդ ամսաթերթ.

Հրատարակութիւն Լոզանի հայկազեան վարժարանին:

«Գիտութիւն» ամսաթերթը պիտի հրատարակուի կանոնաւորապէս և շքեղօրէն պատկերազարդուած ամեն ամսի վերջը, օգոստոսէն սկսեալ: Նպատակ ունի ժողովրդականացընել գիտութիւնն ու ասոր գործնական կիրաբերումները: Իր հինգ զանազան բաժիններովը գոհացում տալ պիտի ջանայ ամեն դասակարգի անհատներու:

Բաժանորդագինն է՝ տարեկան 12 ֆր.,

վեցամսեայ 7 ֆր.:

10 օրինակի բաժանորդ գրուողին մէկ օրինակ ձրի:

Դիմել՝ Թիֆլիս, Գուտտենբերգ գրավաճառատունը. Պարսկահայերը կ'ընան դիմել Թաւրիզ Պ. Ա. Ֆթանտիլեանին:

Յօդուած, բաժանորդագին կայն ուղարկել հետևեալ հասցէին՝

M. Nalbandian,  
Institut arménien,  
Lausanne (Suisse).

ВЛАДИМИРЪ ДАЛЬ  
**ТОЛКОВЫЙ СЛОВАРЬ**  
 ЖИВОГО ВЕЛИКОРУССКАГО ЯЗЫКА

3-е, исправл. и значит. допол. издание, под редакціей проф. Спб. у-  
 ниверситета И. А. Бодуэна-де-Куртене.—Настоящее издание рекомендо-  
 вано Ученымъ Ком. М. Н. Пр.

**вышелъ первый томъ (А—З).**

СПБ., 1903—1904. 4°. Стр. 2 нел.+XIV+1744 столбца+  
 +VIII стр.

**ПОДПИСКА ПРОДОЛЖАЕТСЯ.** Полное собраніе состоитъ изъ  
**ЧЕТЫРЕХЪ БОЛЬШИХЪ ТО-**  
**МОВЪ**, каждый томъ изъ 10 вып., всего слѣдовательно 40 вып., за-  
 ключающихъ до 250 печ. листовъ in-4° или около 8000 столбцовъ  
 текста на плотной глазированной бумагѣ. Подписная цѣна—20 р. Допуска-  
 ется разсрочка: при полученіи I тома 7 р. 50 к. и затѣмъ при полу-  
 ченіи выпусковъ XI—XXXV по 50 коп., или же при подп. 2 р. 50 к.  
 и за кажд. изъ перв. 35 вып. по 50 к.—Перес. по дѣйств. стоим., при-  
 чемъ для удобства расчета подписчикамъ съ разсрочкою выпуски вы-  
 сылаются съ наложеннымъ платежомъ.

Подписка принимается: у издателей—въ книжныхъ магазинахъ г-ва М. О.  
 ВОЛЬФЪ—С.-Петербургъ, Гостиный Дворъ, 18, и Москва: 1) Кузнец-  
 кій Мостъ, д. Дзамгаровыхъ, и 2) Моховая, д. Чицова и Курьинной  
 (противъ университета), а также у всѣхъ др. столичныхъ и провин-  
 ціальныхъ книгопродавцевъ.

*Արիտապէս եպիսկոպոս Սեդրակեան*

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑՈՒ  
 ՊԱՏԿԵՐՅԱՐԳՈՒԹԻՒՆԸ**

*ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ*

**ՄԸՍՆ ԱՌԱՋԻՆ**

*Ս.-Պետերբուրգ, 1904 թ.*

*Գինն է 1 ր. 50 կ.*

*Ծախում է Թիֆլիսի «Կենտրոնական» և «Գուտտենբերգ» գը-  
 րավաճառանոցներում և Ալ. Ստեփանեանցի մօտ (Զուբալովի  
 քարվանսարա: 4—6*

*Բումանիայում և Բուլղարիայում «Մուրճ»-ի բա-  
 ժանորդագրութիւնը ընդունւում է Բուաչուկ քաղաքում,  
 պ. Գառնիկ Մազմանեանի գրախանութում:*

*Ժամանակաւոր պատասխանատու-խմբագիր՝ Յ. Սպենդիարեան  
 Հրատարակչուհի՝ Վ. Բանանեան*

15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Ռուս-նասպանական պատերազմը: — Անլուս-գերմանական համաձայնութիւնը: — Խաղաղասիրական շարժումը Պրանսիայում: — Արօժանական միտումնութիւնների դէմ հրատարակուած նոր օրէնքը: — Երկամսեայ զինուորական ծառայութիւնը: — Ֆրանսիա և Ալտայիան: — Ապիսկոպոսների միջնադէպը: — Ֆրանսիական կառավարութեան վերջին որոշումը: — Քիւրբական գործեր: — Նոր ջարդեր Թիւրքահայկական նահանգներում և րեֆորմների խնդիրը: — Մակեդոնիա: — † Պօլ' Արևուզի, Ա. Ա. . . . . 149
16. ՊԱՐԲԵՐՍԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 168
17. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . 175
18. I ՅԱՒԵԼՈՒԱԾ. Ջէյմս Մ'որիէր՝ «ՀԱՋԻ ԲԱԲՍՅԻ ԱՐԿԱՆՆԵՐԸ ՊԱՐՄԿԱՍՏԱՆՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անույլ Մ. Կարսուղեան, 145—160
19. II ՅԱՒԵԼՈՒԱԾ, իշխ. Ա. Սումբատովի՝ «ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ», գրամա 5 արար., թարգմ. սուսեբէնից Ալ. Ծատուրեան, . . . . . 39—54

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զրել պարզ, մտնուանդ թւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի կրեսի վրայ. առանձնապէս ուշ պարձնել կէտագրութեան վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը և՛ բնագիրը:
2. Չընդունուած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ստանալուները չեն վերագործընում:
3. Գրուածքների վարձատրութեան շտիք սրոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեանն տասնց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:
4. Խմբագրութիւնն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուշնի» համարը շտապուկա գէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը դանազան հարցումներով գիմոզ անձինք պէտք է պատասխանի համար ուղարկէն նամակագրոշմ կամ պոստային բլանկ:
7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ. հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր սեմի 20-ից ուշ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցևով:

ԳՐԱՌԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ Է ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

1904 թ.

# Մ Ո Ւ Ր Ճ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Բ Ի

(Նոր շրջան IV տարի)

Խմբագրութեան եւ աշխատակիցների նոյն կազմով:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ի Ւ Ն Ը

Ռուսաստանում՝ տարեկան 10 ռ.	Արևաստանում՝ 12 ռ.	(32 ֆ.)
կէս տարին 6 »	» 7 »	(18 ֆ.)
1 ամսուան 1 »	» 1 » 20կ.	(3 1/2 ֆ.)

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՆՈՒՄ Է.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձափճափաձևան փողոց, տ. № 16):

Նալչոթիքում ալ «Եղեբեց պետք է ղլմել՝ Тафлясь, въ редакцію журнала „МУРЧЪ“

Արևաստանից՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Քաջի այդ, «Մուրճ»-ին կարելի է գրուել նաև.

Թիֆլիսում—«Երևանից» գրափաճառանոցում:

Քաղաում—«Сотрудникъ» գրափաճառանոցում:

Մուկուաշում—տ.Վ. Քանանևանի մօտ (Сухаревская площ. с.д.):

Երևանում—«Արարտ» գրախանութում:

Արևաստանի բաժանարդները կարող են ղլմել՝

Թեհրանում—Տալոց դպրոցների տեսուչ պ. Լևան Բարախանին:

Եգիպտոսում—գոկոթը Կ. Փաշայան-Խանին (Ալեքսանդրիա):

Ծանօթութիւն. բաժանարդագիրը կարելի է վճարել նաև մաս-մաս սկզբում 5 ռ., մալխի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.—կամ սկզբում 5 ռ. և յուլիսի 1-ին 5 ռուբլի:

**ՇԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**, ընդունում է ամեն լիցուով: Ցայտարարութիւնների համար վճարում են—1 երևա բնույ յայտարարութեան համար 15 ռ., 1/2 եր.—8 ռ., 1/3 եր.—4 ռ., տարածել (կարգ.)—40 կ.:

Ձեռագիրները, նամակները և ծրարները պէտք է ուղղել խմբագրութեան, ԼՆՐՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ անունով: